







ԴԱՍՏԳԻՐՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՅ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵՐՔ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՑՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1866

9 (075)

S-27



91(075)

3868.000

S-26

10 NOV 2011

## ՏԱՐԵՐՔ

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ



ՀԱՍՄԱՐԱԿԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ


## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Աշխարհագրութեան : — Աշխարհագրութիւնը կը սորվեցունէ երկրիս դիրքը տիեզերաց մէջ, բնական կազմութիւնն ու քաղաքական բաժանմունքը :

Երկիրս ուր կը բնակինք՝ մոլորակ ըսուած աստղերէն մէկն է, որ այլ և այլ հեռաւորութեամբ արեւուն չորս դին կը պտըտի, և անկէ կ'առնու լցան ու ջերմութիւնը :

Բաժանումն Աշխարհագրութեան : — Աշխարհագրութիւնը երեք մաս կը բաժնուի. ուստիան, բնական ու ժաղադական :

Ուսումնական աշխարհագրութիւնը կը սորվեցունէ երկրիս տիեզերական յատկութիւնները, որ են դիրքը, ձևը, մեծութիւնը, շարժումն ու



21968-600

13 SEP 2013

— 4 —

Երկնային մարմիններուն հետ ունեցած յարաբերութիւնները :

Բնական աշխարհագրութիւնը կը սորվեցունէ Երկրիս վրայի բնական բաժաննմունքը. որ են ցամաք, ջուր և օդ, ու անոնց երևոյթները և ընդհանուր յատկութիւնները :

Քաղաքական աշխարհագրութիւնը կը սորվեցունէ մարդուս ու ազգաց բաժանումը, թիւը, քաղաքականութիւնը, կառավարութիւնը, զօրութիւնը, ճարտարութիւնը, վաճառականութիւնը, և ուրիշ ասոնց նման որպիսութիւնները :

ԿՈՂՄԱՆՔ ԱՇԽԱՏԻՑԻ : — Երկրիս վրայի այլ և այլ տեղերուն իրարու վերբերական դիրքն որոշվու համար, չորս կետեր կը մտածուին, որ կողման աշխարհի կ'ըսուին. և են արևել+, արևմուտ+, հիւմիս և հարաւ :

Արևելքն է այն կետը՝ ուստի արևը կը ծագէ. արևմուտքն է այն կետը՝ ուր արևը կը մտնէ, և հակառակ արևելքց. հիւսիսն է այն կետը, որ երբ երեսնիս արևելք դարձունենք՝ ձախակողմը կ'ըն կնի. իսկ անոր հակառակ աջակողման կետն ալ է հարաւ:

Այս չորս գլխաւոր կետերուն մէջտեղուանքն ուրիշ չորս երկրորդական կետեր ալ կը մտածուին, որ կ'ըսուին հիւսիսային արևել+, հիւսիսի և արևելքի մէջ տեղն. հիւսիսային արևմուտ+, հիւսիսի ու արևմուտքի մէջ աեղն. հարաւային արևել+, հարաւի ու արևելքի մէջ տեղը. հարաւային արևմուտ+, հարաւի ու արևմուտքի մէջ տեղն:

ՉԵՒ ԵՐԿՐԻ : — Վեր 'ի վերանց գիտելով երկիրս տափարակ կ'երևայ, որուն եղերացը վրայ ա-

1. ՅՈՅՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՏՈՎՐ-ՅՈՒՆԻ

մեն կողմանէ Երկինքը կը հանդչի . բայց քիչ մը  
մասագրութիւն ընելով կը տեսնուի որ Երկրիս ե-  
րեսը կլոր է , և շատ մը փորձեր ալ կ'ապացու-  
ցանեն որ Երկիրս ընդհանրապէս դնտաձե է :

Այս գնտաձեռութիւնն ամենենին չփոխուիր լե-  
րանց անհարթութիւններէն՝ Երկրիս մեծութեանն  
հետ բազդատելով . որոնք աւելի նուազ են քան  
թէ նարնջի մը կեղենին անհարթութիւններն իրեն  
մեծութեանն հետ համեմատելով :

ՄԵԾՈՒԹԻՒՆՔ ԵՐԿՐԻ : — Երկրիս շրջապատը  
360 մամ կամ ասպիճան կը բաժնուի . իւրաքանչիւր  
աստիճանը 60 մանրամաս , ու իւրաքանչիւր մանրա-  
մասը՝ 60 մանրէրէրրէ : Սովորութիւն է բացարել  
աստիճանը նշանաւո (0) , մանրամասը՝ նշանաւո  
(') և մանրերկրորդը՝ նշանաւո ('): Ուստի աս-  
տիճան 45 , մանրամասունք 36 և մանրերկրորդք  
54 , կը գրուի  $45^0 36' 54''$  :

Դարձեալ Երկրիս շրջապատը կը բաժնուի  
40,000,000 մէտր , կամ 40,000 հազարմէտր և կամ  
4,000 բիլիամէտր : Երկրիս մեծութեանը վրայ հաս-  
տատուած է նոր չափուց ու կշռոց անխախուտ  
հիմք : Երկրիս շրջապատին իւրաքանչիւր աստի-  
ճանը ունի 60 մղոն Երկայնութիւն , որով Երկրիս  
շրջապատը կ'ըլլայ  $360 \times 60 = 21,600$  մղոն տրա-  
մադիծը՝ 6,880 մղոն , և բոլորական մակերեսոյթը՝  
148,522,000 քառակուսի մղոն :

ԸՆԲԺՄՈՒՆՔ ԵՐԿՐԻ : — Տիեզերաց մէջ Երկիրս  
անշարժ կեցած չէ , ինչպէս որ Երկայն ժամանակ  
կարծուեցաւ , և ինչպէս մեր զգացողութիւնն ալ  
մէզի հաւատալ կու առյ : Ընդհակառակն Երկիրս  
Երկու տեսակ շարժմունք ունի , մէկն ինքն իր վրայ

Թաւալական շարժումն, միւսն արեւուն չորս դին  
շրջաբերական շարժումն :

Թաւալական շարժմամբ Երկիրս կը դառնայ  
ինքն իր վրայ արեւմուտքէ արեւելք քսանըօրս ժա-  
մաւ մէջ, որով կը կատարուին ցորեկն ու գիշերը :  
Ըրջաբերական շարժմամբ Երկիրս կը պաշախ ա-  
րեւուն չորս դին անցունելով օր 365, ժամ 5 և  
վայրկեան 49, որով կը կազմուի տարին : Բայց  
ժամ 5 և վայրկեան 49 չորս տարուան մէջ կ'ընեն  
մէկ օր աւելի, անոր համար իւրաքանչիւր չորրորդ  
տարին կ'ունենայ օր 366, և կ'ըսուի նահանջ :

Երկիրս իրեն թաւալական շարժումը կը կատա-  
րէ երեսակայական գծի մը չորս դին, որ իր կեղրո-  
նէն կ'անցնի և կ'ըսուի առանցք : Այս գծին Երկու  
ծայրերը կ'ըսուին բնեանք . գէպ 'ի հիւսիս արջային  
բնեան կ'ըսուի, վամն զի արջ ըսոււած համաստե-  
ղութեան վրայ կ'ընկնի, գէպ 'ի հարաւ հակարչային  
բնեան կ'ըսուի, սյսինքն հակառակ արջին :

Ը ջանակ ԵՐԿՐԻ : — Երկրագնատիս մակե-  
րեսութին ուսումը դիւրացընելու և անոր այլ և  
այլ մասանց դիրքը ճշգութեամբ որոշելու հա-  
մար, Երկրիս վրայ քանի մը Երեւակայական շրջա-  
նակներ կը մոտածուին : Այս շրջանակները դլսա-  
ւոր վեց հատ են . Երկու մեծագոյն և չորս փոք-  
րագոյն :

Երկու մեծագոյն շրջանակներն Են հասարակած և  
միջորեական :

Հասարակածն այն շրջանակն է, որուն կետերն  
հաւասարապէս հեռու են Երկու բևեռներէն, և կը  
բաժնէ զերկիրս Երկու հաւասար մասունք կամ  
ինսագունդք : Մէկը կ'ըսուի հիւսիսային ինսագունդք,

վասն զի հասարակածէն դէպ 'ի հիւսիս է . մէկա-  
լը կ'ըսուի հարաւային կիսագունդ , վասն զի հասարա-  
կածէն դէպ 'ի հարաւ է :

Միջօրէականն այն շրջանակն է , որ բևեռէ բե-  
ւեռ ձգուելով կը կարէ զհասարակածը և կը բաժ-  
նէ զերկրագունտը երկու կիսագունդք , մէկն ա-  
ընէլւան , միւսն արևմայնան :

Չորս փոքրագոյն շրջանակներն են երկու արևա-  
դաբչ + և երկու բևեռային շրջանակները :

Արեագարձներն հասարակածէն զուգահեռա-  
կան երկու շրջանակներ են , մէկը հիւսիսային կի-  
սագնատին վրայ , որ կ'ըսուի արևադաբչ խեցիւնի ,  
մէկաղն հարաւային կիսագնատին վրայ , որ կ'ըսուի  
արևադաբչ Աժեղջէ :

Բևեռային երկու շրջանակները զուգահեռական  
են արեագարձից և հասարակածին , և մէկը կ'ը-  
սուի բևեռային արջային շրջանակ , որ կը գանուի հիւ-  
սիսային կիսագնատին վրայ , ու միւսը կ'ըսուի բևե-  
ռային հակարջային շրջանակ , որ կը գանուի հարաւային  
կիսագնատին վրայ , և այնչափ հեռու են իւրաքանչ-  
չիւր բևեռներէն , որչափ արեագարձներն հեռու  
են հասարակածէն :

Լաթնութիւն ԵԽ ԵՐԿԱՑՆՈՒԹԻՒՆ : — Երկրիս  
մակերեսութին վրայ գլխաւոր տեղեաց գիլքն որո-  
շելու և հետևաբար ուրիշ տեղուտնիքն ալ անոնց  
հետ բաղդատելու համար , կը գործածուին լայնու-  
թիւն և երկայնութիւն . լայնութիւնն է որ և իցէ տե-  
ղոյ մը ունեցած հեռաւորութիւնն հասարակա-  
ծէն . ուրեմն կընայ ըլլալ հիւսիսային՝ հասարակա-  
ծէն դէպ 'ի հիւսիս , և հարաւային՝ հասարակածէն  
դէպ 'ի հարաւ : Երկայնութիւնն է որ և իցէ տե-

դւոյ մը հեռաւորութիւնն առաջին ըսուած միջ-  
օրէականէն, և է արևելքան՝ առաջին միջօրէակա-  
նէն գէպ 'ի արևելք, և արևմտքան՝ առաջին միջօրէա-  
կանէն գէպ 'ի արևմուտք: Եւրոպայի ազգերէն  
շատերը իրենց գլխաւոր դիտարանին վրայէն ան-  
ցած միջօրէականը կ'առնուն առաջին միջօրէա-  
կան:

Լայնութիւնն ու երկայնութիւնը ճշգութեամբ  
որոշելու համար, հասարակածէն զուգահեռա-  
կան 180 շրջանակք կը մտածուին. 90 գէպ 'ի հիւ-  
սիս և 90 գէպ 'ի հարաւ, և կ'ըսուին աստիճանի լայ-  
նութեան: Դէպ 'ի հիւսիս են աստիճանի հիւսնային  
լայնութեան, և գէպ 'ի հարաւ են աստիճանի հարաւային  
լայնութեան: «Սոյնպէս բևեռէ բևեռ կը ձգուին 360  
գլխաւոր միջօրէականներ արևմուտքէ արևելք, ո-  
րոնք զհասարակածն հաւասար մտառնիք կը բաժ-  
նեն, և կ'ըսուին աստիճանի երկայնութեան: Թէ լայ-  
նութեան և թէ երկայնութեան իւրաքանչիւր աս-  
տիճանը կը բաժնուի 60 մանրամասունիք, և իւրա-  
քանչիւր մանրամասը՝ 60 մանրէնիւրտի: Այսպէս  
երկրիս բոլոր մակերևոյթը կը պատեն զուգահե-  
ռական և միջօրէական շրջանակներ, և այս գծե-  
րուն կամ շրջանակներուն մէկզմէկ կը տրած կէտը  
կ'որոշէ տեղւոյ մը գիրքը: Լայնութեան աստի-  
ճաննները կը համրուին միջօրէականաց վրայ, ո-  
րոնք ամէնն ալ հաւասար ընդարձակութիւն ու-  
նին: Երկայնութեան աստիճաննները կը համրուին  
հասարակածին կամ զուգահեռական շրջանակնե-  
րուն վրայ, որոնք հետզհետէ կը ողջափակնան գէպ 'ի  
բևեռներն երթալով, ուր ամենեւին ընդարձակու-  
թիւն մը չունին:

Գ.ՕՏԻՔ ԵՐԿՐԻ : — Այն չորս շրջանակները , որոնք արեադաբից և բնեւային շրջանակից կ'ըսուին , երկրիս մակերևոյթը հինգ գօտի կ'ըստմնեն : Բնեւաներէն մինչև իւրաքանչիւր բնեւային շրջանակներն եղած միջոցները կ'ըսուին ստուգեալ գօտի . հիւսիսային և հարաւային :

Բնեւային շրջանակներէն մինչև իւրաքանչիւր արեադարձ եղած միջոցները կ'ըսուին բարձիստուն գօտի . հիւսիսային և հարաւային :

Արեադարձէ արեադարձ եղած միջոցը կ'ըսուի այրեցեալ գօտի , զոր հասարակածը երկու հաւասար մասունք կ'ըստմնէ , հիւսիսային և հարաւային :

Հ. ԲԿԲ ԵԳՈՒՆ ՏՔ ԵՒ ԱՇԽԱՐ Հ 380684 : — Երկրիս պատկերը ցուցընելու համար հնարուած է Երկարագունդը , որուն վրայ համեմատաքար նկարուած են երկրիս գլխաւոր բաժանմունքը , ինչպէս նաև այն կետերը , գծերը ու շրջանակները որ վրան կը նշանակուին կամ կը մտածուին :

Երկրիս ամբողջին կամ մասանց պատկերը կը ցուցընեն նաև աշխարհաշոյց կամ աշխարհաշոյց պատկանակից կ'ըսուին ըլլալ համապարած , երբ երկրիս ամբողջ պատկերը կը ցուցընեն , ու կ'ըսուին հարթագունդ՝ երբոր երկու բոլորաձևներու մէջ երկրիս ամբողջ մակերևոյթը կը բովանդակեն , որոնց իւրաքանչիւրը մէյմէկ կիսագնտի կը համապատասխանեն : Դարձեալ կրնան ըլլալ ընդհանուր կամ հանաւոր աշխարհացոյցք , ըստ որում երկրիս մեծ բաժանմունք կամ փոքր բաժանմունք կը ներկայացունեն :

Աշխարհացոյց տախտակաց վրայ համեմատու-

թիւններն այնպէս պահուած են, որ եթէ կարկի-  
նով առնուի չափ մը անոնց վրայ, կը համապա-  
տասխանէ տասը հազար անդամ, հարիւր հազար  
անգամ և աւելի մեծագոյն չափու երկրիս իրական  
մակերևութիւն վրայ:

Անոր համար իւրաքանչիւր աշխարհացուցին  
մէկ անկիւնը նշանակուած կ'ըլլան աստիճանի ը-  
սուած չափերը, որ կը ցուցընեն կարկինով աշ-  
խարհացուցի մը վրայ առնուած չափու մը և եր-  
կրիս մակերևութիւն վրայ առնուած իրական չա-  
փուն համեմատութիւնը:

Ընդհանրապէս աշխարհացոյց տախտակներուն  
վրայ վերն է հիւսիս, աջակողմն՝ արևելք, ձախա-  
կողմն՝ արևմուտք ու վարն՝ հարաւ:

Երկայնութեան աստիճանները կը նշանակուին  
վարն ու վերը, միջօրէական գծերը կը ձգուին վե-  
րէն վար: Լայնութեան աստիճանները կը նշանա-  
կուին գէպ 'ի աջ ու գէպ 'ի ձախ, զուգահեռա-  
կան շրջանակները կը ձգուին հասարակածէն հա-  
ւասար հետու:

Առաջ կ'ըսուի այն գիրքը կամ տետրակն, ո-  
րուն մէջ ամիբովուած կ'ըլլան այլ և այլ աշխար-  
հացոյց տախտակները:

ԳԼԽԱՏՈՐ ԶԱՓՔ: — Աշխարհագրութեան մէջ  
գործածուած գլխաւոր չափն է աշխարհագրական  
կամ խտալական ըսուած մղոնը, որ է 60 առ մի  
աստիճան, և կ'ընէ 1,852 մէդր. կամ 1,403 ար-  
շըն Տաճկաց:

Դարձեալ կը գործածուի մէդրէն արտադրուած  
չափերն, ինչպէս են հաղարամէտր՝ որ է հազար մէդր,  
և բիւբամէտր՝ որ է տասն հազար մէդր:

Իսկ մակերեսութիւն չափն է քառակուսի (□) մղոն, քառ. հազարամետր և կամ քառ. բիւրամետր:

ԵՐԿՐԻՄ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՈՒ ԶՐԵԴԵՆ ՄԱՍՈՒՆՔՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՄԱՍՈՒՆՔ ԵՐԿՐԻՄ: — Երկրիս մակերեսոյթը ջրով ծածկուած է, որ ավելանաս կ'ըսուի, որուն երեսէն վեր կը բարձրանան այլ և այլ հաստատուն մասունքն աւելի կամ նուազտարածութեամբ և զանազան ձևերով ու մէկմէկէ բաժնուած: Երկրիս այս հաստատուն մասունքն որ ջրէն վեր կը բարձրանան, քառորդն է երկրիս բոլորական մակերեսութիւն և կ'ըսուի հագուստն:

Հողագնատին մեծամեծ ու շարունակ զանգուածները կ'ըսուին շամաք. փոքրագոյն զանգուածները որ ամէն կողմանէ ջրով պատած են, կ'ըսուին իւլի. երբ շատ կղզիներ իրարու մօտ ըլլան, կ'ըսուին խռմբ իւլմաց. և երբոր շատ մը կղզեաց խումբք աւելի կամ նուազ ընդարձակութեամբ ծովուն երեսը կը ծածկեն, կ'ըսուին արշիպելագուն:

Թէրակլավ կ'ըսուի այն ցամաք երկիրը, որուն բոլորակը ջուրը պատած ըլլալով միայն մէկ կողմանէ ուրիշ ցամաքի հետ կոլած է: Պարանոյ կ'ըսուի թերակղզիին այն կտոր ցամաքը, որով երկիրին հետ կոլած է: Ցամաքին դէս ՚ի ծով երկընցած մասը գտնի կ'ըսուի, ու երբոր բարձր է հրաւանդան կամ առ կ'ըսուի:

ԼԵՐԻՆՔ. ԼԵՐՆԱԴԱԾՔ: — Հողագնատին վլայի բնական բարձր կոնաձև տեղուանքը լեռ կ'ըսուին.

իսկ բարձր տափարակ տեղուանիքը վեռագործաց կ'ը-  
սուին։ Թէ որ այլ և այլ լեռներ իրարու կազած  
ըլլան, աղթայ լեռանց կ'ըսուի։ պղամ շղթայք որ  
դէտ ՚ի աջ կամ դէտ ՚ի ձախ կը ձգուին, բահուի  
լեռանց կ'ըսուին։ Բազմութիւն շղթայից բոլորը  
մէկաեղ կը կազմէ խուճք լեռանց։ և բազմութիւն  
խումբերու բոլորը մէկաեղ կ'ըլլան գօտի լեռանց։  
Նեռ մը ունի խարիսխ կամ սպէ՝ որուն վրայ կը  
բարձրանայ գաշտէն վեր, իո՞ւ զառ ՚ի վեր կամ  
զառ ՚ի վայր, գլուխ, ծայր, կադար կամ գագան։  
Հողագնտին այն մասը որ բարձրութիւն ունի,  
բայց լեռան չափ չէ, կ'ըսուի բլու։

Հըմբուշն կ'ըսուին այն լեռները կամ բլուրները,  
որ գագաթներնեն կրակ, ծուխ ու երբեմն եռա-  
ցող ու հալած նիւթեր գուրս կը ժայթքեն։ բե-  
րաննեն բաժակ կամ խառնարան կ'ըսուի։ իսկ հալած  
ու եռացող նիւթերն ալ լաւ կ'ըսուին։ Ծովային է  
հրաբուզն մը, որ ծովուն տակէն կը բռնկի, որով  
նոր նոր կղզներ գուրս կ'ելլեն։

Լեռներ կան որ մշանջենաւոր ձիւնով ծած-  
կուած են. այս մշտնջենաւոր ձիւներուն սահման-  
ներն վար երբեմն կը գտնուին պնդացած ձեան  
խոշոր կոյտեր որ սառնարան կ'ըսուին, և հասարա-  
կօրէն բարձր հովիտներու մէջ կը գտնուին։ Հո-  
վաք են լեռանց մէջ եղած լայն և երկայն միջոցնե-  
րը. յո՞ւն է պղտիկ հովիտ. իբրա՞ն է ձորի մը նեղ  
անցքը։

ԴԱՇՏԻՔ. — Հողագնտին շիտակ ու տափարակ  
տեղուանիքը Դաշտ կ'ըսուին։ Անհակ գաշտերն այլ  
և այլ անունն կ'առնուն։ Սանա, սուեբ, սաւան, լեանսոն,  
կամ բամբառ։ Անապատն է անբեր ու աւագուտ

ընդարձակ ու մեծամեծ դաշտեր, որոնց մէջ՝ տեղ  
տեղ ջրաբբի ու բարեբեր երկիրներ կը գտնուին,  
որոնք ովասիս կամ անապատի իրան կ'ըսուին։ Մեծ  
տարածութեամբ երկիրներ որ ծառերով ծած-  
կուած են, անպառ կ'ըսուին։

Ա.ՓՈՒԽ.Ք. — Աժան կամ ծախտանի կ'ըսուին  
ցամաքներուն ու կղղիներուն շրջապատքը, զո-  
րոնք ծովուն ջրերը կը թրջեն, որ կրնան ըլլալ  
ծայռաւոր կամ աւաղուափ։ Ծովուն քիչ խոր տե-  
ղուանքն ալ կ'ըլլան աւաղակոյափ և ծանծաղուափ կամ  
ծայռաւոր, որուն վրայ նաւերը կրնան վտանգիլ։  
Թուամբ և ամբարգափի կ'ըսուին այն ամրութիւններն  
որ կը կանգնուին ջրոյն բռնութեանը դէմ։ Փա-  
ռան է աշտարակ մը որուն ծայրը կը կամ ճշագ  
կը վառուի գիշերները նաւերուն ապահովու-  
թեանն համար։

Ճ.ԱՎ.Ք. — Երկրագնատին մակերեսութին մեծ  
մասը պատող աղի ջուրը կ'ըսուի ովկանսս կամ  
ծալ։ Հասարակօրէն ովկանսս կ'ըսուին մեծամեծ  
ցամաքներուն գրսի կողմն եղած ընդարձակ ջրե-  
րը։ Խակ ծալ կ'ըսուին ովկիանուին այն մասունքն  
որ այս կամ այն ցամաքը կը թրջեն։ Միջերկան  
կամ դշերիեայ կ'ըսուին այն ծովերը որ ցամաքին  
ներքին ափունքը կը թրջեն։

Ճ.ԱՑ.Ք. ՆԵՐՈՒՑ.Ք. ՆՏԻՄԱՉԱԳԻՍ.Ք. — Ծայ  
կամ ծախտաց կ'ըսուի ծովուն այն մասը, որ գէալ 'ի  
ցամաք ներս մտած է, որուն մեծերը ծով ալ կ'ը-  
սուին ու պղտիկները՝ գոգ կամ խռը։ Ծովուն այն  
մասը որ իրարու մօտ գտնուած երկու ցամաքնե-  
րու մէջտեղէն անցնելով երկու ծով կամ ծովու  
մասեր իրարու հետ կը հաղորդէ, կ'ըսուի ներաւ,

իլրաք, ջրանցք, վարչութեան ջրոյ երկու ընթացք դիմացէ դիմաց գալով մեծ պասոյտք մը կ'ընեն. այս պասոյտը կ'ըսուի յոբանցք : «Սաւահանգիստ կ'ըսուի երբոր ներս մասած ծովը պղախիկ է ու ամէն կողմանէ ցամաքով պատած է, միայն մէկ կողմէն ջրանցքով մը հաղորդակցութիւն ունի ծովուն կամ ովկիանոսին հետ ու խարիսխ ձգելու ապահով աել մըն է :

Լոռք. ՃԱՀՏԺՔ. ԼՃԱԿՔ : — Լիճ կ'ըսուի ջրոյ տարածութիւնը որ ծովու հետ հաղորդակցութիւն չունի, ամէն կողմէն ցամաքով ըրջապատած է, ու իր ջուրը գետէ մը կամ ուղղակի հօղէն կ'առնու : Մեծ տարածութիւն ունեցող լճերը ծով կամ ծռախէ և կամ նէրդին ծով կը կոչուին : Իսկ ճահիճ կ'ըսուի ցած երկիր մը՝ մէջը կաւով ու անշարժ ջրով լեցուն : Լճախ կամ ծռախիճ կ'ըսուի երբ մէկ կամ մէկ քանի գետեր ծով թափելնէն առաջ ծովեզերքը շատ տափարակ գտնելով հոն կը տարածուին, բայց լիճ չեն ձևացըներ, այլ ծանծաղուտ մը :

ՎԵԶՈՒԿ ԶՐՆՐ : — Ցամաքին վրայ ջրոյ մեծ ու շարունակ ընթացք մը, որ լեռներէն բլիսելով դէպ 'ի ծով կը վաղէ, կ'ըսուի գետ : Բոլիսած տեղը, կ'ըսուի առբիւր կամ առբիւրանին, վաղած տեղը՝ անիսովին, ու ծով թափած տեղը՝ գետաբէրան : Երբ գետերը զանազան ձիւղերով ծով կը թափին, ցամաքին վրայ եռանկիւնի կղղիներ կը ձևացընեն, որ գետա կ'ըսուին :

ԳԵԴԱԿԻ կամ Վաղէ կ'ըսուի ցամաքի վրայ ջրոյ այն ընթացքը, որ կը թափի ոչ թէ ծով այլ գետի մը կամ վտակի մը մէջ : Ցամաքի վրայ ջրոյ երկու ըն-

թացից խառնուած տեղը կ'ըսուի գէպախառնուն+ , և ընթացիցը դէպ 'ի ծով ուզութեանն համեմատ ափունքն են աջակողման կամ յախակողման :

Երբ գետի մը ջրերը յանկարծ բարձրէն դահավեժ վար կը թափին ժայռերու և քարերու վրայ , կ'ըսուի ջրավեժ կամ սահան+ և կամ գարավառ :

ԵՐԿՐԻՍ ՄՊԿԵՐԵՒՈՒԹԻՆ ՄԵԾԱՄԵԾ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

ՅԱՄԱԳ ՄԱԿԵՐԵՒՈՑԹ ԵՐԿՐԻ : — Երկրիս ցամաք մակերևոյթը , որ երկրագնախին բոլորական մակերևութին գրեթէ քառորդն է , հինգ դլխաւոր մասունք կը բաժնուի . որ կ'ըսուին ճառան+ աշխարհի կամ ճառան+ էրէի , և են Եւրոպա , Ասիա , Աֆրիկէ , Ամերիկա և Ավկիանիա :

Եւրոպա , Ասիա և Աֆրիկէ մէկ ցամաք մը կը կազմեն , որ հնուց 'ի վեր ծանօթ էր , անոր համար կ'ըսուի հին աշխարհ+ կամ հին շաման+ : Իսկ Ամերիկա և Ավկիանիա կ'ըսուին նոր աշխարհ+ կամ նոր շաման+ , վասն զի առաջինը Վրիստոսի 1492 թուականին ծանօթացաւ , և երկրորդն աւելի ետքը , որ կ'ըսուի նաև ծովային աշխարհ+ ու կը բազիանայ բազմաթիւ կղզիներէ ու երրորդ ցամաքէ մը , որ կ'ըսուի հարաւային շաման+ կամ Աշոպրալիա և կամ Կորչուլանգա :

Ա Երջերս հիւսիսային բևեռին տակ և հարաւային բևեռին տակ նոր ցամաքներ գտնուեցան , որոնք գեռ ևս քիչ ծանօթ են :

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ՑԱՄԱՔԸ : — Երկրիս հինգ ցամաք մասանց տարածութիւնն է ընդհանրապէս 37,673,000 քառակուսի մղոն , հետևեալ կերպով բաշխուած .

Ասիա	12,118,000 քառ. մղոն.
Ամերիկա	11,146,000 քառ. մղոն.
Ռ. ֆրիկէ	8,500,000 քառ. մղոն.
Եւրոպա	2,809,000 քառ. մղոն.
Ովկիանիա	3,100,000 քառ. մղոն:

Ջրեւնեն Մակերեւեւութ Երկրի : — Երկրիս ջրեղին մակերևոյթը, որ երկրագնախն բոլորական մակերևութին գրեթէ երեք քառորդն է, հինգ գլխաւոր մասունք կը բաժնուի, և են

Հիւսիսային ստորաշեաւ ծռվ, որ հիւսիսային բեկուին բոլորակը կը պատէ, և Եւրոպայի, Ասիայի ու Ամերիկայի ափունքը կը թրջէ: Դէպ 'ի հարաւային ծովերը սահման ունի իր համանուն բեկուային շրջանակը :

Հարաւային ստորաշեաւ Ովկիանոս, որ հարաւային բեկուին բոլորակը կը պատէ, և կը տարածուի իր համանուն բեկուային շրջանակը ասդին :

Արևադիան Ովկիանոս, որ կը թրջէ Եւրոպայի ու Աֆրիկէի ափունքն, որոնց արևմտեան սահմանը կը կազմէ, և Ամերիկայի ափունքն՝ որուն արևելեան սահմանը կը կազմէ: Կը տարածուի դէպ 'ի հիւսիս ու դէպ 'ի հարաւ մինչեւ սառուցեալ երկու Ովկիանուները :

Խաղաղական ծռվ կամ մէծ Ովկիանոս, որ կ'ըսուի նաև արևելեան ովկիանոս, սահման ունի դէպ 'ի հիւսիս՝ հիւսիսային սառուցեալ ծովը, դէպ 'ի հարաւ՝ հարաւային սառուցեալ Ովկիանոսը, դէպ 'ի արևմտաք՝ Ասիա ու Ովկիանիա, և դէպ 'ի արևելք՝ Ամերիկա :

Հնդկային Ովկիանոս, որ սահման ունի դէպ 'ի հիւսիս՝ Ասիա, դէպ 'ի արևելք՝ Ովկիանիա ու

Խաղաղական Ովկիանոս, գէպ ՚ի հարաւ՝ հարաւային սառուցեալ Ովկիանոս, և գէպ ՚ի արեմուտք՝ Ափրիկէ:

ՏԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԾՈՎՈՒՑ:	ԳԼԽԱԿՈՐ ՃՈՎԵՐՈՒՆ ՄԱՐԱԺՈՒԹՅՈՒՆ Է ընդհանրապէս 110,849,000 ՔԱՌԱԿՈՒՍԻ մղոն. ՀԵՏԱԿԵԱԼ ԿԵՐՊՈՎ ԲԱՇԽՈՒԱԾ.
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՇԵԱԼ ՈՎԿԻԱՆՈՍ	4,427,000 ՔԱՌ. մղ.
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՌՈՒՇԵԱԼ ՈՎԿԻԱՆՈՍ	6,509,000 ՔԱՌ. մղ.
ԱՄԼԱՆՏԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍ	26,548,000 ՔԱՌ. մղ.
ԽԱՂԱՂԱԿԱՆ ՈՎԿԻԱՆՈՍ	52,477,000 ՔԱՌ. մղ.
ՀՆԴԿԱՅԻՆ ՈՎԿԻԱՆՈՍ	21,118,000 ՔԱՌ. մղ.

### ԵՐԿՐԻՄ ԲՆԱԿՉՈՑ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ


ԹԻՒԻ ԲՆԱԿՉՈՑ ԵՐԿՐԻՄ: — ԵՐԿՐԻՄ ԲՈԼՈՐ ԲՆԱԿ-  
ՉՈՑ ՀԱւանական թիւն է գրեթէ 1300 միլիոն, հե-  
տեւալ կերպով բաշխուած.

ԵՎՐՈՊԱ	270,000,000
ԱՄԻՆ	800,000,000
ԱՓՐԻԿԵ	140,000,000
ԱՄԵՐԻԿԱ	60,000,000
ՈՎԿԻԱՆԻԱ	30,000,000

ՑԵՂԻ ՄԱՐԴԿԱՆ: — Հասարակօրէն ամբողջ  
մարդկային ազգը իր ձևոյն և գունաւորութեանն  
համեմատ հինգ տեղ կամ սեռունդ կը բաժնուի,  
սպիտակ, դեղին, պղնչագոյն, յիշագոյն, և սեամորի:

Սպիտակ կամ իւլիասային տեղը կը բնակի ԵՎՐՈ-  
ՊԱ, արևմտեան Ամին, հիւսիսային Ափրիկէ, և  
Ամերիկայի մեծագոյն մասը:

Դեղին կամ ճաղլէան տեղը կը բնակի արևելեան  
Ամին ԵՎՐՈՊԱՅԻ և ԱՄԵՐԻԿԱՅԻ հիւսիսակողմանքը:



Պիշտագոյն կամ ամերիկան շեղը բնիկ է կրկին  
Ամերիկայից :

ԶԻՆ-ագոյն կամ հալայեան շեղը կը բնակի Ովկեա-  
նիայի կղզեները, և ըստ մասին Ասիայի հարաւայ-  
ին արևելեան կողմերը :

ԿՐՕՎՔ : — Մարդկային ազգը գլխաւորապէս  
չորս կրօնք ունի . Հրես-թիւն, Քրիստոնեո-թիւն,  
Մահմետականութիւն և Կոռապաշտութիւն :

Հրես-թիւն կը դաւանի մէկ ճշմարիտ Աստուած  
արարիչ Երկնի և Երկրի, ու հիմն ունի հին իրա-  
կանունը :

Քրիստոնեո-թիւնը, որ է միայն ճշմարիտ և կեն-  
դանարար կրօնք, կը դաւանի զբրիստոս որդի Աս-  
տուծոյ և փրկիչ աշխարհի, ու հիմն ունի հին և  
նոր իրակարանունը :

Մահմետականութիւնը կը դաւանի զՄահմետը մար-  
գարէ Աստուծոյ, և հիմն ունի էլաֆուրանը :

Կոռապաշտութիւնը արարածոց պաշտօն և զոհ կը  
մատուցանէ :

ԴՐԱՍՆՈՒԹԻՒՆՔ : — Այս չորս գլխաւոր կրօն-  
ներն իւրաքանչիւր այլ և այլ դասանութիւն կը  
բաժնուին :

Հրես-թիւնը կը բաժնուի գարայիմ, Ռազմական  
կամ ռաբունական :

Քրիստոնեո-թիւնն ունի իանութիւնութիւն, անիա-  
նութիւնութիւն և բողոքականութիւն կամ նորադանդա-  
նութիւն :

Կաթոլիկէութիւնը կը ճանչնայ Պետրոս առա-  
քելապեան ու անոր աթոռոյն յաջորդները փոխա-  
նորդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և գլուխ ե-  
կեղեցւոյ, որուն անխսալ պահպանութեանը յանձ-

նուած են հաւատոյ վարդապետութիւնները :

Անկաթովլիկէութիւնը չճանչնար Պետրոսի առաքելապետին յաջորդները գլուխ եկեղեցւոյ , և կը ժխտէ քանի մը ճշմարտութիւններ կաթովլիկէ դաւանութեան : Եւ կը զանազանի գլխաւորապէս յաւագաւանութիւնն , նէսպորականութիւնն , և մաբնաւիւթիւնն կամ եւակիւանութիւնն :

Բողոքականութիւնը կամ բոլորովին կ'ուրանայ և կամ կ'աղաւազէ կաթովլիկէ եկեղեցւոյն աստուածային հիմնադրէն հաստատուած խորհուրդները , ու նուիրական կարգագրութիւնները : Եւ կը զանազանի գլխաւորապէս լուսաւորապէս յաւագաւանութիւնն , աւելացանականութիւնն և անգղտականութիւնն :

Մահմէտականութիւնը կը բաժնուի աւեան , սիւնի և շին :

Կռապաշտութիւնը ունի քարբապաշտութիւն , մոգութիւն , պրահմականութիւն և պուտպականութիւն :

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻՑ : — Աշխարհքիս վրայ կրօններուն համեմատութիւնն հետեւալկերպով է ընդհանրապէս .

ՀՐԵՍՈՒԹԻՒՆ	5,000,000
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ	400,000,000
ԿԱԹՈՎԼԻԿԻՈՒԹԻՒՆ	220,000,000
ՅՈՒՆԱՊԱԼԱՆՈՒԹԻՒՆ	84,000,000
ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ	96,000,000
ՄԵՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ	136,000,000
ԿՈՒՊԱԾՏՈՒԹԻՒՆ	759,000,000
ԼԵԶՈՒԹԻՑ : — Աշխարհքիս վրայ հիմա գործածուած լեզուները երկու կը բաժնուին , մայր լեզուներ ու երիբորդական լեզուներ :	

Մայր լեզուներէն կան 860, հետեւալ կերպով  
բաշխուած։

Եւրոպա	53
Ասիա	153
Ափրիկէ	115
Ամերիկա	422
Ովկէանիա	117

Խակ երկրորդտկան լեզուներն են իբր 5,000։

ՊԵՏՈՒԹԻՒՆ : — ՊԵՊԱ-ԲԻ-ԱՆ կ'ըսուի ընկերութիւն մը մարդկան, որոնք անկախ ուրիշ նման ընկերութիւններէ մի և նոյն պեսալ-Ա-ան կամ կառավարութեան կը հոգածակին։

ՄԻԱՊԵՊԱ-ԲԻ-ԱՆ կ'ըսուի կառավարութիւնը երբ իշխան մը կը հրամայէ այս անուններով։ Դուքս, ՄԵծ Դուքս, Թագաւոր, Կայսր, Զար, Սուլդան և Խան։

Աղասի կամ ինժնիշխան է միապետութիւնը, երբ թագաւորին կամքը օրինաց տեղ կը բռնէ և իրեն իշխանութիւնը կերպով մը չնուազիր։

Զադաւորէալ կամ սահմանադրական է միապետութիւնը, երբ սահմանադրութիւն մէջ հաստատուած կարգադրութիւններուն համեմատ քաղաքացիք թագաւորին հետ մէկտեղ օրէնք կը դնեն և տերութեան ելքն ու մուտքը կ'որոշեն։

Հասարակական կառավարութիւն կամ հասարակական-պատրիարքական կ'ըսուի, երբ կառավարութիւնը ազգին գլխաւորներուն կամ բոլոր ազգին ձեռքն է։

Դաշնակութիւն կամ նիւղակութիւն կ'ըսուի երբ շատ ինքնիշխան ու անկախ տերութիւններ մէկտեղ կ'որոշեն իրենց գլխաւոր գործերը։

Տիրու իրու կ'ըսուի երբ տերութեան մը բնա-

կիչներուն մէծագոյն մասը մի և նոյն կըօնքը կը  
դաւանեն, կամ թէ այն է տերութեան կըօնքը:

Քաղաքն է ժողով բազմաթիւ բնակութեանց ու  
բնակչաց, ուր կը կենան տերութեան քանի մը  
պաշտօնեայք: Մայրաւաղաւ կ'ըսուի ուր կառավա-  
րութիւնը կը նստի: Ծովային տաղաւ՝ որ ծովեզե-  
րեայ զիրք ունի: Բէրդաւաղաւ՝ որ ամրութիւննե-  
րով շրջապատած է: Գիւղաւաղաւ կամ աւան է՝ որ  
քաղաքէ մը նուազ բնակիչ ունի: Գիւղն աւանէ մը  
նուազ բնակիչ ունի:

Գաղթականութիւն կ'ըսուի, Երբ բազմաթիւ ան-  
ձինք կը թողուն իրենց հայրենիքը, ու կ'երթան  
օտար Երկիրներ բնակելու և մշակելու:

ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆՔ: — Երիբագու-  
ծութիւնն է Երկիր մշակելու արուեստը. իսկ ճար-  
պարութիւնն է բովանդակութիւն ամէն արուեստից,  
որով մարդիկ կ'ազնուացընեն ու օգտակար կ'ը-  
նեն բնութեան և Երկրագործութեան տուածնիւ-  
թերը: Վաճառականութիւնը կը գնէ Երկրագործու-  
թեան ու ճարտարութեան արդասիքը, և կը վա-  
ճառէ զանոնք որոնց որ պէտք ունին: Երբոր Եր-  
կրի մը բերքը կամ ճարտարութեան վաճառքն օ-  
տար Երկիր կը զբկուին, Վաճառականութիւն կ'ըսուի.  
ընդհակառակն Երբոր ասոնք օտար Երկիրներէ  
ներս կը բերուին, Վաճառաբէրութիւն կ'ըսուի:



**ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ**




**ՔԱՂԱՔԱԿԱՆ**

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ**



# ԵՒՐՈՊԱ



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՍԱՀՄԱՆԸ ՀԻւսիսէն Սառուցեալ ովկիանոսն է, արևելքէն Ռւրալ լեռները, Կասպից ծովն ու Սև ծովը, հարաւէն Կովկաս լեռները, Սև ծովն ու Միջերկրական ծովը, արևմատքէն Ատլանտեան օվկիանոսը :

Եւրոպայի մակերեսոյթը 2,800,000 քառակուսի մղոն է : Թէպէտ աշխարհիս մէկալ մասերէն սլըդտիկ է, բայց ամենէն ալ աւելի քաղաքակիրթ ու համեմատութեամբ աւելի բազմամարդ է :

## ԲԱԺԱՆՈՒՄՆ

Եւրոպայի մեջ գլխաւոր տասնըվեց աշխարհք կայ . չորսը հիւսիսային կողմը, եօթը մէջտեղուանքը, հինգը հարաւային կողմը :

Հիւսիսայիններն են՝ Բրիտանիա, Տանիմարդա, Շուէտ, և Ռուսաստան :

Մէջտեղուանքն ասոնք են . Գաղղիա, Պելճիա, Հոլանտա, Զուիցերի, Աւստրիա, Բրուսիա և Գերմանիական դաշնակցութիւն :

Հարաւային կողմինները ասոնք են . Բորդու-  
գալ, Սպահիա, Իտալիա, Եւրոպայի Տաճկաս-  
տան և Յունաստան :

### ԾԱՎ

Եւրոպայի գլխաւոր ծովերն ասոնք են .  
Սառուցեալ ովկիանոս, Սպիտակ ծով, Պալդիկ  
ծով, Հիւսիսային Գերմանական ծով .  
Առլանտեան ովկիանոս, Մանիգա, Իռլանտայի ծով  
Միջերկրական ծով Ագրիական ծով, Յոնիական  
ծով, Արշիպեղագոս, Մարմարա, Սև ծով  
Ազախու ծով :

### ՆԵՐԱԽՑ

Եւրոպայի գլխաւոր նեղուցներն են .  
Վայկացի նեղուցը՝ Ռուսաստանի հիւսիսային դին .  
Սդակէրրագ, Գադդէկագ, Սունա, պղտի Պէլդ,  
մեծ Պէլդ՝ Պալդիկ ծովուն և Հիւսիսային ծո-  
վուն մէջտեղը .  
Գալէի նեղուցը կամ ջրանցքը՝ Գաղղիոյ և Անգ-  
ղիոյ մէջտեղը .  
Աէպաէի կամ Ճիսկիլդէրրայի նեղուցը՝ Սպահիոյ  
ու Ափրիէի մէջտեղը .  
Պոնիֆաչիոյի նեղուցը՝ Սարտենիայի ու Գորսի-  
գայի մէջ տեղը .  
Մեսինայի նեղուցը՝ Իտալիոյ հարաւային ծայրը .  
Զանագգալէի նեղուցը՝ Արշիպեղագոսին ու Մար-  
մարայի մէջտեղը .  
Առսփորոս կամ Կոստանդնուպօլսոյ նեղուցը՝ Սև  
ծովուն ու Մարմարային մէջտեղը .

Ենիգալէի նեղուցը՝ Ազախու ծովուն ու Սև ծովուն մէջտեղը:

Ծ Ա Յ

Եւրոպայի ծովերուն երևելի ծոցերն ասոնք են. Պոդնեան ծոց, Ֆինլանտեան ծոց, Ուիկայի ծոց՝ Պալդիկ ծովուն մէջ.

Զուիտէրզէ՝ Հիւսիսային ծովուն մէջ.

Կասպոնեան ծոց՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ.

Լիոնի, Ճենովայի, Վենետիկոյ ծոց՝ Միջերկրական ծովուն մէջ.

Աէլանիկի ծոց և Զմիւռնոյ ծոց՝ Արշապեղագոսին մէջ:

Կ Դ Զ Ւ

Եւրոպայի գլխաւոր կղզիներն են.

Սառուցեալ ծովուն մէջ՝ Սբիցպէրկ, Նոր Զեմլեա, Գալկույէվ ու Լոֆֆուտէն:

Պալդիկ ծովուն մէջ՝ Ալանտ, Տակօ, Էօզէլ, Կոդլանտ, Օլանտ, Պոռնհոլմ, Բուկէն, Փալսդէր, Լալանտ, Զելանտ և Ֆիոնիա.

Իռլանտայի ծովուն մէջ՝ Մէն, և Էնկլավի: Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Իռլանտա, Իռլանտա, Անգլիա, Ֆէրէօր կղզիները, Շէղլընտ կղզիները, Ուկադեան ու Հերբիդեան կղզիները.

Միջերկրական ծովուն մէջ՝ Գորսիգա, Սարտենիա, Սիկիլիա, Մայորգա, Մինորգա, Խվիցա, Էլպա, Մալդա և Լիպարեան կղզիները.

Յոնիական ծովուն մէջ՝ Գործու, Բագշտ, Սանդա

Մաւրա, Թէտքի, Զանդա, և Զեֆալոնիա:

Արշեպեղագոսին մէջ՝ Լեմնոս, Էյրիպօզ, Զէրի-

կօ, Նագշտ, Շիրա և ուրիշ մանր կղզիներ:

### ԹԵՐԱԿՈՎԻ

Եւրոպայի մէջ վեց թերակղզի կայ.

Շուէտ, Սպանիայ, Իտալիա՝ որ խիստ մեծերն են.  
Եռուդլանտ՝ Տանիմարգայի մէջ.

Մոռա՝ Ցունաստանի մէջ.

Խրիմ՝ Ռուսաստանի մէջ:

### ՊԱՐԱՆՈՑ

Եւրոպայի մէջ գլխաւոր երկու պարանոց կայ.  
Կորնթոսի պարանոցը՝ որ Մոռան ցամաքին հետ  
կը կապէ և Բէրէդոբի պարանոցը՝ որ Խրիմը Ռու-  
սաստանի հետ կը կապէ :

### ՀՐՈՒԱՆԴԱՆ

Եւրոպայի գլխաւոր հրուանդաններն են.

Նորտ-Գաբ, Նորտ-Գին՝ Շուետի հիւսիսային  
ծայրը.

Միզէն՝ Խոլանտայի արևմտեան կողմը.

Լէնտսէնտ՝ Բրիտանիոյ արևմտեան զին.

Լա հօկ՝ Գաղղիոյ հիւսիսային կողմը.

Ֆինիսդէրը՝ Սպանիոյ արևմտեան զին.

Առուբը՝ Ալինչենցիոս՝ Բորդուգալի արևմտեան  
կողմը.

Աբարդիվէնդոյ՝ Իտալիոյ հարաւային դին .  
Բասսարոյ՝ Սիկիլիոյ հարաւային կողմը .  
Մադաբան՝ Մորայի հարաւային ծայրը :

ԼԵՒ

Եւրոպայի մէջ ինը մեծամեծ լեռներու գօտին կան .  
Քէօլէն՝ Շուետի ու Նորվեկիոյ մէջտեղը .  
Ուրտ՝ Ասիոյ ու Եւրոպայի մէջտեղը .  
Կովկաս՝ Կասպից ու Սև ծովուն միջոցը .  
Պալգան՝ Եւրոպայի Տաճկաստանին մէջ .  
Կարպադ՝ Մաճառստանի մէջ .  
Ալպեան լեռները՝ որ Իտալիան Գաղղիայէն , Գերմանիայէն ու Զուիցերիէն կը բաժնեն .  
Ապենինեան լեռները՝ Իտալիոյ մէջ .  
Պիրենինեան լեռները՝ Գաղղիոյ ու Սպանիոյ մէջտեղը .  
Իբերեան լեռները՝ Սպանիոյ մէջ :

ՀՐԱԲՈՒԽ

Եւրոպայի մէջ իրեք մեծ հրաբուխ կայ .  
Հէգլամ՝ Խլանտայի մէջ .  
Վեսուվ՝ Նաբուլի քաղլքին քովը .  
Ետիա՝ Սիկիլիոյ մէջ ,

ԼԻՇ

Եւրոպայի գլխաւոր լճերն ասոնք են .  
Աէներ , Աէգեր , Մէլար՝ Շուետի մէջ .

Սայմա, Լատոկա, Օնեկա, Իլմէն, Պելօ, Բէյբուս  
Ռուսաստանի մէջ.

Նէօշադէլի, Ճինեւրայի, Լուչէռնայի, Ցուրիկի  
Հճերը՝ Զուիցէրիի մէջ.

Մաճիօրէ լիճը, Գոմոյի, Կարտայի, Բէրուճիայի,  
Պօլսենայի Հճերը՝ Խտալիոյ մէջ.

Նայզետէլ, Պալադոն, Աւստրիոյ տէրութեան մէջ.  
Գոսդանցա՝ Զուիցէրիի ու Գերմանիոյ մէջ  
տեղը :

### ԳԵՏ

Եւրոպայի խիստ մէծ գետերն ասոնք են.

Տունա, որ կը թափի Սալիտակ ծովը.

Դունէտ, Նեւա, Տունա, Նիկմէն, Վիադուլա,  
Օտէր՝ Պալդիկ ծովը.

Էլպա, Վէզէր, Հռենոս, Դամիզ, Սենա, Լուսո,  
Շէնըն, Սիվըն, Կարոն, Մինհօ, Տուէրո,  
Դակօ, Կուատիանա, Կուատալդիվիր՝ Ատլան-  
տեան ովկիանոսը.

Բօ, Ատիճէ՝ Ագրիական ծոցը.

Էպրօ, Հռոդանոս, Առնօ, Տիբերիս՝ Միջերկրա-  
կան ծովը.

Դանուբ, Տներէր, Տնեսդէր՝ Աև ծովը.

Տոն՝ Ազախու ծովը.

Վոլկա, Ուրալ՝ Կասպից ծովը :

### ՕՒ, ՀՈՂ, ԲԵՐՔ

Եւրոպայի օղը բարեխաւն է, միայն հիւսիսային  
կողմէրը սաստիկ ցուրտ :

Հողը ընդհանրապէս խիստ բարեբեր է . վասն զի մշակութիւնն ալ չառ ծաղկած է :

Գլխաւոր բելքն է՝ երկաթ , կապար , պղինձ , անագ , հանքածուխ , աղ , սնդիկ , գեղեցիկ մարմար : Բոյսերուն մէջ՝ ցորեն , բրինձ , եգիպտացորեն , գետնախնձոր , կանեփ , ձէթ , լևոն , խաղող և ամէն տեսակ պտուղներ : Կենդանիներէն՝ օգտակարներուն ամէն տեսակը շատցած են Եւրոպա , ու վնասակարները պակսած :

### ԲՆԱԿԻՉ, ԱՅՋՈՒ, ԿՐՕՆՔ

Եւրոպայի բնակիչներուն թիւն է գրեթէ 270,000,000 այլ և այլ ազգէ սերած , որոնց գըլխաւորներն են յոյնք , հոռոմէք , գերմանք , սլավք և թուրք :

Եւրոպայի մէջ 53 լեզու կը համբեն , որոնք չորս գլխաւոր արմատ ունին . յոյն , լատին , տեւան ու սլաւ :

Եւրոպայի մէջ հիմա գործածական լեզուներն ասոնք են՝ գաղղիերէն , խալերէն , գերմաներէն , անգլիերէն , ռուսերէն , տաճկերէն , յունարէն , սպաներէն :

Եւրոպայի մէջ իրեք գլխաւոր կրօնք կայ . քրիստոնէութիւն , մահմէտականութիւն , հրէութիւն : Քրիստոնէութիւնն ալ իրեք երեելի ճիւղ կը բաժնուի . կաթողիկէ , յունադաւան և նորալանդ կամ բողոքական :

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԿԱՌԱՎԱՐՈՒ-  
ԹԻՒՆ

Քաղաքականութեան ու արուեստի կօգմանէ  
Եւրոպա այնչափ ծաղկած է որ հարկաւորէն  
դատ՝ զարդի ու զեղսութեան բաներուն ալ չափը  
չկայ : Վաճառականութիւնը բոլոր աշխարհք տա-  
րածուած է . իսկ գիտութիւնները այնչափ սկայ-  
ծառացած են, որ աշխարհիս մէջ ատեն մը կամ  
տեղ մը ասոր նմանը չէ եղած :

Եւրոպայի մէջ ընդհանրապէս երեք տեսակ  
կառավարութիւն կայ . ազատ միապետութիւն,  
չափառած միապետութիւն ու հասարակապե-  
տութիւն :

## ԲՐԻՏԱՆԻԱ.

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲՐԻՏԱՆԻԱ կամ ընդհանուր անուամբ Անգլիան և առաջնային ըսուած երկրին տիրեցին Հռովմայեցիք Քրիստոսի 78 թուականին. բայց 448ին թողուցին: Բրիտանացիք Ակովախացւոց ձեռքէն նեղութիւն քաշելով, Անկլո-սաքսոն ըսուած աղդէն օգնութիւն ուղեցին. անոնք ալ եկան բոլոր երկրին տիրեցին, ու անունը իրենց գլխաւորին անունով Անգլիա դրին: Ետքէն 1066ին Նորմանակայ Դուլիելմոս դուքսը տիրեց Բրիտանիոյ, և հոն Նորմանակայէն բնակիչներ խաւրեց. անկէ Ետքը Անգլիան քանի գնաց մեծցաւ, Ակովախան, իուլանտան և ուրիշ շատ երկիրներ աշխարհիս ամէն կողմը ու կզգիներ ալ իր հետը միացնելով ըսուեցաւ Բրիտանական կայսերութիւն կամ Միացնաւ Անգլո-սաքսոն մշտին Բրիտանիոյ և Իռլանդայ:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Բրիտանիան Եւրոպայի արևմտեան կողմը կ'իջնոյ, և չորս դին պատած է Ատլանտեան ովկիանոսը:

Բրիտանիան չորս գլխաւոր մաս կը բաժնուի. Անգլիա, Սիւլվիա, Իռլանդա և անոնց քովի Մանչ կոչիները:

Տարածութիւնն է 110,846 քառակուսի մղոն:

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, մանաւանդ  
Սկովտիան ու Կալեսի գաւառը:

Գլխաւոր գետերն են՝ Դէմզ կամ Դամիզ, Ալ-  
վուն, Շէնըն, Ուզ ու Դրէնդ:

Հատ տեսակ հանք ունի. գլխաւորներն են՝  
երկաթ, կապար, անագ, պղինձ ու հանքածուխ:  
Կենդանիներուն մէջ անուանի է ձին, ոչխարնե-  
րուն բուրդն ալ շատ աղնիւ է:

Օդը ցուրտ ու թաց ըլլալուն համար՝ երկիրը  
խաղող չի հասցըներ, բայց առատ ցորեն ու խոտ  
կու տայ:

Բնակիչն է 29,600,000, ասոնց լեզուն է անգ-  
ղիերէն, որ հին Կելտաց լեզուէն առաջ եկած է:

Արուեստներն ու վաճառականութիւնը խիստ  
ծաղկած են, ինչպէս նաև երկրագործութիւնը.  
Ճեռագործները վերջի կատարելութեան հասած.  
շէնքերն աղուոր, պարտէզները գեղեցիկ, ու-  
սումնական տեղուանիքը խիստ անուանի, և բոլոր  
աշխարհիս քաղաքականութեանը առաջին կեդրոն-  
ներէն մէկն է: Միայն վաճառականութեն նաւերը  
քսան հազարէն աւելի են, որոնց մէջ հարիւր յի-  
սուն հազար նաւաստի կայ որ աշխարհիս ամէն  
ծովերը կը պաշտին, և անոր համար ամէն ազգաց  
հետ առուտուր կ'ընեն. Երկրին մէջ ալ բաղմա-  
թիւ ջրանցքներ ու երկաթուղիներ ունի:

Կրօնքը՝ Անդղիոյ և Սկովտիոյ մէջ նորազանդ  
է, իսկ Իռլանտայի մէջ կաթողիկէ:

Տէրութեան կառավարութիւնն է սահմանա-  
դրական միապետութիւն. թէ արական և թէ ի-  
դական ձիւղի մէջ թագը կը ժառանգուի:

Զօրքն է 250,000 հոգի . Նաւատորմիզը 630  
կտոր նաւ , մեծ ու պղտիկ , որոնց մէջ կան 70,000  
հոգի :

## ԳԼԽԱՌՐ ՔԱՂԱԲՆԵՐԻ

### ԱՆԳԴԱ

Լուսրա կամ լուսոն (3,020,000 բնակիչ ունի) աէրութեան մայլաքաղաքը , Եւրոպայի մէջ ամենէն բազմամարդ , և բոլոր աշխարհիս մէջ ամենէն վաճառաշահ քաղաքն է , Դամիզ գետին վրայ . իր նաւահանգստին մէջ միշտ երկու հազար նաւէն աւելի կը գտնուի : Մէջի գլխաւոր չէնքերն են՝ Սուրբ Պօղոս , որ բոլոր աշխարհիս վրայ նորազանգներուն ամենէն մեծ եկեղեցին է . Ուեսդմինստրի հոյակապ եկեղեցւոյն մէջ ալ թագաւորներու և մեծ մարդկանց գերեզմաններ կան , ժողովարանի պալատը , կամուրջները , գետափունքը , և մանաւանդ Դամիզ գետին տակի մեծագործ ճամբան՝ որ 1300 ոտք երկայնութիւն , 200 ոտք լայնութիւն ունի : — Աս քաղքիս մէջ ծնան՝ Պագոն , Միլտոն , Բոլ , Նեւտոնն ալ Ուեսդմինստրի եկեղեցին թաղուած է :

Մէնցըդը (364,000) վաճառականութիւնը խիստ ծաղկած , բամբակեղէն ու մետաքսեղէն դործուածքներն անուանի :

Պէրտունկէտ (328,000) երկաթեղէնի կողմանէ բոլոր աշխարհիս առաջին գործարանն է , ուստի վաճառականութիւնն ալ խիստ մեծ :

Լիվըրթուր (476,000) Լոնարայէն եաւ աշխարհիս երկրորդ ծովային վաճառաշահ քաղաքն

Է. 30 նաւարան ունի ուր կը շինուին նաւեր ու  
շոգենաւեր :

ՊՐԻՄԴ.Լ. (162,000)	{	ասոնք շատ բանուկ նաւահանգիստներ են :
ԲԼԻՄԸՏՀ (80,000)		
ԲՈՐԴՄԸՏՀ (100,000)		
ՀԵԼ.Լ. (42,000)		
ԵԱՐՄԸՏՀ (25,000)		
ՏՈՒՎ.Ր (9,000)		

ՖՈԼԳՄԴ.Դ (4,000) ԼԻՏՍ (225,000) շատ գործարաններ ունի, մա-  
նաւանդ բրդէ գործուածքներու :

ՀԵԼԻՖԻՔ.Ս (110,000) շատ գործարաններ ունի  
բամբակի, չուխայի և ասուեղինաց :

ՀԵՖՖԻ.Տ.Տ (185,000) շատ գործարաններ ունի  
դանակեղինաց :

ԿԻՒԳԸ.Լ (110,000) ասոր քովն է ԲՐԻՄԱՆԻՈՅ  
ամենէն մեծ ածխահանքը :

ԿՐԻՄԻ.Զ (44,000) աստեղաբաշխութեան երեւ-  
լի դիտարան ունի :

ՊԼԱՏՀ (58,000) անուանի է հանքային ջրերուն  
համար :

ԱՐԵՎ.Հ.Ր-ԴԻ.Տ.Ո.Ւ.Լ (65,000) մեծ երկաթա-  
հանք ունի :

ԵՕՄ.Ք (26,000) շատ հին քաղաք է. Անգղիոյ  
երկու արքեպիսկոպոսներէն մէկը հոս կը նստի, և  
մայր Եկեղեցին մեծագործ է :

ՕՔՍՖԸ.Ը (24,000) | ասոնց համալսարանները  
ԳԻՄՊ.Ր.Ի.Ճ (25,000) | խիստ անուանի են :

ԱԾԱՏԸ.Ր.Լ.Խ.Տ (80,000) բանուկ նաւահանգիստ  
ունի, ուր հանքածխոյ մեծ վաճառականութիւն  
է՝ ըլլայ :

Գ. ԵՆԴ. ԸՐՊ. ԸՐԻ (14,000) ՀՈՍ ԿԸ ՆԱՄԻ ԱՆԳՂԻՌ  
ՆԱԽԱԳԱՀ ԱՐՔԵԱՂԻՍԿՈՎՈՍը :

ՍԴՐԵԴ. Ֆ. ԸՐԻ (3,800) ՀՈՍ ՃՆԱւ ու մՆԱւ ՇԵԳ-  
ԱԲԻԾ անուանի բանաստեղծը :

ՄԷԿԱԼ ԵՐԱԵԼԻ ՔԱՂԱՔՆԵՐՆ ասոնք Են . ՊՐԵՄ-  
ՖԸՐՄ, ՍՈԼՓԸՐՄ, ԲՐԵՍՊԸՐՆ, ՊՐԱՅՊԸՐՆ, ՊՌԼՊԸՐՆ,  
ՆՌՌԻԾ, ՌՈՌՉԱՎԼ ԿԼՄԱՊԸՐ, ՓԷԼՄԸՐՄ, ՆՈԴԻՆԿԷՄ,  
ՈՒԲՆԱՊԸՐ, ՎՌԵՐՍՐԱՊԸՐ, ԼԵՆԳԷՍՊԸՐ :

### ՍԿՈՎՏԱԱ

ԼՇՏԻՄՊՈՒՐԿ (187,000) անուանի համալսարան  
ու խիստ բանուկ նաւահանգիստ ունի :

ԿԼԵՍԿՈՑ (424,000) համալսարանը անուանի  
է, վաճառականութիւնն ալ խիստ բանուկ, բրդե-  
ղէն գործուածքի ու շոգեշարժ մէքենաներու կող-  
մանէ երևելի է :

ՏԸՆՏ (95,000) վաճառականութեանն ու կտա-  
ւեղէն գործուածքին համար անուանի է :

ԱՊԼՐՏԻԿ (74,000) Սկովտիոյ գլխաւոր նաւա-  
հանգիստն է :

### ԻՌԼԱՆՏԱ

ՏԸՆԼԻԿ (317,000) Լօնտրայէն Եաքը տէրու-  
թեան առաջին մեծ քաղաքն է, որ խիստ հին հա-  
մալսարան մը ունի :

ԳՈՐԻ (197,000) վաճառաշահ քաղաք է, նա-  
ւահանգիստը շատ գեղեցիկ :

ԼԻՄԻՐԻԿ (197,000)	ասոնք բանուկ նա- ւահանգիստներ են :
ԳԻԿԵՖԱՍԻ (100,000)	
ՈՒՌՈԴ. ԸՐՊ. ԸՐԻ (59,000)	

Արտե (9,000) հոս կը նստի Խոլանտիոյ նախագահ արքեպիսկոպոսը :

### ՄԱՆՐ ԿՂՋԻՆԵՐ

Առանտեան ովկիանոսին մէջ՝ ՇԷԳԱՅՆ, և Ուկադեան ու Հէբրիդեան կղզիները .

Խոլանտայի ծովուն մէջ՝ Մէն և Ինկլսի ,

Հիւսիսային ծովուն մէջ՝ Հէլկոլանտ .

Մանիգայի մէջ՝ Ուայդ, Կըոնդի և Շըոդի .

Միջերկրական ծովուն մէջ՝ Մալդա :

### ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐՍ

#### ԱՆԳԼԻԱՅԻՑ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մէկ մէծ կտորը, Աէլլան կղզին, Պիրմանի երկրին քանի մը գաւառները, Մալագդա, Սինկաբուր կղզին, Հօնկգոնկ՝ Չինումաչինի մէջ, և Ատէն՝ Արաբիոյ մէջ :

Ափրիկէի մէջ՝ Կամպիային մէկ մասը, Սիերրա Վիոնէ, Բարեյյուսոյ գլուխը, Սուրբ Հեղինէ, Վերափոխման կղզիները, Գաղղիոյ կղզին և ուրիշ շատ մասն կղզիներ :

Ամերիկայի մէջ՝ Կրոէնլանտիայի հիւսիսային կողմը, Նոր Բրիտանիա, Եռւգագանի մէկ կտորը, Կույանայի մէկ կտորը, Պաֆֆինոյ ծովուն կղզիները, Սուրբ Լաւրենտիոսի ծոցին մէջ եղած կըլզիները, Պէրմուտեան կղզիները, Լուդայեան կըլզիները, Եամայիգա կղզին, Փոքր Անգլիեան կըլզիներուն մէծ մասը :

Ովկիանիայի մէջ՝ Նոր Հոլանտա, և Վան Տէմէն :

Անգլիացւոց ձեռքն և նաև Ճիպիլդէրբա քաղաքը՝ (17,000) Սուանիոյ արևմտեան ծայրը :

## ՏԱԿԻՄԱՐԳԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Տանտրագան հին ատեն Կիմբըրացւոց հայրենիքն էր, որ Վրիստոսէ 100 տարի առաջ բոլոր Եւրոպան կոխեցին ու աւրըշտըկեցին, անոր համար Կիմբըրեան Քերսոնիսոն ալ կ'ըսուէր : Տանիմարդացիք կամ Դանիք 1017ին Անդղիոյ վրայ վազեցին ու 25 տարի հօն տիրեցին : Հիմա Տանիմարդան ինքնագլուխ սահմանադրական միապետութիւն է :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Տանիմարդայի սահմանը հիւսիսէն Գաղղղէկադի ծոցն է, արևելքէն Պալդիկ ծովը, հարաւէն Գերմանական դաշնակցութիւնը, արևմուտքէն հիւսիսային ծովը :

Չորս գլխաւոր մաս կը բաժնուի . Բան Տանիմարդա իամ Արշակունյացոս Դանէաց, Եռութլանդ, Իւլիանդ կղզին և Ֆերեօր կղզիներն :

Տարածութիւնն է 11,000 քառակուսի մղոն :

Երկիրը դաշտային ու անքեր է, մանաւանդ հիւսիսային կողմերը :

Դլխաւոր գետերն են Ելսա, Եյտէր, Դրաւէ, Կուտէն :

Օդը ցուրտ , խոնաւ ու փոփոխական է :

Իսլանտայի մէջ շատ հրաբուխներ ու հանքային  
տաք ջրեր կան , օդը շատ ցուրտ է :

Բերքերուն մէջ անուանի է ռինկա ձուկը , որ  
մարտ ամսուն մէջ խիստ շատ կ'ելլէ . հոչակաւոր  
է նաև ձին , և մանաւանդ ծովային թռչուններուն  
փետուրները՝ որ թէ Տանիմարգայի և թէ Իսլան-  
տայի մեծ վաճառքներէն մէկն է :

Բնակիչը 1,700,000 . Հեղունին գերմաներէնին  
մըկ տեսակն է :

Կրօնքը ընդհանրապէս նորադանդ է :

Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրա-  
կան միապետութիւն է , և թագն իգական ձիւղի  
մէջ ալ ժառանգական է :

Զօրքը 30,000 . նաւատորմիզը 30 կտոր նաւ :

### ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԳՈԲԵՆՀԱԿ կամ ԳԵՕՊԵՆՀԱՎԱ (156,000) , ԶԷ-  
լանտ ու Ամակէր կղզիներուն մէջ , մայրաքաղաքն  
է , որ փառաւոր նաւահանգիստ ունի Սունտ նե-  
ղուցին վրայ . վաճառականնութիւնը խիստ բանուկ  
է . արուեստի , ճարտարութեան ու գիտութեանց  
կողմանէ Եւրոպայի երեւլի քաղաքներէն մէկն է :

ՀԵԼՍԻԿՈՐ (8,000) Սունտին նեղ տեղը ամուր  
ու վաճառաշահ քաղաք է : Ամէն ազգի վաճառա-  
կան նաւերը հոս տուրք մը կը հատուցանեն :

ԱՅՊՈՒՐ (8,000) . ԱՅՐՈՒՄ (8,000) . ԵՌՈՒ-  
ՄԱՆՏ թերակղզին վրայ նաւահանգիստներ են :

### ԿԴՋԻՆԵՐԸ

Պալքիկ ծովուն մէջ՝ ջեղանտ, Ֆիէն կամ Փիռ-  
նիս, Լալանտ, Փալսդէր, Պոռնհոլմ:

Ալշանտեան ովկիանոսին մէջ՝ Խալանտա ու Փէ-  
րէօր կղզիները:

### ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴԱՒՐՍ ՏԱԿԻՄԱՐԳԱՅԻ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ամերիկայի մէջ՝ Կրէնլանտ, Սուրբ Թովմաս,  
Սուրբ Յովհաննէս և Սուրբ Խաչ կղզիները. Կու-  
սանաց կղզիներէն՝ Փոքր Անդիլեանց խումբ:

### ՇՈՒԵՑ ԵՒ ՆՈՐՎԵԿԻԱ.

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՇՈՒԵՑ ԵՐԿՐԻՆ հին ատենը Փինք կամ Փին-  
լանտացիք տիրեր էին, որոնց ցեղը մինչև հիմա ալ-  
կայ, և կը բնակին Շուետի ու Ռուսաստանի հիւ-  
սաային ծայրը. Ետքը Գոթացիք առին. իսկ Նոր-  
վեկիան ատենով Տանիմարգայի կտորն էր, 1814ին  
Շուետի տէրութեանը հետ միտցաւ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ծուետին սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովին է, արևելքէն Ռուսաստանը, հարաւէն Պաղպիկ ծովը, արևմուտքէն Ասլանտեան ովկիանոսը:

Ծուետի տէրութիւնը իրեք գլխաւոր մաս կը բաժնուի. Թագաւորութիւն Ծուետաշ, Թագաւորութիւն՝ Նորվեգիա և Կղզիները:

Տարածութիւնն է 220,000 քառակուսի մղոն:

Երկիրը գաշտային է, շատ լճեր ունի, բնակիչը քիչ: Նորվեգիան լեռնոտ ու քարուտ է:

Գլխաւոր գետերն են՝ Դոսնէա, Լուլէա, Ումէա, Բիգէա, Կլոմէն, Դանա:

Օդը ցուրտ է, հողը բարեքեր չէ, բայց երկաթի, աղնձի, արծաթի հանք ունի. Փայտը խիստ շատ է. կենդանիներէն ալ անուանի է հիւսիսային եղնիկը, և ուրիշ բրդոտ վայրի կենդանիներ:

Բնակիչն է գրեթէ 5,000,000, լեզունին գերմանէրէնին մէկ տեսակն է:

Կրօնքը նորազանդ է, և ուրիշ դաւանանք ունեցողները քաղաքական իրաւունքներէ զրկուած են:

Կառավարութիւնը չափաւորած միասկետութիւն է, և ժառանգութիւնը միայն արական գծի մէջ է:

Զօրքը 125,000, նաւատորմիզը 240 կտոր նաւ:

## ԳԼԽԱՌՈՐ ԳԱՂԱՔՆԵՐԸ

### Ը Ա Ւ Ե Տ

ՍԴՐՈՎՈՒՄ կամ ՍԴՐՈՎՀՈՎՈՒՄ (125,000) Մէլառ  
ՀՅԻՆ մէջ քանի մը մանրու խոշոր կղզիներու և եր-  
կու թերակղզիի վրայ գեղեցիկ կերպով շինած՝  
տէրութեան մայրաքաղաքն է։ աղեկ ձեռագործ-  
ներ և ուսումնական տեղեր, ու բանուկ վաճառա-  
կանութիւն ունի։

ԿՈԴԵԿՊՈՏՐԿ կամ ԿՈԴԵՊՈՏՐԿ (42,600) Գագ-  
դէկաղին վրայ բանուկ նաւահանգիստ ունի։ ա-  
րուեստի ու վաճառականութեան կողմանէ Սդոգ-  
հոլմէն ետքը երևելի քաղաքն աս է։

ԳԱՐԵՍԴՐՈՒՄ (14,600) տէրութեան պատե-  
րազմական նաւահանգիստն է։

ՈՒԲՍԱԼՄ (10,000). ասոր համալսարանը խիստ  
անուանի է։ Լիննէոս բնախօսը հոս վարպետ ե-  
ղած է։ Աս քաղքիս քովը մեծ ու անուանի եր-  
կաթահանք կայ։

Երևելի են նաև Կորդէրիննկ, Մալմոյէ, Գալ-  
մար, Գրիստիանշդատ։

### Ն Ա Ր Վ Ե Կ Ի Ա

ԳՐԻՍՏԻԵՆԻՑ (40,000) մեծ վաճառականու-  
թիւն ունի տախտակի և երկաթի։ Համալսարանը  
անուանի է։

Պէրսէն (25,000) վաճառաշահ քաղաք է։ տէ-  
րութեան նաւարանը հոս է, ուր շատ ալ վաճա-  
ռական նաւեր կը շինուին։

ՊԵՈՐՈՍ . սղնաձի մեծ հանք ունի . ցուրտը խիստ  
սաստիկ է :

ՎԱՐՏՀԱՌՄ . Եւրոպային ամենէն հիւսիսային  
քաղաքն է :

ՏՐՈՆԴԱՑՑՄ (74,000) . ատենով Կորվեկիոյ թա-  
գաւորները հոս կը նստէին . սղնաձի վաճառակա-  
նութիւն ունի :

ՖՐԻՏԵՐԻԳՑԱԼ (8,600) , նաւահանգիստ է . հոս  
սալաննուեցաւ կարողոս ժբ Ըուետաց թագաւո-  
րը յամին 1718 , քաղաքին պաշարմանը ատեն :

Կան նաև Ադավանկէր , Տրամմէն , Գրիստիան-  
սանտ , և Համմէրֆէսդ , որ Եւրոպայի ամենէն  
հիւսիսային նաւահանգիստն է :

### Կ Դ Զ Ի Ն Ե Բ Բ

Պալդիկ ծովուն մէջ Կոդդլանտ , Օլանտ :

Մառուցեալ ովկիանոսին մէջ Լոֆֆոտէն կղզի-  
ները . ասոնց քովերն է Մալսդրէօմ ըսուած սոս-  
կալի յորձանիքը , որ շատ անգամ նաւեր կ'ընկղմէ ,  
որուն ձայնը մղոններով հեռուէն կը լսուի :

Ըուետաը Եւրոպայէն դուրս ունի միայն Առւրբ  
Բարթուղիմէոս կղզին , յարեմտեան Հնդիկս , որ  
Փոքր Անդիլեան կղզիներուն մէկն է :

## ԹՈՒՍԱՍՏԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Թուստի թագաւորութիւնը սկսած է 900ին ատենները . բայց մէջերնին քաղաքականութիւն ծաղկեցընողն եղաւ մէծն Պետրոս 1700ին սկիզբները , որ տէրութիւնն ալ ընդարձակեց : Ետքը լէհաստանի մէկ կտորը և ուրիշ երկիրներ ալ առնելով՝ աս տէրութիւնը շատ մէծցաւ : Հին ատեն Ռուսաստանի բնակիչներն էին Սկիւթացիք , Սլավեանիք , Սարմատացիք ու Ֆինլանտացիք : Հիւսիսային կողմերը կը գտնուին Լաբոն ու Սամոյէտը սուած կարճահասակ ազգերը , հարաւային կողմերն ալ շատ ժողովուրդներ՝ գրեթէ ամէն ազգէ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ռուսաստանին սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է , արևելքէն Ասիոյ Ռուսաստանը , հարաւէն Սև ծովն ու Աւստրիան , արևմուտքէն Բրուսիան , Պալգիկ ծովն ու Չուկաը :

Հինգ գլխաւոր մաս կը բաժնուի աշխարհագրորէն . հիւսիսային Ռուսաստան , Միջին Ռուսաստան , հարաւային Ռուսաստան , Լէհաստան , և Կղզիները . իսկ ըստ քաղաքական կառավարութեան 64 ինսականութիւն կը բաժնուի բոլոր կոյ-

սերութիւնը, նաև քանի մը առանձին նոհանգներու գոտունէ:

Տարածութիւնն է 1,536,000 քառակուսի մղոն:

Երկրին ընդհանրապէս դաշտային է. միայն երկու լեռներու գոտի ունի. մէկն Ուրալ, մէկալլ Կովկաս:

Հիւսիսային կողմերը հողը անբեր ու քիչ մշակած է. իսկ միջին ու հարաւային կողմերը խիստ պաղաբեր:

Գլխաւոր գետերն ասոնք են.

Բեչորա՝ որ Սառուցեալ ովկիանոսը կը թափի.

Տուինա՝ Սոլիտակ ծովը.

Տունա կամ Տիւնա՝ Ուիկայի ծոցը.

Կեւա ու Նիկմէն՝ Պալդիկ ծովը.

Դանուբ, Տնեբէր, Տնեսդէր, Տոն, Կուպան՝ Աև ծովը.

Վոլկա, Ուրալ, Գումա, Թէրէք՝ Կասպից ծովը:

Գլխաւոր բերքն է՝ Երկալթ, կապար, պղինձ, արծալթ, բլազին, ոսկի, ամիանդ, որ Ուրալ լեռներէն ու Սիպերիայէն կ'ելլէն: Շատ անտառներ ունի. ցորենը առատ ու աղնիւ է. մորթը, կաշին և մուշտակները խիստ ընտիր: Կենդանիներուն մէջ նշանաւոր է Ճերմակ արջը, որ հիւսիսային ծովեղերքը կը գտնուի:

Բնակիչն է 68,500,000, ասոնց լեզուն սուսերէն է, որ Սլաւեան լեզուին մէկ ճիւղն է:

Կրօնքը յունադաւան:

Տէրութեան կառավարութիւնն է բացարձակ միապետական, և թագաւորը Կայսր և Խնդիրական մէնայն Ռուսաց և Զար կ'անուանուի:

Զօրքը 800,000. նաւատորմիզը 310 կտոր նաւ:

## ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### ՀԻՒՍՏԱՅԻՆ ՌՈՒՍԱՏԱՆ

ԲՆԴՐՊՈՒՐԻ (586,000) • մեծն ՊԵՏՐՈՍ շինեցաս մայրաքաղաքը Նեւա գետին բերանը յամին 1703, ուր որ իրեն սղնաձէ ձիաւոր արձանն ալ կայ՝ կրանիդ քարէ ժայռի մը վրայ տնկած։ Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ ամենէն աւելի ասոր տեսքը փառաւոր է՝ վողոցներուն լայնութեանը և շտկութեանը, հրապարակներուն ընդարձակութեանը, գեղեցիկ կրանիդէ գետափանցը, և սղալատներուն ու հասարակաց և մասնաւորաց շինքերուն աղուորութեանը պատճառաւ։ Ուսումնական և արուեստական յառաջադիմութեան կողմանէ ալ՝ բոլոր աշխարհիս առաջին կարգի քաղաքներէն մէկն է։ Լազարեան պարոնները հոս Հայոց համար գեղեցիկ եկեղեցի մը շինած են։ ատենավալ ալ մէր լեզուովը շատ դբքեր տպուած են աս քաղաքիս մէջ։

ՈՒԻԿ (75,000) ԲԵՂԲԱՊՈՒՐԻԷՆ Ետքը առաջին վաճառաշահ և խիստ ամուր քաղաքն է Տունա գետոյն վրայ։

ԳՐՈՆԴՎԱՏ (53,000) Նեւա գետին բերանը՝ Ուուսաց ծովային զօրքին գլխաւոր նաւահանգիսան է։ Նաւարանը աշխարհիս խիստ աղուոր նաւարաններէն մէկն է։

ՆՈՎԿՈՐՈՏ (45,000) Խլմէն լճին վրայ՝ ատենավալ շատ ծաղկած քաղաք էր, հիմա այնչափ չէ։ Ոիւրիդ հոս սկսաւ Ուուսաց թագաւորութիւնը 862ին։

ԱՐԽԱՆԿԵԼ (24,000) մորթի ու մուշտակի մեծ վաճառականութիւն ունի. նաւարանը անուանի ու նաւահանգիստը խիստ բանուկ է:

ՏՈՐԲԱԴ (15,000) անուանի համալսարան ունի և դիտարան:

### ՄԻՋԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՄՈՍԴՈՒԾ ԿԱՄ ՄՈՍԿՈՎ (378,000) հին ատեն Ռուսաց աթոռանիստ քաղաքն էր, հիմա ալ երկրորդ մայրաքաղաքն է, և իրենց թագաւորները հոս թագ կը դնեն. 1812ին գրեթէ բոլորովին այրեցաւ, բայց ետքէն ալ փառաւոր շինեցին: Ըէն քերուն մէջ երևելի է Գրեմզին՝ թագաւորական պալատը, և մայր եկեղեցին: Համալսարանը և ընդհանրապէս դրականութիւնը և արուեստները շատ ծաղկած են աս քաղաքիս մէջ: Անուանի է Լազարեան իշխաններուն հոս հիմնած հայկազեան վարժարանը: Մոսկուա երկաթուղեաւ միացած է Բեդրպուրկի հետ:

ԽՍՉԱՆ (60,000) Վոլկային մօտ՝ թաթարներուն մայրաքաղաքն էր. ունի համալսարան, և աստեղաբաշխութեան դիտարան. տրուեստներն ու վաճառականութիւնը շատ բանուկ են, և Սիովերիոյ բերքերուն գլխաւոր վաճառանոցն է: 1842ին գրեթէ կէսն այրեցաւ:

ԿԻՃՆԻ-ՆՈՎԿՈՐՈՏ (40,000) Վոլկա գետին վըրայ ամուր և վաճառաշահ քաղաք է, անուանի տօնալաճառ ունի, ուր տարուէ տարի երկու հարիւր հազարէն աւելի մարդ կու գայ առուտուրի համար:

ՕՐԵՆՊՈՒՐԿ (12,000) ԹԹԱՅԹԱՐԱԳ, ՊՈՎԻՄԱՐԱ-  
ԳԵՈԳ և Զինաց՝ Եւրոպացւոց հետ ըրած վաճա-  
ռականութեանը գլխաւոր տեղն է :

### ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍՍԱՏԱՆ

ՔԻԵՎ (70,500) Տներէրի վրայ, Մոսկուային ա-  
ռաջ Ռուսաց մայրաքաղաքն էր. հիմա ալ ա-  
նուանի է նոր համալսարանը, մայր եկեղեցին, և  
ամուր բերդը:

ԱֆՏԵՐԽԱՆ (52,000) Վոլկա գետին բերանը  
կղզիի մը վրայ շինած՝ հին թաթարներուն մէկ ցե-  
ղին մայրաքաղաքն էր. հիմա ալ բնակիչներուն մէկ  
մասը չայ են: Կասպից ծովուն վրայ ամենէն բա-  
նուկ նաւահանգիստն է, ու բոլոր տէրութեան  
գլխաւոր վաճառաշահ քաղաքներէն մէկն է. Ճու-  
կի, ձկնեկիթի (Խառնար) և գառի մորթին վաճառքն  
անուանի է:

ԱՄՐԱԴՐՈՎ (62,000) շատ գործարաններ, բժշ-  
կական պարտէղ մը և մեծ տօնավաճառ ունի:

ՕՏԵՍՍՍ (118,000) Սև ծովուն եզերքը, բոլոր  
Ռուսաստանի խիստ գեղեցիկ ու ծաղկած քաղաք-  
ներէն մէկն է. և թէպէտ նոր շինուած է, բայց  
ազատ նաւահանգիստ ունենալովը խիստ շուտ ա-  
ռաջ գնաց վաճառականութեամբ և հարստու-  
թեամբ. անուանի է Ռիշըլիօ Լիկէոնը՝ որ համալ-  
սարանի աստիճան ունի:

ԽՍԱՐԳՈՎ (50,000) վաճառաշահ քաղաք է. հա-  
մալսարան ունի:

ԹԱՏԵՎԱՆ կամ ԹԱԿԱՆՐՈՎ (16,600) Ազախոռ  
ծովուն վրայ ամուր ու բանուկ նաւահանգիստ է.

Հոս մեռաւ Աղեքսանդր Ա. Ռուսաց կայսրը 1825ին:

Սեւստոբուլ կամ ԱԳԵԱՐ (20,000) Սև ծովուն վրայ շատ գեղեցիկ նաւահանգիստ է, ամուր բերդերով պատած, նաւարանը խիստ բանուկ էր, և հոս կը կենար Ռուսաց Սև ծովուն վրայի նաւառորմիզը: Յամին 1855 երկար պաշարումէ ետև առին զայն Գաղղիացիք և անոնց գաշնակիցները:

ԱԳՄԷՉՏՏ կամ ՍԻՄՖՈԲՈՒԼ (22,000) Խրիմի գլխաւոր քաղաքն է:

ՊԱՆՉԵՍՏՐԱՑ (13,000) Խրիմի թաթար խաներուն մայրաքաղաքն էր:

ՔԵՖԻ կամ ԹԵՌՈԴՈՍԻԱ (8,000) Սև ծովուն վրայ նաւահանգիստ է, ասիհնով անուանի՝ բայց հիմա ընկած է:

ԿԵՐՉ (20,000) Ենիգալէի նեղուցին բերանը աղատ ու բանուկ նաւահանգիստ է:

ԿԵԶԱԼԵՎԻ կամ ԵՒՊՏՏՈՐԻԱ (24,000) Խրիմի գլխաւոր նաւահանգիստներէն մէկն է:

ԽԱՐՍՈՒ (15,000) Խրիմի ծաղկած քաղաքներէն մէկն է. բնակիչներուն մեծ մասը թաթար ու Հայ են:

ՆՈՐ ՆՐԽԻՋԵՏՏԱ (13,000) և ԳՐԻԳՈՐՈՒՊՈՒԼԻՍ. Հայոց քաղաքներ են, որ շատ աղատութիւններ ալ ունին:

ԲՈՒԴՏՏԻԱ (28,000) մեծն Պետրոս հոս անուանի յաղթութիւն ըրաւ Ծուէտի Կարոլոս ԺԲ. թագաւորին դէմ:

ԲԵՐՍՈՒ (34,000) ամուր ծովահայեաց քաղաք է Տներէր գետին բերանը, և պատերազմական նաւահանգիստ:

ՆԻԴՈՒԱՆԻ (32,000) գեղեցիկ քաղաք է, նաւահանգիստ պատերազմի և աթոռ ծովակալի,

ՔԱՇՆԵՒ (93,000) ՊԵՍԱՐԱՎԱԳԻՈՅ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔԻՆ է, ունի դպրոց ՃԵՄԱԿԱՆ :

ԱԳԻՐՄԱՆ (26,000) ՏՆԵՍԴԵՐ ԳԵՏԻՆ ԲԵՐԱՆԸ ԱՄՈՒՐ և ՎԱՃԱՌՈՎԱՇԱՀ ՔԱՂԱՔ է :

## ԼԵՀԱՍՏԱՆ

ՎԱՐՍԱՒԻՆ ԿԱՄ ՎԱՐԵՎԱՒ (223,000) ՎԻՍԴՈՒ-  
ԼՍ ԳԵՏԻՆ ՔՐՈՎԾ՝ ԱՏԵՆՈՎ ԼԵՀԱՌՈՎԱՆԻ ՄԱՅՐԱՔԱ-  
ՂԱՔԻՆ ԷՐ, ՀԱՐՈՒՍԱ Ու ՎԻԱՌՈՎԱԼՈՐ. 1830ԻՆ ԵՂԱՃ  
ԱՎԱԹԵՐԱՋՄԻՆ ԱՏԵՆԸ ՀԱՏ ԱԼՐՈՒԵցաւ, ԲԱյց ՀԻ-  
ՄԱ ԱԼ ԲՈՂՈՐ ՄԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵՐ-  
ՐՈՐԴԻՆ է, ԱՄՈՒՐ, ԳԵՂԵցիկ ու ամէն կողմանէ  
ծաղկած :

## ԿԴԶԻՆԵՐԸ

ՍԱՒՐՈՎԵԱԼ ԾՈՎՈՒՆ ՄԷՋ՝ ՍԲԻՑԱԳԵՐԻԿ, ՆՈՐ ԶԵՄ-  
ԼԵԱ, ՎԱՅԿԱՋ, ԳՎԱԼԿՈՎԵԿՎ :

ՊԱԼԴԻԿ ԾՈՎՈՒՆ ՄԷՋ՝ ԱՀԱՆՏ, ՏԱԿՈ, ԿՈԶԵԼ :

## ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐՄ

## ՌՈՒՍԱՅ ԵՐԿԻՐՆԵՐԸ

ԱԽԻՈՅ ՄԷՋ՝ ՎՐԱՍՏՈՎԱՆ, ՇԵՐՈՎԱՆ, ԻՄԷՐԵԹ,  
ԱՍՊԱՋԱ, ԶԵՐՔԵՎ, ՀԱՅՎԱՍՏՈՎԻՆ ՄԷԿ ՄԱՍԸ, ՍԻ-  
ԱԿԵՐԻՎ և ԹՈՒՐՔԱՍՏՈՎ :

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ՝ ՌՈՎՈՒ ԱՄԵՐԻԿԱՆ՝ որ հիւսի-  
սային ծայրն է :

## ԳԱՂՂԻԱ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԳԱՂՂԻԱ ատենով Հռովմայեցւոց տակն էր .  
400ին ատենները Գերմանիայէն Ֆռանգ ըսուած  
ազգն եկաւ տիրեց հոն , ու իրենց անունովը երկ-  
րին անունը ըսուեցաւ Ֆրանսա կամ Ֆրանս : Մէ-  
ջերնէն առաջին թագաւորն եղաւ Փարամոնտ . իսկ  
տէրութիւնը ծաղկեցընողն եղաւ մեծն Կարոլոս ,  
1792ին մեծ խոռվութիւն մը հանելով թագաւո-  
րութիւննին փոխեցին՝ հասարակապետութիւն  
ըրին . 1804ին Պոնաբառդէ Նաբոլէոնը կայսր ե-  
ղաւ . և 1815ին երբոր ինքը քշուեցաւ , Գաղղիա-  
ցիք առաջինին պէս նորէն թագաւորութիւն ունե-  
ցան : 1830ին նոր խոռվութենէ մը ետքը՝ սահմա-  
նադրական թագաւորութիւն հաստատեցին , բայց  
1848ին նորէն հասարակապետութիւն հաստատե-  
ցին նախադահ ընտրելով Լուգովիկոս Նաբոլէոն՝  
մեծ ինքնակալին եղբօրորդին , որ երեք տարիէն  
ետեւ 1851ին վերջերը կայսր անուանուեցաւ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Գաղղիոյ սահմանն է հիւսիսէն Պելճիան , Հո-  
լանտան ու Բրուսիան . արևելքէն՝ Գերմանական  
գաշնակցութիւնը , Զուիցերին ու Սարտենիան .  
Հարաւէն Միջերկրական ծովն ու Սպանիան . արև-

մուտքէն Առլանտեան ովկիանոսը և Մանշ կամ  
Մանիգան :

Տարածութիւնն է 158,000 քառակուսի մղոն :  
Երկրին արևելեան ու հարաւային կողմերը լեռ-  
նոտ են, իսկ հիւսիսային ու արևմտեան կողմերը  
դաշտային :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Հոսոգանոս կամ Ռօն՝ Միջերկրական ծովը կը  
թափի .

Լուառ, կարոն, Շարանդ՝ Առլանտեան ովկիա-  
նոսը .

Սէն կամ Սէնա, Օռն, Վիր, Սոմ՝ Մանիգայի ծո-  
ցը կը վազեն :

Օդը բարեխառն ու առողջ է. բայց հիւսիսային  
կողմը ցուրտ :

Բերքն է Երկաթ, պղինձ ու հանքային ածուխ .  
Հողը խիստ աղէկ բանեցուցած է. ձէթն ազնիւ,  
գինին խիստ անուանի, մանաւանդ Պուրկօյն,  
Շամբանեա ու Պորտօ գաւառներուն գինիները .  
Կենդանիներն ալ ընտիր են, մանաւանդ եղներն  
ու ոչխարները :

Բնակիչն է 37,500,000. Լեզունին գաղղիարէն ,  
որ Եւրոպայի ամէն լեզուներէն աւելի տարա-  
ծուած է :

Մշակութիւնը, արուեստներն ու ձեռագործնե-  
րը մեծ կատարելութեան մէջ են, թէպէտ և Անդ-  
ղիոյ չեն հասած . ուսմունքն ու գիտութիւնն ալ  
շատ ծաղկած են : Երկաթուղիներն ալ երկրին ա-  
մեն կողմերը տարածուած են :

Գաղղիան ատենով 33 նահանգ կամ գաւառ կը  
բաժնուեր, ետքէն 86 բաժին . 1800ին աւելնա-

Ըով Սավսիոյ ու Նիձձայի գաւառները՝ երեք բաժին, հիմա 89 բաժին կը համբուի:

Կրօնքն է կաթողիկէ:

Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրական կայսերութիւն:

Զօրքը 800,000, նաւատորմիզը 470 կտոր նաւ:

### ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԲՆԲԻԶ մայրաքաղաքը՝ (1,700,000) Աէն գետին վրայ, աշխարհիս մէջ առաջին ծաղկածքաղքն է, թէ քաղաքականութեան, թէ արուեստից և թէ գիտութեանց կողմանէ. Լոնտրային շատ բանի մէջ հաւասար, շատ բանի մէջ ալ վերէ: Երկաթուղեօք միացած է Պելճիոյ, Բրուսիոյ և Գերմանիոյ հետ, ինչպէս նաև Գաղղիոյ այլ և այլ մասանց հետ: Հասարակաց շնչերը, ճեմելիքները, պարտէզները, ուսումնական թանգարանները, ամենն ալ շատ փառաւոր ու անուանի են: Համալսարանը աշխարհիս մէջ մէկ հատիկ, թագաւորական գրատունն ալ ամենէն հարուստն է: Ծատ երեելի շնչեր է նաև մեծ պարիսսով որ նոր շնուռեցաւ՝ 16 բերդով: Աս քաղաքը մեռաւ Ռուբինեանց վերջի թագաւորը Լառն Զ. 1391ին. և հոս հաստատուեցաւ մեր ազգային Մուրատեան վարժարանը 1845ին:

Լիոն (320,000) բարիզէն ետքը ամենէն ծաղկածքաղքն աս է ամեն կողմանէ, շատ հին, ամուր ու գեղեցիկ. դիպակէ գործուածքներուն համար եղական:

ՄԵՐՍԻԼԻԱ (260,000) Միջերկրական ծովուն

վրայ մեծ ու գեղեցիկ քաղաք է, վաճառականութեան գործունէութիւնը զարմանալի, և նաւահանգիստը խիստ բանուեկ. աս քաղաքը Քրիստոսէ 600 տարի առաջ շինուած է : \*

ՊՈՐՏՕ (162,000) բանուեկ նաւահանգիստ ունի, և գինիի ու քացախի մեծ վաճառականութիւն :

ԻՐՈՒԱՆ (104,000) աէրութեան առաջին անուանի քաղաքն է՝ բամբակեղէն գործուածքներու կողմանէ :

ԿԵՆԴ (114,000) աղուոր նաւահանգիստ ունի Լուառ գետին վրայ. Ծագաւորական նաւերը հոսէ շինուին. Վաճառականութիւնն ալ շատ բանուեկ է :

ԳՈՒԼՈՒԶ (113,000) Եւրոպայի խիստ վաճառաշահ քաղաքներէն մէկն է, ամուր, և արուեստները ծաղկած :

ՍԴՐԱՍՊՈՒՐԿ (82,000) հոս գտաւ տպագրութեարուեստը Յովհաննէս Կուդդէմուկէրկ 1436ին. Խիստ ամուր ու ծաղկած քաղաք է, և մայր եկեղեցին շատ հոյակապ ու անուանի :

ՕՄԼԷԱՆ (50,000) հոս երկու անգամ անուանի յաղթութիւն ըրած են Գաղղիացիք, մէկ մը Ատտիղասայ, մէկ մըն ալ Անգղիացւոց դէմ. Վաճառաշահ ու ճարտարարուեստ քաղաք է :

ԱԿԻՆԵՕՆ (37,000) ատեն մը հոս նատան Հռոմայ սրբազն սպապերը :

ՊԵՐՋԱՆՍՈՆ (43,000) ասոր քովորը անուանի է Օսէլ այրը, որ խիստ մեծ է, ու շատ քարացած նիւթեր կան մէջը :

ԳԱԼԻ (12,000) ամուր քաղաք է, Գաղղիայէն Անգղիա անցնելու սովորական ու կարծ ճամբան աս ըլլալով նաւահանգիստը խիստ բանուեկ է :

ԴՐՈՒՅՆ (85,000) Գաղղիացւոց պատերազմական կան նաւերը հոս կը կենան . նաւարանն ու նաւա հանգիստը բոլոր Միջերկրականին վրայ եղական են մեծութեան կողմանէ :

ԿՐԵՆՈՊ (32,000) ասոր ձեռագործներն ու ամբութիւնը անուանի են :

ՄՌՈՒԲԵԼԻ (52,000) Եւրոպայի մէջ շատ անուանի է ասոր բժշկական պարտէզը :

ՏԻՖՈՆ (83,000) գինիի ու քացախի վաճառք ունի . հոս ծնած է մեծն Պոսիւէ :

ԱՐԵՆՍ (56,000) Գաղղիոյ թագաւորներն ասոր եկեղեցւոյն մէջ կ'օծուին :

ԱՐԵՆՍ (48,000) գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք է :

ՄԻՒՀՀՈԶԻՆ (46,000) ասոր ամէն տեսակ գործարանները շատ անուանի են :

ԱՄԻՒՆ (59,000) հին ու ամուր քաղաք է . մայր եկեղեցին շատ փառաւոր :

ՊՈՒՅՈՆՑ (35,000) ամուր ու բանուկ նաւա հանգիստ ունի :

ԼՎԼ (132,000) Եւրոպային ամուր ու վաճառաշահ քաղաքներէն մէկն է . անուանի է փողերանոցը :

ԱՐՁԱՆ կամ ՆԻՍ (40,000) ազատ ու բանուկ նաւահանգիստ ունի . օդն առողջարար ու մեղմ ըլլալուն համար՝ շատ օտարականք հոս կը ձմերեն :

ՎԱԼԵՆՍ (14,000) հոս մեռաւ Պիոս Զ . սրբազն պապը :

ՍԻՆ-ՏԵՆՏ (18,000) Բարիզու մօտ , Գաղղիացւոց թագաւորներն ասոր եկեղեցւոյն մէջ կը թաղուին :

Անուանի են նաև ասքաղաքներս. Նիմ (57,000),  
Դրօս, Գամպրէ, Գան, Վէրսայլ, Բուադիէ, Ան-  
կուլէմ, Գոլմար, Մէս, Սէն-Գանդէն, Տօնգէրգ,  
Տուէ, Վալանսիէն, Լը Հաւր, Ռէն, Պրէստ,  
Սէնդ-Էդիէն, Լիմօժ, Մոնդոպան, Գլէրմոն,  
Շէրապուր. Շամպէրի և Աննըսի՝ Սաւոյիոյ մէջ:

Դորսիգա կղզին ալ Գաղլիացւոց ձեռքն է, և  
ասոր մէջ անուանի է Այազխօ քաղաքը, ուր  
ծնաւ Նաբոլէոն Ա. բնակիչն է 13,000. և Պաս-  
դիա (18,000) գլխաւոր քաղաքը:

Գաղղիոյ երկրին մէջ փակուած ու պաշտպա-  
նութեան տակն է Մոնսաւու փոքրիկ լշխանու-  
թիւնը, որուն տարածութիւնն է հինգ քառա-  
կուսի մղոն, և գլխաւոր քաղաքն է Մոնագոյ  
(1790 քն.)

### ԵՒՐՈՊԱՑԻՆ ԴՈՒՐՍ

#### ԳԱՂԴԱՑԻՈՑ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ասիայի մէջ՝ հնդկաստանի մէկ կառը, որուն  
գլխաւոր քաղաքն է Բօնդիշէրի, և Ստորին Գո-  
շինչին:

Ափրիկէի մէջ՝ Ճեղսյիր կամ Ալճէրի, Սենե-  
կալին մէկ կառը, Քորէա, Պուրապոն և Մատա-  
կասգար կղզիները:

Ամերիկայի մէջ՝ Սուրբ Պետրոս և Միքելօն կըդ-  
զիները՝ Սուրբ Լաւրենտիոսի ծոցին մէջ. Մարգի-  
նիկէ, Կուատալուբբա և Կույանա գաղղիական:

Ովկիանիայի մէջ՝ Մարգիզեան կղզիները, Թայի-  
ղի և Նոր-Գալէտոնիա:

## ՊԵԼՃԻԱ.

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԵԼՃԻԱՆ ԵՐԿԱՐ ատեն ԳԵՐՄԱՆԻՈՂ կայսերաց ձեռքն էր, ԵՊՔԸ Գաղղիացիք առին. 1815ին նոր թագաւորութիւն եղաւ, որ Հոլանտային հետ մեկաղ Սպորին նահանգաց աէրութիւն կ'ըսուէր։ Բայց 1830ին ՊԵԼՃԻԱՆ Հոլանտայէն բաժնուեցաւ, ու զատ թագաւորութիւն եղաւ։

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՊԵԼՃԻԱՅԻՆ ստհմանը հիւսիսէն Հոլանտան է, արևելքէն ԳԵՐՄԱՆԻԱՆ, Հարաւէն Գաղղիան, արևմուտքէն Հիւսիսային ծովը։

Տարածութիւնն է 8,600 քառակուսի մղոն։

Բերքն է Երկաթ, հանքային ածուխ, փայտ, արմտիք ու աղէկ ձեռագործներ. Երկաթուղիներն աշշատ առաջ գնացած են։

Բնակիչն է 4,893,000, լեզունին գաղղիարէն և Ֆլաման՝ որ գերմաներէնին մէկ տեսակն է։

Կրօնքը կաթողիկէ։

Տէրութեան կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն։

Զօրքը 100,000։

## ԳԼԽԱԿՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊՐԻՏՍԵԼ (185,000) մայրաքաղաքն է, ձեռագործը և վաճառականութիւնը խիստ ծաղկած։ Ասոր մօտ է Վաղերլո գեղը, ուր յաղթուեցաւ Նաբոլէոն 1815։

ԱՆՎԵՐՍԱ կամ ԱՆԴՈՒԵՐՊԻՆ (120,400) ամուր ու վաճառաշահ քաղաք է։ անուանի է մայր Եկեղեցին։

ԿԱՆՏ կամ ԿԻՆԴ (123,000) հոս ծնաւ կարուղս և գերմանիոյ կայսրը։ անուանի են կտակի ու բամբակի գործարանները և ուսումնական տեղուանքը։

ՊՐՈՒՖ (50,000) վաճառաշահ քաղաք է։ շատ գեղեցիկ ջրանցքներ ունի։

ԼԻԵՖ կամ ԼԻՒԴ-ԴԻՆ (101,800) մեծ վաճառականութիւն ունի հանքային ածուխի՝ որ քովէն կ'ելլէ։

ԼՈՒՎԵՆ կամ ԼՈՎԱՆՏՈՆ (33,000) հին ու անուանի համալսարան ունի։

ՆԱՄՈՒՐ կամ ՆԱՄԷՆ (26,000) հոս 1815ին մեծ յաղթութիւն ըրաւ Նաբոլէոն Պրուշներուն դէմ։

ԵՐԱԿԵԼԻ են աս քաղաքներս ալ։ Օսդենտա, Մօնս կամ Պէրկէն, Մալին, Դուռնէ, Վէրվին, Գուրդրէ։

## ՀՈԼԱՆՑԱ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀՈԼԱՆՑՍՅՑԻՔ ատենով Սպանիացւոց տակն էին. 1579ին անոնցմէ գլուխ քաշելով զատ հասարակագետութիւնն եղան Ճարտար ու հարուստ։ Ետքը 1815ին Հոլանտան ու Պելճիան մէկտեղ զատ թագաւորութիւնը ձևացաւ՝ Սպառին նահանգաց պէրսունիւնը ըսուած, բայց 1830ին իրարմէ ալ զատուեցան։

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հոլանտային սահմանը հիւսիսէն ու արևմուտքէն հիւսիսային ծովը է, հարաւէն Պելճիան, արևելքէն Գերմանիան։

Տարածութիւնն է 9,800 քառակուսի մղոն։

Երկիրը ծովէն ընդհանրապէս ցած ըլլալուն համար մեծամեծ թումբեր շիներ են ջուրը բռնելու։

Օդը խոնաւ, փոփոխական և վատառովլ է։

Հողը ցած ու ջրոտ ըլլալուն՝ խիստ պտղաբեր չէ։

Բերքն է հանքածուխ, կտաւ, կաշի, կարմիր ներկ ու վարպետ ձեռագործներ։ Խիստ ազնիւ են կովերն ու ոչխարները, և անոնց պանիրը։

Բնակիչը 3,410,000. լեզունին հին գերմաներէնին մէկ տեսակն է։

Հատ ջրանցքներ և երկաթուղիներ ունենալուն համար վաճառականութիւնը շատ ծաղկած է։

Կրօնքը նորադանդ :

Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրական միապետութիւն :

Զօրքը 59,000, և նաւատորմիզը 154 կտոր նաւ :

### ԳԼԽԱՏՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԱՄՍԴԵՐՏԱՄ (264,500) Հողանտայի հին մայրաքաղաքը, Եւրոպայի ծաղկած ու հարուստ քաղաքներէն մէկն է, և մեծ ու բանուկ նաւահանգիստ ունի : Ատենով ասոր մէջ հայու տպարան կար անուանի :

ՀԱՅԻԱ կամ ՀԱՅԿ (86,000) հիմակուան մայրաքաղաքն է :

ՌԻԴԵՐՏԱՄ (114,000) Ամսդերտամէն ետքը վաճառաշահ քաղաքն է :

ՋԻԴՐԵԴԴԻ (57,000) մետաքսեղէնի գործարաններ ունի :

ԼԵՅՏԱ (37,000) մեծ համալսարան ունի, ուր Պօէրհաւ անուանի բժիշկը դասաւու էր :

ՄԱՍԴՐԻԳԱ (29,000) բոլոր Եւրոպայի խիստ ամուր քաղաքներէն մէկն է :

Անուանի են նաև Հարլէմ, Վրոնինկէն, Նիմէկ, Սարտամ, Լուքսէնապուրկ :

### ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐԱ

### ՀՈԼԱՆՏԱՑԻՈՑ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ափրիկէի մէջ՝ Սուրբ Գէորգ՝ Կուֆինէային մէջ՝ Ամերիկայի մէջ՝ Կույանային մէկ կտորը, Սուրբ

Եւստաքէոս, և Գուրասասաօ կղզիները, որ վորքը  
Անդիլեան կղզիներուն քովերն են :

Ովկիանիայի մէջ՝ Սումատրա կղզին մէկ կտո-  
րը, Պանգա ու Պիլլիգոն կղզիները՝ Սումատրային  
քովը, Ճաւա կղզին մէկ կտորը, Վորքը Մոլո-  
գեան կղզիները, և Ամպօյնա կղզին :

---

## ԶՈՒԻՑԷՐԻ

---

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Զուրացէրն առենով Հելուետիա կ'ըսուէր, որ  
Հռովմայեցւոց ձեռքն էր, եաքը Գաղղիացւոց ան-  
ցաւ, անկէց Ետքն ալ Գերմանիոյ հետ միացաւ.  
1308ին Գերմանացւոցմէ գլուխ քաշեցին Զուրիցե-  
րացիք ու զատ հասարակապետութիւն եղան : Աս  
հասարակապետութեան վրայ Նաբոլէոն ալ մէկ  
քանի նահանգներ աւելցուց . հիմա 1815էն 'ի վեր  
բոլորը 22 նահանգ ե՝ իրարու դաշնակից, բայց  
առանձին ազատ կառավարութեամբ :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Զուրիցերիին սահմանը հիւսիսէն Գերմանիան  
է, արևելքէն Աւստրիան, հարաւէն Իտալիան, ա-  
րևմուտքէն Գաղղիան :

Ցարածութիւնն է 11,800 քառակուսի մղոն :

Երկիրը Եւրոպայի խիստ լեռնոտ ու բարձր երկիրներէն մէկն է . մեծամեծ ժայռեր ու այրեր ունի , շատ ալ ծաղկած դաշտեր :

Օդը ընդհանրապէս ցուրտ է , բայց առողջ :

Հողը շատ բարեբեր ու աղէկ մշակած է : Ըստ հանքային ջրեր ունի . գետեր ալ կան որ աւազնին ոսկիով խառն է :

Բնակիչը 2,392,000 , որոնց լեզուն՝ տեղ տեղ գերմաներէն է , տեղ տեղ ալ գաղղիարէն :

Կրօնքը նորադանդ և կաթողիկէ :

Կառավարութիւնն է հասարակապետութիւն 22 նահանգի՝ որ իրարու դաշնակից են , ու զատ զատ կառավարութիւն ունին : Վանի որ ընդհանուր ժողով չըլլար , բոլոր հասարակապետութեան գլխաւոր կառավարութիւնը երկու տարին մէյմը աս իրեք քաղաքներէս մէկուն մէջը կ'ըլլայ . Ցուրիգ , Պետնաս , Լուչեռնա :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՃԻՆԵՐԸ (42,000) Զուիցերիին ամենէն երեսելի քաղաքն է . ձեռագործները , մանաւանդ ժամացոյցը և ուրիշ ոսկիէ և արծըթէ բանուածքները շատ յարգի են .

ՊԵԶԻԼԻՍ կամ ՊԱԼ (38,000) Զուիցերիին ամենէն վաճառաշահ քաղաքն է . կ'ըսեն թէ թուղթ շինելու արուեստը հոս գտուած ըլլայ :

ՊԵՐՆԸ (29,000) հոս ծնած է հայէր բնախօսը :

ԼՈՒՅԵՑՆՍ կամ ԼԻՒՑԿԻՑ (11,000) աս քաղցիս  
քովերը ահագին առիւծ մը կայ լեռան մը կտորէ  
փորած հին ատենէ 'ի վեր :

ՑՈՒՐԻԴ (20,000) հոս ծնած է կէսներ բանա-  
սաեղծը . անուանին է բամբակեղէնին ու մետաքսե-  
ղինի գործարաններուն համար :

ԼՈՉԱՆՆ (20,500) Ճինեւրայի լճին վրայ ա-  
ղուոր քաղաք է :

ՇԱՖՈՒԶ (8,000) ասոր մօտ է Հոենոսին Լո-  
ֆէն ըսուած երևելի ջրվէժը :

ՆԻՕԾԱՐԻ և կամ ՆԱՑԿԱՐՈՒՐԻ (10,400) ժա-  
մացոյց շինելու գործարաններ ունի :

ԱԼՈՐՖ (4,000) աս քաղցէն էր Գուլիելմոս  
Դէլ ըսուած կտրիճը , որ իր հայրենիքը բռնաւո-  
րի մը ձեռքէ աղատեց :

ՄԻՕՆ կամ ՋՐԴԻԿԻՆ (2,600) լեռներու մէջ քա-  
ղաք մըն է . հոս տեսակ մը մարդիկ կան՝ որ խուլ,  
մունջ, անկար , ու գրեթէ անզգայ են , վզերնուն  
տակն ալ կախուած խոշոր խոյլ ունին :

Ուրիշ գլխաւոր քաղաքներն են Շուից , Սան-  
կալլո , Ֆրիոպուրկ , Լուկանօ , Հէրիսաւ :

## Ա.Ի.ՍՏՐԻԱ.

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Մեծու կարողոս երբոր տիրեց աս երկրին, եր  
տէրութեանը, սյսինքն գերմանիոյ և գալլիոյ ա-  
րևելեան դին ըլլալուն համար՝ անունը Աւոպտե-  
կամ իօստէրբայն դրաւ, որ Արևելեան թագաւո-  
րութիւն ըսել է: Ինչուան 1806 Աւստրիայի կայ-  
սերք բոլոր Գերմանիոյ կայսր կը սեպուէին. 1500ին  
ատենները իրենց ձեռքին տակն առին նաև Մա-  
ճառաստանի ու Պոհեմիոյ թագաւորութիւնները.  
1772ին Լեհաստանի մէկ կտորն ալ՝ որ է կալե-  
ցիան՝ իրենց բաժին ընկաւ. 1814ին իրենց եղաւ  
Լոմպարտիոյ և Վենետիոյ տէրութիւնը, Լիւրի-  
կէն, ու Տալմացիան. 1846ին ալ Գրագովիոյ հա-  
սարակագետութեան երկիրը: Բայց 1859ին պա-  
տերազմէն ետքը Լոմպարտիան անցաւ Սարտենիոյ:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Աւստրիոյ սահմանը հիւսիսէն Բրուսիան, Սա-  
քսոնիան ու Լեհաստանն է. արևելքէն Ռուսաս-  
տանը ու Մոլտավիան. Հարաւէն Պոսնիան, Սեր-  
պիան, Ադրիական ծովն ու Բօ գետը, որ կը բաժ-  
նէ Խտալիոյ թագաւորութենէն. արևմուտքէն Ի-  
տալիոյ թագաւորութիւնը, Զուիցերին ու Պա-  
փիերան:

Աւստրիոյ կայսերութիւնը որ կը բաղկանայ գերմանական գաւառներէ, Ալտենան գաւառներէ և իպաշտան գաւառէ մը՝ տասնըհինդ կուսակալութիւն կը բաժնուի՝ իրարու անհաւասար մեծութեամք։ Գերմանական գաւառները, որոնք մասն են գերմանական գաշնակցութեն, կը բովանդակեն Աւստրիոյ արշիզբքութիւն, Դիրու, Լիւրիկէ, Սդիրիա, Պոհեմիա, Մորաւիա և Սլեզիա. Սլաւեան գաւառներն, որ գերմանական գաշնակցութենէն գուրս են, կը բովանդակեն Կալիցիա, Մաճառստան, Դրանսիլվանիա, Տալմացիա, Խոռուադք, Սլաւոնիա, և Զինուորական սահմանք. Իտալական գաւառն, որ գերմանական գաշնակցութենէն գուրս է, կը բովանդակէ միայն Վենետիկ։

Տարածութիւնն է 188,200 քառակուսի մղոն։ Գլխաւոր գետերն ասոնք են.

Օտեր, Վիսդուլա, որ Պալզիկ ծովը կը թափին. Դանուբ, որուն հետ կը խառնուին Մորաւա, Էնս, Ինն, Տաւաւա, Սաւա, Դէյս և Բրուդ՝ Աև ծովը կը թափին, ինչպէս նաև Տնեսդէր. Բօ, Ատիճէ, Պրենդա, Պագգիլիօնէ, Բիավէ, Դալբամենդօ՝ Ադրիական ծովը։

Երկրին մեծ մասը լեռնոտ ու բարեբեր է։

Օդն ընդհանրապէս բարեխառն ու առողջ է։ Բերքն է երկաթ, աղինձ, կապար, աղ. Մաճառստանին մէջ ոսկին հանք ունի, որուն նմանը Եւրոպայի մէջ չկայ։ Շատ արծաթ ու մողիկ կ'եւ լէ Իտալիայէն. անուանի է Դօգայի գինին, Պոհեմիային ալ ասլակին։

Բնակիչն է 37,000,000, որոնց լեզուն տեղ տեղ գերմաներէն, իտալերէն, սլաւերէն, մաճառերէն և ուլահերէն է։

Քաղաքականութիւնը, ճարտարութիւնը և վա-  
ճառականութիւնը աս վերջի տարիներուս մէջ  
շատ տուած գնացած են, ինչպէս նաև երկաթու-  
ղիները:

Կրօնքն է կաթողիկէ, նորադանդ, և յունադա-  
ւան:

Տէրութեան կտուավարութիւնն է սահմանա-  
դրական կայսերութիւն:

Զօլքը 600,000. նաւասորմիզը 120 կտոր նաւ:

### ԳԼԽԱՌՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

#### ԱՐԾԻԴԱՎՈՒԹԻՒՆ ԱԽՏՏԻՈՅ

Վենս (580,000) տէրութեան մայրաքաղաքը,  
թէ արուեստի և թէ գիտութեան ու ամէն տեսակ  
քաղաքականութեան կողմաննէ Եւրոպային առա-  
ջն կարգի քաղաքներէն մէկը կը սեպուի. անուա-  
նի է կայսերական գրատունը, զինարանները,  
թանգարանը, համալսարանը և ուրիշ ուսումնա-  
կան տեղուանքը. շէնքերուն մէջ ալ կայսերական  
պալատն ու սրբոյն Ստեփանոսի եկեղեցին: Հոս  
է Մխիթարեան հայոց մէկ վանքը, որ Դրեսդէն  
փոխադրուեցան 1811ին:

Լիս (28,000) Դանուբի վրայ ամուր ու վաճա-  
ռաշահ քաղաք է. չուխայի ու կաշիի վաճառակա-  
նութիւն ունի:

ԱՎԱՑՊՈՒՐԿ (16,000) մեծ աղի հանք ունի:

Երևելի են նաև Նայշդատ և Շղայէր:

### Դ Տ Բ Ա Լ

ԽանսՊՐՈՒԳ (15,000) Ինն գետին վրայ Դիլուլ  
դլխաւոր քաղաքն է . անուանի համալսարան  
ունի :

ՏՐԻԳԵՆԴՐԻ կամ ԴՐԵՆԴՐ (16,000) Հոս եղաւ  
վերջին ընդհանուր սուրբ ժողովը յամին 1345:

Երևելի են նաև Պօցէն կամ Պոլցանօ և Ռովե-  
րէաօ :

### Լ Ի Ւ Բ Ի Կ Ե

ԼԱՅՊԱԽ կամ ԼՈՒՊԻԱԽ (20,000) Լիւրիկոյ  
դլխաւոր քաղաքն է գեղեցիկ և վաճառաշահ :

ԴՐԻԷՍԴ (60,000) Աղբիական ծոցին վրայ տէ-  
րութեան առաջին նաւահանգիստն է , վաճառա-  
կանութիւնը շատ բանուկ :

Նշանաւոր են նաև Գլակէնֆուրդ , Կորիցիա ,  
Գարօ տ' Խսդրիա , Ագուիլէա՝ որ շատ հին քաղաք  
է , Խտրիա՝ որ սնդկի հարուստ հանք ունի , Բոլա  
և Ռուլինեօ :

### Ս Դ Ի Ր Ի Ա

ԿՐԱՑ (63,000) Սդիրիա կամ Շդայէրմարդ գա-  
ւառին դլխաւոր քաղաքն է , ունի համալսարան և  
մեծամեծ թանգարաններ . Ճարտարութիւնն ու  
վաճառականութիւնն ալ ծաղկած է .

Լէօպէն . Հոս եղաւ Պոնաբարդէի գաշնադրու-  
թիւնն Աւստրիոյ հետ յամին 1797 :

Այլքնէրզ՝ ճոխ հանք ունի ազնիւ երկաթի :  
Մարիա-Ցէլ երևելի ուխտատեղի է Տիրամօրն :

### ՊՈՀԵՄԻԱ

ԲՐԱԿ (146,000) անուանի է համալսարանը ,  
շատ ալ երևելի գործարաններ ունի :

ԲԻԱՑԽԵՆՊԵՐԿ (12,800) բոլոր Եւրոպայի խիստ  
ճարտար քաղաքներէն մէկն է :

ԳՈՒԴԴԵԽԵՆՊԵՐԿ (10,000) արծըթի , պղնձի և  
կապարի հանք ունի :

ԳԱՌԻԼՍՊԱՏ , ՄՅՐԻԵՆՊԱՏ , ԴԵԲԼԻՑ տապ ջրե-  
րուն համար երևելի են :

Անուանի են նաև Պուտվայս , Էկէր :

### ՄՈՐԱՒՏԱ ԵՒ ՍԼԵԶԻԱ

ՊՐԻԽ (60,000) բրդեղէնի և ընդհանրապէս վա-  
ճառականութեան և արուեստից կողմանէ երևելի  
քաղաք է : Ասոր մօտերն է Աւստէրլից գեղը , ուր  
մեծ յաղթութիւն մը ըրաւ Նաբոլէոն Ա. յամին  
1805 :

ՕԼՄԻԿ (19,000) ամուր ու ծաղկած քաղաք է :

ԻԿԱՏ (18,000) չուխայի գործատուններ ունի  
և ընդեղինաց վաճառք :

ԴՐՈԲԲԱՏ (15,000) Սլէզիոյ գլխաւոր քաղաքն  
է , վաճառականութիւնը բանուկ :

## ԿԱԼԻՑԻԱ

Իւկով կամ՝ Լէտպէրս (70,000) մեծ ու գեղեցիկ քաղաք է։ Անուանի է հռո տեղի հայոց տըքեպիսկոպոսարանը։

Գրադուկիս (41,000) ատեն մը հասարակապետութիւն էր. բայց 1846ին Աւստրիացիք գրաւեցին։

Պրօտ (25,000) վաճառականութիւնը խիստ բանուկ է։

Վլւաշան (6,500) անուանի է ասոր քովի աղահանքը։

Սատպոր (10,300) վաճառականութիւնն ու արուեստները ծաղկած քաղաք է։

Ուրիշ երևելի քաղաքներն են Սնեադին, Չեռնովից, Եարոսլաւ, Տրոհոպիժ, Դառնոբոլ, Սուջովա, Սդանիսլաւ, Գուդի։ Եւ աս ամէն քաղաքներուն մէջ շատ հայեր ալ կան։

## ՄԱՃԱՌՍԱՆ

Բէ՛չու (132,000) հիմա Մաճառստանին ամենէն մեծ ու գեղեցիկ քաղաքն աս է։

Պուտսու կամ՝ Պուտս կամ Օֆէն (52,000) Մաճառստանի հին մայրաքաղաքն է, որ երկար ատեն Օսմանցւոց ձեռքն ալ մնաց։

Բէ՛շդ ու Պուտսա դիմացէ զիմաց են Դանուբի երկու կողմը, և մեծագործ քարաշէն կամը ջով մը իրարու հետ կապուած են։

Բրէստուրս (44,000) Պուտինէն

առաջ Մաճառստանին մայրաքաղաքն աս էր .  
Աւատրիոյ կայսրը հոս Մաճառներուն թագաւոր  
կը պատկուէր և ազգային ժողովը հոս կ'ըլլար :

ՇէՄՆԻՑ (20,000) ոսկիի, արծաթի ու կա-  
ԳՐԵՄՆԻՑ (12,000) պարի հանքեր ունին, որ  
Եւրոպայի մէջ ամենէն մեծերն են :

ՇԴՈՒՎՃՑՍԻՆՊՈՒՐԿ (20,000), որ և ԱՀԲԱ  
թագաւորական ալ կ'ըսուի, երբեմն հոս կ'օ-  
ծուէին ու կը նստէին թագաւորները :

ԹԵՐԵԶԻԵՆՇՏԱՑ (42,000) մեծ ու արուեստից  
մէջ բարդաւաճ քաղաք մըն է :

ԳՈՄՈՒՆ (18,000) ամուր ու անառիկ բերդ  
ունի :

Անուանի են նաև Տէպրէցին, Էրէրիէս, Էր-  
լաւ, Ռասապ կրան, Դօգա, Ծոմալոր, Նայսոց,  
Սէկէտին, Արատ հին և նոր : Դըմըշվար քաղաքն  
ալ ժամանակաւ մասն էր Մաճառստանի :

## ԴՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ

ԳԼԵՒԶԵՆՊՈՒՐԿ կամ ԳՈԼՕԺՎԱՐ կամ ԳԼՈՒԺ  
(25,000) Դրանսիլվանիոյ գլխաւոր քաղաքն է,  
միանգամայն և վաճառաշահ . աս քաղքիս մէջ  
300էն աւելի հայ կայ, որոնք ընդհանրապէս քաղ-  
քին առաջին վաճառականներն են :

ՀԵՐՄԱՆՇՏԱՑ կամ ՍԻՊԻՆ և կամ ՍԻՊԵՆ  
(20,000) վաճառաշահ քաղաք է :

ԳՐՈՒՇՏԱՑ կամ ՊՐԱՀՈՎ և կամ ՊՐՈՇՉՈՒ  
(30,000) Դրանսիլվանիոյ ամենէն ծաղկած ու վա-  
ճառաշահ քաղաքն է :

Գ. ՏՈՒԾՊՈՒՐԿ կամ ՓԵՑԻՐՎԱՐ և կամ ՊԵԼԿԻՐՍ (15,000) հոս կը նստի Դրանսիլվանիոյ ուղղափառաց եպիսկոպոսը :

ՄՈՒՕՀ-ՎԱՇԱՐՀԵՑ (6,000) թէպէտ պղտիկ բայց ըստ բաւականի յառաջագէմ քաղաք է :

ՍԱՄՈՀ-ՈԽԵՎԱՐ կամ ԿԵՌԼԱ և կամ ԱՐՄԵՆԻԿԱՆՉԱՏՍ (5,000) աս քաղաքս ժամանակաւ հայ յերը գնեցին հարիւր հազար ոսկւով և մինչև հիմա հայոց քաղաք է, թէպէտ բնակիչներուն երեք հաղարը միայն հայ են : Քաղքին կառավարութիւնը հայ իշխանաց ձեռքն է, որոնք ատենօք շատ ազատութիւններ ունեին, բայց հիմա քիչ շատ կորսնցուցած են : Երևելի են աս քաղքիս մէջ մեծամեծ յանցանքներու համար շինուած տէրութեան բանտերը :

ԵՒԹԱՊԵԴԴԱՏՍ կամ ԵՐՖԱՊԵԴ-ՎԱՐՈԾ կամ ԻՊԱՇՎԻԼՈՎ (2,000) հայոց քաղաք է, որուն կառավարութիւնը ազգայնոց ձեռքն է : Ատենօք աս քաղաքն ալ շատ ազատութիւններ ուներ, բայց 1848էն եաքը գրեթէ բոլորովին կորսնցուց : Բնակչաց կէսը միայն հայ են, մնացածը Մաճառ, Ուլահ և Սաս : Երևելի է աս քաղքիս մէջ ազգայնոց մայր եկեղեցին, որուն նմանը դրեթէ բոլոր Դրանսիլվանիոյ մէջ չգտնուիր : Աս եկեղեցին հայերը շինած են հոն եկած ժամանակնին :

ՃՈՒՐՃՈՎ կամ ՏՅԵՐԵՅՅ (1,500) ասիկայ ալ նոյնպէս հայոց քաղաք է, որուն իշխանները հայ են և քաղքին կառավարութիւնը իրենց ձեռքն է : Ատենօք ասիկայ ալ այլ և այլ ազատութիւններ ուներ, բայց հիմա առջի երկուքին պէս զրկուած է անոնցմէ :

Պլանավորման կամ Պուլսաֆուլվօ և կամ Պլանավորման (2,500) չափաւոր մեծութեամբ աւան մընէ, որուն բնակիչքը Ուշահ են. հոս կը նստի Դրանսիլվանիոյ ուղղափառ Ուշահաց արքեպիսկոպոսը:

Մէտրոպոլիտ Մէտրոպոլիտ (5,000) ասոր բնակիչք գրեթէ բոլորն աւ Սաս են՝ և Կալվինական հաւատք ունին:

Շէսպուրի կամ Շէսպուր կամ Շէսպուր (5,000) բնակչաց մէկ մասը Սաս, Մաճառ և Ուշահ են: Կան մէջերնին հայեր աւ, որոնք այլ և այլ բաներով վաճառականութիւն կ'ընեն:

## ՏԱԼՄԱՑԻԱ

Ճարտ կամ Ջաթրտ (6,000) չափաւորապէս վաճառաշահ քաղաք է Աղրիական ծովուն վրայ:

Արտադրո (8,000) ասոր մօտ է հին Սալոնա քաղաքին աւերակը:

Բակուջա (12,000) առենով մէծ հասարակապետութիւն էր, ինչպէս նաև Գադդարօ և Սէպէնիդօ:

## ԽՈՌԻԱԴՐ ԵՒ ՍԼԱԽՈՆԻԱ

Ակրատ կամ Ջակրտ (17,000) խոռութեց գըլխաւոր քաղաքն է. ազէկ վաճառականութիւն ունի:

Եշսէդ կամ Եշսէդ (12,000) Սլաւոնիոյ գըլխաւոր քաղաքն է, ամուր բերդ ունի Տրաւա գետին վրայ:

Ֆրուտէ (12,000) ազատ նաւահանգիստ ունի Աղրիական ծովուն վրայ:

## ԶԻՌՈՒՌԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՔ

ԶԵՄԱ (11,000) գլխաւոր և ամուր քաղաք  
է, և Տաճկաստանի հետ մեծ վաճառականութիւն  
ունի:

ԲԵԴՐՎԱՐՏԱՑՆ կամ ԲԵԴՐՎԱՐԱՑՆ (6,500)  
ամուր և անուանի բերդ ունի:

ԲԱՆՃՈՎԱ (13,000) Պանադի գլխաւոր քա-  
ղաքն է:

ԶԵՆԿ. Աղրիականին վրայ ազատ նաւահան-  
գիստ է:

## ՎԵՆԵՏԻԿ

ՀԻւսիսային Խտալիոյ մասն է ՎԵՆԵՏԻԿ գաւա-  
ռը, հոն պիտի խօսինք վրան:

## ԱՐՅՈՒՀԱԿԱՆ ՀԱ ՀԵՐԱԿՈՒՄ

ԱՐՅՈՒՀԱԿԱՆ (100,000) բարձր նախադաշտութիւն  
ունեցած պահանջական քայլութեան վեցական գույքակ  
արք Արքական (100,000) սահմանական քայլութեան  
արք անուան կամ քայլութեան գույքակ գույքակ  
մայութ առաջնական տարածք (100,000) բարձր գույքակ  
մայութ առաջնական տարածք (100,000) բարձր գույքակ

## Բ Ր Ո Ւ Ս Ի Ա.

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Տերտոււսան ասպետները ժԳ գարուն սկիզբնեցը տիրեցին առ Երկրիս արևելեան կողմին . բայց Բրուսիոյ մէծնալը 1700ին եղաւ, Երբոր իրենց Փրեդերիկոս թագաւորը Լեհաստանի մէկ կտորին աւ տիրեց :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼՎՔ

Բրուսիոյ սահմանը հիւսիսէն Պալդիկ ծովին է, արևելքէն Լեհաստանը, հարաւէն Աւստրիան, արևմուտքէն Գերմանիան :

Բրուսիոյ թագաւորութիւնը ութը գաւառու կը բաժնուի . գաւառու Բրուսիոյ կամ յատուկ Բրուսիա, Բողէն, Պրանտէսպուրկ, Բոմերանիա, Ալեզիա, Ապքառնիա Բրուսիոյ, Վէսդֆալիա և Հունոսեան գաւառք : Առաջին Երկուքն, այսինքն յատուկ Բրուսիա և Բողէն՝ գերմանական դաշնակցութեան մասն չեն :

Տարածութիւնն է 82,000 քառակուսի մղոն :

Երկիրն ընդհանրապէս դաշտային ու ջրու է, և հիւսիսային կողմը շատ լճեր կան :

Օդը խիստ ցուրտ է, անոր համար շատ պտուղ չի կրնար հասցընել :

Բելքն է ամեն տեսակ հանք, կտաւ, աղեկ ձեռագործներ յախճապակ, աղնիւ բուրդ, չուխայ և ոչխար :

Բնակիչը 18,500,000, որոնց լեզուն մաքուր գերմաներէն է :

Քաղաքականութիւնը, գիտութիւններն ու արուեստները շատ ծաղկած են, վաճառականութիւնն ալ աղեկ կը բանի, և երկաթուղիններն ալ առաջ դնացեր են ամեն գի :

Կրօնիքը նորաղանդ և կաթողիկէ :

Կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն :

Զօրքը 200,000. նաւատորմիզը 85 կտոր նաւ :

### ԳԼԽԱՏՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

#### ՊՐԱՆՏԵՊՈՒՐԿ

Պէտրէն (610,000) մայրաքաղաքը, Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է, անուանի են համալսարանը, գիտարանը, թանգարանը, երկաթէ ու յախճապակէ բանուածքը շատ աղնիւ են :

Բոթտաս (35,000) թագաւորանիստ երկրորդ քաղաքն է. գեղեցիկ է արքունի դղեակը :

Ֆրանֆորդ (36,000) Օտէր գետոյն վրայ երևելի քաղաք է. համբաւաւոր է տարեկան երեք տօնավաճառներուն համար :

Պրանտեպուրկ (24,000) վաճառականութեամբն ու հնութեամբը շատ երևելի է :

### ԲՐՈՒՏՍԻԱ

ԳԵՕՆԻԿՍՊԵՐԿ (95,000) Պալդիկ ծովուն վրայ հին ու փառաւոր քաղաք է . վաճառականութիւնը բանուկ :

ՄԵՄԵԼ (18,000) Պալդիկ ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ ունի :

ԴԻԼՍԻՐ (16,000) անուանի է դաշնադրութեամբն զոր Նաբոլէոն Ա. հաստատեց Բրուսիոյ և Ռուսաց հետ յամին 1807 :

ԴՕԹ (14,000) հոս ծնած է կոպեռնիկոս Երևելի աստղաբաշխը :

ՏԱՆՃԻԿ կամ ՏԱՆՍԻ (78,000) Վիսդուլայ գետին վրայ՝ Պալդիկ ծովէն վեց մղոն հեռու՝ տէրութեան խիստ ամուր քաղաքն է , և բոլոր Բրուսիոյ դլխաւոր նաւահանգիստը :

### ԲՈՋԵՆ ԿԱՄ ԲՈՋԱՆԻԱ

ԲՈՋԵՆ կան ԲՈՋԱՆ (45,000) հին ատենը լեռ հաստանի մայրաքաղաքն էր , հիմա ալ ամրութեանն ու վաճառականութեանը համար անուանի է :

ՊՐՈՄՊԵՐԿ (22,000) Ճարաարութիւնները շատ յառաջացած են հոս :

### ԲՈՄԵՐԱՆԻԱ

ՄԴԵԴԴԻԿ (65,000) Օտէր գետոյն վրայ ամուր քաղաք է ու վաճառականութիւնը շատ ծաղկած :

ՄԴՐԱԼՍՈՒՏ (25,000) վաճառաշահ նաւահանգիստունի Պալդիկ ծովուն վրայ :

### ՍԻԼԵԶԻԱՆ

ՊՐԵՍՎԵՏ (137,000) Օտեղը գետոյն վրայ՝ թէ արուեստից և թէ վաճառականութեան կողմանէ շատ ծաղկած է . գեղեցկութեամբը տէրութեան երկրորդ քաղաքն է :

ԿԱՊՈՎԱ (13,000) վաճառաշահ քաղաք է :

### ՍԱՔՍՈՒՏԱՆ

ՄՐԱԿՏԻՊՈՒՐԿ (91,000) Եւրոպայի ամուր բերդաքաղաքներէն մէկն է . հոս ծնած է Ոթոն կուէստիգ , որ չնչելոյզ մէքենան հնարեց :

ՀԱԼԵԿ (46,000) երկելի համալսարան , ուսումնական տեղուանիք և աղահանիք ունի :

ԷՐՖՈՒՐԴ (36,000) շատ բանասիրական ընկերութիւններ ունի :

ԴՐՈՒԳԱ (8,000) Էլպա գետին վրայ ամուր բերդ ունի :

### ՎԵՍՏՖԱԼԻԱ

ՄԴՐԱՆՍՏԻՐ (23,000) Վէսդֆալիոյ գլխաւոր քաղաքն է . մէծ վաճառականութիւն ունի ասպրխանակ խոզենւոյ :

ՄՐԱՏԷՆ (13,000) կտաւեղինաց բազմաթիւ դործարաններ ունի :

### ՀՈՒԵՆՈՍԵԱՆ ԳԱՏԱԽԻՔ

Գ-0Պ ԼԵՆՑ (23,000) ամուր քաղաք է :

Պոստ (22,000) Հռենոսի վրայ՝ անուանի համալսարան ունի :

Գ-0ԼՈՆԴՆ (117,000) շատ հին ու ամուր քաղաք է Հռենոսի վրայ, ճարտարութիւնն ու վաճառականութիւնը յառաջացած էն :

ՏԻՒՍԿ-ԼՏՕՐՖ (41,000) Հռենոսի վրայ գեղեցիկ քաղաք է, ուսկից Գաղղիա կ'անցնին :

ԷՎՊԻՐՖԵԼՏ (62,000) Գերմանիոյ ճարտար, վաճառաշահ ու ճոխ քաղաքներէն մէկն է :

ԴՐԵՆԻ կամ ԴՐԻԷՐ (18,000) Գերմանիոյ ամենէն հին քաղաքն է :

ԽՍ-ԼՅ-ՇԱԲԵԼ կամ ԱԳ-ՈՒՏՈՎԿՐԱՆ (63,000) մեծն կարուս և իր յաջորդները երկար ատեն հոսնատան. շատ հանքային ջրեր ունի :

Պարտէն (60,000) այս անուամբ իը կոչուին հինգ աւաններ իրարու մօտ, շատ ծաղկած՝ բամպակի, կերպասուց, կտաւներու, մետաքսեղինաց և ժապաւինաց գործարաններով:

Անուանի են նաև Սօլինիէն, Գուսդրին, Լուցէն, Մարիէնալուրկ, Ռոզպախ:

Լաւէնալուրկի գքսութիւնն ալ Պրուշի անցաւ Տանիմարգայի ձեռքէն 1864 տարւոյն պատերազմէն ետքը հանգերձ 50,900 բնակչոք. գլխաւոր քաղաքներն են Ռադցէպուրկ և Լաւէնալուրկ :

Պրուշի ձեռքն է նաև Ռիւկէն կղզին Պալցիկ ծովուն մէջ (40,000 բն.) :

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

### ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆՈՑ մէջ ատենով զանտղան բարբարոս  
ազգեր տիրած էին, ինչուան որ իններորդ դարուն  
մէծն կարոլոս նուաճեց զանոնք, և իր յաջորդները  
Գերմանիոյ կայսր ըսուեցան . 1806ին պէտք եղաւ  
որ Ֆրանչիսկոս Ա. կայսրը հրաժարի Գերմանիոյ  
կայսր ըսուելէն : 1814ին Վեննայի ժողովին մէջ  
Եւրոպայի գլխաւոր թագաւորներն որոշեցին, որ  
Գերմանիան քառասունի չափ տէրութիւններ  
բաժնուի՝ իրարու դաշնակից, և բոլորը մէկէն ը-  
սուի Գերմանական Դաշնակցութիւն : Աս դաշնակցու-  
թեան գլուխն է Աւստրիոյ կայսրը, անկէց ետքը  
Պրուշի թագաւորը . ասոնցմէ ետև դաշնակցու-  
թեան գլխաւոր տէրութիւններն աս չորսն են  
որ թագաւորութիւն կ'ըսուին . Պաւիէրա, Սաքսո-  
նիա, Անհովէր ու Վիերդէմալէրկ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Գերմանական դաշնակցութեան սահմանը հիւ-  
սիսէն Պալդիկ ծովին ու Տանիմարգան է, արևելքէն  
Բրուսիան ու Լեհաստանը, հարաւէն Աւստրիան և  
Չուխցէրին, արևմուտքէն Գաղղիան ու Հոլանտան :

Տարածութիւնն է 183,000 քառակուսի մղոն :

Հարաւային կողմի երկիրը լեռնոտ ու անտառաներով լեցուն է, իսկ հիւսիսային կողմը դաշտային ու ջրուս :

Բերքն է ամեն տեսակ մետաղ ու հանք, մանաւանդ արծաթ ու կապար, որ Սաքսոնիային կ'ելլեն : Բոյսերուն մէջ անուանի են ցորենը, պտուղները, ծխախոտը, կանեփը և գետնախնձորը . կենդանիներուն մէջ ալ ձին :

Ճարտարութիւններն ու գիտութիւնները՝ շատ առաջ գնացած են, և երկաթուղիներն ալ ամեն կովմը տարածուած :

Բնակչութեանը 46,000,000, որոնց լեզուն գերմաներէն է :

Ասոնք են բոլոր Գերմանական դաշնացութեան տէրութիւնները, իրենց բնակիչներուն թիւը, և ամեն մէկուն գլխաւոր քաղաքը :

ՏԵՐՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԻՉ ՄԱՅՐԱՎԱՐ

Աւտրիա . Գերմանա-

կան գաւառք 42,802,944 ՎԵՆԵՑ

Բրուսիա . Գերմանա-

կան գաւառք 14,714,026 ՊԵՐԼԻՆ

Պաւիկրա

4,807,440 ՄՈՆԱԳԸ

Սաքսոնիա

2,343,994 ՏՐԵՎՈՍ

Հանովը

1,925,492 ՀԱՆՈՎԸ

Վիերդեմպերկ

1,748,528 ՇԴՈՒՂԿԱՐԴ

Պատէն

1,434,754 ԳԱՐԱՐՈՒՀԵ

Հես-Կայսրընտիր

745,063 ԳԱՍԵԼ

Հես-Տարմշդատ

855,514 ՏԱՐՄՇԴԱՏ

Շլեզվիկ-Հուշտայն

1,009,479 ՇԼԵԶՎԻԿ և ԳԻԼ

ՏԵՐՈՒԹԻՒՆ ԲԱՍԿԻՉ ՄԱՅՐԱԳՐ

Լուքսէմալուրկ և Լիմ-

ալուրկ	427,650	Լուքսէմալուրկ
Սաքս-Վայմար	280,201	Վայմար
Սաքս-Ալենալուրկ	144,859	Ալենալուրկ
Սաքս-Մայնինկեն	175,066	Մայնինկեն
Սաքս-Գոպուրկ-Կօֆա	164,527	Գոպուրկ
Մէրլէմալուրկ-Շվէրին	552,612	Շվէրին
Մէրլէմալուրկ-Ստրէլց	99,060	Ստրէլց
Պրունսվիթ	295,588	Պրունսվիթ
Նասաւ	468,511	Վիզատէն
Անհալդ	193,046	Տեսաւ և Պէռն-
Շուարցպուրկ-Սոնտէր-		[պուրկ]
Հառուգէն	66,489	Սոնտէրհառուգէն

Շուարցպուրկ-Ռուտուլ-

Հդաստ	75,752	Ռուտուլշդաստ
Օլտէնալուրկ	501,812	Օլտէնալուրկ
Լիխտէնշդայն	7,450	Լիխտէնշդայն
Վալտէգ	59,443	Գորպախ
Ռայս-Կրայց	45,924	Կրայց
Ռայս-Շլայց	86,472	Շլայց
Լիբէ-Տէղմոլտ	111,536	Տէղմոլտ
Լիբէ-Շաւէմալուրկ	51,582	Պուդէպուրկ
Հէս-Հոմալուրկ	27,574	Հոմալուրկ
Ֆռանդֆուրտ	94,180	
Լիւպէր	50,610	
Պրեմա	104,094	
Համալուրկ	229,941	

## ԳԵՐՄԱՆԻՈՅ

### ԳԼԽԱՆԻՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

#### ՊԱՏԻՔԵՐԱ

Պատիկայի թագաւորութիւնը հաստատուեցաւ 1800ին. կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն է. թագաւորը և բնակիչներուն մեծ մասը կաթողիկէ. զօրքը 200.000 :

Մուսաֆօ կամ ՄԻՒՆԻՑ (167,000) գերմանիոյ աղուոր ու ծաղկած քաղաքներէն մէկն է. շատ գեղեցիկ շենքեր ունի. մեծաշէն է թագաւորական պալատը, համալսարանն ալ անուանի :

ԿՈՒՐԵՄՊԻՐԿ (70,000) հոս շատ ծաղկած են ձեռագործները, որով մեծ առուտուր կ'ըլլայ. ծոցի ժամացոյցը հոս գտնուած է :

ԱԿՍՊՈՒՐԿ կամ ԱԿՍՈՒՄՊ (44,000) հասարակաց ժողովարանը խիստ մեծաշէն է. անուանի են ուսումնական աեղուանիքը :

ՌԱԴԻՍՊՈՒՆ կամ ՌԵԿԵՆՍՊՈՒՐԿ (30,000) ատենավ գերմանիոյ կայսրընտիրները հոս ժողովք կ'ընէին : Հոս ծնած է գերլէր աստղաբատշխը : Ասոր մօտ է Վալհալլա անունով նոր շինուած հռչակաւոր թանգարանը :

ՎԻՏԲՊՈՒՐԿ (41,000) երկելի է համալսարանը ու բերդը :

Անուանի են նաև Սբիր, Պամպէրկ, Լանտաւ, Բասսաւ, Պայրայդ, Անսպախ, Աշաֆէնսպուրկ :

## ՍԱՔՍՈՆԻԱ

Սաքսոնիոյ թագաւորութիւնը 1806ին հաստատուեցաւ։ Թագաւորն կաթողիկէ է, բայց բնակիչներուն շատը նորաղանդ։ Զօրքը 30,000։

Տրեջտա (146,000) էլսպա գետին վրայ, Գերմանիոյ գեղեցիկ ու ճարտար քաղաքներէն մեկն է։ Երևելք է գետին վրայի կամուրջը, և մայր եկեղեցին։ ուսման կողմանէ ալ Գերմանիոյ Ամենքնը ըսուած է։

Լիբուն կամ Լաբբիո (95,000) անուանի է ասոր համալսարանը, և մեծ տօնավաճառը, և գրքի առուտուրը։ Լայպից վիլիսովիան ալ հոս ծնած է։

Շետնա (59,000) աս քաղաքս ձեռագործներու կողմանէ խիստ ծաղկած է։

Ֆրանկեր (19,000) անուանի են ասոր արծըթի հանքը, և արծըթէ բանուածքները։

Պավլէն (12,000) վաճառաշահ քաղաք է, չուխայի, բամբակի և կտաւի գործարաններ ունի։

Ճադապ (14,000) կտաւի և բըրդի ձեռագործներ ունի։

## ՀԱՆՈՎՐ

Հանովրի թագաւորութիւնը 1814ին հաստատուեցաւ, և բնակիչներուն շատը նորաղանդ են։ Զօրքը 27,000։

Հանովր կամ Սանովէր (80,000) արքայանիստ քաղաք է, հոս ծնած է Հէրցէլ աստղաբաշխը։

Լոդրիդ կամ Կէօդրիդ (14,000) անուանի համալսարան ունի։

ԵՄՏԵՆ (12,000) աԷՐՈւԹԵԱՆ ամենէն վաճառաշահ քաղաքն է :

ԳԱՎԱԴԴԱԼ (9,000) արծըթի ու կապարի հանք ունի :

ԵՐԿԵԼԻ ԵՆ ՆԱև Օղնապրիւք, ՀԵԼՄԵՇԱՋՄ, ԼԻՆՔԱՊՈՒՐԻ, ԶԵԼՔ և Հարապուրի :

### ՎԻՒՐԴԻՄՊԵՐԻԿ

ՎԻՒՐԴԻՄՊԵՐԻԿԻ թագաւորութիւնը հաստատուեցաւ 1806ին. բնակիչներուն շատը նորադանդ են : Զօրքը 28,000 :

ՇՐՈՒԴԿԱՐՏ (69,000) աս է առաջին թագաւորանիստ քաղաքը. ուսմունքն և արուեստները շատ ծաղկած են :

ՈՒԼՄ (23,000) Դանուբ գետին վրայ Գերմանիոյ ամուր ու անուանի բերդաքաղաքներէն մէկն է :

ԼՈՒՏՎԱԿՍՊՈՒՐԿ (12,000) երկրորդ թագաւորանիստ քաղաքն աս է :

ԴԻՏՊԻՆԿԻՆ (10,000) անուանի է ասոր համալսարանը :

ԵՐԿԵԼԻ ԵՆ ՆԱև ԽԱԼԵՆԿԵՆ, ՀԱՅԼԱՊՐՈՆ, ՈՒԱՅԴԼԵՆԿԵՆ :

### ՊԱՏԵՆ

Պատէն մեծ դքսութիւն է, բնակիչներուն մեծ մասը կաթողիկէ են : Զօրքն է 18,000 :

ԳԱՐԼՍՐՈՒՃԻ (30,000) մայրաքաղաքն է, գեղեցկաշէն և պարտէզներով շրջապատած :

ՊԱՏԵՆ (5,000) անուանի է հանքային ջրերուն համար :

Մանգաստ (30,000) Հռենոսի վրայ՝ երկրորդ աթոռ է գքսերուն :

ՀԱՅՏԻԿԱՐԿ (18,000) անուանի համալսարան ունի :

ՎՐԵՑՊՈՒՐԿ (19,000) Երևելի կրթարաններ՝ ու հոյակասղ մայր Եկեղեցի ունի :

Նշանաւոր են նաև Գոսդնից կամ Կոստանդ՝ համանուն Ընկն վրայ, Ֆորցհայմ և Գէհլ:

### ՀԵՍՍԵ ՏԱՐՄՃԴԱՏ

ՀԵՍՍԵ ՏԱՐՄՃԴԱՏ մեծ դքսութիւն է, բնակիչներուն մեծ մասը նորաղանդ են: Զօրքն է 11,000:

ՏԵՐՄՃԴԱՏ (29,000) մայրաքաղաքն է գեղեցիկ և նորաշէն :

ՄԱՅԵՆՑ (43,000) Հռենոսի վրայ ամուր բերդաքաղաք է. հոս ծնաւ Յովհ. կուղդէմպէրկ որ ապագրութեան արուեստը հնարեց :

ՕՖԵԿՆՊԱԽ (19,000) Հարտարութիւններն առաջ գնացած են:

ՎՈՐՄՍ (12,000) շատ հին քաղաք է:

### ՀԵՍՍԵ ԳԱՍՍԵԼ

ՀԵՍՍԵ ԳԱՍՍԵԼ կայսրնարութիւն կ'ըսուի, բնակիչներուն մեծ մասը նորաղանդ են: Զօրքն է 15,000:

ԳՐԱՍԵԼ (40,000) մայրաքաղաքը գեղեցիկ դերք ու հոյակասղ շինուածներ և հրապարակներ ունի:

ՀԱՆԱՎ (17,000) ձեռնարուեստից ու հարտարութեանց կողմանէ շատ յառաջացած է:

ԳՈՒԼՏԱ (10,000) գեղեցիկ է մայր Եկեղեցին :  
ՄԱՐՊՈՒՐԿ (8,000) Երևելի է մատենադարա-  
նը և ուսումնարանները :

### ՄԵՔԵԼԻՆՊՈՒՐԿ ՇՎԵՅԻՆ

ՄԵՔԵԼԻՆՊՈՒՐԿ ՇՎԵՅԻՆ մեծ դքսութիւն է ,  
բնակիչներուն մեծ մասը նորազանդ են : Զօրքն  
է 6,000 :

ՇՎԵՅԻՆ (23,000) մայրաքաղաքն է համանուն  
լճին վրայ :

ՄԱՍԴԻՐ (26,000) բանուկ ու վաճառաշահ  
նաւահանգիստ ունի :

ՎՃՄԵՐ (13,000) երկրորդ նաւահանգիստն է :

ԿՈՒՍԴՐՈՎ (11,000) և ԼՈՒՏՎԻԿՈՎՈՒՄԴ , ուր  
նշանաւոր է Սլաւեան հնութեանց թանգարանը :

### ՇԼԵԶՎԻԿ ՀՈԼՅՈՒՅՑ

ՇԼԵԶՎԻԿ ՀՈԼՅՈՒՅՑԻ դքսութիւնը Տանիմար-  
գայի ակրութեան մասն էր ու դերմանական դաշ-  
նակցութեան կը վերաբերէր . բայց յամին 1864  
առին զայն պատերազմաւ Աւստրիացիք ու Բրու-  
սիացիք , և հիմա առ ժամանակեայ կը կառավա-  
րէն Աւստրիացիք՝ ՀՈԼՅՈՒՅՑ , և Բրուսիացիք՝  
ՇԼԵԶՎԻԿ . բնակիչները մեծաւ մասամբ նորա-  
զանդ են :

ՇԼԵԶՎԻԿի գլխաւոր քաղաքներն են .

ՖԻԷՆՍՊՈՒՐԿ (20,000) Պալզիկ ծովան վրայ  
ՇԼԵԶՎԻԿ (11,300) բանուկ նաւահան-  
գիստներ են :

ՀԱՏԿՐՍԼԵՊԵՆ (8,000) պանրոյ, ցորենի և օղիի  
վաճառք ունի :

ՀՈՇԳայնի գլխաւոր քաղաքներն են .

ԱԼԴՈՆԱ (53,000) Էլստ գետին բերանը՝ գեղե-  
ցիկ նաւահանգիստ ունի :

ԳԻՒ (19,000) } բանուկի նաւահան-  
ՌԵՆՏՍՊՈՒՐԿ (10,000) } գիսաներ են :

ԳԵՐՄԱՆԻԱյ ԵՐԻՐՈՐԴական պէրս-Ռի-ններն ու աղադ  
+աղադները .

ՊՐՈԽՆՍՎԻՔ կամ ՊՐԱՑՆՇՎԵՑ (46,000) համ-  
անուն դքսութեան մայրաքաղաքն է՝ մեծ ու  
փառաւոր :

ՎՃԵՄԱՐ (14,000) Սաքս-Վայմար մեծ դքսու-  
թեան մայրաքաղաքն է . անուանի ուսումնարան-  
ներ ունի :

ԵԿՆԱ (8,000) համալսարանը շատ հոչակա-  
ռոր է :

ԿՈԹԱ (18,000) Սաքս-Գուպուրկ-Կոդա դքսու-  
թեան մայրաքաղաքն է , ճարտարարուեստ և վա-  
ճառաշահ . անուանի են իրեն յախճապակիները :

ՕԼՏԿՆՊՈՒՐԿ (10,000) համանուն մեծ դքսու-  
թեան մայրաքաղաքն է :

ՎԼՉՊԱՏԿՆ (27,000) Կասսաւի դքսութեան  
մայրաքաղաքն է գեղեցիկ . հանքային ջրերն համ-  
բաւաւոր են :

ՓՈՅՆԴՖՈՐԴ (78,000) Մայն գետին վրայ աղատ  
քաղաք է , Գերմանական դաշնակցութեան ժո-  
ղովի տեղն է . մեծագործ է հասարակաց ժողովա-  
րանը , ուր ատենով Գերմանիոյ կայսերաց ընտ-  
րութիւնը կ'ըլլար , և սուրբ Բարթոլդիմէոսի ե-  
կեղեցւոյն մէջ կայսր կ'օծուէին :

ՊՐԵՄՄԱ (71,000) ազատ քաղաք է, ՎԷզէր գետին վրայ, վաճառականութիւնը խիստ բանուկ է :

ԼԻՊԵՔ (32,000) ազատ ու վաճառաշահ քաղաք է, շաքարի գործարաններ ունի :

ՀԱՄՊՈՏԿ (176,000) ազատ և գերմանիոյ առաջին վաճառաշահ քաղաքն է. անուաննի են շաքարի գործարանները. 1842ին մեծ մասը այրեցաւ, բայց նորէն շինուեցաւ :

ՎԵՐԾԻՆ ԵՐԵՔ ազատ քաղաքները Համառակից + կ'ըսուին :

---

## ԲՈՐԴՈՒԿԱԼ

---

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲՈՐԴՈՒԳԱԼ ԵՐԿԻՐԸ հին ատենը Լուսիտանիակ'ըսուէր. ութերորդ դարուն մէջ Արաբացիք տիրեցին հոն, բայց շուտով քշուեցան. հարիւր տարիի չափ ալ Սպանիացիք տիրեցին, ինչուան որ 1640ին Բորդուգալցիք գլուխ քաշեցին անոնցմէ, և իրենց թագաւոր դրին Յովհաննէս Պ:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Բորդուգալի սահմանը հիւսիսէն ու արևելքէն Սպանիան է, հարաւէն ու արևմուտքէն \ Ատլանտեան ովկիանոսը :

Տարածութիւնն է 30,000 քառակուսի մղոն :

Երկերը լեռնոտ, ջրոտ, բարեթեր, բայց քիչ  
բանեցուցած է :

Օդը բարեխառն ու առողջ է :

Բերքն է ամեն տեսակ հանգ ու մետաղ, մանա-  
ւանդ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, կապար,  
աղ, մարմարիոն • պառւղներէն՝ լեմոն, նարինջ,  
խաղող • մետաքսն ալ ազնիւ է :

Բնակիչը 4,000,000, որոնց լեզուն Սպանիա-  
ցւոց լեզուին մէկ տեսակն է :

Կրօնքը կաթովիկէ :

Կառավարութիւնը սահմանադրական միապե-  
տութիւն է, և ժառանգութիւնը թէ արական և  
թէ իգական գծով կը յառաջանայ :

Զօքքը 30,000 • նաւատորմիզը 52 կտոր նաւ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼՍՊՈՆԸ (260,000) մայրաքաղաքը, Եւրոպայի  
մեծ ու աղուոր նաւահանգիստներէն մէկն է . շէն-  
քերուն մէջ երեելի է Ալգանդարայի ջրանցքը,  
որ 35 կամարի վրայ շինուած է Ճերմակ մարմարիո-  
նէ . 1755ին երկրաշարժէ մը գրեթէ բոլորովին  
կործանեցաւ :

ՕԲՈՐԴՈ (86,000) Լիսպոնայէն ետքը ամե-  
նէն հարուստ ու վաճառաշահ քաղաքն է, ու գի-  
նին խիստ անուանի : Երկրին անունը աս քաղքիս  
անուանովը Բորդուդալ ըսուեր է :

ԷՎԱԾ (11,000) Բորդուդալի ամենէն ամուր  
քաղաքը • ունի զինուց գործարաններ :

ԳՈՅԻՄԳՈՒԾ (18,000) տէրութեան մէջ միայն  
աս քաղաքս համալսարան ունի :

Պրակս (20,000) ամուռ քաղաք է, ու զէնքի գործարաններ ունի :

Սէդուպաւ (13,000) աղի մեծ առուտուր ունի :

Էզօրս (12,000) ասոր մայր Եկեղեցին խիստ աղուոր է :

Պրակսնաց (4,000) մետաքսեղէնն անուանի է :

Աս քաղքիս դքսերէն կ'իջնէ թագաւորին ընտանիքը :

Երևելի են նաև Լուլէ, Դավիթը և Օվար :

## ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՐՈՒՅ

### ԲՈՐԴՈՒԳԱԼԻ ԵՐԿԻՐՆԵՐԻ

Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի Տիու և Կօա քաղաքները, Զինու մէջ՝ Մագաս կղզին :

Ափրիկէի մէջ՝ Ասորեան կղզիները, Մատերա և Սուրբ Թուլիաս կղզիները, Դալարի գլխայ կղզիները . Սենեկամպիային արևմտեան կողմը՝ Կէսպա քաղաքը . Գօնկոյի մէջ՝ Վնկօլա, Պէնկալա, ու Մողամպիք . և Մօնօմօդաբային մէջ՝ Զանկէպարին ծովեղերքը այլ և այլ տեղուանիք :

Ովկիանիայի մէջ՝ Դիմորի մէկ կտորը :

## ՍՊԱՆԻԱ.

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻԱՆ ՀԻՆ ԱԹԵՆԸ ՀԱՌՎՄԱՅԵցւոց ՃԵռՔՆԵՐ .  
ու ԹԵՐՈՐԴ դարուն մէջ Արաբացիք տիրեցին ա-  
նոր , ինչուան որ 1492ին Ֆերաբինանտոս թագաւո-  
րը հալածեց զանոնք : Քիչ ատենէն ետքը Ամերի-  
կան ալ գտնուելով , Սպանիացիք խիստ մեծցան ու  
հարուստ թագաւորութիւն մը եղան :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼՎԻՔ

Սպանիոյ սահմանը հիւսիսէն Գաղղիան է , ա-  
րևելքէն ու հարաւէն Միջերկրական ծովը , արև-  
մուտքէն Բորդուգալը :

Տարածութիւնն է 140,000 քառակուսի մղոն :  
Երկիրը լեռնոտ , ջրոտ ու բարեբեր է :  
Գլխաւոր գետերն ասոնք են .

Մինհօ , Տուէրօ , Դակօ , Կուատիանա , Կուատալգի-  
վիր , որ կը թափին Ատլանտեան ովկիանոսը .  
Էպրօ , որ կը վազէ Միջերկրական ծովը :

Ծովեղերքին օդը տաք է , իսկ մէջտեղուանքը  
բարեխառն :

Հողը քիչ մշակած է :

Բերքերուն գլխաւորներն ասոնք են . երկաթ ,  
մնդիկ , կապար , պղինձ + ոսկեհանքը ատենով ա-  
ռատ էր , բայց հիմա երեսէ ճգուած է . արծաթի

հանք՝ քիչ ունի : Գինին խիստ ազնիւ է . ունի  
նաև լեմոն , նարինջ , ձեթ , շաքար , բամբակ ,  
մեղր , մետաքս : Կենդանիներուն մէջ անուանի է  
Անտալուսիա գաւառին ձին , և Մէրինս ըստւած  
ոչխարը՝ որ խիստ ազնիւ բուրդ ունի :

Բնակիչն է 16,000,000 • լեզունին սպանեօլե-  
րէն , որ լատին լեզուին մէկ ճիւղը կը սեպուի :

Արուեստներն ու գիտութիւնները քիչ առաջ  
գնացած են :

Կրօնքը կաթողիկէ է :

Կառավարութիւնը սահմանադրական միապե-  
տութիւն է , թէ արական և թէ իգական գծով :

Զօրքը 200,000 • նաւատարմիզը 100 կտոր նաւ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՄԱՏՐԻՏ (476,000) մայրաքաղաքը Եւրոպայի  
գեղեցիկ քաղաքներէն մէկն է . փառաւոր է թա-  
գաւորական նոր պալատը , անուանի է նաև հա-  
մալսարանը : Մատրիտի շրջականներն են՝ Էսֆո-  
րիալ մեծագործ դղեակն ու վանքը , զոր շինեց  
Փիլիսոփոս Բ . Սուբբ Խլետինս կամ Կրանիա՝ ուր  
նշանաւոր է թագաւորական պալատը . Արան-  
խուեկ՝ Դակօ գետին վրայ՝ արքունի գեղեցիկ բնա-  
կարան է :

ՊԱՐՑԷԼՈՆԻ (252,000) Սպանիոյ ամենէն ա-  
մուր քաղաքն է . նաւահանգիստը խիստ ազուոր :

ՍԻՏԻԼԻՏ (152,000) Մատրիտէն ետքը տէրու-  
թէան ազուոր քաղաքն է :

ՎՐԱԿԱՇՀԻՏ (145,500) տէրութէան մեծ արք-  
եպիսկոպոսարանը հոս է :

ՄՈՒԾԸՆԸ (109,000) անուանի է մետաքսի գործարանացը համար :

ԿՐԱՆԵՏԸ (101,000) Մաւրիտանացւոց ետքի մայրաքաղաքն էր . հռչակաւոր է ԱՀամպրա պալատը՝ որ անոնցմէ մնացած հոյակապ շէնք է :

ԳԱՏԻՉԻ (72,000) ամուր բերդաքաղաք է . նաւահանգիստը խիստ բանուել :

ԳՈՐՏՈՎԸ կամ ԿՈՐԴՈՒԲԸ (57,000) Մաւրիտանացւոց առջի մայրաքաղաքն էր , հիմա ընկած է . մայր եկեղեցին շատ ընդարձակ ու մեծագործ է :

ՄԱՐԱԿԸ (113,000) վաճառաշահ քաղաք է . գինին խիստ անուանի :

ՄԱՐԱԿՈՍԸ (82,000) ատենով Արագոնայի թագաւորութեան մայրաքաղաքն էր . 1809ին Գաղղիացւոց պաշարմանը դէմ աղէկ դիմացաւ :

ԽՍԻՐԻԸ (34,000) լու գինի ունի :

ԳԱՐԴԱԳԻՆԻ կամ ԳԱՐԴԱԽԻՆԸ (38,000) հին Կարքեղոնացւոց շինած քաղաքն է . բանուել նաւահանգիստ ունի Միջերկրական ծովուն վրայ :

ՄԱՐԴԻՆՈ Ի՛ՊՄՊՈՍՏԵԼԵԸ (30,000) հռչակաւոր ուխտատեղի է . վասն զի հոս է սուրբ Յակոբոս առաքելոյն մարմինը , որ բոլոր տէրութեան պաշտպանն է :

ԱԼԳԱՆԴԻ (26,000) Միջերկրականին մօտ . համբաւաւոր է գինին :

ԳՈՐՈՒՆԵԸ (24,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է Ովկիանոսի վրայ :

ՎԱԼԵՆՑՈԼԻԸ (25,000) հոս մեռաւ Քրիստափոր Գոլոմազոս 1506ին :

ԲՈՐԴ-ՄԱԶՈՆ (20,000) Կարքեղոնացւոցմէ շինուած կը կարծուի :

Դուչեսօ (15,000) Մատրիտէն առաջ աս էր  
Սպանիային մայրաքաղաքը :

Աւաշտագս (15,000) ասոր համալսարանը ա-  
նուանի է :

Ֆերօւ (15,000) ամսւը քաղաք է, զինուորա-  
կան նաւարան ու նաւահանգիստ ունի :

Բարբէլօն (15,000) ունի կրկին ամսւը բեր-  
դէր :

Վէլէջ Մթւագս (14,000) խիստ անուանի է  
ասոր խաղողը :

Դարրակոնս (12,000) ատենով անուանի քա-  
ղաք էր, բայց հիմա ընկած է :

Աւաստէն (10,000) Ճոխ սնդիկի հանք ունի :

Բաւոս. այս պղտի նաւահանգստէս Ճամբայ  
ելաւ Քրիստափոր Գոլոմոլոս 1492ին՝ Ամերիկան  
դժնելու համար :

### ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐՍ

#### ՍՊԱՆԻԱՑԻՈՑ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ափրիկէի մէջ՝ Սեւգա, Մէլլեւա, Գանարեան  
կղղիները, և Կուինէյի ծոցին մէջ մէկ քանի  
մանր կղղիներ :

Ամերիկայի մէջ՝ Գուապա, Բորգուիգո, Աստուա-  
ծածնայ կղղիները :

Ասիոյ և Ովկիանիայի մէջ՝ Փիլիպպեան, Մարիտ-  
նեան, Կարոլինեան, Պաշէա և Մինտանոյ կղղե-  
ները :

Սպանիոյ և Գաղղիոյ սահմանակից է Անտորրա  
ՀԱՍՏԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ 16,000 բնակիչօք. ասոր  
մայրաքաղաքն է Անդառա, որ 2,000 բնակիչ ունի :

## Ի Տ Ա Լ Ի Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍԻ 750 տարի առաջ Հռովմայեցիք մեծնալով՝ բոլոր Խտալիոյ տիրեցին. բայց հինգերորդ գարուն ատեններն, իրենց իշխանութիւնը տկարացած ըլլալուն համար՝ Խտալիան Գոթացւոց ու Լոմպարտացւոց ձեռքն ընկաւ, ինչուան որ մեծն Կարոլոս յաղթեց անոնց ու ինքը տիրեց: Անոր մեռնելէն ետքը Խտալիան զանազան տէրութիւններ բաժնուեցաւ, շատ անգամ ալ մեծ մասը Գերմանացւոց, Գաղղիացւոց ու Սպանիացւոց ձեռքն անցաւ:

Ութեատամներորդ գարուն վերջերը Գաղղիացիք տիրեցին. բայց յամին 1814 մեծին Նաբոլէոնի իշնալէն ետքը՝ Վեննայի ժողովին մէջ որոշուեցաւ որ Սավյայի դքսութիւնը՝ Սարտենիոյ թագաւորութիւն ըսուի՝ Ճենովյայի հասարակագետութիւնն ալ հետը միացընելով՝ Լոմպարտիան ու Վենետիկն Աւտորիոյ ըլլայ. Դոսգանան Աւտրիոյ արշեգուքսերէն մէկուն արուի. Բարման ու Բիաշենցան Նաբոլէոնի այրի կնոջը՝ քանի որ ողջ է, ու մեռնելէն ետքը իր երկիրն անցնի Լուգգայի դքսին. Լուգգան ալ միանայ Դոսգանայի երկրին հետ մէկալ տէրութիւններն ալ իրենց առջի վեճակն ունենան: 1859 տարւոյն Խտալիոյ պատերազմէն

Ետեւ Լոմպարտիան Սարտենիոյ թագաւորութեան անցաւ . և Դոսդանա , Մոտենա , Բարմա և Եկեղեցւոյ վեճակի քանի մը գաւառներն ու Կաբոլիի ամբողջ թագաւորութիւնը աղաւամբելով , միացան Սարտենիոյ հետ , որով կազմուեցաւ թագաւորութիւնն Խտալիոյ յամին 1860 :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Խտալիոյ սահմանը հիւսիսէն Ալպեան լեռներն են , արևելքէն Ազրիական ծոցը , հարաւէն Միջերկրական ծովը և դարձեալ Ալպեան լեռները :

Տարածութիւնն է 91,000 քառակուսի մղոն :

Խտալիան հիմա չորս տէրութիւն կը բաժնուի . Թագաւորութիւն Խտալիոյ , Վիճակք Եկեղեցւոյ , Վենետիկ և Հասարակապետութիւն Սան-Մարինոյի :

Գլխաւոր լեռներն ասոնք են :

Մոնդէ Ռոզա և Մոնդէ Պիանգոյ կամ Սպիտակ լեռն , որ Ալպեան լերանց բարձր ծայրերն են : Վեսուվ՝ Կաբոլիի քով , Ետիա՝ Սիկիլիոյ մէջ , Սդրոմապով՝ Լիպարեան կղզիներուն մէջ , որ հրաբուխ լեռներ են :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Առնոյ , Տիբերիս կամ Դէվէրէ , Վոլգուրնոյ , որ Միջերկրակական ծովը կը թափին .

Բոյ , Ատիճէ , Օֆանդոյ , որ Ազրիական ծոցը կը վազեն :

Խտալիան Եւրոպայի հարաւային կողմն ըլլալուն համար՝ օդը տաք ու ընդհանրասպէս առողջ է :

Բերքերուն գլխաւորներն են աղնիւ քար , եր-

կաթ, սղինձ, բամբակ, շաքար, մեղք, ձեթ, նարինջ, լեմոն, բրինձ. ձեռագործներուն մէջ անուանի է մետաքսէ բանուածքը, ասլակին, յախճապակը :

Բնակիչն է 26,000,000, լեզունին իտալերէն. աղէկը կը խօսուի Դոսգանայի Սիենա դաւառին մէջ:

Վաճառականութիւնն ու արուեստներն ընդհանրապէս ծաղկելու վրայ են. արձանագործութիւնը, պատկերահանութիւնը, ճարտարապետութիւնը և երաժշտութիւնը քան զամէն ազգյառաջացած են:

Կրօնքը կաթովիկէ:

### ԹԱԳԱՌՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻՈՅ

Իտալիոյ թագաւորութեան տարածութիւնն է 75,000 քառակուսի մղոն, բնակիչն է 22,000,000. զօրքն է 300,000 և նուատորմիջն է 106 կտոր նաև:

Իտալիոյ թագաւորութիւնը ձեացաւ յամին 1860 հետզհետէ միանալով Սարտենիոյ թագաւորութեան հետ (որ կը բովանդակէր Բիէմոնդ ու Շենովայի և Մոնֆերրադի գքսութիւնները) Երկուց Սիկիլեայց թագաւորութիւնը, Բարմայի և Մոտենայի գքսութիւնները, Դոմգանայի մեծ գըքսութիւնը, Լոմագարտիա աւստրիական դաւառը, Ռոմանիա և Ռւմալիա ու Մարդա հռովմէական գաւառները, և կը բաժնուի 1859 դաւառ, որոնք չորս մաս կընան ըլլալ. միջն Իտալիա, հիւսիսային Իտալիա և հարաւային Իտալիա ու Կղզիները:

## ՄԻԶԻՆ ԻՏԱԼԻՑ

Միջին Խտալիան կը բովանդակէ Դոսգանա ,  
Ումպրիա և Մարգա :

ՖԻՌՐԵՆՑ (114,300) թագաւորութեան մայրաքաղաքը Առնոյ գետին վրայ, Խտալիոյ ամենէն ծաղկած ու գեղեցիկ քաղաքներէն մէկն է . մեծագործ է մայր եկեղեցին՝ ուր եղաւ Փլորենտեան ժողովը . սուրբ Լաւրենտիոսի եկեղեցին, Մէտիչի ըսուած հռչակաւոր ցեղին մատուոը և Բիգդի պալատը , անուանի է նաև հնութեանց և բնական պատմութեան պահարանը : Հոս ծնած են Տանդէ բանաստեղծը , Պոդգաչիոյ , Չիմապուէ , Ճիոդդոյ , Լեոնֆ , Միքէլ-Անձէլս , Մագգիավէլի և Ամերիկոս Վեսթուչչի :

Լիվունութ կամ Ալյունութ (84,000) նաւահանգիստն ու վաճառականութիւնը շատ բանուկ է : Հոս հայոց եկեղեցի մը կայ Անտոնիեան կրօնաւորաց ձեռքը :

Սրեն (22,000) ասոր համալսարանն ու մայր եկեղեցին անուանի է :

Բիջ (37,000) ատենով հասարակապետութեէր . ասոր մայր եկեղեցւոյն զանգակատունը 15 սուք քովընտի ծռած է . գերեզմաննոցը շատ երևելի է , որուն հողը հրէաստանէն բերած են քաղաքցիք 50 նաւով : Հոս ծնած է Գալիլէոս փիլիսոփիան :

Լիւդի (22,000) ասոր գրատունը , դիւանը , մայր եկեղեցին ու մօտ եղած ջերմաւկները շատ անուանի են :

ԲԵՐՈՒՑՑԻՆ (15,000) ասոր քովին է Տրասիմեն  
լեճը, որուն մօտ Աննիբաղ Հառվիայեցւոց յաղ-  
թեց:

ԱՆԳՈՆ (32,000) Ադրիական ծովուն վրայ վա-  
ճառաշահ քաղաք է:

ՈՒՐՊԻՆՈՑ (12,000) հռո ծնած է Ռափայէլ ա-  
նուանի պատկերահանը:

ԼՈՐԵՏՈՆ (8,000) հռչակաւոր ուխտատեղի է  
Աստուածածնոյ տանիը համար:

ՍԻԿԻՎԱԼԻՆ (11,000) մեծ տօնավաճառ ունի:

Անուանի են նաև Ասսիզի, Ֆուլինեոյ, Սրոլէ-  
դոյ, Օռվիէդոյ, Ռիէդի, Բէզարոյ, Մաչէռադա,  
Ասդոլի, Ֆէռմոյ:

### ՀԻՒՍՏԱՅԻՆ ԻՏԱԼԻԱ

Հիւսիսային Խտալիան կը բովանդակէ Սարտե-  
նիոյ տէրութիւնը, Լոմպարտիան, Բարմայի և Մո-  
տէնայի գքառութիւններն ու Ռոմանիան:

ԴՐՈՒՐԻՆ (180,000) Բոյ գեաին վրայ շատ գե-  
ղեցիկ քաղաք է. անուանի են բազմաթիւ տպա-  
րանները, համալսարանը, ճեմարանը, մանաւանդ  
Եղիպտական հնութեանց պահարանը:

ԿՈՎՃՐԻ (15,000) Ճարտարարուեստ քաղաք է:

ՄԻԼԱՆ (196,000) Խտալիոյ գեղեցիկ քաղաք-  
ներէն մէկն է, և բընծի ու մետաքսի մեծ առու-  
տուր ունի: Ասոր մէջ Սուրբ Ամբրոսիոսի եկե-  
ղեցին, գրասառնն ու Սգալա ըսուած թէատրոնը  
շատ մեծագործ էն:

ԱՆՋԻՍԱՆԴՐԻՆ (27,000) Խտալիոյ ամուր քա-  
ղաքներէն մէկն է: Ասոր քովը Մարէնիոյ գեղին

մօտ Գաղղիացիք մեծ պատերազմով յաղթեցին  
Աւստրիացւոց յամին 1800 :

Բարեւ (29,000) երեկի համալսարան ունի :

Գոտու (16,000) համանուն լճին վրայ գեղեցիկ  
ու ճարտարաբուեստ քաղաք է :

Պէրսաւու (25,000) չուխոյի և մետաքսի դոր-  
ծարաններ ունի :

Պրէցւ (45,000) ամուր քաղաք է . զինուց և  
երկաթեղինաց գործարաններ ունի :

Ռիվուլ. Արգու. Լուս. Գաղղիացիք մեծ յաղ-  
թութիւններ ըրեր են յամին 1796 :

Մածէնդա. Մաւենեանու. Սուֆինոն. Գաղ-  
ղիացիք և Խտալացիք մեծամեծ յաղթութիւններ  
ըրեր են Աւստրիացւոց դէմ յամին 1859 :

Ճէնով (128,000) ամուր քաղաք է , նաւա-  
հանգիստը մեծ ու բանուկ : Ատենով Ճէնովացւոց  
հռչակաւոր հասարակապետութեան մայրաքա-  
ղաքն էր : Այս քաղլքիս մօտերը ծնած է Քրիս-  
տափոր Կոլոմբոս :

Բարտ (47,000) մեծ ու գեղեցիկ քաղաք է .  
Թատրոնը Եւրոպայի ամենէն ընդարձակն է . ա-  
նուանի է նաև Պոտոնեան ըստւած տալարանը :

Բաւշէն (39,000) Բոյ գետին վրայ ամուր  
քաղաք է :

Մուսէն (32,000) գեղեցիկ շինուածներ ունի :

Գարրար (9,000) ազնիւ մարմարիոնի քարա-  
հանք ունի :

Ֆէրրար (28,000) հոս է Արիոսգոյ բանաս-  
տեղծին գերեզմանը :

Պուլուե (90,000) Խտալիոյ գեղեցիկ ու հա-  
րուստ քաղաքներէն մէկն է . անուանի է համա-

լարանը, գիտութեանց ձեմարանը և գերեզմաննոցը :

ԳԱՅԻՆՑ (18,000) ասոր յախճապակն աղնիւ էր :

ՌԵԴԻԿԱՆ (19,000) Ոնորիոս կայսրը երկար ատեն հոս նստաւ :

ՌԵԴԻԿԱՆ (19,000) երեելի է հօս Օգոստոս կայսեր յաղթական կամարը :

Նշանաւոր են նաև Իմոլա, Ֆոոլի և Չէզենանուր ծնան քահանայապետքն Պիոս 9 և Պիոս 12 :

### ՀԱՐԱՎՅԻՆ ԻՏԱԼԻԱ

Հարաւային Իտալիան կը բովանդակե Երկուց Սիկիլեայց թագաւորութեան ցամաքային մասը :

ԿԱԲՈԼԻ կամ ԿԱՊՈԼԻ (420,000) Իտալիոյ ամենէն մեծ քաղաքն է. գեղեցիկ նաւահանդիստ ունի ու փառաւոր շենքեր. հեռութեանց պահարանն անուանի է. գիպակն աղնիւ. գիրքը, բարեգերութիւնը և օդը շատ զուարժալի. Ասոր քովերն են Հերգուլանոն ու Պոմպէա հին քաղաքները, որ Քրիստոսէ 79 տարի ետքը Վեսուվլէրան լաւայովն ու մոխրովը ծածկուեր էին ու 1755 տարիէն ՚ի վեր ինչուան հիմա կը փորեն ու կը բանան :

ԳԱՍԴԻԼԱՄՄԱՐԻ (20,000) ասոր քովերն է հին Սդապէա քաղաքին աւերակը :

ԱԳՈՒՏԻԱ (15,000) բերդն ու վաճառականութիւնն անուանի է :

ՏԵՐԵՆՏՈՆ (19,000) հոչակաւոր հին քաղաք-ԿԱՊՈՒԱ (8,000) ներ են :

Պար 1 (33,000) Ապրիականին վրայ նաւա

Պրեստոց 1 (10,000) Հանգիստներ են :

Լ:22է (18,000) Խառլիոյ բարեշէն ու գեղեցիկ քաղաքներէն մէկն է :

Ռէժիսոր (16,000) Վաճառաշահ նաւահանգիստ է Մէսսինայի նեղուցին վրայ :

Սաւերոս (12,000) Համանուն ծոցին վրայ . ասոր բժշկութեան դպրոցն անուանի էր միջին դարուն մէջ :

Երևելի են նաև Բուցցու, Բորդիչե, Պայտ, Գէդի, Ֆոճճիա:

#### Կ Դ Ի Ն Ե Բ Ը

Սիկիլիա կղզին . որ երկուց Սիկիլեայց թագաւորութեան մասն էր :

Բաւերոս (162,000) Եւրոպայի գեղեցիկ ու մեծ քաղաքներէն մէկն է . անուանի է աստեղաբաշխական գիտարանը :

Դրսբան 1 (26,000) Թերակղզւոյ մը վրայ ամուր ու վաճառաշահ նաւահանգիստ ունի :

Մէսսրոս (62,000) Համանուն նեղուցին վրայ մեծ ու աղուոր նաւահանգիստ ունի . վաճառականութիւնը բանուկ :

Գադանտ (65,000) Ճարտարաբուեստ ու մեծ քաղաք է ծովահայեաց արևելեան ափունքին վրայ Ետիա լեռան տակը, որ Եւրոպայի ամենէն մեծ ու հոչակաւոր հրաբուղին է :

Ստրանտս (18,000) արևելեան ափունքին վրայ հին ու անուանի քաղաք է, բայց կեսէն աւելին աւելակ . հոս ծնած է Արքիմեդէս երկրաշափը :

ՃՐԱՇԽՆԴԻ (16,000) հարաւային ավտոմեքին վրայ հին Ակսագանդ քաղաքին քովին է։ անուանի է ասոր քովի ծծմբի հանքը։

Սարտենիա կղզին։ որ Սարտենիոյ թագաւորութեան մասն էր։

ԳԵՎԻՍՐԻ (28,000) կղզւոյն գլխաւոր քաղաքն է, որ երևելի համալսարան ունի։

ՍԱՍՍԱՐԻ (23,000) երկրորդ գլխաւոր քաղաքն է։

Սարտենիոյ չորս կողմը բազմաթիւ կղզեակներ կան, որոնցմէ մէկն է նաև Գաբրէքա կղզին, ուր կը բնակի Կարիսկալտի զօրավարը։

Եղպա կղզին։ Դոսգանայի ափանցը վրայ, որուն գլխաւոր տեղին է ԲՈՐԴՈՑ ՖԷՐԹՅՅՈ ողջակ քաղաքը հիւսիսային կողմը։ Նաբոլէոն ԱՀոս նըստաւ իրեւ իշխան կղզւոյն 1814 տարւոյն մայիսէն մինչև 26 փետրուար 1815։ Այս կղզին երկաթի անսպառելի հանք ունի, գեղեցիկ արօտներ, և քովերէն առատ թռն ու սարդին ձկներ կ'ելլին։

### ՎԻՃԱԿԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Յետ ապստամբելոյ դաւառացն ՈՒՄԱՆԻԱ, Մարգա և Ումալրիա յամին 1860, Եկեղեցւոյ վեճակն հիմա ունի իբր 3,400 քառակուսի մղոն տարածութիւն ու 700,000 բնակիչ։ զօրքն է 8,000։

ՀՐՈՄ (204,000) Տիբերիս գետին վրայ աթու է Սրբազն քահանայապետին և գլխոյն կաթողիկէ եկեղեցւոյ։ Հնութեանց ու գեղարուեստից կտղ

մանէ աշխարհքիս տռաջին քաղաքն է. եղական շնչքեր են Սուրբ Պետրոսի տաճարը, Վատիկանու պալատը ու զրատունը և հին ու նոր ձեռակերտները:

ԴԻՎՈՒ. ՖՐԱՄԳԱԴԻ. ԱԼՊԱՆՈՑ. ՕՍԴԻՏ. Հին առենէն 'ի վեր երևելի տեղուանք են:

ՎԻԴԵՐՊՈՑ (14,000) ապառաժ լերան մը ոտքը, ունի շաքարի զտարաններ, ջերմուկներ ու պարտէզներ:

ՎԵԼԵԴՐԻ (13,000). ԱԼԵԴՐԻ (11,000). ՖՐՈԶԻՆՈՆ (8,000) վաճառաշահ քաղաքներ են:

ՉԻՎԻԴԱ-ՎԵԴՐԻ (10,000) Միջերկրականին վրայ վաճառաշահ նաւահանգիստ ունի:

### ՎԵՆԵՏԻԿ

ՎԵՆԵՏԻԿ գաւառն Խտալիոյ հիւսիսային կողմն է. Աւստրիոյ կայսերութեան մասն. տարածութիւնն է իրր 7,300 քառակուսի մղոն. բնակիչն է 2,446,000 :

ՎԵՆԵՏԻԿ (120,000) Աղբիական ծոցին ծայրը 72 կղզեակներու վրայ շինուած մեծագործ ու գեղեցիկ քաղաք է, որուն շատ փողոցներուն մէջ նաւակներով կը պտըտին: Փառաւոր է Սուրբ Մարկոսի եկեղեցին, հրապարակն ու զրատունը: Հոս բացուեցաւ Ռավիայելեան վարժարանն հայոց յամին 1836: — ՎԵՆԵՏԻԿ քով եղած մանր կղզիներէն մէկն է Սուրբ Ղաղար հայոց Մխիթարեանց մայրավանքը, զոր հիմնեց Մխիթար Աբբահայը յամին 1717: — ՎԵՆԵՏԻԿ մօտերն անուանի են ՔիոՃՃիա, Դրէվիզոյ և Պասսանոյ:

Բատուս կամ Պատաւուս (53,000) շատ հին քաղաք է. համբաւաւոր է համալսարանը. Տիառա Լիւիոս լատին պատմիչն հոս ծնած է:

Վշշէնջն (33,300) հոս ծնած է Պալլադիոս եւ րևելի ճարտարապետը:

Վէրոնա (59,100) հին ու գեղեցիկ բերդաքաղաք է. հոս ծնած են Պլինիոս երեց բնախօսը, և Ախտրովիոս Ճարտարապետը:

Մանդուս (30,000) ամուր բերդ ունի: Ախտրովիոս այս քաղաքին քովերը ծնած է:

Ուտուէ (25,200) կտակի ու մետաքսի ձեռագործներ ունի:

Պէւունոս (12,000) պղնձի մեծ հանք ունի:

## ՀԱՍՏԱԿԱՎԵՏՈՒԹԻՒՆ ՍԱՆ-ՄԱՐԻՆՈՅԻ

Սան-Մարինոյի ազատ հասարակապետութելը, որ Եւրոպայի ամենէն հինը կը սեպուի, Խտալիոյ թագաւորութեան մէջ փակուած է ամէն կողմանէ՝ դէսպ'ի կեղրոնը, տարածութիւնն է 18 քառակուսի մղոն. բնակիչն է 8,000: Մայրաքաղաքն է Սան-Մարինոս (5,500) լեռան վրայ:

## ԱՆԴՐԱԿԱՆԵ ԻՏԱԼԻԱ

Անդրեացիք Խտալիոյ եղերքն ունին Մալգա, Կոծծոյ և Գոմինոյ կղզիները, որ Միջերկրականին մէջ Սիկիլիոյ հարաւային կողմը կիյնան. որոնց տարածութիւնն է 80 քառակուսի մղոն և բնակիչը 144,000: Գլխաւոր քաղաքն է Լավալեդ (35,000), որ Եւրոպայի ամուր քաղաքներէն մէկն

է Մալդա կղզւոյն վրայ . ու արևելք Երթալու վա  
ճառուց մթերանոցն ու գլխաւոր նաւահանգիստը :

Դաշտի միմա մասնաւոյ մասնաւոյ մասնաւոյ  
ամպան չըման ամպան մասնաւոյ մասնաւոյ  
ամպան : Վաստի առաջարկութեան բանը մի պատճ  
մասնաւոյ մասնաւոյ մասնաւոյ մասնաւոյ մասնաւոյ

## ՏԱՇԿԱՍԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Տաճկ կամ Օսմանցւոց տէրութիւնը 1300ին  
սկսաւ սուլդան Օսմանէն Քէօթահիայի կողմէրը .  
ու քիչ ատենէն Ետքը Պրուսան , Էտիրնէն ու  
Կոստանդնուպոլիսն առնելով տարածուեցաւ ին-  
չուան Մաճառստան ու Գերմանիա : Անոր Համար  
բոլորը Երկու գլխաւոր մաս կը բաժնուի . Եւրո-  
պայի Տաճկաստան՝ որ է Ռումելի , և Ասիոյ Տաճ-  
կաստան՝ որ է Անսատօլու :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Եւրոպայի Տաճկաստանին սահմանը հիւսիսէն  
Ռուսաստանն է , արևելքէն Սև ծովն ու Ասիան ,  
Հարաւրէն Արշիպեղագոսն ու Յունաստանը , արև-  
մուտքէն Աւստրիան :

Եւրոպայի Տաճկաստանը վեց գլխաւոր նա-  
հանգ կը բաժնուի . Ռումելի , Բուլղարք , Պասիիա

և Հերձեկուլինա, Ալղանիա, Մակեդոնիա, և թէստալիա :

Տաճկի տէրութենէն կախումն ունին Ռւլահ-Պուղտան և Սերվիան՝ որ հիմա գրեթէ ինքնադլուս են իրենց ներքին կառավարութեամբ, ինչպէս նաև Մոնղէնէկը ուն :

Տարածութիւնն է 158,000 քառակուսի մղոն :

Գլխաւոր լեռներն ասոնք են .

Պալգան, որուն գլխաւոր Ճիւղերն են Տէսփոթտաղը, Չար տաղը, Տինարեան լեռները :

Պինդոս լեռը, Ողիմպոս կամ Լաքա, Պառնասոս և Կիմերեան լեռները :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Դանուք, որ Սև ծովը կը մտնէ .

Տըին, որ Ադրիական ծովը կը թափի .

Մէրիճ, որ Արշիպեղադոսը կը վազէ .

Մորաւա, Ալուդա, Մէրէթ, որ Դանուք գետը կը մտնէն :

Երկիրը խիստ լեռնոտ է, մանաւանդ հարաւային կողմը . անոր համար ալ սաստիկ ցուրտ կ'ըլլայ :

Հողը բարեբեր է, բայց քիչ մշակած . շատ աեսակ հանիք ունի, թէպէտ և քիչ բանեցուցած :

Գլխաւոր բերքն է ցորեն, բրինձ, խաղող, նարինջ, ձեթ, բամբակ, մետաքս, քրքում, և ծխախոտ :

Արուեստն ու ճարտարութիւնը հիմա առաջ երթալու վրայ են : Անուանին մետաքսէ բանեցածքները, դիպակը, շալն ու կաշին :

Բնակիչն է 15,730,000 Եւրոպայի մասին մէջ . լեզունին թուրքերէն, յունարէն և ոլուերէն է :

Կրօնքը մահմետական և քրիստոնեայ է :

կառավարութիւնը ազատ միապետութիւն։  
Զօրքը 300,000 · նաւատորմիզը 137 կտոր նաւ։

### ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵԲԸ

#### Ռ Ո Ւ Մ Է ԼԻ

Կոստանդնուպոլիս կամ Ստամբուլ (1,075,000) բոլոր Տաճկաստանի մայրաքաղաքն է՝ Մարմարային ու Սև ծովուն վրայ, գիրքը եղական, նաւահանգիստը շատ փառաւոր ու ընդարձակ, որ 1200 նաւէն աւելի կ'առնէ. վաճառականութիւնը խիստ բանուկ. շենքերուն մէջ երեսէլի են մէկ քանի մզկիթները, մանաւանդ Այա Սոֆիան. անուանի է նաև փողերանոցը, թագաւորին պալատները, նոր բացուած գործարանները, և այլն։ Մեծն կոստանդինոս շինեց աս քաղաքը 320ին. իսկ 1453ին Ֆէթիհ սուլդան Մէհմեմէտն առաւ Յունաց ձեռքէն։

Արքանուպոլիս կամ Կտիրուէ (140,000) տէրութեան երկրորդ մայրաքաղաքն է. գիրքը գեղեցիկ. շենքերուն մէջ անուանի է սուլդան Սէլլիմին մզկիթը։

Ֆրանտի (42,000) մեծ ու վաճառաշահ քաղաք է. մետաքսեղէն բանուածքն աղնիւ. շատ հնութիւններ ալ ունի։

Գլքու-Քրիստու (20,000) աղնիւ կողի և պանիր ունի։

Խուէսձէ (22,000) մեծ տօնավաճառ ունի։

Էսդր-Սաւար (20,000) հանքային ջրեր ունի։

Տիրէդաք (16,000) կարոլոս թբ Շուէտաց թագաւորը հոս նստեր է քանի մը օր յամին 1713։

ԿԵԼԻՊՈՒԾՈՒ (50,000) Տարտանել (Չափագ գուլէ-  
մի) ըսուած նեղուցին բերանն է . անուանի է սեկը :

ՌՈՏՈՍԴԱ կամ ԹԵՔԻՐՏՅԱ (40,000) Մար-  
մարայի վրայ բանուկ ու վաճառաշահ նաւահան-  
գիստ ունի :

ԱՎԼԻՎՐԻ (5,000) Մարմարայի վրայ բանուկ  
նաւահանգիստ է :

### ԲՈՒԼՂԱՐՔ

ՍՈՅԻՆ կամ ԹՐԻՎՏԻՑԱ (30,000) Բուլղարիա  
դաւառին մեծ ու վաճառաշահ քաղաք է :

ՎԼՏԻ (25,000) ամուր բերդաքաղաք է Դա-  
նուբի վրայ :

ՎԻԿՈՊՈԼԻՍ (15,000) } Դանուբի վրայ են :  
ՎԻՍԴՈՎԱ (21,000) }

ՌՈՒՍԴՈՒԳ (30,000) մեծ , ամուր ու վաճառա-  
շահ քաղաք է Դանուբի վրայ :

ԱՎԼԻՍՐԻ (20,000) ամուր ու վաճառականու-  
թիւնը բանուկ քաղաք է :

ՇՈՒՄՆԻ կամ ՇՈՒՄԼԱ (35,000) տէրութեան  
ամուր քաղաքներէն մէկն է :

ՎԱՐՆԱ (20,000) Տաճկաստանի առաջին նա-  
ւահանգիստն է Առ ծովուն վրայ :

ԴԵՐՆՈՎԱ . Հոս կը նստէին Բուլղարաց վերջին  
թագաւորները :

ՎԻՆՍԴԻՆՃԻ . Հին Դոմի քաղթին տեղին , ուր  
պատրուեցաւ Ովեղիոս բանաստեղծը :

ՌԱՍՍՈՎԱ . ՀԵՐԵՇՈՎԱ . ԻՍՏԱՋԱ . Դանուբի  
վրայ անուանի են Ռուսաց տուած պատերազմնե-  
րով Տաճկաց գեմ :

### Պ Ա Ս Ն Ի Ա

Պոսոս կամ Պոսոս Սէրս և Սօրսենոս  
(70,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է :

Դրստութ (8,000) միջնաբերդ ունի :

Զգուռնոր (14,000) կապարի հանք ունի :

Պասեսւուգտ ամուր բերդ ու հանքային ջրեր  
ունի :

Մոսդար . նշանաւոր է քարաշեն մեծ կամուր-  
ջը միակամար :

Պոսնիա գաւառին մեկալ գլխաւոր տեղուանքն  
են . Դրէսլինեոյ , Դուզլա , Պիհաչ և Կովլակազար :

### Ա Լ Պ Ա Ն Ի Ա

Եասիս կամ Եասես (40,000) Ալպանիա կամ  
Ասնաւուտլուգ գաւառին գլխաւոր քաղաքն է .  
ասկէց էր Տէփէտէլէնիլ Ալի փաշան , որ լժագա-  
ւորէն ապստամբած ըլլալով հոս պաշարուած մե-  
ռաւ յամին 1822 :

Հքոտրն կամ Իսքէնտէրնէ (20,000) ամուր ու  
վաճառաշահ քաղաք է :

Տուրսը (10,000) նաւահանգիստն ամուր ու  
վաճառաշահ քաղաք է :

Նշանաւոր են նաև Բրէվլէզա , Սալակորա , Գրոյա  
կամ Աքսէրայ , Արկիրոյ-Գասգրոյ , Պերագ կամ  
Պէլիրատ Ալպանիոյ , Բարկա և Սուլի :

## ՄԱԿԵԴՈՆԻԱ

Թիւստանիսէ կամ Սէւստա (75,000) հին ատենի Մակեդոնիա գաւառին գլխաւոր քաղաքն է . մեծ ու բանուկ նաւահանգիստ ունի , շատ ալ հնութիւններ :

Սէրէջ (30,000) ընդարձակ ու ամենազուարձ դաշտի մը մէջ վաճառաշահ քաղաք է . քովերն արծաթի հանք կայ :

ԻտաֆուՊ (15,000) գեղեցկագիր քաղաք է : Անուանի են նաև Եէնիձէ Վարաար՝ որուն մօտերն են Պելլա քաղաքին աւերակները ուր ծնաւ մեծն Ազեքսանդր , Սպրումնիցա , Բէդրովիչ , Գիւս գէնատիլ , Տոլու Մանաստըր կամ Պիդովիա :

Աթոնոջ կամ Աթոս լեռն , ուր չոռմի 22 վանք կայ և 500 մատուռ հանդերձ 5,000 կրօնաւորներով :

ՏՐԱՄԱ . ասոր մօտերն են հին Փիլիպովէ քաղաքին աւերակները :

## ԹԵՍԱՂԻԱ

Լարիսսա կամ Եէնտէէցիր (30,000) կարմիր ներկի գործարաններ ունի :

ԴՐԱՎԻԱ . ԶԱՆՈՐԱ . ԶԱԹԱԼԱՇ՝ որ հին ատեն Փարսազիա կ'ըսուէր . Պէւստիւս և Մէծութիւն կամ Մէջավոր :

### ՈՒԼԱՀ-ՊՈՒՂՑԱՆ

Այս գաւառները մէկ իշխանութիւն մը կը կազմեն Ռուսանիտ անունով, և իշխանը ժողովուրդը կ'ընտրէ: Տարածութիւնն է 35,150 քառակուսի մղոն. բնակիչը 3,864,848:

Պուտիգրէց (106,000) Ուլահի մայրաքաղաքն է, վաճառաշահ ու մեծ բայց գեղի նման:

Եսէ (54,000) Պուղտանի մայրաքաղաքն է՝ Պուդրէշին նման:

Խորսթիւ կամ Պրթթւով. ՃիւրճէվոՅ. ամուր ու անուանի բերդ են:

Մէկալ երևելի տեղուանք են Ֆոքշան, Պոթուշան, Թէրկովլից, Օգնա, Հուշ, Ռուման և Կալաց՝ որ բանուկ նաւահանգիստ ունի (35,000 բն.):

### ՍԵՐՎԻԱ

Սերվիոյ տարածութիւնն է 16,000 քառակուսի մղոն, բնակիչը 4,120,000:

Պելագ (32,000) Եւրոպայի ամուր քաղաքներէն մէկն է. Սերվիոյ իշխանը շատ անգամ հոսնուտէր է, և բոլոր երկրին գլխաւոր քաղաքն է:

Սերէնտրէ (12,000) Սերվիոյ նախագահ արքեպիսկոպոսը հոս կը նստի:

Գրակութեաված (5,000) հիմա Սերվիոյ իշխանը հոս կը նստի:

Գրաստով. ասոր քովին է Տրայիանոս կայսեր շինած կամուրջը:

## ՄԱՆԴԵՆԵԿՐՈՅ

Առաջ գրեթե ինքնագլուխ իշխանութիւն մըն  
էր . բայց հիմա կախումն ունի Տաճկի տէրութե-  
նէն : Տարածութիւնն է 1,286 քառակուսի մղոն ,  
և ընակիչը 196,240 :

## ԵՒՐՈՊԱՅԻ ՏԱՃԿԱՍՏԱՆԻՆ

### Կ Դ Զ Ի Ւ Ե Բ Բ

Թասոս կամ թաշոջ . գեղեցիկ մարմարիսնն  
ու գինին անուանի են :

Աւտոթրակէ կամ Աէտէնտրէք . հին ատենը  
խիստ անուանի էր :

Լեռնոս կամ Լիտոն . ատենով անուանի էր ա-  
սոր լաբիւրինթոսը , և հոռոմկաւ (Ալինի Հալիթուս)՝  
ըսուած կաւը :

Գանտոս կամ Կրտոս կամ Կրտսէ . մեծ կղզի է ,  
որ հին ատենը խիստ անուանի էր , բայց հիմա ըն-  
կած է : Գլխաւոր քաղաքներն են Գանտոս կամ  
Կրտս (15,000) , Գանէ (10,000) նաւահանգիստ  
վաճառաշահ :

## ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԻ՞ ատենը Յունաստանի մէջ այլ և այլ հասարակապետութիւններ կային՝ իրարու հետ սովորաբար գաշնակից. արուեստներն ու գիտութիւնները ծաղկած էին Յունաց մէջ, պատերազմական քաջութեամբ ալ մեծ անուն ունէին: Հռովմայեցւոց հասարակապետութեան մեծցած ատենը՝ անոնց տակն ընկան. բայց երբոր կոստանդիանոս իր աթոռը կոստանդիուալիս փոխազրեց, կամաց կամաց Հռովմայեցւոց կայսերութիւնը Յունաց ձեռքն անցաւ, ու սկսան Հռուճ ըսուիլ: Անկեց եաքը Վենետիկեցւոց ու Օսմանցւոց ձեռքն անցաւ տէրութիւննին. ինչուան որ 1830ին Եւրոպայի թագաւորներուն պաշտպանութեամբը նոր թագաւորութիւն ունեցան միապետական, որ 1842ին սահմանադրական միապետութեան փոխեցին: Հիմակուան թագաւորը Տանիմարդայի տնէն իշխան մըն է:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Յունաստանի սահմանը հիւսիսէն Եւրոպայի Տաճկաստանն է, արևելքէն Արշիպեղագոսը, հա-

բաւէն Միջերկրական ծովը, արևմուտքէն Յոնիական ծովը:

Յունաստանը գլխաւոր չորս մաս կը բաժնուի. Բուն Յունաստան կամ Ելլադա, Մոռէտ կամ Պելոպոննէսոս, Արշիպեղագոսի կղզիներն ու Յոնիական կղզիները:

Տարածութիւնն է 15,160 քառակուսի մղոն:

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է:

Օղը բարեխառն ու առողջ:

Գլխաւոր գետերն ասոնք են.

Օֆիէ կամ Ռուֆիա, որ Արկադիոյ ծոցը կը թափի.

Իրին կամ Եւրոտաս, որ Մանեայի ծոցը կը վաղէ. Պամիսոս, որ Մեթոնի քովը կը թափի:

Հողը բարեբեր է, և ամէն տեսակ հանք ու մետաղ ունի, բայց գրեթէ ինչուան հիմա երեսէ ձգուած են:

Բնակիչն է 1,326,000. լեզունին հոռմերէն, որ հին յունարէնին ռամկականն է:

Քաղաքականութիւնն ու արուեստները առաջ երթալու վրայ են:

Կրօնքը յունագաւան:

Կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն:

Զօրքը 12,000. նաւատորմիզը 32 կտոր նաւ:

ԴՐԱՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԱԽԱՏՈՐ ՔԸՆԱԲՆԵՐԸ

Բ Ա Ի Ն Ց Ա Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Աթենք կամ Աթուս (50,800) Յունաստանի մայրաքաղաքը, հին ատենյ խիստ ծաղկած էր՝ ամէն արուեստից ու գիտութեանց կողմանէ. հիմա ալ սկսած է զարդարուիլ նոր նոր շէնքերով, ուսումնական տեղերով, տպարաններով, և հին շէնքերը նորոգուելով: Աս քաղաքը ծնած էն Առօղջն, Միլուադէս, Թեմիստոկլէս, Արիստիդէս, Պերիկլէս, և ուրիշ շատ երեւելի մարդիկ:

Սակուս. բամբակի ու ծխախոտի գործարան ունի:

Գևսդրս. հին Դեղփիսի տեղն է:

ԴԻԴԻՍ. հին Թերէ քաղաքին տեղը շինուած պղտի քաղաք մըն է:

ԼԵՊԱՆՏՈՍ. համանուն ծոցին վրայ նաւահանգիստ է.

ՄԻՍՍՈՒՐԱԿԻ. անուանի է այս սլղտի քաղաքին պաշարումը որով ընդդիմացաւ Տաճկաց գէմ յամին 1826:

Լիւատիա, Զէյթուն կամ Խստինէ, Աքալա, Վրագորի, Սարասոս, Կալիտոն:

ԿՈՐՆԹՈՍ կամ ԳՈՐՏՈՍ. անուանի քաղաք է Մոռէայի պարանոցին վրայ, զիրքն ալ գեղեցիկ:

ԹԻՐԻՓՈԼԻՑԱ. Տաճկաց ատենը Մոռէային գըլիսաւոր քաղաքն էր:

ՄԵԹՈՆ ԿԱՄ ՄՈՒԹՈՒՆ . ամուր բերդ է . Մին-  
թար աբբան հոս հաստատեր էր իր վահքը՝ Վե-  
նետիկ երթալճն առաջ :

ՎՃՍԻԼԻՔԸ . հին Սիկիոն քաղաքին տեղն է :

ՓԱԴՐԸ (18,300) Յունաստանի ամենէն վա-  
հառաշահ քաղաքն է համանուն ծոցին մօտ :

ՆԵՐԻՆ ԿԱՄ ՆԵՐՊՈՒՍ ՌՈՄԱՆԻՈՑ (10,000)  
ամուր բերդագաղաք է համանուն ծոցին վրայ :

ԱՐԳՈՆ . հին գեղեցիկ աւերակներ ունի :

ՄԵՐՈՒԹՅԸ . ասոր քովերն են Սպարտային ա-  
ւերակները :

ՆԵՐՈՒՍ ՄԵԼՈՒՏԶԻՈՑ ԿԱՄ ՄՈՒՆՄՊԱՀԻՅ .  
գինին անուանի է :

ԿՈՐՈՆ . վաճառաշահ քաղաք ու նաւահան-  
գիստ է :

ՆԵՐՄՐԻՆ . անուանի է ասոր նաւահանգստին  
մէջ եղած նաւական պատերազմը յամին 1827 :

Ուրիշ շատ տեղուանիք ալ կան որ թէպէտ հին  
ատենն անուանի քաղաքներ էին , բայց հիմա որը  
գեղ է՝ որը աւերակ :

### ԱՐՃԻՊԵՂԱԳՈՍԻ ԿԴՋԻՆԵԲԻ.

ՆԵԿՐՈԲՈՆԴԻ ԿԱՄ ԿՅՈՒՊՈՁ . բանուկ նաւա-  
հանգիստ ունի :

ԾԻՐԸ ԿԱՄ ՍԻՐԸ (18,500) Հոռոմներուն ետքի  
ասկստամբութենէն ՚ի վեր խիստ բանուկ ու վա-  
հառաշահ է :

ՆԱՐԵՎԸ ԿԱՄ ԿԱՐՔՈՍ . Կիւկլադայք կամ Բոլոր  
կղզեր ըսուած կղզիներուն մէջ ամենէն մէծն է :

ԻՏՐԸ ԿԱՄ ՉԱՄՐԵՆԸ . ասոր քաղաքը չէն ու  
բանուկ է :

Անուանի Են նաև աս կղզիներս . Ծիա կամ  
Մուրթատ ատասը , Անտրա , Թինէ կամ Իսթին-  
տիլ , Դելս կամ Ստիլ , Մելս կամ Պիցիւք  
Տէյիրմէնլիք , և Պարոս՝ որուն մարմարիոնը խիստ  
անուանի է :

### ՅՈՒՆԻԱԿԱՆ ԿՂՋԻՆԵՐԻ

ԳՐՐՖՈՒ (25,000) Վաճառաշահ նաւահանգիստ  
ունի :

Փաքչւ (5,000) պղտիկ կղզի մըն է :

Սաւդա-Մարտ . ցամաքին մօտ , որուն մասն  
էր երբեմն :

Ժ.Է.Ս.Ք. որ է իթակէ . այս կղզին հայրենիք և  
թագաւորութիւն էր Ադիւսեայ հօր Տէլեմաքայ :

Չէֆաւ. յոնիսական կղզեաց ամենէն մեծը ,  
որ գլխաւոր քաղաք և նաւահանգիստ ունի Ար-  
կոսդոլի :

Չաւթա . բարեբեր կղզի մըն է . գլխաւոր քա-  
ղաքն է Չանթա , որ վաճառաշահ ու բանուկ նա-  
ւահանգիստ ունի :

Չերեկու . քարուա և անբեր կղզի մըն է :


Անգամ պահանջ առանցքներ այսուհետեւ ան-  
ունի անձնութեան պահանջ առանցքներ առանցքներ  
պահանջ առանցքներ առանցքներ առանցքներ :

Համապահանջն է Արխա քառականիք :

Հմանապահանջն առանցքներ առանցքներ առանցքներ  
Համապահանջն առանցքներ առանցքներ առանցքներ  
Հմանապահանջն առանցքներ առանցքներ :



# ԱՍԻԱ



## ԷՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

### ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

ԱՅԻՈՑ ՍԱՀՄԱՆԸ ՀԻւսիսէն Սառուցեալ ծովը  
և արևելքէն Խաղաղական ովկիանոսը. հարաւէն  
հնդկաց ծովը. արևմուտքէն Ուրալ լեռները,  
Կասպից ծովը, Կովկասու լեռները, Միջերկրա-  
կան ծովը, և Կարմիր ծովը:

ՄԵԾՈՒԹԻՒՆՆ Է 12,118,000 քառակուսի մղոն:  
Աշխարհիս մէկալ մասերուն մէջ ամենէն մէծն է,  
ու հին ատենէ 'ի վեր ամենէն ալ անուանի. որով  
հետեւ մարդկային ազգը աս մասին մէջ ստեղծուած  
ու ամէն կողմանէ ծաղկած է, թէպէտ և հիմա առ  
ջ ծաղկածութիւնն ու մեծութիւնը չէ մնացած:

### ԲԱԺԱՆՈՒՄՆ

Ասիան գլխաւոր տասնըմէկ աշխարհք կը բաժ-  
նուի. մէկը հիւսիսային կողմն է, հինգը մէջտեղը,  
հինգն ալ հարաւային կողմը:

Հիւսիսայինն է Ասիոյ Ռուսաստանը:  
Մէջտեղուանքն ասոնք էն. Տաճկաստան Ասիոյ,  
Հայաստան, Թուրքաստան կամ Թաթարստան,  
Չին և Ճապոն:

Հարաւայիններն ասոնք են . Արաբիա , Պարսկաստան , Աֆղանիստան , Պէլուզիստան և Հընդկաստան :

### ԾԱՎ

Ասիոյ ծովերն ասոնք են .

Սառուցեալ ծով , Միջերկրական ծով , Հնդկաց ծով , և Խաղաղական օվկիանոս :

Կասպից ծով , Սև ծով , Մարմարա ծով , Արշեպեղագոս , Չինաց ծով , Դեղին ծով , Շաբոնի ծով , Օխոդսքի ծով , Պէհրինկի ծով :

### ՆԵՂՈՒՑ

Ասիան իննը գլխաւոր նեղուց ունի .  
Չանագ գալէսիի և Ստամբոլի նեղուցը՝ Եւրոպիոյ Տաճկաստանին ու Ասիոյ Տաճկաստանին մէջ տեղը .

Պապիւլմանտէպ՝ Արաբիոյ և Աֆրիկէի մէջտեղը .  
Հիւրմիւզի նեղուցը՝ Արաբիոյ և Պարսկաստանի մէջտեղը .

Մինկաբուրի նեղուցը՝ Հնդկաստանի հարաւային դին .

Գորէայի նեղուցը՝ Չինու և Շաբոնի մէջտեղը .  
Վագք Թաթարաց՝ Չոքա կղզւոյն և Չինու մէջ տեղը .

Պէհրինկայ նեղուցը՝ Ասիոյ և Ամերիկայի մէջտեղը :

Ծ Ա Ց

Տասը մեծամեծ ծոցեր կան Ասիոյ մէջ.

Արաբիոյ ծոցը, որ է Կարմիր ծովը.

Պարսկային ծոցը.

Էօմէնի ու Պէնկալայի ծոցը.

Սիամայ ու Դոնքինի ծոցը.

Բէշի ծոցը՝ Դեղին ծովուն մէջ.

Քամչագքայի ծոցը.

Անատիր՝ Պէհրինկայ ծովուն մէջ.

Օպիի ծոցը՝ Սառուցեալ ովկիանոսին մէջ:

Կ Դ Զ Ի

Ասիոյ գլխաւոր կղզիներն ասոնք են.

Արշիպեղագոսի կղզիները՝ անոնցմէ զատ՝ Հոռոդոս  
և Կիպրոս, Միջերկրական ծովուն մէջ.

Պահրէյն կղզիները՝ Պարսկային ծոցին մէջ.

Մալախվեան կղզիները, Լագետիվեան կղզիները,  
Պոմպէյ, Սէյլան, Սիդոսպար, և Անտաման  
կղզիները՝ Հնդկաց ծովուն մէջ.

Հայնան, Հոնկ-Քոնկ և Մագաոյ՝ Չինաց ծովուն  
մէջ.

Ֆորմոզա կղզին, Լիէուքիէու, Ճալոնի կղզինե-  
րը, Չոքա կամ Դարաքայի կղզին և Քուրի-  
լեանք՝ Խաղաղական ովկիանոսին մէջ.

Նոր Սիպերիա կամ Լիաքով կղզիները՝ հիւսի-  
սային Սառուցեալ ովկիանոսին մէջ:

## ԹԵՐԱԿԴԻ

Ասիոյ մէջ ութը թերակղզի կայ, չորսը մէծ ու  
չորսը պղտիկ.

Անատօլու՝ Տաճկաստանի մէջ, Արաբիա, միջին  
Հնդկաստան, և Գանգեսի անդիի դին.

Կուճրադ՝ Հնդկաստանի արևմտեան կողմը, Մա-  
լագա, դէսլ'ի հարաւ Գանգեսէն անդին, Գո-  
րէա՝ Ջինու արևելեան դին, և Քամչադքա՝  
Սիակերիոյ արևելեան դին:

## ՀՐՈՒԱՆԴԱՆ

Ասիոյ գլխաւոր հրուանդաններն ասոնք են.

Պապա պուռանու՝ Տաճկաստանի արևմտեան կողմը.  
Պապիւլմանտէալ ու Ռասէլկադ՝ Արաբիոյ հարա-  
ւային դին.

Գոմորին՝ Հնդկաստանի հարաւային դին.

Ռոմանիա՝ Մալագայի հարաւային դին.

Գամպոճիա՝ Սիամի հարաւային դին.

Դլուխ Լոփաթքա՝ Քամչադքայի հարաւային  
ծայրը.

Գլուխ արևելեան՝ Սիակերիոյ արևելեան ծայրը.

Գլուխ հիւսիսային՝ կամ Սեվերովադոչնոյ՝ Սիակե-  
րիոյ հիւսիսային ծայրը:

## ԼԵՌ

Ասիոյ գլխաւոր լեռներն ասոնք են.

Կովկաս՝ Սև ծովուն ու Կասպից ծովուն մէջտեղը.

Արարատ ու Կորդուաց լեռները՝ Հայաստանի  
մէջ.

Տորոս և Լիբանան՝ Տաճկաստանի մէջ.

Ուրալ լեռները՝ Եւրոպայի Ռուսաստանի ու Ար-  
ավերիոյ մէջտեղը.

Ալդայի՝ Սիսկերիոյ ու Չինու տէրութեան մէջ-  
տեղը.

Պոլոր լեռները՝ Թուրքաստանի և Չինու տէրու-  
թեան մէջտեղը.

Ցունկլինկ և Կաճար լեռները՝ Չինու տէրու-  
թեան մէջ.

Հիմալայա՝ Չինու տէրութեան և Հնդկաստանի  
մէջտեղը.

Էլլէնտ՝ Ասիոյ Տաճկաստանի ու Պարսկաստանի  
մէջտեղը.

Էլարէտ՝ Արաբիոյ մէջ.

Կադ՝ Հնդկաստանի մէջ:

### ՀՐԱԲՈՒԽ

Ասիոյ հրաբուխներուն շատը հիմա մարած են.  
իսկ բանուկ հրաբուխներուն մեծ մասը Գամչադ-  
քային, Գուրիլեան կղզիներուն ու Ճաբոնի կըդ-  
զիներուն մէջն են:

### ԼԻՇ

Ասիոյ գլխաւոր լճերն ասոնք են.

Վանայ ծովը, Որմեայ լիճը, Աւանայ լիճը՝ Հայաս-  
տանի մէջ.

Չանի և Պայքալ՝ Սիսկերիոյ մէջ.

Մեռեալ ծովը՝ հրեաստանի մէջ.  
Արալ լիճը՝ Թաթարստանի մէջ.  
Պալդաշի, Սայսան, Քուքունուր, Բալդէ, Թուն-  
կըթինկ՝ Զինու մէջ.  
Զեռէ՛ Աֆղանիստանի մէջ:

ԳԵՏ

Ասիոյ գլխաւոր գետերն են.  
Օպի, Ենիսէյ, Լէնա՝ Սառուցեալ ծովը կը թափին.  
Ամուր՝ Օխոդսքի ծովը.  
Վոլգա, Ուրալ Կասպից ծովը.  
Հոանկոյ, Գեանկ կամ Եանչէքեան՝ Դեղին ծովը.  
Մէյքոնկ, Մէյնամ՝ Զինու ծովը.  
Սալուէն, Խուաւատի, Պրահմաբուզրա, Գան-  
գէս, Կոտավէրի, Գիստնա՝ Պէնկալայի ծոցը.  
Ինդոս կամ Սինտ՝ Էօմէնի ծոցը.  
Տեղրիս ու Եփրատ՝ Պարսկային ծոցը.  
Սեհոն ու Գեհոն՝ Արալ լիճը:

ՕԴ, ՀՈՂ, ԲԵՐՔ

Ասիոյ օդն ընդհանրապէս հիւսիսային կողմերը  
խիստ ցուրտ, մէջտեղուանիքը բարեխառն ու ա-  
ռողջ, հարաւային կողմերն ալ տաք է:

Երկրին մեծ մասը լեռնոտ ու բարեբեր է, մա-  
նաւանդ մէջտեղուանիքն ու հարաւային կողմերը.  
Խակ հիւսիսային կողմը անբեր անապատ է:

Գլխաւոր բերքերն են ոսկի, արծաթ, երկաթ,  
բլազին, պղինձ, անագ և հանքային ներկ, մա-  
նաւանդ աղամանդ, և ուրիշ աղնիւ քարեր. բայց  
բոլոր աս հանքերը գրեթէ երեսէ ձգուած են:

Բայսերը խիստ առաստ ու պաղաքեր են . ասոնց  
մէջ երևելիներն են խահուէ , չայ , շաքարի եղէդ ,  
արմաւ , պանան , քոքոյ , լեզակ , կինամոն , պըղ-  
պէղ , զանազան խէժ ու խնկեղեններ , պամպօւ ,  
բամբակ , մետաքս , ցորեն և ամէն տեսակ ազնիւ  
պառւղներ :

Վայրի կենդանիներուն մէջ գլխաւորներն են  
ձերմակ արջ , սև աղուէս , սպիտակ աղուէս , սա-  
մոյր և ուրիշ տեսակ տեսակ ազնիւ մորթ ունեցող  
կենդանիներ . եաք , այծեամն , բէշկ մշկոյ , փիլ ,  
ոնգեղջիւր , առիւծ , վագր , ընձառիւծ , չագալ .  
կապիկ , կոկորդիլոս , ուզտ , և այլն : Արարեոյ ու  
Պարսկաստանի ձիերն անոււանի են իրենց գեղեց-  
կութեամբն ու արագութեամբը : Ասիոյ քանի մը  
ծովափունքը կը գտնուի նաև ընտիր մարգրիտ :

ԲՆԱԿԻՉ, ԿՐՕՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆԱՌԻԹԻՒՆ,  
ԿԱՌԱԼԱՄՈՒԹԻՒՆ

Բնակիչն է գրեթէ 800,000,000 . և գլխաւոր  
ազգերն են տաճիկ , հայ , պարսիկ , հրեայ , արա-  
բացի , հնդիկ , չին , Ճարոն , մողոլ ու թաթար :

Չորս գլխաւոր կրօնք կոյ Ասիոյ մէջ . քրիստո-  
նէութիւն , մահմետականութիւն , հրէութիւն  
և կռապաշտութիւն :

Քաղաքականութիւնը հին ատենը շատ աւելի  
ծաղկած էր քան թէ հիմա . ուսմունքը և գիտու-  
թիւնները թէպէտ Ասիոյ մէջ սկսած են , բայց  
հիմա գրեթէ բոլորովին դադրած են . արուեստնե-  
րուն ալ շատը մոռցուած կամ իրենց անկատա-

բութեան մէջ մնացած . բայց վաճառականութիւնը շատ բանուկ է :

Ասիոյ մէջ եղած տէրութիւններուն գրեթէ ամէնն ալ ազտոտ միապետական կառավարութիւն ունին : Պատմական հայոց ազդական ժամանակաշրջան

---

## ՈՌԻՍՈՍՏԱՆ Ա.ՍԻՈՅ

---

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ա.ՍԻՈՅ ՈՌՈՍԱՍՏԱՆԸ գլխաւոր երկու մաս կը բաժնուի . Սիսկերիս և կովկասու երկիրները : Սիսկերիոյ բնակիչները հին ատեն շատ անգամ Եւրոպան ու Ասիան կոխեր էին . բայց իրենց երկիրը ինչուան 1500 թուականն անծանօթ էր Եւրոպացւոց . ան ատենները ՈՌՈՍԵՐՆ սկսան տիրել աս երկրիս , և իրենց տէրութեան յանցաւորներուն մահապարտները հոն քշելով ան տեղուանքը շեցուցին : Վերջերս տիրեցին նաև Զինու մէկ կտորին՝ Ամուր գետոյն մօտերը , Մանչուրիոյ , Մողոլաց և Թուրքաստանի :

Կովկասու երկիրներուն մէկ մասը ատենով Պարսից ձեռքն էր , մէկալը Օսմանցւոց , մէկքանի տեղուանք ալ ինքնազլուխ էին . մօտ տարիներս ՈՌՈՍԵՐՆ ասոնց ամենուն ալ տիրեցին :

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ասիոյ Ռուսաստանին սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է . արևելքէն Պէհրինկայ նեղուցը . հարաւէն Տաճկաստան , Պարսկաստան , Թուրքաստան և Չինաստան . արևմուտքէն Ուրալ լեռները :

Տարածութիւնն է 4,333,000 քառակուսի մղոն :

Սիսլերիան ամբողջ Եւրոպայէն մեծ է , բայց բնակիչը խիստ քիչ . օդը ցուրտ , երկրին մեծ մասը անապատ ու քիչ մշակուած . բերքը արծաթ , երկաթ , մագնիս , պղինձ և ազնիւ քարեր , և մանաւանդ ազնիւ մորթեր :

Կովկասու Երկիրները լեռնոտ ու խիստ բարեբեր են . օդը առողջ , բերքն ամէն տեսակ պտուղ ու արմաթիք :

Բոլոր Ասիոյ Ռուսաստանին բնակիչն է գրեթէ 9,000,000 . ռուս , հայ , վրացի , մնկուէլ , ասլազա , չէրքէղ , թաթար , և այլն :

Կրօնքը՝ քրիստոնէութիւն , մահմետականութիւն և կուապաշտութիւն :

## ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### Ս Ի Պ Ե Ր Ի Ա

Դրողուսք (25,000) ամուր քաղաք է , վաճառականութիւնն ալ ծաղկած :

Իրքուտսք (25,000) Պայքալ լճին քովն ամուր

ու վաճառաշահ քաղաք է . չուխայի գործարան ունի :

Դուստր (9,000) Օպի գետին վրայ վաճառաշահ քաղաք է :

Ենտսէսք (6,000) անուանի տօնավաճառ ունի :

Եսքուդսք (4,000) սամուրի վաճառք ունի :

Ներշանսք (3,000) արծաթի ու կապարի հանք ունի :

Քենաչտ (2,000) երկու քաղաք է դիմացէ զիմաց . մէկը Ռուսաց ձեռքը , մէկալը Չինաց :

Օսոդսք (2,000) համանուն ծովուն վրայ , փայտի մթերանոցներ ունի նաւակազմութե՛ համար :

Անուանի են նաև Պառնառուլ , Քրամնոյեարսք , և Փեղրոբաւլովսք՝ որ Քամչագքայի գլխաւոր քաղաքն է :

### ԿՈՎԿԱՍՈՒ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Տփուս կամ Թաֆէւջ (50,000) Վրաստանի ետքի մայրաքաղաքն էր . նոր շինուած մասը խիստ գեղեցիկ է . շատ հանքային ջրեր ունի . վաճառականութիւնն ալ խիստ ծաղկած :

Մունտթ (12,000) Վրաստանի հին մայրաքաղաքն է , մէծ մասը աւերակ . ասոր քովերը պաղեղի ու երկաթի հանքեր կան :

Ծամսու (6,300) հին ու անուանի քաղաք է :

Պլքու (9,000) Կասպից ծովուն բանուկ նաւահանգիստն է . ասոր քովերը նաւթի ջրհորներ ու տղմային հրաբուխներ կան . կրակատուն մըն ալ կայ հին ատենէն մնացած , ուր ինչուան հիմա կրակապաշտներ կան :

ԽՈՒԹԱՑԻՍ (3,900) ատենով Խմերէթի թագաւորներուն մայրաքաղաքն էր, հիմա մեծ մասն աւելի է:

ՄԻԿՏՈՒԴԻՑԱԿ. ԱՌԽՈՒՄԳԱԼԻ. ԱՆՏԲԱ. բանուկ նաւահանդիսաներ են Աև ծովուն վրայ:

Աս տեղուանքս և ներսերը Տաղստանին մէջ կը բնակին Ասպաղա, Չերքէզ, Լեզկի, Մնկոէլ և ուրիշ Կովկասային ազգեր:

Տաղստանին ուրիշ երևելի տեղուանքն ասոնք են. Դարբանգ կամ Դուռան Ճորայ, Մողտոք, Դզլար, Դարբու և Ադաւրոբու:

Հայաստանին ալ մէկ մասը Ոռուսաց ձեռքն է:

---

## ՏԱՐԱԾԱՆ Ա.ՍԻԱՅ

---

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Այսօտ Տաճկաստանին մէջ ատենով այլ և այլ մեծ ազգեր կը տիրէին. ինչպէս Բաբելոնցիք, Ասորեստանցիք, Հայերն ու Հոռոմները: Եօթներորդ դարուն մէջ Արաբացիք զօրացան. 1300ին ալ Օսմանցիք սկսան մեծնալ, որ կամաց կամաց Ասիր մեծ մասին տիրեցին:

## ԷՆԴՀԱՍՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ասիոյ Տաճկաստանին սահմանը հիւսիսէն Առ ծովը ու Կովկասու Երկիրներն են, արևելքէն Ասիոյ Ռուսաստանն ու Պարսկաստանը, Հարաւէն Արաբիան, արևմուտքէն Միջերկրական ծովը և Արշեպեղագոսը :

Տարածութիւնն է 506,000 քառակուսի մղոն :

Ասիոյ Տաճկաստանը եօթը գլխաւոր մաս կը բաժնուի. Փոքր Ասիա կամ Անատոլու, Հայաստանին մէկ կտորը \*, Քիւրտիստան, Միջագետք, Ասորիք, Խրագ Արապի և Կղզիները :

Օդը բարեխառն ու շատ առողջ է, անանկ որ ամէն տեսակ արմտիք ու սլտուղ կը հասցընէ. Բայց հողը քիչ մշակած :

Երկրին բերքն է ամէն տեսակ հանք, ազնիւ պտուղներ, մետաքս ու բամբակ :

Բնակիչը 16,050,000. տաճիկ, հոռոմ, հայ, հրեայ, ասորի, քաղդէացի :

## ԳԼԽԱՒՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### ՓՈՔԻ ԱՍԻԱ

ԿՈՒՑԻՆԱ կամ ՔԵՕԹԱՀԵՅ (70,000) գիլքը Խիստ աղուոր է. քովերն ալ հանքային ջրեր ունի :

\* Հայաստանին ան կտորն որ Օսմանցւոց ձեռքն է, տես Երես 146:

ԳՐԱԲԱՀԻՍԱՐ (50,000) ասոր ՔՈՎԵԼԻՆ շատ ա-  
փիոն կ'ելլէ :

ՊՐՈՒՍԻԱ (100,000) ՈՂԻՄԱՊՈՍ ԼԵՐԱՆ ԹՈՒՂԾ, Օ-  
ՄԱՆԴՅԵԼՈ առաջին մայրաքաղաքն էր ինչուան 1360.  
շատ ջերմուկներ ունի, և մէկ քանի մեծագործ  
մզկիթներ . 1855ին սաստիկ երկրաշարժէ մը քա-  
ղաքը մեծապէս վնասուեցաւ և շատ երևելի հին  
շէնքեր հիմնայատակ եղան :

ԿՐԻԿՈՄԻԿԻՏԻԱ կամ ԻԶՄԻՏ ատենով շատ ա-  
ԿՐԻԿԻՏ կամ ԻԶՆԻՔ նուանի քաղաքներ  
էին, հիմա ընկած են :

ԶՄԻԿՈՆԻՏԻԱ կամ ԻԶՄԻՐ (130,000) Տաճկաս-  
տանի ամենէն վաճառաշահ քաղաքն է . Եւրոպա-  
կա հոս շատ ազատութիւններ ունին :

ՄՐԱԽՆԵՍԻՏԱ կամ ՄՐԱՂՆԻՏԻԱ (40,000) ասոր  
քըքումը շատ աղնիւ է :

ԱՅԱՍՈՒԼՈՒԳ . հին ԵՎԻԵՍՈՍԻ աւերակներուն  
քովը պզտի գեղ մըն է :

ԿՐԻԶԵԼ ՀԻՍԱՐ (30,000) բամբակն անուանի է :

ԻԿՈՆԻՌԻ կամ ԳՈՆԵԱ (30,000) ատենով ՍԵԼ-  
ՃՈՒԳԵԱՆԳ մայրաքաղաքն էր . հիմա ալ վաճառա-  
շահ քաղաք է :

ԻԿՈՆԻՌԻ քովելն անուանի են Տարէնտէ, Ագ-  
չէնիր, և Դուզլա՝ որ աղի լիձ է :

ՏՐԵՊԻՉՈՒ (50,000) Սև ծովուն վրայ վաճա-  
ռաշահ ու անուանի քաղաք է . 200 տարիի շափ-  
թունաց կայսերաց մէկ ճիւղը հոս կը թագաւորէր  
ինչուան կոստանդնուպօլիսին Օսմանցւոց ձեռքն  
իյնալը :

ԿՐԻՄԻԿՈՆՍԱՆԻ . կապարի, սղնձի ու արծաթի  
հանք ունի :

ԱՆԿԻՒՐԻՑ կամ ինսիւրից (40,000) անուանի է ասոր շալին ու սովը և այծերուն բուրդը՝ որ երկայն ու մետաքսի պէս բարակ է։ Նոյնպէս երկայն մազերով են աս տեղի կատուներն ու ճագարները։

Փոքր Ասիոյ մէկալ երևելի տեղուանքն են իւս կիւտար, Սինոսլ, Պօլու, Մարսուան, Գասդէմունի, Փունար պաշը՝ որ հին Տրոյիոյ տեղը կը կարծուի, Սադալիա, Սելևկիա կամ Սէլէֆքէ, ‘Սիկտէ, և այլն։

### ՔԻՒՐՏՈՏԱՆ,

Քիւրտիստանն ընդարձակ երկիր մըն է Տաճկաստանի և Պարսկաստանի սահմանին վրայ, շատ լեռնային է ու բնակիչներուն մեծ մասը Քուրդ են, որոնք կրօնքով մահմետական են և մինչեւ 2,000,000 կը համբուին։ շատ ալ քրիստոնեայ կայ, հայ, ասորի և նեստորական։

Քիւրտիստանին գլխաւոր տեղուանքն են Բաղէշ կամ Պիթլիզ, Ճէզիրէ, Ամատիա, Ճուլամէրէ և Գարաճոլան, ասոնց ամենուն մէջ մէյմէկ քուրդ իշխաններ կը տիրեն, որ գրեթէ ինքնագլուխ են։

### ՄԻՋԱԳԵՏՎ կամ ԷԼՃԵԴԻՐԵ

Այս երկիրը Միջագետք կ'ըսուի, վասն զի Եփրատ և Տիգրիս գետերուն մէջտեղն է։

Մուսուլ (60,600) Տիգրիս գետին վրայ վաճառաշահ քաղաք է։ անուանի են ասոր բամբակէ լաթերը։

‘ԵՐԵՎԱՆԻՑ . Հին Կինուէ քաղաքին աեղը գեղ  
մըն է :

ԱԼՔՈԾ . անուանի լեռ մըն է՝ քովերը շատ գեղ  
զերով . մօտերն են Եկղիափ ըսուած բարբարոս ու  
անկրօն մարդիկը :

ՄԱՏԻՆ . Օսմանցւոց տէրութեան ամենէն ա-  
ռատ պղնձի հանքն է :

### ԱՍՈՐԻՔ

ԲԵՐԵՎ կամ ՀԱՅԵՊ (80,000) տէրութեան  
մեծ , բազմամարդ ու հարուստ քաղաքներէն  
մէկն է :

ՀԱՄԱ (30,000) վաճառաշահ ու բարեբեր քա-  
ղաք է :

ԱՆՏԻՈՔ կամ ՍԱԴԱԲԻՑ (10,000) ատենով Ան-  
կախացւոց մայրաքաղաքն էր . հիմա անուանի են  
ջերմուկները :

ՏԵՐՊՈՒՄ կամ ԴԵՐԵԴՐՈՒՄ (16,000) Ասո-  
րոց երկրին մէջ գեղեցիկ ու բանուկ քաղաք է :

ԱՔԵՍ (20,000) վաճառաշահ ու անուանի քա-  
ղաք է . մեծագործ է հասարակաց բաղնիքը : Ասոր  
մօտ է կարմելոս լեռ :

ԴԱՄԱՍԿՈՍ կամ ՇԱՄ (140,000) աշխարհիս  
հին քաղաքներէն մէկն է , շատ բարեբեր , բաւա-  
կան ճարտար ու վաճառաշահ :

ԵՄԵՍՍ կամ ՀԵՄՍ (20,000) ճարտար ու բա-  
րեբեր քաղաք է : Ասոր քովերն են Պալմիրա քա-  
ղաքին աւերակները :

ԵՐԱԵԼԻ են նաև Խաքէնատէրուն , Անթապ , Պաալ-  
պէք՝ որ հին Հելլուապօլիս քաղաքին աեղն է . Պէ-

բութ, Լաւողիկէ կամ Լադաքեա, Սուր ու Սէյտա՝ որ Տիւրոս ու Սիդոն քաղաքներուն տեղը պղախ գեղեր են: — Պէրութին մօտ է Լիբանանու լեռը, ուր է մեր ազգէն Անտոնեան կրօնաւորներուն վանքը՝ զոր հիմնեց Աբրահամ կաթուղիկոսը 1730ին:

Պաղեստինու կամ հին չըհաստանին մէջ ալ գլխաւոր տեղուանքն ասոնք են:

Երուսաւէտ (30,000) աշխարհիս ամենէն հըսակաւոր քաղաքը, և ամենայն քրիստոնէից մէծ ուխտատեղին է. հիմա բոլորովին ընկած է առջի մէծութենէն:

Երուսաղեմի քովերն են բոլոր Քրիստոսի տնօրինական տեղերը, որ հին ատենը մէյմէկ քաղաք կամ գեղ էին, բայց հիմա կամ գեղ դարձեր են, կամ անուննին միայն մնացեր է. ասանկ են բեթղեհէմ, Կապլուսա կամ Սիւքէմ, Երիքով, Յուպէ կամ Եաֆա, Գալիլ, Գաղա, Կեսարիա Պաղեստինոյ, Սեբաստիա՝ հին Սամարիային տեղը, Սաֆէտ, Կաղարէթ, Կանա, Տիբերիա, Կափանասում, Բեթանիա, Թաբոր լեռը, Զիթենեաց լեռը, և այլն:

### ԻՐԱԴ ԱՐԱՊԻ

Պաշտաս (100,000) Տիգրիս գետին վրայ ամուր ու վաճառաշահ քաղաք է: Ասոր քովերն են հին ատենի հռչակաւոր քաղաքներուն աւերակները, ինչպէս Բաբելոն, Սելևկիա, Տիգրոն, և հին Պաղտաս:

Պասրա (60,000) ամուր ու վաճառաշահ քա-

ղաք է : Գովերն անուանի Են նաև Հիլէտ, և Մէշ-  
հէտ Հիւսէյին :

Կ Դ Զ Ի Ն Ե Ր Ը

Կրագը կամ Գլուխը . Միջերկրական ծովին  
մեծ կղզիներէն մէկն է . անուանի է գինին , բայ-  
բակը , և ուրիշ բերքերը : Մէջի գլխաւոր քաղաքն  
է Նիկոսիա կամ Լէֆքոշեա (16,000) :

Հոսդոս կամ Ռոտոս (25,000) հին առենց շատ  
անուանի էր :

Մարտարք . ասոր մարմարիոնց առատ է :

Լեսբոս կամ Մրտւււ (50,000) գլխաւոր քա-  
ղաքն է Գասպրոյ (8,000) :

Քրոս կամ Սաֆլօ (15,000) ինչուան 1822 ա-  
ղէկ ծաղկած , բազմամարդ ու բարեբեր էր , ան-  
կէց ետքը շատ ինկած է :

Սպոս կամ Սուսան Ատանա . շատ բարեբեր է :

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ազգը ծագած է 'ի Հայկայ՝ որդւոյ թորդոմայ, Յաբեթայ թոռնեն, և անոր հնազանդած ցեղերեն, Բաբելոնի մէջ աղքաց բաժանմանեն էտե. Հայկայ և իր ցեղին տէրութիւնը որ Հայկազունք ըստեցան, տեղեց գրեթէ 2,000 տարիէն աւելի, և Քրիստոսէ 328 տարի առաջ վերջացաւ, և Հայաստան կէս մը ինքնիշխան կէս մը Սելլկացւոց ձեռքը անցաւ, ինչուան որ Քրիստոսէ 149 տարի առաջ Արշակ Պարթև իր Վաղարշակ եղբայրը Հայոց վրայ թագաւոր գրաւ, և սկսաւ Արշակունեաց թագաւորութիւնը, որ տեղեց ինչուան Քրիստոսի 428 տարին : Ետքը սկսաւ մարզպանաց և ոստիկանաց իշխանութիւնը, որ էին Պարսից և Հագարացւոց կողմակալները 'ի Հայաստան, որուն մէկ մասն ալ Յունաց իշխանութեան տակ ընկած էր. ինչուան որ երրորդ անգամ նորէն Հաստատեցաւ Հայոց թագաւորութիւնը Բագրատունեաց ձեռքովը 885ին և տեղեց ինչուան 1045 : Խակ Հայոց չորրորդ թագաւորութիւնը, որ կ'ըսուի Ռուբինեանց տէրութիւն, և սկսաւ 1080ին և տեղեց ինչուան 1375, Հայաստանի սահմանէն դուրս կիլիկիոյ մէջ, երբ բուն Հայաստանի կը

տիրեին մասամբ Յոյնք, Թուրքք, Վերք, Հագարացիք և քանի մը ազատ Հայ իշխանք և թագաւորք ինչուան որ նորէն թաթարք, Պարսք և Օսմանեան թուրքք բոլոր Հայաստանին ալ տիրեցին. որոնցմէ մեծ մաս մը առին Ռուսք այս դարուս մէջ : Հիմա այս երեք ազգաց իշխանութեան տակն է Հայաստան, տեղ տեղ ալ ինքնիշխան Քրդաց բոնութեան տակ : որով շատ աւրուած և անշնէն եղած է : Բայց տէրութեանց հիմակուան ջանքովը և Հայոց ազգին անխօննջ համբերութեամբը և ճարտարութեամբն շնորհալու վրայ է :

Թէպէտ և բուն մեր Հայրենական երկրին մէջ որ է Հայաստան, շատ տեղ դեռ ագիտութիւն պատած է, բայց այլ և այլ քաղաքներու մէջ ինչպէս են կոստանդնուպոլիս, Զմիւանիա, Մոսքուա, Թիֆլիս, Էջմիածին, Կալկադա, և այլն, ըստ բաւականին ծաղկած են գիտութիւնք, և բուն Հայաստանի մէջ ալ գլխաւոր քաղաքներու և վանքերու մէջ գալրոցներ և ուսումնական ընկերութիւններ կը շատանան : այսպէս ալ գրոց տըպարանք և օրագիրք : — Իսկ վաճառականութեան կողմանէ՝ Հայոց ազգը միշտ ճարպիկ և յաջող եղած է, և հիմա ալ ուր որ բազմաթիւ են՝ մէջերնին մեծ վաճառականներ ալ կան, այսպէս օտար երկիրներու մէջ ալ կը գտնուին :

Հայերը հին ատեն հեթանոսութեան ժամանակ, արեւ, լուսին, կրակ ու զանազան կուռքեր կը պաշտէին . բայց քրիստոնէութիւնը մտնելն ետեւ, միշտ քրիստոնէութեան մէջ հաստատուն կեցած, ու իրենց ազգային արարողութիւններն ու ծէսերը պաշտպանած ու պահած են : Եւ դըւ-

Խաւորապէս Երկու կը բաժնուին . մէկ մասը կա-  
թողիկէ միութէնէն զատուած առանձին Եկեղեցի  
կը կազմեն , որուն գլուխն է կաթողիկոսը , որով  
կ'ըսուին կաթողիկոսական Հայք . իսկ մէկալ մա-  
սը կաթողիկէ միութիւնը պահած է , անոր հա-  
մար կ'ըսուին կաթողիկէ Հայք :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հայաստանի սահմանն է արևելքէն Ատրպա-  
տականը կամ Ատրպէճանը , Կասպից ծովը և Ա-  
ղուանից Երկիրը կամ Շիրուանը . հիւսիսէն Վրաս-  
տանն ու Կուր գետը և Ճանիկը՝ որ հին Խաղաթիքն  
է . արևմուտքէն Փոքր Ասիան . հարաւէն Միջա-  
դեսքն ու Ասորեստանը :

Հայոց Երկիրը Փոքր Հայքն ալ մէկտեղ առնլով  
արևելքէն դէալ 'ի արևմուտք կը ձգուի , և տարա-  
ծութիւնն է իբր 140,000 քառակուսի աշխար-  
հագրական մղոն :

Հայոց ազգը աշխարհիս չորս կողմը ցրուած ըլ-  
լալուն՝ որոշ չփիտցուիր ժողովրդեան թիւը . բայց  
սովորաբար չորս միլիոն կը սեպուի , որոնցմէ կան  
500,000 'ի Ռուսաստան ,

20,000 Պարսկաստանի մէջ ,

18,000 յԱւստրիա ,

10,000 յԱֆրիկէ և 'ի Հնդիկս ,

1,000 Եւրոպայի այլ և այլ կողմերը ,

400,000 Եւրոպայի Տաճկաստան .

Իսկ մնացածները Օսմանեան տէրութե՛ մէջ : Սա-  
կայն Հայաստանի մէջ առկէց աւելի բնակիչ կայ ,  
այլ և այլ ազգերէ . ինչպէս են քիւրտ որ ամենէն

աւելի բազմաթիւ կը սեպուին, տաճիկ, թիւրք-  
մէն, վրացի, սլավոնիկ և այլն :

Հայք կամ Հայաստան անունը, որ ելած է մեր  
հայկ նահապետին անունէն, հիմա քիչ տեղ կը  
բովանդակէ : Այս անունը օտար ազգերուն մէջ  
անծանօթ ըլլալուն, մեր երկիրը Արամ նահապե-  
տին անունովը Եւրոպացիք Արմէնիա կը կոչեն,  
տաճիները Երմէնիստան : Եւրոպացւոց աշխար-  
հագիրները բաց 'ի այս անունէն երբեմն թուրքօ-  
մանիա կամ Թիւրքմէնիստան ալ կ'ըսեն մեր երկ-  
րին, մէջի Թիւրքմէն բնակիչներուն համար, որ մե-  
տասաներորդ դարուն թուրքաստանէն հատուած  
դալով Հայաստանի մէջ բնակեցան : Հայաստանի  
մեծ մասը մանաւանդ հարաւային կողմերը կ'ը-  
սուի Քիւրդիստան, Պարսից մասը Ասրդէնան, Հայ-  
աստանի հիւսիսային կողմը Կիւրճիստան, Փոքր  
Հայքը Անապօլս : Ուստի հիմա Երմէնիստան անունը  
բուն կրզիւռումի կողմերուն ու անոր շրջակայ սահ-  
մաններուն կը տրուի հասարակ գործածութեան  
մէջ :

Գլխաւոր լեռներն են Արարագեան լեռները, ո-  
րոնց ամենէն բարձրն է Մասիս որ մեր Ամասիա  
նահապետին անունովը կոչուած է . տաճիկները  
կ'ըսեն Աղըր պաղ կամ Աղըր պաղ՝ թերեւ Ակուի  
գեղին անունէն առնլով : Արան մեծ հրաթուիս  
կայ, որ 1840ին նորէն բուընկեցաւ և ծածկեց Ա  
կոսի գեղը, որ լեռան ոտքը շինած էր : Մասեաց  
վրայ իջաւ Նոյի տապանը :

Տաւրոս կամ Տօրոս լեռներ, որ ըսել է Յուլ,  
Հայաստանի արևմտեան հարաւային կողմը :

Կորդոսաց լեռներ, որ Կորդոսք գաւառին անու-

նովը կոչուած են, արևելեան հարաւային կողմը:

Մոստինեան, Պարխար և Կռաջ+ լեռներ, և այլն, արևմտեան հիւսիսային կողմերը:

Գլխաւոր գետերն են Եփրադ, տաճկերէն Մոստին կամ Միուրադ լայ, որ երկու գլխաւոր ճիւղ բաժնուած է: Մէկէ կը բխի Կարնոյ լեռներէն, և տաճկերէն կ'ըսուի Գարա սոս, մէկալը Ծաղկաց լեռներէն, որ կ'ըսուի Արածանի գետ, և այս է բուն Մոստին սոսյա: Այս երկու ճիւղերը իրարու հետ միանալին ետեւ, կ'անցնի Եփրատացիք և Միջազգետք աշխարհքներէն յԱսորեստան, և Պալտատէն վար խուռնա քաղքին քով Շադ կամ Տիգրիս գետոյն հետ միանալով կ'ըսուի Շադ-Իւլարադ, և անոր հետ մէկտեղ Պասրա քաղքին քով այլ և այլ բերնով Պարսից ծոցը կը թափի:

Տիգրէս կամ Դիլան, տաճկերէն Շան, որ նոյն ալէս երկու մեծամեծ ճիւղերէ կը բաղկանայ. և Եփրատայ հետ միանալով կը թափի Պարսից ծոցը: Այս երկու գետերուն մէջ ալ շատ ձկներ կան, և մէջը նաւարկութիւն ալ կ'ըլլայ:

Երասիս կամ Արաս որ կը բխի Կարնոյ լեռներէն, և մէջը շատ վտակներ առնլով ու միանալով կուր գետոյն հետ Կասպից ծովը կը թափի: Խիստ սաստիկ և արագ է Երասիսայ վազուածքը, ջուրը ազնիւ և առողջարար, մէջը մեծ ձկներ կան, ու վրան մեծամեծ կամուրջներ շինուած են, որոց մէկն է Զօպան գէօդրէսիս:

Ծորոխ կամ Շորոխ գետ, տճկ. Զօրուադ սոսյա, Բաբերդի մօտ Սպերու լեռներէն կը բխի, և կը թափի Աև ծովը:

Կոսր գետ, տճկ. Վիւր, որոյ մէկ ճիւղը կը բխի

Կարնոյ և Տայոց միջի լեռներէն, մէկտլը Փառաւանն լքէն Ախալքէլէքին մօտ և միանալով Երասխայ հետ կասպից ծովը կը թափի :

Գլխաւոր լքէրն են Վանայ ծռչ, որոյ մէջէն շատ տառեխ ձուկ կ'ելլէ : — Սևանայ ծռչ, որոյ մէջն է Սևան կղզին : — Որմեայ ծռչակ, որ հին ատեն կ'ըսուէր Կապուտան ծռչ : — Փառաւան ծռչակ՝ Չըշըր, որուն հին ատեն Հիւսիսային ծռչ կ'ըսէին, Կէօքի-է որ է Ծռչ լիճը կամ Խարբէրդու ծովը :

Հայաստանի օդը շատ առողջարար է, ու բարեխառն գոտւոյն տակ իյնալուն համար ամառը զուարժալի : Բայց Երկիրը ծովուն երեսէն բարձր և լեռնոտ ըլլալուն՝ ձմեռը սաստիկ ցուրտ կ'ընէ, և շատ ձիւն կուգայ : Հայաստանի օդոյն պատճառաւ է որ մէջի բնակիչները զօրաւոր կազմուած կ'ունենան և ուժով կ'ըլլան, վասն զի ծովէն հեռու ըլլալուն համար օդոյ շատ փոփոխութիւններ ըըլլար, և տաքութիւնը ու ցրտութիւնը միակերպ է, որով շատ տեսակ հիւանդութիւններէ ալ ազատ է :

Հայաստանի Երկրին ցրտութեանը ու չորութեանը և շատ տեղ լեռնոտ ըլլալուն պատճառաւ ամէն կողմ պտղաբերութիւնը հաւասար չէ • բայց բարեբեր դաշտեր ու հովիաններ շատ ունի, և երկրին մեծ մասը կրնանք ըսել թէ բարեբեր և պարարատ է : Գլխաւոր բերքն է արմակիք, որոց մէջ ցորենը առատ է • ունի նաև հաճար, դարի, սիսկոն, ոլոռն, բակլայ, բըինձ, և այլն : Պտուղներուն մէջ խաղողը աղնիւ է, և շատ տեսակներ ունի : Անուանի է նաև ծիրանը, որոյ նման ուրիշ տեղ չդաշտնուիր • ունի նաև դեղձ, սալըր, տանձ,

խնձոր, սերկելիլ, թութ, ընկոյզ, շագանակ, կազին, նուռ, թուղ, ձմերուկ, սեխ, վարունդ, և այլն։ Անուանի է Հայաստանի մեղմն ալ, ունի նաև գաղպէ, խաշնդեղ (սահման) որոյ բոյսը կ'ըսուի խաւճիւ, վուշ, կանեփ, բամբակ, բուրդ, աղնիւ բանջարեղիններ, ու տեսակ տեսակ աղնիւ և գոյնղգոյն ծաղիկներ։ Կը բուսնի Հայաստանի մէջ լուսակ ըսուած բոյս մը, որոյ արմատը մարդոյ կը նմանի, և գեղերու մէջ կը գործածուի։

Ընտանի կենդանիներուն մէջ անուանի է արջառ, այծ, ոչխար՝ որոյ դմակը երբեմն ինչուան 12 կամ 15 օքքա կը կշռէ։ այս կենդանիներուն պարարտութեանը պատճառաւ կաթնեղիններն ալ աղնիւ են։ Անուանի է Հայաստանի ձին, որոյ մէկ տեսակն է նժոյգը որ շատ վազուկ ու գեղեցիկ է։ ունի նաև ջորի, էշ, գայլ, աղուէս, ճագար, կուղ (սամսար), մազոտ կատու Վանայ, և այլն։ ունի տեսակ տեսակ թռչուններ, հաւ, սագ, բադ, կոռունին, արագիլ և այլն։ Անուանի է Հայաստանի որդան կարմիր ըսուած որդը, ուսկից աղնիւ ծիրանի գոյն կ'ելլէ։

Հանքերէն Եփրատ գետոյն քով կապան մատէնի մէջ կայ ոսկիի և արծաթի հանք, Արղնայ մէջ պղնձի հանք Տիգրիս գետոյն քով, երկաթի հանք Պարիսար լեռներուն վրայ, պղնձի հանք Գուգարաց մէջ, և տեսակ տեսակ հանքեր Գանձակայ կողմերը, աղի հանք զանազան տեղեր, նաւթ, ծըծումբ, պաղլեղ, և այլն։ Ասոնցմէ զատ կան Հայաստանի մէջ շատ անգործ մնացած հանքեր ալ։ Հայաստանի վաճառքն իրեն երկրին մէջ բուսած բերքերն են, զորոնք կ'առնու Պարսկաստան,

Տաճկաստան և Ռուսաստան, և են ցորեն, գարի, սիսեռն, ըրցած ծիրան, գինի, մեղք, պանիր, ալիստած ձուկ, գղթոր, արջաս, ոչխար, ձի, և այլն։ Ասկէ զատ մեծ վաճառականութեան ճամբայ ալ է արևելեան և արևմտեան վաճառուց։ և գլխաւոր շահաստաններն են իրզիում և Դավթէ։

Հայաստան հին ատենը 15 նահանդ կը բաժնուէր, իսկ հիմա երեք տէրութեանց ձեռքն ըլլալով, ամէն աշխարհագիրները երեք գլխաւոր մաս կը բաժնեն։ այս ինքն, Տաճկի, Ռուսաց և Պարսկից Հայաստան։ Տաճկին մասը շատ մեծ է, որոյ մէջ կը բովանդակուի փոքր Հայք ու մեծ Հայոց արևմտեան և հարաւային մասը։ արևելեան կողմը Պարսկից ձեռքն է, իսկ հիւսիսայինը Ռուսաց ձեռքը։

մրցոր, մեզոր մէ ձ, մասաւառաք և մասաւառակն է ողիմար, որոն, մընք, մարդի նույսոց, մունիս ձ, ձի, որուեց, ունիքա, որոնքը, վուն նուսակիս նուն մասեւ ՏԱԶԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ ժիշտ : մըս ձ, բառապահուի մասաւառաք և մասաւառաք է յա շատ համարակ և նուռակը մէ մըսաւառաք այս որուամբը

Տաճկի Հայտասահնը՝ որոյ մէջ կ'լիյնան հին Հայոց Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Կորդուք, Մոկք, Տուրուբերան նահանգները, և Վաստուրականի ու Այրարատայ արևմտեան կողմը, Գուգարք և Տայք նահանգներուն մէկ մասը, հիմա զեց նահանգ կամ փաշայութիւն կը բաժնուի. որ են Երւիւսամ, Չըսը, Կարս, Պայէնիպ, Վան, Տէպրակէիր :

### ԵՐՋԻԾՈՒՄ

Երզիուումի նահանգին զիրքը խիստ բարձր և լեռնոտ է. ցուրտը սաստիկ, բայց օդը առողջարար: Գլխաւոր լեռներն են Պինիկու լեռները որ ջուրերուն առատութենին ու աղբիւրներուն շատութենին՝ այսպէս ըսուեցան, որ խիստ զուարձալի են, ու ամառ ատեն տեսակ տեսակ գեղեցիկ ծաղիկներով կը զարդարուին և կ'արդարացընեն երկրաւոր գրախտը այս կողմերս կարծելը: Այս լեռներէն կը բխին Երասխ և ուրիշ գետեր: Երզիուումայ մօս է Տառմըս լեռն, ուսկից կը բղխէ Եկրագ. ուրիշ լեռներէն ալ կը բղխէն Ճորտիս, Թառմայ գետը, և այլն: Գլխաւոր բերքն է ցորեն, գարի, ծիրան, աղ, շովզամ, վայրի այծ, ջրային բաղ ու սագ, ջրշուն, կուղ, և այլն: Երկրին սաս-

տիկ ցրտութեանը պատճառաւ շատ տեղ այդի չըլար, և պտղատու ծառեր ալ ինչպէս են խնձոր, տանձ, և այլն քիչ են:

Գլսաւոր քաղաքն է Երշտուուս որ կը նշանակէ հոռոմու կամ Յունաց երկիր, և հին ատենը կ'ըսուեր կարնոյ քաղաք և Թէոդոսուածիս՝ փոքր Թէոդոս կայսեր անունովը, որ այս քաղաքը շինել տուաւ: Դիբքը բըրոյ մը վրայ է ընդարձակ դաշտի մը մէջ, ու երկու ամուր պարիսապներով պատած, որոց վրայ 72 աշտարակ շինուած են, ունի նաև ամուր միջնաբերդ 12 աշտարակով: Ընքերուն մէջ անուանի են բաղնիքները, վաճառանոցները, մզկիթները, որոց շատը հին ատեն եկեղեցի էին: Անուանի է Ուլու Ճամփին կամ մզկիթին քով շինուած Զիֆտէ մինարէն, որ կարմիր և կապոյտ աղիւսներով շինած է, անուանի է նաև սուրբ Աստուածածնի Հայոց եկեղեցին: Էրզիւում քաղաքը հիմա Ասիոյ Տաճկաստանին վաճառաշահ քաղաքներէն մէկն է, անուանի է մետաքսը, պղնձեղնիները, և այլն: Բնակիչները 80,000 կը համրուին, մէծ մասը տաճիկ, ետքը հայ:

Էրզիւումի մօտ է Մուգուրիու կամ Լուսաւորչաց վանքը, Խաչկայ վանքը, Հնիտաց վանքը հինձք գեղին մէջ որ կ'ըսուի նաև Կարմիր վանք, իր գմբեթաւոր սուրբ Աստուածածնի եկեղեցին կարմիր քարէ շինած ըլլալուն համար, որ կը կարծուի թէ մէծն Ներսէս շինած ըլլայ, որոյ մօտ կայ Հոկիսիմեանց աղքիւր մը ուխտատեղի:

Էրզիւումի մօտերը կ'իյնան նաև այս գեղերը, Արծաթի գեղ, որոյ բնակիչներուն մէծ մասը հայ են, և մէջը տաք ջրոյ ջերմուկ կայ, նոյնողէս նաև իրեն մօտ Աղբարչ գետին մէջ:

կան գեղ, որոյ բնակիչները Անի քաղքին գաղթական եկած կը կարծուին:

Իւհմա կամ Շահմա գեղ, ուր տաք ջրոյ ջերմուկներ կան:

Տօղս+ գեղ, ուր պաղ ջրոյ առողջարար այլ բիւր կայ:

Քարուսոր գեղ, ուր քարի մէջ փորուած այրեր, խուցեր կան:

Երզիւումի նահանգին ուրիշ գլխաւոր քաղաքներն են, խնոս կամ Խնոս բերդաքաղաք, ձորի մէջ շինուած լեռնակի մը ոտքը, որ պարսպի տեղ քաղքին գրեթէ չորս կողմը կը պատէ. ունի ամուր բերդ մը: Խիստ անուանի են խնուսի ձիերը:

Թարթում գիւղաքաղաք, ձորի մէջ շինուած, ունի պղտի բերդ մը. և իր վիճակին մէջ գրեթէ 70ի շափ գեղեր կան, որոց բնակիչները տաճիկ և հայ են: Երկիրը զուարճալի և բարեբեր է, և բաց ՚ի ձիթենիէն, ամէն տեսակ պտուղ կը բուսցընէ. ունի նաև աղահանք Ռատան գեղին մէջ: Անուանի են թորթումի մօտ Խօշ+ և խախու գեղերը, իրենց մէջի վանքին և փառաւոր եկեղեցւոյն համար, որ հիմա մղկիթ եղած են:

Սուր կամ Խոժիր բերդաքաղաք, ձորոխ գետոյն վրայ, բնակիչներուն մէծ մասը տաճիկ են: Այս քաղքին չորս դին այգեստաններ ու պարտէզներ կան, և իր վիճակին մէջ ունի շատ գեղեր, երկիրը բարեբեր է և շատ մեղսամում ունի, նաև հանքեր ալ:

Բաբեր կամ Պայտուր, գաշտի մէջ շինուած բերդաքաղաք է ու երկու կողմէն լեռներով պատած է, և դիմացը քարաժայոի վրայ ունի ամուր բերդ կէս մը փլփլած: Քաղքին մէջէն կ'անցնի

Ճորոխ գեաը, որոյ վրայ չորս կամուրջ շինուածէ : Բնակիչներուն մեծ մասը տաճիկ են : — Բաբերդայ սահմանին մէջ է Վարդսահան, որ առաջընդարձակ գիւղաքաղաք էր . բայց Լազերուն յարձակմունիքէն հիմա աւերակ և մեծ մասը գետինը թաղուած է . սակայն դեռ մէկ քանի քարաշէն եկեղեցիներ կեցած են, կէս մը քայքայած : Բաբերդի վեճակին մէջ կան շատ աւաններ ու գեղեր, ինչպէս Բալախոս, Օչտեղ, Վահանաւէն՝ որ հին ատեն կ'ըսուեր Վահանաւէն, և այլն : Բաբերդի վեճակին օդը ցուրտ է ու երկիրը լեռնոտ, բայց բարեբեր . բնակիչները հայ, տաճիկ և հոռոմ:

Ենէտ կամ Երկնիա և տաճկերէն Երկնաճէան քաղաք, Գայլ գետոյն քով շինած ու պարսպով պատած : Թէպէտ և քաղաքը շատ ընդարձակ է, բայց բնակիչները համեմատութեամբ քիչ են, վասն զիստէպ երկրաշարժ կ'ըլլայ Երզնկային կողմերը : Քաղքին մօտ է Սէպուհ կամ Գոհանամ լեռը, որոյ վրայ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մանեայ այրին մէջ երկայն ատեն ճգնեցաւ : Քաղքին չորս կողմը շատ վանկեր կան, որոցմէ ոմանք Գրիգոր Լուսաւորիչը շինած է, և ոմանք ալ հին մէհեաններէ յարմարցուցած : Ասոնց մէջ անուանի է ‘Նէրսէն հայրապէտ ըսուած վանքը, զոր մեր Տիրան Արշակունի թագաւորը շինած է կ'ըսեն, անոր համար Տիրանաւէն կ'ըսուի եղեր առաջուց . բայց երբոր մէծին Նէրսէսի մարմինը Թիլ աւանէն հոս փոխադրեր են, անոր անունովը ‘Նէրսէն հայրապէտ կոչուեր է : — Երզնկա քաղքին սահմանները շատ գեղեր կան . երկիրը բարեբեր է և ամէն տեսակ պատուղ կը բուսցընէ . ջուրը առատ է, օդը առող-

ջարար, ու հողն ալ սաստիկ բորակային, անոր համար երկրաշարժ ալ շատ կ'ըլլայ: — Երզնկաքաղքին ու Երզիուումի մէջ կայ քարաշէն մեծ իջևան մը կարաւաններուն համար որ կ'ըսուի Մամախալուն, զոր փաշայի մը խաթունը շինած է, ու անոր համար իր անունովը կոչուած:

Կամախ կամ Քէմահ, անուանի բերդաքաղաք է, որ հին ատեն կ'ըսուէր նաև Աֆի: Իրեն մօտերն է Թարդան գեղը, Աւագ վանքը Թադէոս առաքելցն անունովը շինուած: — Բագամիճ կամ Բէգէոիճ, որ երկու գեղեր են իրարու մօտ, ու կուապաշտութեան ատեն շատ անուանի էին մեհեաններով: — Կամախին շրջակայ սահմանները ազնիւ աղի հանք կայ, անոր համար հին ատեն այս կողմերս Դարանաղի գաւառ կ'ըսուէր:

Կէռի գիւղաքաղաք, բնակիչներուն շատը հայ են, և մօտ է իրեն Սուրբ Կարապէտ վանքը, որոյ քովէն կ'անցնի Օրոր գետակը, վրան քարաշէն կամուրջ շինած, որոյ վրայ նահատակուած է կ'ըսեն Խագ եպիսկոպոսը, անոր համար ալ կ'ըսուի Քէշիւ Քէօֆրիւիւ:

Բասեն գաւառը Երասխ գետոյն երկու կողմն ալ կը ձգուի, ու երկու մաս կը բաժնուի, որ կ'ըսուին Վէրին Բասեն և Վարի Բասեն, երկրորդը առջինին արևելեան կողմը կ'իյնայ և աւելի ընդարձակ է: Երկիրը բարեբեր է արմտեաց կողմանէ, բայց պտղատու ծառեր չբուսցներ: Հիմա Բասեն գաւառը աւելի ընդարձակ կը ձգուի քան թէ հին ատեն, և Երզիուումի փաշային իշխանութեան տակն է:

Վէրին Բասենոյ գլխաւոր տեղուանքն են Հա-

անդալս կամ Հասանգուշէ քաղաքաւան, 5000 բնակչոք վերին Բասենոյ մէջ խոտաւէտ Երին մը ուսքը շինած՝ որ հին ատեն Ծիրանի լեռ կ'ըսուէլու : Այս Երին մէկ կողմը շինուած է ամուր բերդ մը, որ շինողին անունովը Հասանդալս ըսուեցաւ, ուսկից զիւղաքաղաքն ալ նոյն անունը առաւ որ հին ատեն Յուսպինիանուպօլիս կ'ըսուէլու : Բերդն ու քաղաքը կրկին պարսպով պատած է, և պարսպին չորս կողմն ալ Խրամ բացած, ուր պատերազմի ատեն քովի Հասանդալսյու ջուր ըսուած գետէն՝ որ հին ատեն Մուրջ կ'ըսուէլու, մէջը ջուր կ'արձըկեն : Դիւղաքաղաքին մօտերը երկու տաք ջրոյ ջերմուկներ կան, որոց վրայ քարաշէն բաղնիք շինուած էն, փոքր թէսոգոս կայսեր Անատոլիս զօրավարին ատենէն : — Հասանդալսյու քովին է Բասենոյ կամ Հասանդալսյու կամ Աստուածածնի ըսուած վանքը, զոր Գրիգոր Մագիստրոս շինած է, և անոր եկեղեցւոյն մէջ թաղուած իր մարմինը : — Հասանդալսյու մօտ է Զօտպն Քեօփենիւ ըսուած մեծ ու քարաշէն կամուրջը եօթը կամարով Երամիս գետոյն վրայ, հովուի մը ձեռքով շինուած :

Հասանդալս զիւղաքաղաքին մօտերը կ'իյնան Ավա, Ուռուի, Գոյնոյու, Պատիճնու գեղերը, որոց բընակիները գրեթէ բոլոր հայ են :

Աշընիա բերդ, որուն տաճկըները կ'ըսեն Ճեշտի գումարի, հին ամուր և անառիկ բերդ և քարաժայուի մը վրայ շինած, ուր պատերազմի ատեն կ'ապաւինին մօտիկ գեղերուն բնակիչները : — Աւնիկ բերդին մօտ է Խոսրովը գեղը, որ գեղեցիկ ու ծաղկով զարդարուն հովտի մը մէջ շինուած է : Այս գեղին մօտ է Բայդի ըսուած բարձր Լեռը, բոլոր ու ապառաժ քար :

Փոքր Տռու և Մէծ Տռու որ իրարու մօտիկ երկու գեղեր են, և հին ատեն կ'ըսուէին Ուդուրու և Դռու:

Վէստրիւ ու հայի որ Զօսլան քէօփրիւսիւյին քով շխնուած է, և կ'երևի թէ հին Աշուարաւան քաղքին տեղն է:

Խւլու գեղ, որ առաջուց Խւլան կը կոչուէր, ձորի մէջ շխնուած է, և քովերը շատ աւերակներ կան:

Ստորին կամ Աշօրի Բասենոյ գլխաւոր տեղուանիքն են Խորասան գիւղաքաղաք, որոյ բնակիչները կէս մը հայ կէս մը թուրք են:

Մժնիւրա գիւղաքաղաք, որ բերդ ունի և քովերը տաք ջրոյ ջերմուկ: Մժնիւրա մօտ է սուրբ Խաչ լեռը, որոյ վրայ սուրբ Խաչ անունով փառաւոր Եկեղեցի մը կայ. բաց ասկէ վեց եօթը հատ ուրիշ քարաշէն եկեղեցիներ, և գմբէթաւոր կլոր մատուռ մը միակտուր քարէ փորուած:

Բաց ասոնցմէ կան Ստորին Բասենոյ մէջ ուրիշ շատ գեղեր ալ մէծ ու պղտիկ, ինչպէս Զիւտակներ, Պաշգել, Արմուտս, Չիւրիկ, և այլն:

Տուժիկ գաւառը Վիւրատերուն ձեռքն է, և կրպիումի փաշայէն կախմունք չունի: Երկիրը ընդարձակ, ամուր և շատ բարեբեր է, որ գրեթէ ամէն տեսակ պտուղ կը բուսցընէ: Բնակիչները բուլը քիւրտ են և աւազակութեան հետ կ'ըլլան, և շատ անգամ կարաւանները կը թալլեն, զորոնք անկարելի եղած է նուաճելը իրենց երկրին ամբութեանը համար:

Այս գաւառին մօտ է Տէրովյ լեռը, որոյ ծայրը մէծ եկեղեցի մը կայ 40 խորանով, զոր սուրբն Արիստակէս շխնած է կ'ըսեն, բայց հիմա պանրի

ամբարանոց եղած է, և թող չեն տար Գիւլտերը  
որ քրիստոնեայք ներս մտնեն :

## ՉԸՆՏԸՆ

Այս նահանգը որ առաջ Ախլցիսա ալ կ'ըսուեր,  
կրզիւումայ և Կարսայ հիւսիսային կողմը կ'իյ-  
նայ. 1828էն վերջը մեծ մասը Ռուսի ձեռքն ան-  
ցաւ Ախլցիսա քաղքով մէկտեղ: Երկիրը ընդհան-  
րապէս բարեբեր է. մէջէն կ'անցնի Ճորոխ գետը,  
և անոր Աճարա վտակը:

Գլխաւոր քաղաքներն են Արտանուշ պարսպա-  
պատ քաղաք որ ամուր բերդ ունի: — Արտանուշն  
քաղաք, որոյ շրջակայ սահմանը շատ բարեբեր է,  
և իրեն հարաւային կողմը՝ Խվան գիւղաքաղաքը,  
որոյ մէջ փառաւոր եկեղեցի մը կայ հնուց մնա-  
ցած: — Արտահան բերդաքաղաք, Սանլեւ աւան,  
Օլմի պարսպապատ քաղաք որ հին ատեն կ'ըսուեր  
Ռուխտին, Նառինան որ հին ատեն կ'ըսուեր Մամ-  
րտան, Բերտագրան գիւղաքաղաք, որոյ սահմանա-  
կից գեղերուն բնակիչները բոլոր հայ էին, բայց  
ետքէն շատը տաճկացան: Բերդագրակին մօտ է  
Խոպըջութ ըսոււած երկիրը, որոյ հարաւային կող-  
մէն Ճորոխ գետը կ'անցնի. Երկիրը լեռնոտ և օդը  
ցուրտ, բնակիչները բոլոր հայ են:

Արքայութիւն պատմել ունի ա , և հայոց բանականաց անձնագիրը առ անձնագիրը պահպանականաց առ ԿԱՐՍ

ԴԵՏԱԾ

Կարս նահանգը կ'իյնայ Չըլտըր , Երզիսում և  
Պայէզիտ նահանգներուն մէջ : Երկիրը բարեբեր  
է . ունի ցորեն , գարի և տեսակ տեսակ պառւղ-  
ներ : Դվասաւոր գետն է Արքա Մայը , որ համանուն  
Ընակէն կ'ելլայ , հին ատեն կ'ըսուէր Ախուրէտն  
գետ :

Այս գետով կը բաժնուի հիմա արևելքան կող-  
մէն Տաճկի սահմանը Որուսի սահմանէն : Ունի  
լճեր ալ , որոնց գլխաւորն է Չըլտըր , հին ատեն  
Ծոռլատի հիւսիսոյ կամ Պաղակաշիս ըսուած :

Դվասաւոր քաղաքներն են Գարս կամ Ղարս  
փաշայանիստ ամուր բերդաքաղաք , որ պարսպով  
պատած է : Բնակիչները քաղքին մեծութեանը  
համեմատ քիչ են , որ հիմա 12,000 կը համրուին ,  
որոցմէ շատը քիւրտ ու հայ են : Անուանի է հօս  
Աբաս թագաւորին շինած փառաւոր եկեղեցին  
930ին , որ ինչուան հիմա կեցած է : Կարսին շըր-  
ջակայ սահմանները 200ի շափ մանր գեղեր կան ,  
որոց մէջ անուանի է Զարիլատ գեղը , որ հին ա-  
տեն երևելի քաղաք էր : Այս քաղաքս վերջի պա-  
տերազմին ատեն (1855) Որուսները առին և բեր-  
գերը աւրելով նորէն թողուցին Օսմաննեանց :

Կամաւան կամ Գաղպան գիւղաքաղաք՝ լերին  
ուաքը շինած , որոյ հայ բնակիչներուն շատը Որու-  
սաստան գաղթուեցան : Գինոյ ու պտղոց շատ  
առատութիւն ունի իրեն շըջակայ սահմանները :

Ասոր մօտեւն է Վարդիհեր վանքը, որ հին ատեն  
կ'ըսուեր Վարդի հայր :

Ծօրեկել գաւառը հին Ծիրակ գաւառն է, և  
անունը ելած է հին Ծիրակաւան քաղքէն : Երկի-  
րը շատ բարեբեր է, բայց մշակութիւնը քիչ, մէջը  
շատ գեղեր կան, բայց ամենէն անուանին է Անի  
քաղքին աւերակները, գեռ կեցած է պարսպին  
մեծ մասը աշտարակներավը, և տասնի չափ եկե-  
զեցիներով, որոց երեքը չորսը կէս մը կործանած  
են, մէկանոնիք գեռ ամբողջ կեցած . նոյնպէս  
նաև թագաւորական ընդարձակ ու զարդարուն  
պալատը կէս մը կործանած : Անւոյ հարաւային  
կողմը կ'իյնան Մըն ու Բագարան քաղաքներուն  
աւերակները, որ հիմա կ'ըսուին Ղարաբաղ ու  
Բագրան : Անւոյ մօտ է Խօսաշներուած մեծագործ  
վանքը, Ախուրեան գետոյն քով, ուր են Բագրա-  
տունի թագաւորներուն ոմանց գերեզմանները,  
որորոցի ձեռով կարմիր քարէ շինուած : Ասոր մօ-  
տերը կ'իյնան Ծիրակաւան ու Արգիստ երևելի գիւ-  
ղաքաղաքաց աւերակները :

### ՊԱՅ Ե Զ Ի Զ Ի Տ

Պայէզիախ նահանգը կ'իյնայ Բասեն, Կարս,  
Երկան ու Վան գաւառներուն մէջտեղը : Բնա-  
կիչներուն շատը հայ ու քիւրտ են, Երկիրը բարե-  
բեր է, և վայրի կենդանիներ շատ ունի : Այս գա-  
ւառին մէջ կը բվլսէ Եփրատայ արևելան Ճիւղը,  
որ Մուշտ կ'ըսուի, և հին ատեն Արշածանի :

Գլխաւոր քաղաքներն են Պայէլիք ամուր բերդագաղաքը լերին վրայ շինած : Կ'երևի թէ հին ատեն այս քաղաքը կ'ըսուեր Դարոյն +, որոյ բնակիչները 10,000 կը համրուին . շատը քիւրտ են ու վաճառականութիւնը բաւական ծաղկած է : Այս քաղաքն ալ առին Ռուսք 1854ին, ու ամրութիւնները աւրելով թողուցին :

Տեսաբին քաղաքաւան, ունի ամուր միջնաբերդ մը : Այս քաղքին մօտ է Ալս գտու, որ հին ատեն կ'ըսուեր Ծաղկաց լեռ, ուսկից կը բիսի Եփրատ գետոյն մեծ ձիւղը . և շատ ջրաբբի ու պարարտ լեռ ըլլալուն համար, գարնան տեսակ աեսակ ծաղիկներով կը զարդարուի : Տիատինէն երեք ժամ հեռու է Իւլ +իւսէ ըսուած վանկը, հին Նպատ լերան վրայ շինած : Ունի մեծ ու քարաշէն եկեղեցի մը Գրիգոր Լուսաւորչի անունով, զոր Յունաց հերակլ կայսրը շինած է . թէպէտ և առաջուց հոն Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մը հիմը ձըգած էր :

Պայէղիտի արևմտեան կողմն է Ալաշկերտ գաւառը հին Վաղարշակերտ քաղքին անունովը, որ հին ատեն կ'ըսուեր Բագրեսանդ գաւառ : Երկիրը բարեբեր ու զուարձալի է, ունի ցորեն, դարի և ուրիշ արմտիք, բայց պտուղը քիչ է : Գլխաւոր քաղաքն է Թօքրագ Գալէ լերան մը ուաքը շինուած, որոյ ծայրը բերդ մը ունի : Այս քաղաքս հին Վաղարշակերտ քաղաքն է : Ասկէ շատ հեռու չէ Քեռէ գտու ըսուած ապառաժ ու անբեր լեռը, որ հին ատեն կ'ըսուեր Սուհաւ կամ Սուհաւէք, որոյ վրայ նահատակեցան Սուքիասանք :

Ալաշկերտին մէջ անուանի է նաև Խամուր բերդագաղաքը, որոյ բնակիչներուն շատը քիւրտ են :

ՎԱՆ

Վան նահանգը կ'իյնայ Պայէղեաին, Ատրպատականին, ու Տիարպէքերին մէջ: Բնակիչներուն շատը քիւրտ, հայ և տաճիկ են. բերքերուն մէջ ցորենը, զինին, մեղրը աղնիւ են: Գլխաւոր լեռներն են Սէբրամա, լեռ, Գրգոռու լեռ, Սիդան լեռ, Վարտկ՝ որոյ վրայ տասուերկու եկեղեցի կայ շխնած և Աւագ սուրբ նշանի վանքը: Կապուտիոռ լեռ որ հին ատեն կ'ըսուէր Ընյատիոռ: Գետերուն մէջ անուանի են Տիգրիս, և Վանայ ծով թափուող գետակները, ինչպէս Անգու, Մարմէտ կամ Խօնապ, և այն: Այս ծովակին մէջէն շատ տառեխ ձուկ կ'ելլէ, ջուրը աղի, և շատ խորունկ է. և մէջը չորս կղզի ունի, որ են Աղթամար, Առակը, Կտուց և Լիմ:

Աղթամարը որ Լիմ ու Կտուց կղզիներէն պղտիկ է, կ'իյնայ Վանայ ծովուն արևելեան հարաւային կողմը, ուր տասներորդ դարէն 'ի վեր հայոց կաթողիկոսութեան մէկ ճիւղը կը նստի: Անուանի է մէջը սուրբ Խաչ վիառաւոր վանքը ու անոր եկեղեցին, զոր շինեց Գագիկ արծրունեաց թագաւորը:

Սուրբէր կղզին Կարեկայ գեղին դիմացը կ'իյնայ և հիմա անբնակ է:

Կառուց կ'իյնայ Աղթամարին արևելեան հիւսիսային կողմը, մէջն է սուրբ Կարապէտի վանքը:

Լիմը որ ամենէն մեծ կղզին է, Կտուցայ մօտ է, մէջն է սուրբ Գետրգայ վանքը:

Այս վերջին երկու կղղիներուն մէջ խստակրօն ձգնաւորներ կան:

Այս նահանգին գլխաւոր քաղաքն է Վան որ հին ատեն կ'ըսուեր նաև Ծամբամահերա: Երկու ամուր պարիսպներով պատած է, և դիմացը քարաժայուին վրայ ունի անտափկ բերդ մը, զոր Առորեստանեայց Ծամբամ թագուհին շնչած է: Այս քաղքիս բնակիչներուն շատը Տաճիկ են. Հայեր ալ շատ կան, և ութը քարաշէն եկեղեցի ունին: 1648ին երկրաշարժէ քաղքին մէջ շատ տեղեր կործանեցան, ու շատ հոգի ալ փլատակներու տակ մեռան: Հիմա բնակչաց թիւն է 25 կամ 30,000 ու առուտուրը բաւական ծաղկած է:

Վան քաղքին շրջակայ սահմաններուն մէջ կան շատ գեղեր ու վանքեր, որոց մէջ անուանի են Արքամէտ աւանը, որ ազնիւ խնձոր, տանձ և խաղող ունի: Այս աւանը շատ շնորհեամբ և պարտէցներով զարդարեր եր մէր Բ. Արտաշէսն: Աշնայ գեղ, որ Վանայ ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ է, անոր համար Տաճկերէն Խաչելէ Քայիկ'ըսուի: — Նարեկ գեղ, Վանայ ծովուն հարաւային կողմը, ուր է Նարեկայ հռչակաւոր վանքը, որոյ մէջն են Գրիգորի Նարեկացւոյն և սրբոյն Սանդիստոյ գերեզմանները: — Համուկ կամ Ամուկ բերդաւան, արևելեան կողմը, որ հին ատեն շատ անուանի էր, ուր Գագիկ Արծրունեաց թագաւորը շատ շնորհիւններ ըրեր եր: — Բարփական գեղ, Վանայ ծովուն քով որ Բատ անունով իշխան մը շնչած է: Ախոր մօտ է Խլի կամ Ռում վանքը որ լերին վրայ շնորհած փառաւոր քարաշէն եկեղեցի մը ունի, որ կ'ըսուի նաև Քառասուն

Խորտն , քառասուն խորան ունենալուն համար , և շինած է Գագիկ Արծրունեաց թագաւորը : — Կարմբակայ վանք , Առտեր կղզւոյն գիմացը , որ քարաշէն Եկեղեցի ունի Գագիկ Արծրունիէն շինած : — Թումայ առաջնություն վանքը որ ծովահայեաց գեղեցիկ գիրք ունի :

Վանայ նահանգին ուրիշ գլխաւոր քաղաքներն են Խօնագ բերդաքաղաք , համանուն գետոյն քով շինած , ունի քարաժայուի վրայ ամուր բերդ : — Խօնապին մօտերն է Աղագա ամուր բերդաքաղաքը որ երեք բերդ ունի . և Հոգուոց վանքը , ուր է սուրբ Աստուածածնի հրաշագործ պատկերը զոր Բարձուղիմէսս առաքեալը հայաստան բերաւ :

Ոստան քաղաք , Վանայ ծովուն հարաւային կողմը , ունի բերդ , բայց աւերակ է . բնակիչները քիւրտ են : — Ոստանի մօա է Քարբաղազ գեղը որ հին ատեն կ'ըսուեր Մանակէրպ , և Վառընչափ գեղը՝ ուր է սրբոյն Եղեշէի Թարգմանչին վանքը և գերեզմանը :

Բերենի քաղաք , ունի բերդ , և գիմացը սրբոյն Ստեփանոսի վանք մը լերան վրայ շինուած :

Արճէն քաղաք , որոյ մօտ է Մէծությա վանքը :

Արծէն բերդաքաղաք , Վանայ ծովուն մօտ , որոյ սահմանները ազնիւ ցորեն և գարի կ'ելլէ :

Խլան քաղաք , ծովուն արևմտեան հիւսիսային կողմը , բնակիչները քիւրտ են , և իր շրջակայ սահմանները ազնիւ ծիրան , խնձոր և ցորեն կ'ելլէ : — Այս քաղաքս ատենօք շատ ծաղկած էր և մեջը այլազգի թագաւորներ կը նատէին , որոնց քարաշէն ձեռակերտները և գերեզմանները կեցած են : Դապառան գեղը ծովուն արևմտեան կողմը ասկահովնաւահանգիստ ունի :

Բառեւ կամ Պինդիս, երեելի և ընդարձակ բերդաքաղաք է, որոյ իշխանութիւնը Քիւրաերուն ձեռքն է, և առատ ջրեր ու պարտէզներ ունի: Բնակիչներուն մեծ մասը քիւրտ են: — Բաղեշի սահմանները շատ գիւղեր կան որոց մէջ անուանի է Ծաղկական գեղը, ուր առողջարար աղբիւր մը կը բխի լերան մը ոտքը, որ ամառը շատ պաղ է և ձմեռը տաք գոլորշեք կ'արձըկէ: Բաղեշի մօտ են Գրգուռ լեռները, որոց մէկ մասը որ Խաւթի կողմերը կ'իյնայ կ'ըսուի Ներքանայ լեռ, Ներքովթայ անունովը, որ մեր Հայկ նահապետին հետ պատերազմելով մեռաւ. ինկած տեղը Հայկ նահապետ կոչեց Գերեզմանի, որոյ մօտ է Հայոց յոր գաւառը, որ հիմա կ'ըսուի Հռչա յոր:

Ճուղամերկ գաւառին մէջ, որ Վանայ Հարաւային կողմը կ'իյնայ, երեելի են Ճուղամերկ բերդաքաղաքը, որոյ բնակիչներուն շատը քիւրտ են, և իշխանութիւնն ալ անոնց ձեռքն է:

Մոհիս բերդաքաղաք Համանուն վիճակին մէջ, որ խիստ լեռնոտ է, և հին ատեն կ'ըսուէր Մոհի: Բնակիչներն են քիւրտ և Հայ:

Ապարանի գեղ, ուր է Ապարանից քարաշեն վանքը:

Սասուն գաւառը կ'իյնայ Մուշին Հարաւային կողմը. օդը առողջարար է, երկիրը սաստիկ լեռնոտ՝ բայց պաղաքեր, և մեծ մեծ Հատերով խաղող ունի: Բնակիչները որ են քիւրտ և Հայ, զօրաւոր և քաջասիրտ մարդիկ են: Անուանի է մէջը Սասուն բերդը լերան վրայ շինուած, և Աշխաւագեղը:

Մշոյ գաւառը որ հին ատեն ըստ մասին Տարօ-

նոյ մէջ կ'իյնար, ընդարձակ դաշտ է, օդը առողջարար, երկիրը բարեբեր. ունի ազնիւ ցորեն, ծխախոտ, երկըթի հանք, ու տեսակ տեսակ կենդանիներ և թռչուններ : Բնակիչներուն շատը հայ ու քիւրտ են, և առանձին պէյով կամ հրամանատարով կը կառավարուի : Գլխաւոր քաղաքն է ՄՈՒԾ, որ գիմացը բլոյ վրայ բերդ ունի հին ատենէն շինուած : Իրեն մօտ են Ասպարութիւն կամ Ասպարութիւն ամրոցին աւերակները, Ծակառ ըսուած քարաժայոը Մշոյ և Բաղէշի մէջ, որոյ տակէն ճամբայ բացուած է, և մէջէն կ'անցնին ճամբորդները :

Մուշ քաղաքին մօտերը կ'իյնան Առաքելոց կամ Ղաղարս վանքը, որոյ եկեղեցւոյն բակը Թարգմանչաց շատին գերեզմանները կան, այս ինքն Դաւթի Անյաղթին, Մամբրէի, Ստեփանոսի, և այլն : — Մագրաշնի կամ Մագրանի, ուր է Յովհաննու կարապետին ճկոյթ մատը : — Սուրբ Յակովաննէս կամ Եւրոպի վանքը, որոյ քարաշէն եկեղեցին թաղէոս առաքեալը շինած է կ'ըսեն : — Սուրբ Կարապէտի հռչակաւոր վանքը, որ անուանի ուստատեղի է, և հին ատեն կ'ըսուեր իննակէան կամ Գլահայ վանք, ուր ամէն տարի վարդավառին օրը շատ ուխտաւոր կ'երթան : — Մուշին մօտ է նաև Սուրբ Սահակ ըսուած գեղը, որ հին ատեն կ'ըսուեր Աշխատ, ուր թաղղուած է սուրբն Սահակ Պարթև :

Մշոյ գաւառին արևելեան հիւսիսային կողմը կ'իյնայ Պուշանց վիճակը, որուն մէջն է Մէտաքար քաղաքը, որ հին ատեն կ'ըսուեր Մանազիւր, և ամուր քաղաք էր :

պատճեն , և ուշաբ ժամանակ , ըստ ուղիղ գոյն չէ առ  
մեջաւ ավելաց մաս : ըստ մասաւ պատճեն , ըստ ուղիղ  
**ՏԻԱՐ ՊԵՏ ԻՄ** պատճեն , առավելածին  
առ զանց մասաւ պատճեն պատճենանոն և պատճենար

Տիարակեքիրի նահանգը կ'իյնայ Միջագեաաց ,  
Եփրատ գետոյն , կրզիւսումի նահանգին ու Սա-  
սունին մէջ : Բնակիչներուն մեծ մասը քիւրտ են  
ու ինքնագլոււխ . քիւրտանի ալ կը գտնուի մէջը , որ  
հին քաղցեացիներէն առաջ եկած են : Երկիրը  
շատ բարեբեր է և ամեն տեսակ արմաիք կը բու-  
ցընէ , մանաւանդ ցորեն , գարի , բամբակ և այլն .  
բայց ամենէն անուանի բերքն է սեխը օր ինչուան  
երեսուն քառսուն քաշ կը կշռէ , և կը բուսնի  
Տիգրիս գետոյն քովերը :

Գլխաւոր քաղաքն է ԱՄՏԹ կամ ՏԻԱՐՊԵՏԻՄ  
որ հին ասեն կ'ըսուէր Տիգրանակէրտ , մեծն Տիգ-  
րան շինած ըլլալուն համար : Բոլոր քաղաքը ա-  
մուր ու լոյն պարսպով պատած է , որոյ վրայ եր-  
կու կառք քովելքով կրնան քալել , վրան ալ 72  
աշարակ շինուած են , ու պարսպին չորս դին  
խրամ կոյ , բայց հիմա երեսէ թողած : Ունի ա-  
մուր բերդ , որոյ մէջն է փաշային պալատը : Բնակ-  
չաց թիւը շատ էր , բայց 1737ին մարախէն ու ե-  
րաշտէն եաւ սասաիկ սով մը եղաւ , որով 80,000  
հոգի մեռան : Նոյնպէս 1771ին ժանաախաէն երեք  
ամսուան մէջ 82,000 հոգի մեռան , որով քաղ-  
քին բնակչաց թիւն ալ շատ պակսեցաւ , հիմա  
40,000 կը դնեն , և մեծ մասը Տաճիկ են : Գլխա-  
ւոր վաճառքն է բամբակ , մետաքս , սեկ ու պղըն-  
ձեղէն ամաններ :



ոյ մերամբադրության պատճենը շինալի  
առ գուստովաց Անահ աղմանի դժւառակի մժամամի  
և ձագված վերած վերած անձնական անձը ։ այս  
մշակութիւնը

## ՌՈՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ

։ Յաւաբանիք մեջայ պատճենավոն միջմաս ին  
պատճենաւայրը ։ Այս ուստի պարզապես բարձր  
հայտագործութեան վահակն է այս պատճենի անձնական տվյալը։

Ռուսի Հայաստանը կ'իյնայ մեծին Հայոց հիւ-  
սիսային արևելեան կողմը՝ որոյ մեծ մասը Հայոց  
տէրութեան վերջերը Վրաց ձեռքը անցեր էր, ա-  
նոր համար օտարազգիք այս մասը բոլըրովնին  
Վրաստանի մաս կը համարին։ Կը սկարունակէ իր  
մէջը հին ատենուան Սիւնիք, Արցախ, Ռւտի,  
Փայտակարան նահանգները, Այրարատ և Գու-  
գարք նահանգներուն մէկ մասը։ Տաճկէն և Պարս-  
կէն նոր առած երկիրները 1840ին երկու նահանգ  
բաժնուեցան, որ Են Երևան և Կախջուան։ իսկ  
առջի առածները, Թիֆլիզի, Կէնճէի և Գարա-  
պաղ նահանգներուն մասն Են։

Թիֆլիզու նահանգին մէջ սեպուած Հայաստա-  
նի գլխաւոր քաղաքներն Են Անդքև որ Վրաց  
հնչումով կ'ըսուի Ախալէիտէ և ըսել է Նոր Բէրտ,  
որ կ'իյնայ Կուր գետոյն մօտ։ Այս քաղաքս  
1829էն առաջ Տաճկին ձեռքն էր։ վաճառակա-  
նութիւնը բաւական ծաղկած է, և բնակչաց թիւն  
է 12,000։

Ախալէտէ+ կամ Վրաց հնչումով Ախալէտէ+,  
որ ըսել է Նոր Բէրտ, որոյ հիւսիսային կողմը կ'իյ-  
նայ Փառաւան լիձը, ուսկից կը բխի Կուր գետոյն  
մէկ ձիւղը։

Դմանին գիւղաքաղաք, որոյ մօտ է Հաղպատ ու

Սանահին գեղերը Սօմեկը գաւառին մէջ . որոց մէջ  
անուանի են համանուն հռչակաւոր վանքերը . եր-  
կուքին մէջ ալ թագաւորազուններու և երևելի  
վարդապետներու գերեզմաններ կան :

Լոռի հին և անուանի գիւղաքաղաք է՝ աւերակ ,  
անոր մօտ է Շահաբակ բերդաւանն նոյնպէս ա-  
ւերակ :

Գանձակ և Գարապաղ նահանգաց մէջ գլխա-  
ւոր տեղուանքն են Գյանցակ կամ Կէնծէ բերդա-  
քաղաք որ կ'ըսուի նաև Եղիսաբէթուպօլիս , կուր  
գետոյն մօտ . մեծ և անուանի քաղաք է , 20,000  
բնակչով . Գարապաղու մէջ է Գանձասար վանքը  
Ըստակի վրայ շինած , որ հին ատեն Ալուանից կա-  
թողիկոսներուն աթոռն էր : — Ասոր մօտ է Շուշ  
քաղաքը , որ հիմայ Գարապաղու մայրաքաղաքն  
է , ամուր բերդով . հոս փոխադրուած է Գանձա-  
սարայ աթոռը . Գարապաղու երկիրը հին Սիւ-  
նեաց , Արցախու և Ուտեաց մասն է . այս ետքի-  
նիս մէջն էր Պարտաւ կամ Պէրփէ քաղաքը երբեմն  
մայրաքաղաք Ալուանից , հիմայ աւերակ է : Ասոր  
մօտ է Շահաբակ աւանը կուր գետոյն քով , որոյ մէջ  
180 ոտնաչափ բարձր աշտարակ մը կար կարմիր  
աղիւսով շինած , և երկրաշարժէ կործանեցաւ : —  
Գարապաղու Սիւնեաց երկրին մասը հիմայ Ղա-  
դան կ'ըսուի . մէջը անուանի են Կիւրիւս աւանը ,  
Տաթևու մեծ և հին վանքը , որ Ս . Եւստաթէոս ա-  
նունով առաքելոց աշակերտի մը անուամբ շի-  
նուած , և Սիւնեաց եպիսկոպոսարան եղած էր :  
Ուստի գեղը և Բաղաբէրդ ամուր բերդը , և այլն :

Երևան նահանգին գլխաւոր քաղաքներն են  
Երևան բերդաքաղաքն որ հրապար կամ Զէնի

գետոյն վրայ է, տառիակ դաշտի մէջ շինած ու չորս  
կօղմը լեռներով պատած։ Բերդը քաղքէն քիչ  
մը հետու է։ Այս քաղաքը տուած Պարսից ձեռքն  
էր, բայց 1827ին Ռուսերը տիրեցին։ բնակիչներ  
ուն թիւն է 20,000։ բամբակի, նաև թիւ ու աղի  
մեծ առուատուր ունի։ — Երևան քաղքին մօտ է  
Անանիա առաքելոյն վանքը և Խոր Վեհապէ որ հին  
Արքաւագ քաղքին տեղն է։ Խոր Վեհապին վրայ  
քարաշէն գմբեթաւոր եկեղեցի շինած է Գրիգոր  
Լուսաւորչի անունով, և տարին երկու երեք ան-  
գամ պատարագ կ'ըլլուի այս խոր Վեհապին մէջ,  
որոյ հեմակուան խորութիւնն է օ գրկաշափ, և  
մէջը խորան շինած է։

Երևանայ սահմանին մէջ կ'իյնան Բջնի գեղը  
Զանկու վտակին քով որ Գրիգորի Մագիստրոսի  
կալուածն էր, և երբեմն արքեպիսկոպոսի աթու։  
— Կիւմրի քաղաք որ կ'ըսուի հիմա նաև Աղետ-  
անդրապօլիս Ռուսաց կայսրուհւոյն անունովը։  
Այս քաղաքը կ'իյնայ Սխուրեան գետոյն արևե-  
լեան եղերքը, որ օրէ օր ծաղկելով բազմամարդ  
ու վաճառաշահ քաղաք կ'ըլլոյ։ — Սարդարապատ  
ամբոց, զոր շինեց Հիւսէին Ղուլի Երևանայ սար-  
տարը 1819ին, կ'իյնայ հին Արմաւիր քաղքին ա-  
ւերակներուն քով, որոյ շինութեանը համար գոր-  
ծածեց նոյն Արմաւիր քաղքին մնացած աւերակ-  
ներուն քարերը, և անուանեց Սարտարապատ, և  
պատած է կրկին պարսպով, և հին ատեն կ'ը-  
սուեր տեղւոյն անունը Քեալսէարի, համանուն  
գետակին անունովը որ Երասխայ հետ կը միա-  
նայ։ — Գառնի գեղ որ կ'ըսուի նաև Թառը ՏՐԴ-  
պայ, հոն Տրդատ թագաւորը իր քրոջը խոսրո-

Աղիստոյն փառաւոր ու թագաւորական պալատ մը շինելուն համար, որուն զարմանալի տերակները կեցած են: Գառնիին մօտ է Սևանայ ծովը որ հին ատեն Գեղամայ ծռչ կ'ըստէք, և մէջն է Ուտան կղզին ուր հռչակաւոր վանք մը կայ Հգնաւորաց:

Երևան քաղքին արևմտակողմն է Էջմիածինը որուն տաճիկները Իւլ + Էլիսէ կ'ըսեն, մէջի երեք եկեղեցիներուն համար որ են Ծողակաթ Աստուածածնի, Հսիփսիմեայ ու Գայիանեայ, տեղը Վաղարշապատ քաղքին քովին է, չորս կողմը պարսպով պատած է, և է մեծ վանք և Հայոց գլխաւոր կաթողիկոսին աթոռը: Հսիփսիմեայ ու Գայիանեայ վանքերը իրենց նահատակութեան տեղը շինուած են. Էջմիածնայ Ծողակաթի եկեղեցին ալ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ և Տրդատ թագաւորն հիմնարկեցին, այն աեղը՝ ուր որ Լուսաւորիչ տեսլեան մէջ տեսաւ զբրիստոս երկնքէն իջած, անոր համար ըսուեցաւ Էջ-Միածին: Վերջի կաթողիկոսները շատ նորոգութիւն ըրած են այս վանքիս մէջ:

Էջմիածնի մօտ են Օւական գեղը, ուր է սրբոյն Մեսրոպայ գերեզմանը. Կաբէն կամ Քաբէն աւանը, Եղիշեր, Փարոփի և Ուլի գեղերը, Սաղմոսական+ և Յովհաննական+, Լաղբէշան+ վանքերը, և այլն:

Նախջուան նահանգին գլխաւոր տեղուանքն էն Նախջուան պարսպապատ քաղաքը Երասխայ ձախ կամ արևելեան գին, Նոյ նահապետին առաջին քնակութեան տեղը կը կարծուի, և հոս է կ'ըսեն իրեն գերեզմանը: Հին ատեն անուանի ու բաղմամարդ քաղաք էր, բայց հիմա մեծ մասը աւե-

ըակ է : Բնակիչներն են՝ 12,000 : — Նախջուանայ  
ստհմանին մեջ կ'իյնան ջահուկ աւանը, խռվաշն  
որ հին ատեն կ'ըսուէր խռախունիւ . Ապրականի գեղ  
որոյ մօտ սուրբ Կարապետի վանք մը կայ . Ապար-  
նէր կամ Ապարանէր գեղ, աս ալ վանք մը ունէր  
Ունիթուաց : — Աստաղագ աւան Երասխայ հիւ-  
սիսային կողմը, տուները քարաշէն և ըստ մեծի  
մասին փառաւոր : Երնջակ որ կ'ըսուի հիմա Ալի-  
ճա Գալէսի, Երին վրայ շինուած ամուր բերդ է :  
Ջուղա կամ հին Ջուղա, հին ատեն վաճառաշահ  
քաղաք էր, բայց հիմա մեծ մասը աւերակ է . որոյ  
մօտ է Ըստուն կիսաւեր աւանը : Տարավայի կամ  
Ծայի գեղ, որ հին ատեն կ'ըսուէր Խրամ քաղաք,  
որոյ մօտ կայ Ստեփանոսի նախավկայի վանք մը :  
Ագուլիս գեղ, որոյ մօտ է Վանանդ գեղը որ ազնիւ-  
ծիրան ունի : — Ուշուագ կամ Ուշուապատ քաղաք  
Երասխայ քով . հին ատեն գեղ մ' էր :

Ամպեսու սուսույթու առանձ չն մամաւու պիտուան  
ու իւ մի ճակատ Ա-նը նոր առաջ պրեռա պահա, ճայի  
մէ ճայր միջնաբարութ ուս, որ մատուցած ոչ  
ճայր է, պահանձակ ամայ ուս, և ճայրանութ, ու  
մէ ճայրանութ, որ առաջ միջնաբար ուս այդինք  
պահ պահանձակ պահանձակ առաջարարացար, ու մէ ճայր  
միջնաբար միջնաբար ուս, մէ ճայր մականձար առաջ  
ճայր է ուս և պահանձակ ուս մատուցած ուս  
ու մին առաջ մատուցած ովէ շրմանքայ միջն  
պահ Յն անձն ըստ, ով պարագ պահանձակ

## ՊԱՐՍԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Պարսից Հայաստանը առաջ աւելի ընդարձակէ էր, բայց հիմա մէկ մասը Ռուսաց ձեռքը անցնելուն համար պղտիկցած է, և Ասրագատականին կամ Ատրպէճանին մասը կը համարուի, և է մեծին Հայոց Այրարտու, Վասպուրական, Փայտակարան և Պարսկահայք նահանգներուն մասերը: Երկիրը շատ բարեբեր ու զուարձալի է, և ամէն տեսակ պտուղ կը բուսցընէ:

Գլխաւոր քաղաքներն են Դավրէժ կամ Թէշտէն զոր շինեց մեծն խոսրով Հայոց թագաւորը. և ինչպէս որ հին ատեն շատ ծաղկած էր, նոյնպէս հիմա ալ ծաղկած է, ամէն տուն պարտէզ ունի, անոր համար ընդարձակ է քաղքին շրջապատն ալ: Մէջը շատ հնութիւնք ու երևելի շէնքեր կան: Հատ անգամ գետնաշարժէ քաղքին մեծ մասը կործանած է, ինչպէս նաև 1854ին ալ: Բնակչաց թիւը 70-80,000 է:

Արտա-իւ կամ իրաւունք կասպից ծովուն մօտ, որ վաճառականութեամբ շատ ծաղկած է, և մէջը անուանի մզկիթներ ու շէնքեր ունի, և փառաւոր շիրիմներ, որոց մէջ ամենէն հռչակաւորն է Պարսից Շահ Սէֆի թագաւորին և իրեն մէկ քանի յաջորդներուն շիրիմները:

Մարտա Որմեայ ծովակին մօտ ամուր բերդաքաղաք է. բնակիչները 10,000. մէջը անուանի է հուլաւուն խանին գերեզմանը և իրեն շինած դիտարանը:

Որմէս կամ Ռուսի քաղաք Որմեայ ծովակին արևմտեան կողմը, որոյ անունով ծովակին ալ այսպէս կոչուած է, որ կ'ըսուի նաև Դաշտիծու ծով։ Ճուրը սաստիկ աղի է, մէջը անբնակ մանր կղզիներ կան։

Սալամաս կամ Սալասագ քաղաք, որ հին ատեն կ'ըսուէր Սալամաս, և կ'իյնայ Որմեայ ծովակին արևմտեան հիւսիսային կողմը։ արմտիք շատ ունի, գինին ալ ազնիւ։ հիմա աւերակ է։ իրեն մօտ է Տիվան գիւղաքաղաքը, Խոսրով գեղը, Թէսուլ աւանը, և ուրիշ շատ գեղեր։

Խոյ քաղաք որ է հին Հեր քաղաքը, Որմեայ ծովակին հիւսիսային դին ընդարձակ դաշտի մը մէջ շինած։ պարտէցներ շատ ունի, շրջակայ սահմաններն ալ բարեբեր են։ բնակիչքն 25,000։

Մարտնդ կամ Մէրէնդ քաղաք, 10,000 բնակիչ ունի, Ահեր և Սէրագ քաղաքներ, և այլն։ Մակու քաղաքաւանը Այրարատայ կողմը, ամուր քարափոր բերդ ունի։ ասոր քովերն է Արտազուդաշտը, ուր որ նահատակեցան Ս. Վարդանանք։ Հոն է նաև Թառէնի վանքը, Ս. Թագէոս առաքելոյն և Սանդուխտ կուսին նահատակութեանց տեղը։ ուր որ հին ատեն Շատրուշն անունով թագաւորական բնակարան մը կար։

Մուղան կամ Մուկան ընդարձակ դաշտը կը ձգուի Երասիս գետոյն արևելեան կողմէն ինչուան կասպից ծովը, և հիմա կէս մը Պարսից, կէս մ' ալ Ռուսաց ձեռքն է։ Երկրին մէծ մասը անբեր է և օձերով լեցուն, և մէջը բնակութեան համար շինքեր գեղեր չկան, բայց եթէ կասպից ծովուն քով։ մէկ մասն ալ խոտաւէտ դաշտ է, ուր անթիւ հօտեր կ'արածին ձմեռ ատեն։

## ՅԱԿԵԼՈՒԱԾ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ՓՈՔՐ ՀԱՅՔ

Փոքր Հայք կ'իյնայ Եփրատ գետոյն արևմտեան  
կողմը, մեծին Հայոց սահմանակից։ Երկիրը ընդ-  
հանրապէս բարեբեր է, թէպէտ և լեռնոտ, Ան-  
տիտաւրոս լերանց թեռերով. զլսաւոր գետերն են  
Գըլլը ըրճագ, որ հին ատեն կ'ըսուէր Աւեն, կը  
թափի Սև ծովը։ — Եկւել ըրճագ, որ կ'ըսուի նաև  
Թոգան սույն, Ամասիա սույն, Երկու մեծամեծ  
վտակներէ միացած, որոց մէկը հին ատեն կ'ը-  
սուէր Լիդս կամ Գայլ գետ, մէկալը Իրեն։ —  
Գարս սու, որ հին ատեն կ'ըսուէր Մելս կամ Մե-  
լս, կեսարիոյ կողմերէն կը բիսի, և կը թափի Եփ-  
րատայ մէջ։

Փոքր Հայք հին ատեն Երեք մաս կը բաժ-  
նուէր Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայ։ իսկ հի-  
մա կէս մը Գարամանիա ու կէս մ' ալ Սըլազ նա-  
հանգին մէջ կիյնայ։ Ինչուան հիմա այս կողմերս  
շատ Հայ կը գտնուին. և սպատճառը այս է որ  
Բագրատունեաց տէրութեան վերջերը Երբոր Հայ-  
աստան թշնամիներէն ոտնակոխ կ'ըլլար՝ շատ  
Հայեր թողլով իրենց Երկիրը Եկան փոքր Հայոց  
մէջ բնակեցան, որ Յունաց ձեռքն էր։ Ինչպէս  
ԺԱ դարուն կէսին Վասպուրական աշխարհին  
թագաւորը բոլոր իր ժողովը կ'ըլլար՝ Սեբաստիա քաղ-

քին կողմերը եկաւ բնակեցաւ, իր աշխարհը Յունաց կայսեր թողլով, նոյնպէս Կարսի թագաւորն ալ, նաև ուրիշ նախարարներ և մեծամեծներ :

Սըվազ նահանգին երկիրը շատ պտղաբեր է, օդը առողջարար և ցուրտ • ունի ազնիւ մեղք, մետաքս, պղնձէ հանք, և այլն : Մէջի գլխաւոր քաղաքն է Սըվազ կամ Սեսապ, որ հին ատեն կ'ըսուէր Սեբաստիա, Եէշիլ ըրմագին մօտ, որոյ մէկ վտակը քաղքին մէջէն կ'անցնի : Քաղաքը անպարիսպ է և ունի երկու բերդ, և շրջակայ սահմանները բաւական բարեքեր են և աղէկ արմակները կը բերեն : Սըվազի մօտ է Քառոսուն ճանկունի ըսուած տեղը, ուր հին ատեն Քառոսուն մանկանց վանք կար, բայց հիմա աւրուած է : Առոր մօտ է օևագոյն ու լեզի ջրով պղտի լճակը, ուր նահատակեցան 40 մանկունք, որ և ուխտատեղի է : — Սըվազի մօտ կան Բագնին և Զառու գեղերը և ուրիշ շատ գեղեր, և առուն Նշանի վանքը երեք եկեղեցիով : Այս քաղքիս մէջ ծնաւ 1676ին Միսիթար աբբահայր :

Ուրիշ գլխաւոր քաղաքներն են Թագավոր Հին ատեն կ'ըսուէր Ետրոնիա, Եէշիլ ըրմագին մօտ, վաճառականութիւնը բաւական ծաղկած է, և փոքր Ասիոյ վաճառականութեան կեդրոնը կը համարուի : Ունի հին բերդ մը ապառաժի վրայ կէս մը կործանած : Քաղքին պղնձագործները շատ երկելի են Ասիոյ մէջ . Հայերը եօթը եկեղեցի ունին : Այս քաղաքս 1825ին Երկրաշարժէ շատ վնասներ քաշեց : Թոգաթին մօտ են Կոմանա քաղքին աւերակները :

Զիւշ քաղաք, որոյ բնակիչներուն շատը զօրաւոր, սրաուտ ու առետուրի ետևէ եղող մարդիկ են :

Նիւար որ հին ատեն կ'ըսուէր 'Սէռիեսարիս, բեր-  
դաքաղաք է, և քովերը ամէն տեսակ պտղոյ առա-  
տութիւն ունի, մանաւանդ կեռասի:

Գարահիսար քաղաք, որ ուրիշ Գարահիսար քաղ-  
քըներէն որոշելու համար կ'ըսուի սովորաբար  
Ըստին Գարահիսար, և հին ատեն կ'ըսուէր 'Սիւած-  
լիս, ունի պղտի ամուր բերդ մը սև քարաժայռի  
վրայ շինած: Քաղքին մօտերը առատ պաղեղի  
հանք կայ: — Գարահիսարին մօտերն է Ախար  
ուս բարեբեր գաշտը, որոյ մէջն են Ախար և Ածու-  
ռէր գեղերը:

Եփրատայ և Մեծ Հայոց մօտ քաղաքներն են,  
Տիւրիի կամ Տիւրիի գիւղաքաղաք, ունի բերդ  
բարձր տեղ շինած, և մօտերը սուրբ Լուսաւորէ  
վանք մը: Տիվերիկին մօտ է Տէրընիք քաղաք՝ որ  
բերդ մը ունի քարաժայռ բլույ վրայ շինած և մօ-  
տը Աշտի գեղը, ուր է Ս. Յակոբ վանքը, որ Հայոց  
առաջնորդարան է. Կամ գեղը, որոյ քովերը կան  
երկաթի և մագնիսի հանք:

Կիւրիւն քաղաք, լեռներու մէջ, 1,000 տունէն  
աւելի հայ բնակիչ ունի, որ առուտուր կ'ընեն:  
Ասոր մօտ է Ս. Թորոս վանքը Մանճըլէն գեղին մէջ,  
ուր է Հայոց առաջնորդարանը:

Աւաբիեր գիւղաքաղաք, որոյ շրջակայ սահման-  
ները շատ բարեբեր են, և մօտերը արծըթի հանք  
կայ: Արաբկերին մօտ է Ուիւգետակ վտակը որ Եփ-  
րատայ հետ կը խառնուի, և մէջէն շատ կարմրա-  
խայտ ձուկ կ'ելլէ:

Ան կամ Էիին գիւղաքաղաք, Եփրատ գետոյն  
քով, որոյ վրայ կամուրջ ձգուած է քաղքին դի-  
մացը: Այս քաղքիս շրջակայ սահմանները շատ

Հեռնոտ են, անոր համար ցորեն, գարի և ուրիշ արմտիք չեն բուսցըներ : Բնակիչներուն մեծ մասը հայ են, բնութեամբ ճարտար և աշխոյժ . կը գըտնուին նաև հայհոռոմներ ու տաճիկ : — Ակնայ գիւղաքաղաքին մօտ է Սուրբ Երեսուն կամ սուրբ Երեսուն ըսուած վանքը, որ բարձր տեղ շինուած է, և Արակա գեղը՝ որոյ բնակիչները բոլոր տաճիկ են . գեղէն դուրս կայ Գրիգոր Նարեկացւոյն գերեզմանը պատով պատած, որ ուխտատեղի է, ու Տաճկըներն ալ կը պատուեն, և հին ատեն գերեզմանին վրայ եկեղեցի ու վանք կար Նարեկ անունով, ուսկից գեղն ալ Նարեկայ գեղ ըսուած էր, և հիմա աւրուելով Արակա գեղ ըսուեր է :

Պիտ կամ Պիրիձին քաղաք, ուներ ամուր բերդ, հիմա թէ պարիսպները և թէ բերդը բոլոր քայքայած են . հին ատեն անուանի էր նաև վաճառականութեամբ : Պիր քաղքին մօտ է Հոռնիլս կամ Ռումփաւէ Եփրատ գետոյն քով քարաժայռի վրայ շինած ամուր բերդ : Մէջը երեք հին քարաշէն եկեղեցիներ կան, որոց մէկն է սուրբ Ներսէս Ըստհաւի, ուր կայ իր գերեզմանը, և եկեղեցւոյն քովին է հին կաթողիկոսարանը, որուն մեծ մասը հիմա աւերակ է :

Մաւանիտ որ հին ատեն կ'ըսուեր Մէլիպինէ և Երրորդ հայոց մայրաքաղաքն էր . կուապաշտութեան ատեն ալ, քրիստոնէութեան ատեն ալ անուանի եղած է, բայց շատ պատերազմներէ աւրուած . հիմակուան բնակիչներն են 14,000 : Քաղքէն դուրս կայ Գրիգոր Լուսաւորչի վանք մը, ուր կը նստի Մալաթիա քաղքին հայոց առաջնորդը : Երկիրը շատ պտղաբեր է :

Մալշաթիաք գաւառոին մէջ անուանի են նաև  
Սամաստ կամ Սամաստ քաղաքը որ հին ատեն կ'ը-  
սուէր Սամսատիա Եփրատայ մօտ : Հըսնի յանսուր  
քաղաք կամ Ադիւայտն Սամսատին մօտ : — Պէհես-  
նի քաղաքաւան, որոյ խաղողը և տախտակը ազ-  
նիւ է :

Գայսէրին կամ Ղայսէրի գաւառը հին ատեն կ'ը-  
սուէր Կապարովիտ և Առաջին Հայո, հիմա Գարա-  
մանիայի կամ Ղոնիայի նահանգին մասն է : Երկի-  
րը բարեբեր, օդը ցուրտ բնակիչները ճարտար ու  
յաջող մարդիկ են : Գլխաւոր քաղաքն է Գայսէրին՝  
որ հին ատեն կ'ըսուէր Մաժաք և Կեսարտ, և շե-  
նուած է գաշտի մը մէջ Երճիկ (Արգես) լեռան  
հիւսիսային կողմը : Ունի պղտի բերդ մը, և քաղ-  
քին մէկ կողմը պարսպով պատռած է : Ընդքերուն  
մէջ անուանի է Ուլու ձամբ կամ մզկիթը կապա-  
րով ծածկած, և մեծ մինարէ մը ունի : Կ'ըսեն թէ  
այս մզկիթը հին ատեն եկեղեցի էր, և մէջը թա-  
ղուած էր սուրբն Բարսեղ : Այս քաղքիս բնա-  
կիչները որ հիմա 65,000 կը համրուին, տաճկընե-  
րէն ետև հոռոմներէն աւելի հայերն են : Անուա-  
նի է քաղքիս ասլուխտը ու սեկը :

Կեսարիա քաղքին մօտերը կ'իյնան Սուրբ Կառա-  
պէտի վանքը ուր կը նստի Հայոց առաջնորդը : —  
Թալսա գեղ, Կառմէր կամ Կէրմէր գեղ, Ներւէ կամ  
Նիւէ գեղ որ հին ատեն կ'ըսուէր Նիսսա, ուսկից  
էր Գրիգոր Նիւստացին . Սինասծն գեղ որ հին ատեն  
կ'ըսուէր Նառլանդ քաղաք կամ Նիւէսարէտ ուսկից  
էր Գրիգոր Աստուածաբան : — Տէրէլանտ կամ Տէ-  
րէլէնտ գեղ, որոյ մօտ պղտի վանք մը կայ սրբոյն  
Սալգսի անունով, որոյ եկեղեցին ու քովի խուցե-

Առ ամբողջ քարի մէջ փորած է արեղայի մը ձեռ.  
Քով :

### ՄԻՋԱԴԵՏՔ

Հայոց Միջագետաց գլխաւոր քաղաքներն են  
Ուստի կամ Ուրիշ քաղաք որ 40,000 բնակիչ  
ունի, և հին ատեն կ'ըսուէր ԵՊԵՍԻՆ, բերդաւոր  
անուանի քաղաք է, չորս կողմը պարսպով պա-  
տած, ու պարսպին չորս դին խրամ բացած։ Բեր-  
դը ապառաժի վրայ շինած է, և մէջը կայ քարա-  
շէն փառաւոր մզկիթ մը, որ հին ատեն սրբոյն  
Սարգսի եկեղեցի էր, որոյ երկու քարաշէն բարձր  
զանգակատունները կան մինչև հիմա։ Քաղքին  
մէջ կան երեսելի վաճառանոցներ, բաղնիքներ ու  
մզկիթներ՝ որոցմէ շատը հին ատեն եկեղեցի էին։  
Ասոնց մէջ անուանի է Քառասուն մանկանց գըմ-  
բեթաւոր ու զարդարուն եկեղեցին բոլոր քարէ  
շինած, որ հիմա մզկիթ է։ Հայերը մէկ եկեղեցի  
միայն ունին որ է սուրբ Աստուածածնի եկեղե-  
ցին, Աբգար թագաւորէն շինուած։ Ուրհայի մօտ  
կայ Հայոց սուրբ Յակոբ ըսուած քարաշէն ու փա-  
ռաւոր վանքը, ուր բնակած է կ'ըսեն սուրբն Յա-  
կոբ Մծբնայ հայրապետը։ և սուրբ Ասբագիս վան-  
քը, որոյ եկեղեցւոյն մէջ քարէ մէծ տապան մը  
կայ ուր թագուած է կ'ըսեն սուրբն Եփրեմ ասո-  
րի։ Սրբոյն Սարգսի վանքին մօտ կայ Աբգարու-  
անուամբ եկեղեցի մը բոլոր ապառաժ քարի մէջ  
փորուած շատ աշխատութեամբ ու ծախքով, որոյ

քովերը այլ և այլ աւերակներ կան, որ Աբգար թագաւորին ամարանոցներն էին կ'ըսեն: Կայ նաև մուժ քարանձաւ մը ուր երկու գերեզման կան, մէկը Աբգար թագաւորինն է կ'ըսեն, մէկալը իր Աբգիու իշխանին:

Ռատեա կամ Ռահիմ որ հին ատեն երեելի քաղաք էր, բայց հիմա մեծ մասը աւերակ է: Ասոր հիւսիսային կողմը կ'իյնան Խառան քաղքին աւերակները:

Մէրտին ամուր բերդաքաղաք է, բարձր ապահած լերան վրայ շինած ու պարսպով պատած, ունի շատ մզկիթներ և բաղնիքներ. կաթողիկէ հայերն ալ եպիսկոպոսանիստ եկեղեցի մը ունին: Մէրտինին շրջակայ սահմանը բարեբեր է, և հարաւային արևելեան կողմը կ'իյնայ Մծբին կամ Նիսիպին քաղքին աւերակները, ուր կան ամբողջ մնացած սրբոյն Յակոբայ Մծբնայ եկեղեցին և ուրիշ մէկ քանի շէնքեր:

Ճէպիրէ բերդաքաղաք, կ'իյնայ Տիգրիս կամ Շադ գետոյն արևմտեան կողմը, որ Երբոր բարձրածայ ամուսան մէջ, քաղքին չորս դին կղզւոյ պէս կը պատէ, անոր համար Ճէզիրէ ըսուած է, որ արաբացւոց լեզուով կղզի ըսել է, հայերէն ալ Գղիրա ըսուեր է: Այս քաղքին իշխանութիւնը իր շրջակայ սահմանովը մէկտեղ քիւրտերուն ձեռքն է, և ասոր անունովը հիմա բոլոր Միջագետք իւ Ճէպիրէ կ'ըսուի: — Այս կողմերս, և Անդին քաղքին ու Սինճար քաղքին և լերանց կողմէրը կը բնակին շատ Եզիտի աղանդաւորք, որոնք կէս հեթանոս կէս մահմետական են, քրիստոնէական աւանդութիւններ ալ ունին:

որպեսի որ մայթ պահպաղման վրա և առ այլ վեց  
մասն ըստ : մասն չ միշտ մովագութեան միջրաւարան՝  
մայթ մանելով կ Կ Ի Լ Ի Կ Ի Ա առն մազաց նկան  
ով պատմեն , մասն չ մանելուարան զարդի ովքն ովքն  
: միջրաւարան առն ովքն

Կիլիկիան որ հիմա կ'ըսուի Սպանա , կ'իյնայ  
Սիջերկրական ծովուն քով Գարամանիային հա-  
րաւային դին : Օդը ամսուան մէջ շատ տաք ունե-  
ղացուցիչ և գլխաւոր քաղաքները գրեթէ բոլոր  
ցած ու տաք տեղ շինուած ըլլալուն համար՝ ա-  
մառը մէջի բնակիչները բոլոր գեղերու մէջ կը  
ցրուին : Երկիրը լեռնոտ , բայց շատ բարեբեր է .  
մանաւանդ բամբակը խիստ առատ է : Գլխաւոր  
գետերն են Ճինան և Սէյհուն . կան ուրիշ մանր  
գետեր ալ : Բնակիչներուն մեծ մասը տաճիկ ,  
քիւրտ և հայ են :

Գլխաւոր քաղաքներն են ԱՏԱՆԱ բերդաքաղաք՝  
Սէյհունի քով որ հին ատեն կ'ըսուէր Սարսա , որոյ  
վրայ քաղքին դիմացը քարաշէն մեծ կամուրջ շի-  
նած է : Վաճառականութիւնը բանուկ է . և ամա-  
ռը օդը գէշ և լիսասակար , անոր համար բնակիչ-  
ները կը ցրուին գեղերու և ամարանոցներու մէջ :  
Բնակչաց թիւն է 20,000 :

Սէա բերդաքաղաք , որոյ չորս կողմը ամսուր  
պարապով պատած է , բայց տեղ տեղ փլփլկած :  
Քաղքին հարաւային կողմն է կաթողիկոսարանը ,  
ուր հայոց առանձին կաթողիկոս կը նստի , որ  
կ'իշխէ Կիլիկիոյ և փոքր հայոց մէջ եղած հայե-  
րուն վրայ : Հին շինքերէն մնացած են հիմա դան-  
ձատունը , բանտը , սրբոյն Սոփիայ եկեղեցին , ո-  
րոյ մօտ է Ռուբինեանց թագաւորական պալատը

կամ դարսպասը . բայց ամենքն ալ երեսէ թողած ու կէս մը աւերակ : Սայ հիւսիսային կողմը կ'իշնայ Պէրսուերն բերդը լեռներու վրայ շինած , որ հին ատեն կ'ըսուեր Բարձր Բէրդ :

Անարդաբա բերդաքաղաք , ճիհան կամ հին Պիւամոս գետոյն քով շինած ու կրկին պարսպով պատած . որ հիմա բոլորովին անբնակ է , և մէջը կ'երկին շատ եկեղեցիներ , տուներ , պալատներ , և այլն :

Մահա քաղաք որ հին ատեն կ'ըսուեր Մապուեսական կամ Մասեսպիա . մէջէն կ'անցնի ճիհան գետը , և ունի բերդ մը :

Թարսուս կամ Թէրմիս քաղաք որ հին ատեն կ'ըսուեր Տարսոն , շինուած է Միջերկրական ծովուն մօտ Կիւդնոս կամ Գարասու գետոյն Միջերկրական ծովը թափելու տեղոյն մօտ : Հին Տարսոն քաղքին ընդարձակ աւերակները ասոր քովը կ'իշնան , որ առաջ շատ ծաղկած էր վաճառականութեամբ : Հիմա նաւահանգիստն է Մէրմին գեղը , քաղքին հինգ ժամ հեռու . բնակչաց թիւն է 3,000 : Տարսոնի մօտ է Սէմբուդ-Գալէ , որ է Լամբրոն բերդը :

Այստ կամ Փայտա քաղաք Միջերկրական ծոցոյն քով . ունի ծովեղերեայ ամուր բերդ և նաւահանգիստ : Պէտքան կամ Պէտէնէ լեռանց մէջ քաղաքաւան մըն է , իբր 1000 տունով , կէսը հայ :

Մարաշու գաւառը կ'իշնայ Ատանային ու Գարամանխային արևելեան կողմը Եփրատ գետոյն քով , որ հին ատեն կ'ըսուեր Կամագէն կամ Կամագ , Ետքէն ըսուեցաւ Եփրամաշ-այ աշխարհ , և հիմա կ'ըսուեի Մարտա համանուն գլխաւոր քաղքին

անունովը : Սակայն հիմակուան Մարաշու նա հանգը հին Եփրատացւոց երկրէն շատ աւելի ընդարձակ է , և կը հասնի ինչուան Մալաթիա կամ Մելիտինէ , հին ատենուան Երրորդ հայոց մէկ մասը մէջը բովանդակելով Մելիտինէ ու Սամոսախա քաղաքներուն հետ մէկտեղ : Երկիրը բարեբեր է , գլխաւոր բերքն է բըինձ , ցորեն , բամբակ , և այլն : Ունի երկիրթի հանք Մարաշ քաղքին ու Զէյթունի սահմանները :

Գլխաւոր քաղաքն է Մարտա որ հին ատեն Գերմանի կ'ըսուեր , և ունի բերդ բարձր բլույ վրայ շենած : Մէջը շատ բաղնիքներ և մզկիթներ կան . բնակիչներն են 20,000 , որոնցմէ 600 տուն հայ . գլխաւոր արուեստնին է ներկարարութիւն ու ուտայնանկութիւն :

Այսեաժ կամ Այսեաժ բերդաքաղաք , որոյ բնակիչներն են 40-50,000 . որոնցմէ 10,000ի չափ հայք են : Օդը առողջարար , բայց ստէալ ստէալ երկրաշարժներ կ'ըլլան :

Զէյթունի կամ Զէյթուն քաղաք , բնակիչները բոլոր հայ են՝ կտրիճ և ինքնազլուխ մարդիկ , 1,000 տուննեն աւելի . քաղքին երկու կողմէն ջուր կ'անցնի : Մէջը եօթն եկեղեցի կայ և քովը Աստուածածնայ վանքը , ուր կը նստի եպիսկոպոսը . քովերն ալ երկաթի հանք կայ որ տեղացիք կը բանին :

Ունի գեղ որ Զէյթուննէն վեց ժամ հեռու է , ասոր մէջն է սրբոյն Ստեփանոսի ուլնեցւոյն վանքը , և մատուռ մը որոյ մէջն է իր գերեզմաննը , և մէծ ուխտատեղի է : Ուլնիի մօտ է Ֆըռնառալ աւանը , 600 տուն հայ բնակչօք . ունի վանք մը Ա . Կառուկչան անունով , ուր եպիսկոպոս կը նստի :

## Ա. Ր Ա. Բ Ի Ա.

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Արսեւոց մէջ հին ատենը այլ և այլ բնակիչներ կային վրանաբնակ . Եօթներորդ դարուն մէջ Մէհմէմէտ ասոնց մեծ մասը միացուց, որ զօրաւոր տէրութիւն մը ձևացան ու քիչ ատենի մէջ տարածուեցան իրենց երկրէն ինչուան Սպանիոյ ծայրը . բայց Օսմանցիք բոլորովին վերուցին ասոնց տէրութիւնը : Հիմա Արաբիոյ բնակիչներէն ոմանիք Ֆէլշահ կ'ըսուին, որ երկրագործութիւն կ'ընեն, ոմանիք ալ Պէտէլէ, որ վրանաբնակ ու հովիւ Են :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Արաբիոյ սահմանը հիւսիսէն Ասիոյ Տաճկաստանն է, արևելքէն Պարսից ծոցը, հարաւէն Հնդկաց ովկիանոսը, արևմուտքէն Կարմիր ծովը :

Տարածութիւնն է 800,000 քառակուսի մղոն : Երկիրն ընդհանրապէս գաշտային ու աւագուտն է : Արաբիոյ մէջ Են Երկու անուանի լեռները՝ Սինա ու Քորէբ :

Օդը չոր ու խիստ տաք է, մանաւանդ հիւսիսային կողմը, ուր շատ խորշակ ալ կ'ըլլայ, ու անձրւ խիստ քիչ կուգայ :

Հայոց կա քաշակ ինքը Ա շաման

Հողն անբեր է . բայց Եմեն գաւառը սաստիկ պտղաբեր ըլլալուն՝ Երջակի Արտբիո կ'ըսուի :

Գլխաւոր բերքն է խնկեղեն , ձեթ , շաքարի եղեգ , բամբակ , աղնիւ խահուէ , արմաւ , թուզ , բալասան : Կենդանիներէն ալշատ անուանի է ձին . ունի նաև ուղտ , ջայլամ , կապիկ . Կարմիր ծովուն մէջէն աղեկ բուստ (մէրճան) կ'ելլէ , Պարսից ծոցէն ալ մարգրիտ :

Բնակիչն է 12,000,000 :

Կրօնքը մահմետական :

Երկրին մեծ մասը Օսմանցւոց ձեռքն է . մէկալտեղուանքը այլ և այլ շեխերու և իմամներու ձեռքով կը կառավարուին :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Մեթքէ (60,000) Մէհմէտին ծնած քաղաքն է . Տաճկաց հաճիները հոս կուգան քեապէն տեսնելու :

Մետքնէ (6,000) հոս մեռած է Մէհմէտ , որ Մէքքէէն հոս քաշուեր էր 622ին . անոր համար հիճէլ ըսուած թուականը ան տարիէն կը սկսի :

Մաշատ (60,000) կօմէնի ծոցին վրայ Արաբիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է . ասոր քովերը կապարի հանք կայ :

Ճիտտէ (15,000) Կարմիր ծովուն վրայ Մէքքէի նաւահանդիսար կը սեպուի , և կեղրոն վաճառականութեան Եղիպտոսի , Հնդկաց և Արաբիոյ :

Մոքս (5,000) Կարմիր ծովուն վրայ բանուկ նաւահանդիսատ է , ու Եմէնի խահուէն ասոր անունովը Մոքայի խահուէ ալ կ'ըսուի :

ԱՏԵՆ. Համանուն գաւառի մը գլխաւոր քաղաքն է Եմենի մէջ. Արաբիոյ վաճառաշահ նաւահանգիստներէն մէկն է Հնդկաց ծովուն վրայ: Անգլիացիք հոս հաստատուեցան 1838ին:

Կարմիր ծովուն քովերն է Սինա լեռը, որուն վրայ հոռմի վանք մը կայ՝ սուրբ Կատարինէ ըսուած՝ բերդի նման:

Արաբիոյ ներսի կողմը 60,000 հրեայ կայ վրանաբնակ՝ Ուրիշ՝ Ուետաբայ ըսուած:

---

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

---

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ատենով աշխարհիս ամենէն մէծ թագաւորութիւններէն մէկն էր. եօթներորդ դարուն մէջ Արաբացիք առին, ու իրենց հաւատքը Պարսից սորվեցուցին: Քիչ ատենէն Պարսիկները զօրանալով իրենց երկրին մէկ մասը նորէն ձեռք ձգեցին. իսկ 1747ին բոլոր երկիրը երկու տէրութիւն բաժնուեցաւ. այսինքն Իրան կամ բուն Պարսկաստան, և Աֆղանիստան, որուն մէջ է խորասան ու Պէլուճիստան:

## ԸՆԴՀԱՌՈՒՄ ԳԻՏԵԼԻՔ

Պարսկաստանի սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանը, Կասպից ծովը ու Թուրքաստանն է. արևելքէն Աֆղանիստանը, Խորասան ու Պելուճիստանն ը. հարաւէն Խօմէն ու Պարսից ծոցը. արևմուտքէն Ասիոյ Տաճկաստանը :

Տարածութիւնն է 400,000 քառակուսի մղոն :  
Երկիրը լեռնոտ ու բարեբեր է :

Օդը հիւսիսային կողմը բարեխառն է, իսկ հարաւային կողմը տաք :

Գլխաւոր բերքերն են երկաթ, պղինձ, կապար, մարմարին, նաւթ, ցորեն, բրինձ, գինի, ազնիւս պտուղներ, կտաւ, կանեփ, մետաքս, բամբակ, բուրդ, ծխախոտ, մեկոն, և մարգարիտ : Ձին աշանուանի է, ինչպէս նաև ուղար, ոչխարներն և ուրիշ կենդանիք :

Բնակիչն է 10,000,000, մեծ մասը պարսիկ, մնացածը տաճիկ, քիւրտ, թիւրքմէն, հրեայ, հայ :

Կրօնիքն է մահմետականութիւն՝ Ալիին աղանդը :

Տէրութեան կառավարութիւնն է ազատ միապետական :

## ԳԼԽԱՌՈՒՄ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Դէւրան (80,000) Պարսից շահը հոս կը նստի 1794էն 'ի վեր. ամառուան օդը լիսասակար է :

Գևառուտ (230,000) Կասպից ծովուն մօտ, Պարսկաստանի ամենէն վաճառաշահ ու բազմաբարդ քաղաքն է :

ԱՍՊԱՀԱՆ (60,000) Պարսից առաջին մայրաքաղաքը, արևելքի մեծ ու ազուոր քաղաքներէն մէկն է: Քովս է նոր ջուղան՝ որ հին ջուղայէն քշուած չայերուն բնակած տեղն է:

ՇԱՐԾՁ (52,000) ասոր գինին ու վարդի եղթ շատ ազնիւ է: Աս քաղաքիս մօտ են Ստահը կամ Պերսեպոլիս քաղաքին աւերակները, որ հին ատեն Պարսկաստանի մայրաքաղաքն էր:

ՀԱՄԱՑԱՆ (45,000) հին Եկբատան քաղաքին աեղթ շինած է: մորթի գործարաններ ունի:

ԳԱԶՊԻՆ (40,000) Պարսկաստանի մեծ քաղաքներէն մէկն է, արուեստաները շատ ծաղկած: ազնիւ զինի, պիտատկ (Փըտպէդ), մետաքս ու կարպէտ ունի:

ԵԶՏ (35,000) վաճառաշահ քաղաք է: հոսկրակապաշտ պարսիկներ կան:

ՊԵԿԱՏԷՐԱՎԱՍԻ (20,000) Պարսկային ծոցին վըրայ բանուկ նաւահանգիստ է:

## ԱՖԴԱՆԻՍՏԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Աֆդանսները հին Ազուանիք ազգն են, զորոնիք թաթարները Հայաստանէն հոս քշեր ու առաջկըցուցեր են։ Ասոնիք ատենով Պարսից տակն էին, բայց 1747ին ինքնագլուխ տէրութիւն ունեցան։

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Աֆղանիստանի սահմաննը հիւսիսէն Պարսկաստանն է, արևելքէն Հնդկաստաննը, հարաւէն Հընդկաց ծովը, արևմուտքէն Պարսկային ծոցը։

Տարածութիւնն է 200,000 քառակուսի մղոն։

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, բայց արևելքան կողմը աւաղուտ։

Հողը շատ բարեբեր է, և օդն առողջ։

Բելքն է ամէն տեսակ ցորեն, պտուղ ու կենդանի, ունի նաև առիւծ, վագր, ընձառիւծ, բորենի, գայլ և արջ։ Ունի ոսկի, արծաթ, երկաթ, սնդիկ, կապար, սղինձ և ուրիշ մետաղներու հանիքեր։

Բնակիչն է 10,000,000, աֆղան, պարսիկ, հնդիկ։

Կրօնիքը մահմետական։

## ԳԼԽԸՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՔԵՍՊԻԼ ԿԱՄ ՔԱՊՈՒԼ (80,000) գլխաւոր վահառքն է աղէկ ձի , ցորեն և պտուղ :

ՔԱՏՏԱՀԱՐ (100,000) ամուր բերդով բոլոր երկրին հին մայրաքաղաքն ու առուտուրի տեղն է :

ՀԵՐԱԴ (100,000) Խորասանի ամենէն մեծ քաղաքն է :

## ՊԵԼՈՒԾԻՍՏԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԵԼՈՒԾԻՍՏԱՆ հարիւր տարի առաջ Պարսից հնազանգեցաւ , բայց ետքը ինքնագլուխ եղաւ : Անգլիացիք պատերազմով առին մայրաքաղաքը յամին 1839 և բնիկ կառավարիչ մը նստեցուցին ու ետ քաշուեցան :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼՎԻՔ

ՊԵԼՈՒԾԻՍՏԱՆԻ սահմանը հիւսիսէն Աֆղանիստանն է , արևելքէն Հնդկաստանը , հարաւէն Պարսից ծոցը ու արևմուտքէն Պարսկաստանը : Տարածութիւնն է 180,000 քառակուսի մղոն :

Երկիրը լեռնոտ է, բայց ընդարձակ աւազուտ անապատներ ալ ունի :

Հողն այնչափ բարեբեր չէ, բայց աշխատանքով տեսակ տեսակ ցորեններ կը հասցունէ :

Վայրի կենդանիները շատ են, ինչպէս վագր, ընձառիւծ, բորենի և գայլ :

Բնակիչն է 2,000,000 • կը օնքը մահմետական :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ.

ՔԵԼՉԻ (20,000) մայրաքաղաքն է, և ամուր բերդեր ունի :

ԿՈՒՆՏԱՎԱ (17,000) կառավարիչը ձմեռն հոս կը նստի :

Կան նաև Սարաւան, Վէճ և Պէլա :

---

### ԹՈՒՐՔԱՍՏԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Թուրքաստանու մէջ ատենով այլ և այլ ազատ ցեղեր կը տիրէին. ասոնցմէ ելան ատեն ատեն Օսմանցիք, Հոնիք, Թաթարները, և Լէնկիթիմուրը՝ որ մէկդիէն ինչուան Զինու սպարիսովը, մէկալ դիէն ինչուան Միջերկրական ծովը տիրեց : Հիմակուան

բնակիչներն են Խւզալէք, Պուխարացի, Թիւրքմէն  
և Խըրղըզ :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Թուրքաստանի սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանն է, արևելքէն Չինու երկիրը, հարաւէն Պարսկաստանը, արևմուտքէն Կասպից ծովը :

Տարածութիւնն է 500,000 քառակուսի մղոն :

Թուրքաստանը չորս գլխաւոր մաս կը բաժնուի .  
Խըրղըզ, Խիվա, Պուխարա, Խոքանտ :

Երկիրը արևելքան կողմը լեռնոտ ու խիստ բարեբեր է, բայց քիչ մշակած . միւս կողմերը ընդհաննրապէս դաշտային և աւազուտ են . աղի լճեր աւ շատ ունի :

Օդը բարեխառն ու առողջարար է :

Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, յակինթ, մետաքս ու բամբակն ալ աղնիւ է :

Բնակիչն է 7,000,000 :

Կրօնքը մահմետական :

Կառավարութիւնը չորս գլխաւոր ազատ խաներու ձեռքն է :

### ԳԼԽԱԿՈՒՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Պուխար (100,000) հին ու վաճառաշահ և Թուրքաստանին ամենէն ծաղկած քաղաքն է . շատ դպրոցներ ունի մահմետականներուն համար :

ՍՄԸՐՂԱՆ (10,000) վաճառաշահ քաղաք է . 1էնկթիմուրն իր աթոռը հօս գրեր էր, և ինչուան հիմա մէջը իր գերեզմանը կայ յասալիս քարե :

ԽՍԴՎԸ (20,000) ասիկայ գերիներու վաճառք  
ունի :

ԽՈՔԱՆՏ (100,000) վաճառաշահ ու արուեստ-  
ները ծաղկած քաղաք է :

ԲԱՀԻ կամ ՊԱԼԻ (2,000) հին ատենը բակ-  
տրիոյ թագաւորութեան մայրաքաղաքն էր, ուս-  
տի Ասիոյ ամենէն հին քաղաքներէն մէկն է :

## Հ Ն Գ Կ Ա Ս Ա Ն

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆ Աշջ հին ատենը այլ և այլ ինք-  
նագլուխ տէրութիւններ կային . 1100ին ատեն-  
ները Աֆղանները տիրեցին հիւսիսային կողմե-  
րուն, Ետքը Լէնկիթիմուրը՝ ասոր թոռներէն մէկը  
1526ին Մողոլի տէրութիւնը հաստատեց հոն .  
Բայց 1739ին Պարսից Նատըր շահը գնաց մէկ մա-  
սին տիրեց : Անկեց Ետքը Երբոր Մողոլներն ու  
Մահրադները իրարու դէմ կռուըտելու հետ էին,  
Եւրոպացիք սկսան աեղ տեղ ոտքերնին հաստա-  
տել : Խոկ 1700ին վերջերը անգլիացի վաճառա-  
կաններն սկսան հնդկաստանին կալկադա ու Մա-  
տրաս քաղաքներուն տիրել . 1803ին Մողոլի տէ-  
րութիւնը ջնջեցին, Մահրադները նուաճեցին .  
1821ին ալ գրեթէ բոլոր արևելեան հնդկաստանի

աիրեցին : Անոր համար աս ընկերութիւնն որ  
Հայուսագունի ընէբունիւն կ'ըսուեր, ինչուան մօտ  
տարիներս ինքնագլուխ հասարակապետութեան  
պէս կը աիրեր հոն անբաւ հարստութեամբ . միայն  
հարկատու էր Անգղիոյ թագաւորին, ու երբեմն  
երբեմն համար կու տար երկրին կառավարութեա-  
նը վրայ : Բայց վերջերս այս ընկերութեան իշխա-  
նութիւնն անցաւ բոլորովին Անգղիոյ թագաւորին :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հնդկաստանի սահմանը հիւսիսէն Չինու եր-  
կիրն է, արևելքէն Չինու ծովը, հարաւէն Հընդ-  
կաց ովկիանոսը, արևմուտքէն Աֆղանիստանը :

Տարածութիւնն է գրեթէ 1,000,000 քառա-  
կուսի մղոն :

Հնդկաստան երկու գլխաւոր մաս կը բաժնուի .  
մէյմը բուն Հնդկաստան կամ Գանդէսէն ասդիս  
եղած երկիրները, մէյմըն ալ Հնդկա-Չին կամ  
Գանգէսէն անդին եղածները :

Գլխաւոր լեռներն են Հիմալայա ըսուած բարձր  
դօսիները, որոնց վրայ Գամալարի և Տավալակիրի՝  
աշխարհիս վրայ ամենէն բարձր լեռներն են, որոց  
առաջինը՝ ծովուն երեսէն 9,000 մէտր բարձր է,  
իսկ երկրորդը 8,600 մէտր . Կադ լեռները՝ որ ին-  
չուան Գոմորին կ'երթան, և Մոկ լեռները որ ին-  
չուան Մալագդային ծայրը կը հասնին :

Գլխաւոր գետերն են Խնդոս, Գանգէս և Պրահ-  
մարուդրա :

Հողն ընդհանրապէս խիստ բարեբեր է :

Օդը չոր ու ասք . Ճիւն գրեթէ ոչ երթէք կու-

գայ, անձրևներն ալ կանոնաւոր ժամանակ ունին, որ ամիսներով կու գան:

Գլխաւոր բերքերն են առատ ոսկի և աղամանդ կողգոնտ գաւառին ու Պիրմանի տէրութեան մէջ. Սէյլան կղզին քովերէն ազնիւ մարդարիտ կ'ելլէ. Մալտիվեան կղզիներուն քովերէն ալ տեսակ մը ոստրէ կ'ելլէ որ Հնդկաստանցիք ստակի տեղ կը բանեցընեն: Բոյսերուն մէջ գլխաւորներն են բըրինձ, պանան, շաքար, խնկեղէն, ափիոն, ազնիւ բամբակ ու մետաքս, արմաւ, պամապու ըսուած եղէզը, թուզ և ազնիւ փայտ: Կենդանիներէն ալ շատ կը գտնւին ուղտ, վայրի այծ, փիղ, ուղեղջիւր, վագր, առիւծ, սկօտ օծ, կապիկ, սիրամարդ և դրախտահաւ:

Բնակիչն է 200,000,000, մէծ մասը Հնդիկ, մնացածը պարսիկ, հրեայ, հայ ու եւրոպացի աղգեր:

Լեզունին Հնդկերէն է, որուն գրաբառը սանսկրիտ կ'ըսուի, իսկ աշխարհաբառը շատ տեսակ կը բաժնուի:

Արուեստներն ու ձեռագործները շատ ծաղկած են:

Կրօնքը կուալաշտութիւն է՝ Պրահմայի աղանդը. Հոգեփոխութեան հը հաւատն, անոր համար կենդանեաց պատիւ կ'ընեն, ու անոնց միաը չեն ուտեր. մասնաւոր կերպով կով կը պաշտեն իրենց ժակարտ ըսուած կատառներուն մէջ:

## ՀՆԴԿԱՍՏԱՆ ԳԱՆԳԻՍԻՆ ԱՄԴԻՄ

Գանգէսին ասդիս եղած Երկիրները չորս կտոր  
կը բաժնեւին . Անդղիացւոց հնդկաստան , Անդ-  
ղիացւոց հարկատու Երկիրներ , Ազատ հնդկաց  
Երկիրներ , ու Եւրոպայի այլ և այլ ազգաց աե-  
լուանք :

## ԱՆԴՎԱՑԻՈՑ ՀՆԴԿԱՍՏԱՆ

**ԿԱՏԿԱԴԱ (1,000,000) ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՄԵՆՔՆ**  
ծաղկած քաղաքն է՝ թէ գիտութեան և թէ ա-  
րուեստից կողմանէ : Անդղիական կառավարութե-  
ղուիսը հոս կը նստի . մեր ազգէն ալ չափաւոր  
բազմութիւն կայ հոս , ու եկեղեցի մըն ալ ունին :

**ՏԵԼԵՒ (200,000) ՄՈՂՈԼԻ ԹԱԳԱԵՐՈՒԹԵԱՆ**  
մայրաքաղաքն էր :

**ԱԿՐԱ (100,000) ատենով զարդարուն քաղաք**  
էր , բայց հիմա երեսէ ձգուած է :

**ՊԵՆՍՐԻՍ (600,000) Գանգէսին վրայ հնդկաս-**  
տանցւոց ուսումնարանն ու մեծ ուխտատեղին է :

**ՄՈՒՐՃԻՑՑՊԱՏ (146,000) շատ վաճառաշահ**  
քաղաք է :

**ՏԱՐՔԱ (200,000) Գանգէսին վրայ ծաղկած**  
քաղաք է :

**ՔԱԴՐԱՔ (40,000) աս քաղաքիս մօտ է Ճ'ակըռ-**  
նադ կուռքին մեծ կռատունը :

**ԳԱԼԻԳՈՒԴ (24,000) Եւրոպացիք հնդկաստա-  
նին մէջ առաջ աս քաղաքս ունեցան :**

**ՄԱՏՐԱՍ (502,000) ՊԵՆԿԱԾԱՅԻ ծոցին վրայ շատ**

վաճառաշահ քաղաք է . բամբակի ու ապակիի գործարաններ ունի . մեր ազգէն ալ երևելի վաճառականներ ու ժողովուրդ կայ հոս , ինչպէս նաև Հնդկաստանի ուրիշ քաղաքները :

Աէրհանգստան (32,000) ատենով Հնդկաստանցւոց մեծ ցեղի մը մայրաքաղաքն էր :

Պուրա (253,000) պղտի կղզիի մը մէջ Անդղիացւոց վաճառականութեանը գլխաւոր քաղաքն է . հոս կրակապաշտ Պարսիկներ կան որ մեծ կրակատուն ալ ունին :

ԱՇՄԻՐ (25,000) ամուր քաղաք է . բնակիչները երկրագործութենէն զատ ուրիշ արօւեստ չեն գիտեր :

ԳԱՄՊԱՑ (30,000) վաճառաշահ քաղաք է , բայց նաւահանգիստը շատ վտանգաւոր՝ ծանծաղուտ ըլլալուն համար :

ԱՀՄԵՏԱՊԱՏ (100,000) ատենով ծաղկած էր , հիմա կէսն աւերակ է :

ՍՈՒՐԱԴ (160,000) ամուր քաղաք է , և բանուկ ու վաճառաշահ նաւահանգիստ ունի :

ԲՈՒԽ (150,000) Հնդկաստանցւոց թագաւորութեան ետքի մայրաքաղաքն էր :

ԱԷՅԼԱՆ (1,500,000) կղզին ալ Անդղիացւոց ձեռքն է . գլխաւոր քաղաքն է Գոլոմաղ (40,000) :

## ԱՆԴՀԱՍՑԻՈՑ ՀԱՐԿԱՏՈՒ

### ԵՐԿԻՄՆԵՐ

ԼՈՒՔՆՈՎ (300,000) Մողոլի տէրութեան վեցցուելէն եսպէ՝ Հնդկաստանին ծաղկած քաղաքն աս է :

ՈՒՃԵՆ (160,000) ուխտատեղի է Հնդկաց՝ բազմաթիւ բակոսներուն համար :

ՀԱՅՏԻՐՍՊԱՏ (200,000) մեծ ու անուանի քաղաք է :

ԿՈՂԳՈՆՏ • ամրոց և երբեմն մայրաքաղաք համանուն տէրութեան • ադամանդի մեծ վաճառականութիւն ունի :

ԱԿԻՐԵՆԿԱԾՊԱՏ (60,000) մեծ քաղաք է, բայց կէսը աւերակ :

ՊԵՆՃԱԲՈՒՐ • երբեմն անուանի քաղաք էր միշլոն մը բնակչօք, հիմա կիսաւեր է :

ՄԱՑՍՈՒՐ (50,000) համանուն տէրութեան մայրաքաղաքն է :

ԳՈՉԻՆ (30,000) Մալապարի ափանցը վրայ նաւահանդիստ է :

ԿԱՎԲՈՒՐ (115,000) ասոնք ալ մէյմէկ թագաւորութիւններու մայրաքաղաքներ են :

ՊԱՐՈՏԱ (100,000) ւորութիւններու մայրաքաղաքաբներ հոն :

ԼԱԴԵՏՎԱՎԵՏԱՆ կղզիներն ալ Անգղիացւոց պաշտամանութեան տակն են, թէպէտ և տեղացի իշխան մը կը տիրե հոն :

## ԱՌԱՏ ՀՆԴԿԱՑ ԵՐԿԻՐՆԵՐ

ԼԵԶՈՐ (100,000) ատենով շատ անուանի էր • ասոր ոչխարիներուն բուրդը բարակ ու աղնիւ է :

Յամին 1849 Անգղիացւոց ձեռքն անցաւ :

ՓԷՇԱՎԱՐ (70,000) ունի գործարան բամբակի, մետաքսի և պալատ արքունի :

ԱՄՐԵԳՈՒՐ (100,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է :

ՄՈՒՆԴԱՆ (60,000) արուեստից կողմանէ ծաղկած . անուանի է մահմետական ուսումնարանը :

ՔԱԴՄԱՆՏՈՒ (20,000) ՆԵՐԱԼԻ Ծագաւորութեան մայրաքաղաքն է . շատ կռատուններ կան մէջը :

ԿԱՇՄԻՐ (150,000) Խիստ անուանի է ազնիւ շալերուն համար :

ՄԱԼՏԻՎԵՆ (կղզիները . որ հազարաւոր մանր ժայռերէ ձևացած են . ասոնց մէջ 40 կամ 50 մը կայ որ աւելի մեծ են , բարեբեր ու բազմամարդ , և մէկ Ծագաւոր մը ունին՝ որ Մալէ կղզին կը նստի :

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱԶԳԵՐՈՒՆ

### ՏԵՂՈՒԱՆՔԸ

ԲՈՆԴԻՉԵՐԻ (25,000) ԴԳԱՂՂԻԱԳԵՍԸ ՃԵռՔԸ՝

ՉԱՆՏԵՐՆԱԿՈՐ (30,000) ԵՐԿՈՒՔԻ աԼ ՎԼԱՋԱ-  
ՌԱՇԱՀ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՆ :

ԿՈՆ (30000) ԲՈՐԴՈՎԳԵՂՆԵՐՈՒՆ ՃԵռՔԸ՝ ամուր  
քաղաք է , և ապահով ու բանուկ նաւահանգիստ  
ունի :

### ՀՆԴԿԱՍՏԱՆ ԳԱՆԳԻՍԿԻՆ ԱՆԴԻՆ

Գանգէսէն անդին եղած երկիրը վեց մաս կը  
բաժնուի . Պիրման , Սիամ , Մալազգա , Աննամ ,  
Անգղիացւոց երկիրները , և կղզիները : Առ Ծա-  
գաւորութիւնները գրեթէ ամէնն ալ աղատ միա-  
պետական են ու կռապաշտ : Թէպէտ և վերջերս  
առաքելաջան քարողիչներու աշխատանքովը քրիս-

տոնէութիւնը բաւական մտած է այս երկիրներուն մէջ :

### Պ Ե Ր Մ Ա Ն

Պիրմանի տէրութիւնը առաջուց Բէկու թագաւորութեան տակն էր, բայց հիմա ազատ է : Ասոր բնակիչները շատ պատիւ կ'ընեն ճերմակ փղի մը, որ թագաւորին պալատին քովը մեծ պալատ մը ունի . կ'ըսեն թէ իրենց թագաւորին հոգին ան փղին փորը պիտի մտնէ : Վերջերս Անդպացիք այս երկիրը կոխեցին և բոլոր հարաւային մասին տիրեցին :

Պիրմանի բնակչաց [թիւն է 4,000,000 : Ահա (40,000) մայրաքաղաքն է : ԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ | Աւային այնչափ մօտ են առ ՍԱՑԿԱՆ | Երկու մեծամեծ քաղաքներն որ անոր մասը կընան սեպուիլ :

ԲէԿՈՒ . ատենով զատ թագաւորութիւն էր . անուանի է ասոր բրդաձև կուատունը 300 ոտնաչափ բարձր : Այս քաղաքն Անդպացւոց ձեռքն է :

Իշակուն (20,000) մեծ առուտուր ունի և շատ նաւեր կ'երթան հոն : Այս քաղաքն ալ հիմա Անդպացւոց ձեռքն է :

Սիամի թագաւորութիւնը ատենով պղտիկ էր : բայց հիմա խիստ ընդարձակ է :

Բնակիչն է 6,000,000 :

ՊԵԱՆՔՈՒԹ (400,000) Սիամի մայրաքաղաքն է .  
աս քաղաքիս բնակիչներուն մեծ մասը Զինացի  
են . բոլոր շինքերուն մեջ անուանի է մեծ կռա-  
տունը , ուր 1,500 կռւոք կայ :

ԱՅՈՒԹԻԵՍ (30,000) ՄԷՆԱՄ կղզւոյն վրայ հին  
մայրաքաղաքն է . բազմաթիւ բուրգեր , տաճար-  
ներ և մեծագործ շինուածներ ունի :

### ՄԱԼԱԳԻԱ

Աս թերակղզւոյն (1,000,000) արևելակողմը հի-  
մա Սիամի տէրութեան ձեռքն անցած է . հարա-  
ւակողման մասին բնակիչները վայրենի ու թափա-  
ռական մարդիկ են , որ այլ և այլ իշխաններ ու-  
նին իրարմէ ազատ . իսկ հիւսիսային կողմը Անգ-  
ղիացւոց ձեռքն է , ինչպէս նաև ՄԱԼԱԳԻԱ (60,000) քաղաքը :

### ԱՆՆԱՄ

Աննամին բնակիչները (12,000,000) Զինաց լե-  
զուն և աղանդն ունին , և շատը գետերու վրայ կը  
բնակին նաւակիներով :

Կը բովանդակէ երեք զատ երկիրներ ու չորրոր-  
դի մըն ալ մէկ մասը . այսինքն Դոնկըին , Գոչին-  
չին , Զամբա ու Գամպոճայի մէկ կտորը :

ՀՈՒԵ (100,000) գլխաւոր քաղաքն է , իստ  
ամուր ու վաճառաշահ :

ՔԱՉԱԽ (80,000) }  
ՄԱՑԻՈՆ (180,000) } մեծ մեծ քաղաքներ են :

ԳԱՄՊՈՃ (40,000) արքունի պալատ և մեծ  
հեաններ ունի :

### ԱՆԳԼԻԱՑԻՈՑ ԵՐԿԻՐՆԵՐԸ

ԱՆԳԼԻԱՑԵՈց ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ԲՆԱԿԻՄՆԵՐԻՆ ՈՄԱՆՔ  
ԻՆՔՆԱԳԼՈՒԽԻ ԵՆ, ՈՄԱՆՔ ՀԱՐԿԱՍՈՒ :

ԱՐԱԳԱՆ (100,000) ԵՍԻՍԱ ՎԱՃԱՌԱՇԱՀՔԱ-

ԱԽԱՎԲՈՒՐ (24,000) ԵՎԱՔՆԵՐ ԵՆ :

### ԿՂՋԻՆԵՐԸ

ԳԹԱՆԳԵԱՅՆ անգին Եղած կղզիներն են ԱՆՏԱՄԱՆ  
և ՆԻԳՈՊԱՐ կղզիները : Առող բնակիչները քե-  
չուոր ու ինքնագլուխ են :

## Զ Ի Ւ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՀԽՍՐՀԴԱՅ առաջին ծաղկած տէրութիւններուն մէկն է Չինը. բայց Չինացիք ուրիշ ամէն աղջերէն զատուած կենալնուն համար՝ արուեստի ու գիտութեան մէջ շատ առաջ գնացած չեն:

Թաթարներուն յարձակմունքէն ազատ մնալու համար՝ իրենց երկրին հիւսիսային կողմը 1,100 մղոն երկայնութեամբ պատ մը քաշած են. բայց Էօթնետասներորդ գարուն մէջ՝ Մանչու թաթարները տիրեցին Չիներուն, և հիմակուան Չինութագաւորը անոնց ցեղէն է:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Չինու սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանն է, արևելքէն Մեծ ովկիանոսը, հարաւէն Հնդկաստանը, արևմուտքէն Թուրքաստանը:

Տարածութիւնն է 4,000,000 քառակուսի մղոն:

Տէրութիւնը հինգ գլխաւոր մաս կը բաժնուի. բուն Չին, Չինու թաթարստան, Գորէա, Չինաց հարկատու երկիրներ ու Կղզիները:

Երկիրն ընդհանրապէս դաշտային ու աղէկ մշակած է. բայց արևմտեան ու հիւսիսային կողմերը լեռնոտ են:

Օդը բարեխառն, տեղ տեղ ալ շատ տաք է :

Հողը խիստ բարեթեր է :

Գլխաւոր բերքն է չայ, քափուր, մետաքս, բամբակ, վէրնիճ, յախճապակ, մուշկ, այծու բուրդ, և թանաք : Եերամի որդը և ոսկեգոյն կարմրախայտ ձուկը Չինէն Եւրոպա եկած են :

Եւրոպացիք ընդհանրապէս Գանդոնէն ներս չեին կրնար երթալ վաճառականութեան համար . միայն Անգղիացիք 1842ին Չինու տէրութեան հետ դաշնադրութիւն ընելով հրաման առին որ աս հինգ քաղաքներուս մէջ կարենան վաճառականութիւն ընել, Գանդոն, Սուչէու, Հիամէն, Կինկըօ, և Չանկհաւ : Բայց 1860ին յաղթութեամբ Գաղղիացւոց և Անգղիացւոց՝ Չինու նաւահանգիստ ները բացուեցան Եւրոպացւոց վաճառականութեանը :

Բնակիքն է 415,000,000, որով աշխարհիս մէջ ամենէն բազմամարդ տէրութիւնն է :

Կրօնքը կռապաշտութիւն, բայց կարդացողներն ու մեծերը կոնֆուկիոսի աղանդին կը հետեին, հասարակ ժողովուրդը Ֆոյի աղանդին : Միլիոնէն աւելի հրէայ կայ տէրութեան մէջ՝ հին ատենէ մտած . քանի մը հազար ալ կաթովիկէ քրիստոնէայ՝ որ գրեթէ միշտ հալածանքի մէջ էին առաջ, բայց հիմա կրօնից աղատութիւն կայ :

Զօրքն է 1,500,000. նաւատորմիզը 826 կտոր նաւ :

Կառավարութիւնն է աղատ միապետութիւն . իշխանները Մանդալին կ'ըսուին :

ԳԼԽԱԿԻՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԲԵՐԻՆ (2,000,000) աշխարհիս ամենէն մեծ քաղաքը կը սեպուի, ու երկու կտոր կը բաժնուի. մէկուն մէջ Թաթարները կը բնակին, մէկալին մէջ Չիները. մեծագործ է թագաւորական պալատը՝ որ գրեթէ վեց մղոն շրջապատ ունի: Շատ հսկայածե կռատուններ կան մէջը, կաթողիկէ մայր եկեղեցի մը, Ռուսաց վանք մը և եկեղեցի մը:

ԳՄԱՆԴՈՆ (400,000) Եւրոպացի վաճառականներն աս քաղաքս կրնան գալ. ասոր մեծ վաճառքը չայ է:

ՆԱԽԱՐԻՆ կամ ՔԵՍԱՆԻՆ (800,000) ինչուան 1421 ասիկայ էր Չինու մայրաքաղաքը. անուանի է ասոր աշտարակն ինը յարկով ու 200 ոտք բարձրութեամբ, որ վերէն'ի վար յախճապակով դարդարուած է:

ՄԱՔՍԱՈՑ (33,000) աս քաղաքիս մեծ մասը Բորդուգէզներուն ձեռքն է:

ԼԱՍՍԱ (80,000) Դիպէդի գլխաւոր քաղաքն է. ասոր մօտ կը բնակի Ֆոյի կրօնքին գլխաւորն որ Տալայի լամա կ'ըսուի:

ՍՈՒՉԻՈՒ (600,000) արուեստի ու վաճառականութեան կողմանէ ծաղկած քաղաք է. շատ ուսումնական մարդիկ ալ կը բնակին մէջը:

ՀԻԱՄԷՆ կամ ԷՄՈՒՑ (250,000) շատ վաճառաշահ ու բանուկ նաւահանգիստ ունի:

ՆԻԿԱՐՈ (300,000) աս քաղաքը միայն արտօնութիւն ունի Ճարոնի հետ վաճառականութիւն ընելու:

Հանգւեստ (700,000) հարաւային Չինու գլխաւոր քաղաքն է :

Չանչաւ (500,000) ասոր նաւահանդիսալ՝ տարին 20,000 նաւ կը մտնէ կ'ըսեն :

Կանչան (300,000) ասոր մեծ վաճառքն է յախճապակ՝ որ մօտերը կը շնուրի :

Գորէսն բազմամարդ երկիր մըն է՝ որ ութը գաւառ կը բաժնուի. բայց Եւրոպացիք խիստ քիչ տեղեկութիւն ունին վրան :

Հոնկառն (30,000) կղղեակ Գանդոն գետին բերանը, կալուած Անգղիացւոց 1842էն ետև : Գլխաւոր քաղաքն է Վիկառրիա (13,000) :

Չինու կղղիներուն մէջ անուանիներն են Հանսն, ՖորՄօջն ու ԲէՍԳաՏՈՐէս :

## Ճ Ա. Բ Ո Ւ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ճարուն երկիրը թէպէտ երեքտասաներորդ դարուն մէջ սկսաւ ծանօթ ըլլալ Եւրոպացւոց, բայց վրան աւելի տեղեկութիւն առնողներն եղան Բորդուգէղները 1542ին: Ճաբոնները Չիներուն մէկ ցեղը կը սեպուին, բայց հիմա անոնցմէ աւելի ծաղկած են թէ արուեստի և թէ պատե-

բաղմի մէջ։ Տէրութեան մէջ օտար ազգէ մարդ չէր կրնար մտնել։ Երկրցիք ալ իրենց տէրութենէն դուրս չէին կրնար ելլել, չէ նէ պատիժնին մահ էր։ Կը յուսացուի որ ասկէ ետքը ուրիշ ազգաց հետ բարեկամութիւն ունենան։

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ճարոնի տէրութիւնը աս չորս գլխաւոր կղզին ներէս ձևացած է։ Նիֆոն, Սիլոքֆ, Քիուսիու և Եսոյ։ Ասոնց չորս դին պատած է Արևելեան ովկիանոսը, որ մեծ թաթարստանին արևելեան կողմն է։

Տարածութիւնն է 180,000 քառակուսի մղոն։ Երկիրը լեռնոտ է, և շատ հրաբուխներ ունի. անոր համար գետնաշարժ ալ շատ կ'ըլլայ հոն։

Հողը բարեբեր ու աղէկ մշակած է։

Գլխաւոր բերքերն են ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, աղնիւ քարեր, քափուր, չայ, բամբակ, մետաքս և յախճապակ։

Բնակիչը 40,000,000, ամէնքը կռապաշտ։

Կառավարութիւնն երկու հոգւոյ ձեռք է. մէկը Տայիրի կ'ըսուի, որ հաւատոյ բաներուն կը խառնուի. մէկամը Վուդայ, որ տէրութիւնը կը կառավարէ։

### ԳԼԽԱՆՈՐ ԳԱՂԱՔՆԵՐԸ

Ետու (1,500,000) Ասիոյ մեծ ու աղուոր քաղաքներէն մէկն է. հոս կը նստի իրենց Քուսպոյ կոտմ Սէմիոն թագաւորը։

ՕՍՏԱՔԱ. Վաճառաշահ նաւահանգիստ ունի :

ՄԻԱԳՈՑ (600,000) ուսման կողմանէ Ճարոնին ամենէն ծաղկած քաղաքն է . ընդարձակ գործարաններ ունի յախճապակի , և ոսկւով, մետաքսով ու արծաթով հիւսուած ձեռագործներ : Տայիրին հոս կը նստի :

ԿԱՆԿԱՍԱՔԻ (50,000) ԵՐԿԱՐ ատեն օտար աղգերն աս քաղաքս միայն կընային մտնել վաճառականութեան համար :

ՄԻՄՈՏԱ. օտարաց բաց երեք նաւահանգիստներն մէկն է :

ՉԱՔՈՏԱՏ. օտարաց բաց երեք նաւահանգիստներն երրորդն է :

ՄԱՑՄԱՑ (50,000) Եայ կղզեին ծայրը վաճառաշահ քաղաք է :

ԼԱՌԻՔԻՈՒ կղզիներն ալ Ճարոնի մաս կը սեպուին , բայց առանձին թագաւոր մը ունին Չենու և Ճարոնի հարկատու :



# ԱՓՐԻԿԵ

—♦♦—

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

ԱՓրիկեան սահմանը հիւսիսէն Միջերկրական ծովն է, արևելքէն Կարմիր ծովն ու Հնդկաց ովկիանոսը, հարաւէն Հարաւային ովկիանոսը, արևմուտքէն Ատլանտեան ովկիանոսը։ Տարածութիւնն է 8,500,000 քառակուսի մղոն։

### ԲԱԺԱՆՈՒՄՆ

Ափրիկէն տասնուինը աշխարհք կը բաժնուի։ ասոնցմէ երեքը հիւսիսային կողմն են, եօթը մէջտեղուանքը, ինը հարաւային կողմը։

Հիւսիսայիններն ասոնք են։ Եգիպտոս, Պէրպէրիստան, Սահրա։

Միջններն ասոնք են։ Սենեկամղիա, հիւսիսային կուինէա, Նիկրիտիա, Կուապիա, Եթովպիա, Ատէլ, Այան։

Հարաւայիններն ասոնք են։ Հարաւային կուինէա, Օդգենդացւոց երկերը, Գլուխ Բարեյուսոյ,

Քաֆրաստան, Մոնոմոդաբա, Մողամլիք, Զան-  
կեպար, Անծանօթ երկիր, և Մատակասգար կըզ-  
ղին :

### ԾԱՎ

Չորս սահմանակից ծով ունի Ափրիկէն. Մի-  
շերկրական ծովը, Ատլանտիան ովկիանոսը, Մհծ  
ովկիանոսը և Հնդկաց ծովը :

### ԾԱՅ

Ափրիկէի գլխաւոր ծոցերն ասոնք են.

Կուբինէայի ծոց՝ Ատլանտիան ովկիանոսին մէջ.  
Արաբիոյ ծոց կամ Կարմիր ծով Հնդկաց ծովուն  
մէջ.

Միրդ և Գագէս՝ Միջերկրական ծովուն մէջ:

### ԿԴՋԻ

Ափրիկէի գլխաւոր կղզիներն ասոնք են.

Ասորեան կղզիները, Մատէրա կղզին, Գանարեան  
կղզիները, Դալարի գլխոյ կղզիները, Կուբ-  
ինէայի ծոցին կղզիները, Սուրբ Մատթէոս,  
Սուրբ Համբարձումն, Սուրբ Հեղինէ՝ Ատ-  
լանտիան ովկիանոսին մէջ :

Մատակասգար, Սոգոգորա, Զանզիպար, Աէյ-  
չել, Գոմորեան կղզիները, և Մասգարենեան  
կղզիները, որոնցմէ գլխաւորներն են Պուրպօն  
կղզին, Գաղղիոյ կամ Մաւրիտիոս կղզին, և  
Ռոստրիկ կղզին՝ Հնդկաց ծովուն մէջ :

ՀՐՈՒՏԱՆԴԱՆ

Ափրիկէի գլխաւոր հրուտանդաններն են.

Պոն, Սեւգա՝ Պէրպէրիստանի մէջ.

Պլանգոյ կամ Սպիտակ՝ Սահրայի մէջ.

Դաշարի կամ Կանաչ գլուխ, Սուրբ Մարիամ,  
Կարմիր գլուխ՝ Սենեկամպիոյ մէջ.

Բալմա, Երից ծագաց գլուխ՝ հիւսիսային կուի-  
նէայի մէջ:

Լոբէզ, Նեկրոյ՝ հարաւային կուինէայի մէջ.

Գլուխ Բարեյուսոյ, Ակուհաս՝ Քաֆրաստանի  
մէջ.

Տելքատոյ՝ Մողամպիքի հիւսիսային դին.

Կարտաֆուի՝ Առէլի արևելեան դին.

Նադալ Մատակասգարի հիւսիսային դին:

Լ Ե Ռ

Լեռներու հինգ գլխաւոր գօտի կայ Ափրիկէի  
մէջ.

Առլաս՝ Պէրպէրիստանի մէջ.

Քոնկ՝ Նիկրիտիոյ ու կուինէայի մէջ.

Լուսնի լեռները՝ Եթովպիոյ հարաւային կողմը.

Լուբադա լեռները՝ Ափրիկէի հարաւային կողմը.

Մատակասգար՝ համանուն կղզին մէջ:

Լ Ի Ճ

Ափրիկէի գլխաւոր լիճերն ասոնք են.

Չատ՝ Նիկրիտիոյ մէջ.

Տեմպէա՝ Եթովպիոյ մէջ .

Նիանզա կամ Վիկտորիա՝ Հասարակածին տակը :

ԳԵՏ

Ափրիկէի գլխաւոր գետերն ասոնք են .

Նեղոս՝ որ կը թափի Միջերկրական ծովը .

Սենեկալ, Կամպիա, Կիկէր, Զայիրէ, Օրանժ՝

Առանտեան ովկիանոսը .

Զամպէզ՝ Հնդկաց ծովը :

ՕԴ, ՀՈՂ, ԲԵՐՔ

Ափրիկէն այրեցած գօտիին տակն ըլլալուն համար սաստիկ տաք է . մէծ մաօք երկու եղանակ ունի՝ մէկը չոր, մէկան անձրևային, վասն զի վեց ամիս դրեթէ միակերպ անձրե կու դայ :

Երկիրը դաշտային է, և շատ տեղ մէծամեծ աւազուտ անապատներ կան : Հողն ընդհանրապէս անբեր է, բայց գեաերուն քովերը քիչ մը պաղաբեր են . աւազի անապատներուն մէջ ալ տեղ տեղ կղզիի պէս երկիրներ կան Ոտոկո ըսուած՝ որ շատ բարեբեր են :

Գլխաւոր բերքերն են արմաւ, թուզ, ժանաւ, թուզ, քոքօ, կասիա, խէժ, խնկեղէն, պաօպատ ծառը՝ որ աշխարհիս մէջ ամենէն խոշոր ծառն է, և ուրիշ աղնիւ փայտեր . տեղ տեղ ալ կը դանուի բրինձ, շաքար, պղպեղ, բամբակ, կտաւ, լեղակ, ոսկի, արծաթ, երկաթ ու քարեր :

Բարեյուսոյ դլխոյն դինին խիստ աղնիւ է :

Կենդանիներուն մէջ գլխաւորներն են տռիւծ,

վագր, ինձ, յովազ, բորենի, ոնգեղջիւր, գոմէշ,  
փիղ, ընձուղա, վայրի էշ, կոկորդիլոս, ձիագե-  
տի, տեսակ տեսակ կապիկներ, մեծամեծ օձեր,  
ջայլամ, թութակ և կռունկ :

ԲՆԱԿԻՉ, ԿՐՈՆՔ, ԳԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ,  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ափրիկէի բնակիչն է 140,000,000, գոյներնին  
ու, բնութեամբ ընդհանրապէս պակասամիտ,  
տգէտ ու վայրենի :

Կրօնքը՝ Եգիսկտոսին, Պէրպէրիստանին ու Կու-  
պիայի մէջ մահմետական է, Եթովլիայինը քրիս-  
տոնեայ, իսկ մէկալ տեղերունը կռապաշտ :

Քաղաքականութեան կողմանէ Ափրիկէի մեծ  
մասը բարբարոսութեան մէջ մնացած է. ինչուան  
հարկաւոր արուեստներն ալ հոն չեն գտնուիր. իսկ  
ուսմունք ու գիտութիւն ամենաին չկայ: Միայն  
Եգիսկտոս ու Միջերկրականին ծովեղերքը քիչ մը  
քաղաքականութիւն սկսած է :

Կառավարութիւններն ազատ միապետական են  
Ափրիկէի մեծ մասին մէջ :

## ԵԳԻՊՏՈՍ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ատենը խիստ ծաղկած էր Եգիպտոս ամէն արուեստի ու գիտութեանց կողմանէ . մէջը շատ մեծաշէն քաղաքներ կային , և թագաւորութիւնը զօրաւոր ու անուանի էր . բայց երկու հազար տարիէն աւելի է որ քանի գնաց տկարացաւ , առջի մեծութիւնը գրեթէ ամենսին չ'մնաց : Խօթներորդ դարուն մէջ Արաբացիք տիրեցին Եգիպտոսի , և Ալեքսանդրիոյ հռչակաւոր գրատունը այրեցին . Ետքը անցաւ Մէմլուք ըսուած Զէրքէղներուն , անոնցմէ ալ Օսմանցւոց ձեռքը . 1798ին Գաղղիացիք առին , բայց խիստ քիչ դիմացան . Ետքէն Մէհմեմետ Ալի փաշան սկսաւ ծաղկեցընել Եգիպտոսի մէջ արուեստներն ու վաճառականութիւնը , ուր կը տիրէ հիմա իր ընտանիքը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Եգիպտոս Միջերկրականին ու Կարմիր ծովուն մէջտեղն է՝ Արաբիոյ հետ կպած :

Տարածութիւնն է 140,000 քառակուսի մղոն :

Օդը խիստ տաք է . անոր համար մանր աւազի փոշիներէն՝ որով օդը շատ անգամ լեցուած կ'ըլ-

լայ՝ հոն տեղի ընակիչներուն շատին աչքը ցաւոտ է կ'ըսէն :

Երկիրն աւազուտ ըլլալուն համար շատ պաղաբեր չէ . միայն Նեղոսի մօտ տեղուանքը խիստ պաղաբեր կ'ըլլան, որովհետեւ աս գետը ամէն տարի կանոնաւոր կերպով կը բարձրանայ ու ամիսներով կը ծածկէ երկու կողմի դաշտերն ու արտերը :

Գլխաւոր բերքն է բրինձ, արմաւ, մսրացորեն, բամբակ, շաքար ու պատկառուկ խոտը . կենդանիներուն մէջ ալ անուանի է հիլոս ըսուած մուկը, որ կոկորդիլոսին թշնամի է, ու քաջահաւթուունը՝ որ օձերը կը սպաննէ :

Բնակիչն է 5,125,000, զփտի որ հին Եգիպտացիքն են, տաճիկ, արաբացի, հայ և հրեայ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԳԵՐԱԴԻՇ կամ ՄԵՍԵՐ (265,000) մեծ ու վաշտառաշահ քաղաք է . ասոր մօտ են երեք անուանի բուրգերը, որոնց մեծին բարձրութիւնն է 428 ոտնաչափ, և մեծ գետնափոր գերեզմաննոցը՝ որուն մէջ 3,000 տարուան մումէաներ կան :

ԱՆՔՍԱՆԴՐԻԱ կամ ԽՍՔԵԿՏՐԻՑ (170,000) ատենով Եգիպտոսի թագաւորութեան մայրաքաղաքն էր, հիմա աշխարհիս վաճառաշահ քաղաքներէն մէկն է :

ԲԱՇՏԻ կամ ՈՒԶԵԿԻԴՎ (18,000) ՆԵղոսին բերանը՝ Եգիպտոսի բանուկ նաւահանգիստներէն մէկն է :

ՏԱՄԻԱՐ (37,000) նաւահանգիստը բանուկ քաղաք է :

ՍԻՐԻ (15,000) ԱՓրիկէի ներսերը գնացող  
կարաւանները ասկէ ճամբայ կ'ելլեն :

ՍԻՐՎԵՑԻ (5,000) համանուն պարանոցին վը-  
րայ պղտի քաղաք է :

ՃԻԶԻ (7,000) ասոր քովի են ՄԵմֆիս քաղա-  
քին աւերակները :

ԼՈՒՔՍՈՐ • Հին թերէ քաղաքին աւերակներուն  
մէջ՝ պղտի գեղ մըն է :

ՔՈՍԻՑԻ • Կարմիր ծովուն վրայ նաւահանգիստ  
է, և շտեմարան վաճառականութեան Արաբիոյ  
հետ :

ՍԻԵՆ կամ ԱՍՈՒՏԱՆ • մօտ է Եգիպտոսի հին  
սահմանին, և հռովմէական կայսերութեան Օդոս-  
տոսի ատեն :

ՍԻՐՈՏԱԶ • համանուն Ռասիսին մէջ, Եգիպտոսի  
արևմտեան կողմը • կը կարծուի թէ աս ըլլայ Ամո-  
նի հին Ռասիսը :

Անձ առ օն (000,000) 19202 Ա Դաշ Գլուշկ  
վիճակն զիզմ մէ առև պատ և վ զարդար հայուսու-  
թի և մեջնազնութիւն մէ նիւ զմույտ, զարդարայ  
ու զարմանագում զարմանագում օնն և կառամա-  
տու : մայի զիմնամեռն անհայտ (000,0 չին մույ  
(000,071) 19202-19203 Ա Դաշ Գլուշկ Ա Ա  
ազգային մասն ի առաջարկան պատուիլիք յամեա-  
պարագ, հայաստանի ավագանու անոնք, որի մզար  
ան միացմէ (000,011) 19202-19203 Ա Դաշ Գլուշկ  
մայմանական մասն ի առաջարկան պատուիլիք յամեա-  
պարագ, հայաստանի ավագանու անոնք, որի մզար  
ան միացմէ (000,011) 19202-19203 Ա Դաշ Գլուշկ

## ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆ, որ Բաբելոնաց աշխարհ ալ կ'ըսուի, հին ատենը Կարքեդոնացւոց ձեռքն էր. Ետքը Հռովմայեցւոց անցաւ, անկեց ալ Ետքը Արաբացւոց ձեռքը. հիմա մէկ մասը այլ և այլ իշխանութեանց տակն է, մէկ մէծ մասն ալ Գաղղիացւոց ձեռքն է:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Պէրպէրիստան կ'ըսուի Ափրիկէի հիւսիսային ծովեղերքը՝ Եգիպտոսէն ինչուան Ատլանտեան ովկիանոսը, և կը բաժնուի Ճեղայիր, Մարոգ, Դունուզ և Դրիբոլի:

Օդը բարեխառն է ու երկիրը բարեբեր:

Գլսաւոր բերքն է բրինձ, ցորեն, շաքար, ձի, ուղտ և առիւծ:

Բնակիչն է 20,000,000 սլերպէր, մուղրի, առաջիկ, հրեայ, գաղղիացի:

Կրօնիքը մահմետական:

## ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### ՃԵԶԱՅԻՐ

ԱՆՃԵՐԻ կամ ՃԵԶԱՅԻՐ (52,000) նաւահանգիստ է Միջերկրական ծովուն վրայ. Երկար առեն Օսմանցւոց հարկատու էր քովի երկիրներովը, բայց 1830էն ետքը Գաղղիացւոց ձեռքն անցաւ, ու ամեն կողմանէ սկսաւ հետզհետէ ծաղկիլու զարդարուիլ:

Օրան (28,000) նաւահանգիստ է Միջերկրական ծովուն վրայ, երկար առեն Սպանիացւոց ձեռքն էր, որոնք 1792ին թողարկին:

ԿՈՍՏԱՆԴԻՆԱ (30,000) ամուր բերդ է, զոր Գաղղիացիք առին 1837ին: Ասիկայ հին Սիրդաքաղաքն է, ուր ծնան Մասինիստա և Յուգուրթ:

Պու (9,000) նաւահանգիստ է Միջերկրական ծովուն վրայ, մօտ Հիպակոնա քաղաքին աւերակացը, որուն եպիսկոպոս եղաւ մեծն Օգոստինոս՝ հինգերորդ դարուն մէջ:

ԴԱԿՄԱԿԱՆԻ (7,000) ժամանակաւ բաղմամարդ քաղաք մըն էր:

ՄՈՍԴԱԿԱՆԻ (7,000) ունի ամուր և վաճառաշահ նաւահանգիստ Միջերկրականին վրայ:

ՖԻԼԻԲՐԴԻ (6,000) զոր կանգնեցին Գաղղիացիք յանուն Լուդ. Փելիպպոսի թագաւորին՝ Ռոսսիկադայ աւերակացը վրայ:

ՄԻՏԻՅԱ (5,000) Դիդերիի պէյլ հոս կը նստէր: Քանդեցին զայն Գաղղիացիք 1835ին:

ՄԱՍԴԱՐ (4,000) Ապտիւլ-Քատէր հոս կը նստէր: Քանդեցին զայն Գաղղիացիք 1835ին:

Շէրէէւ (2,000) նաւահանգիստ է Միջերկրական ծովուն վրայ, վիտխանակ Կեսարիոյ՝ որ մայրաքաղաք Եղաւ Կեսարական Մաւրիտանիոյ՝ Հռովմայեցւոց ժամանակ :

ՊՈՏՃԻԱ. նաւահանգիստ է Միջերկրական ծովուն վրայ. ամրոցներ ունի :

### ՄԱՐՈՔ

Ֆէս (100,000) ատենով արուեստի ու գիտութեան կողմանէ ծաղկած քաղաք էր. և Մարոքի կամ Մէրաքէշի ինքնազլուխ կայսերութեան գըլխաւոր քաղաքն էր :

ՄԱՐՈՔ (70,000) Մարոքի կայսերութեան մայրաքաղաքը՝ շատ վաճառաշահ. կաշին ազնիւ է :

ՄԵՐԻՆԻԶ կամ ՄԷԳԻՆՍՍ (60,000) բարեբեր հովտի մը մէջ. Մարոքի կայսրը տարւոյն մէկ մասը հօս կը նստի :

ՄՈԿԱՏՈՐ (36,000) Ատլանտեան ովկիանոսին վրայ՝ Մարոքի կայսերութեան ամենէն վաճառաշահ քաղաքն է :

ԱՐԻՆ-ԱՆԴԻ կամ ՌԱՊԱԴ (25,000) գէմ յանդիման Սալէի, որուն ելուզակները շատ վախ կուտային նաւարկուաց :

ԴԵԴՈՒԱՆ (16,000) նաւահանգիստ է Միջերկրական ծովուն վրայ և առուտուրը շատ բանուկ :

ԴԱԼԵՆԴ. Մարոքի կայսերութեան հարաւակողմը՝ անկախ տէրութեան մը մայրաքաղաքն է :

## ԴՐԱՆՈՒՅԹ

ԴՐԱՆՈՒՅԹ (150,000) կարքեղոնի աւերակներուն մօտ մեծ քաղաք է, վաճառականութիւնն ու արուեստները ծաղկած։ ասոր պէյը կամ իշխանը Օսմանցւոց հարկատու և հպատակ է։

ՔԱՐՎԱՆ (40,000) վաճառաշահ քաղաք է, երկար ժամանակ արաբացի թագաւորութեան մը մայրաքաղաքն էր։

ԳԱՊԻՍ (20,000) վաճառաշահ նաւահանգիստ ունի Միջերկրական ծովուն վրայ։

## ԴՐԱԲՈՒԼԻ

ԴՐԱԲՈՒԼԻ (25,000) համանուն կամ ԴՐԱԲՈՒԼԻ (25,000) համանուն փաշայութեան գլխաւոր քաղաքը Միջերկրական ծովուն քով։ վաճառականութիւնն ու արուեստից ճարտարութիւնն ըստ կարի ծաղկած է։

ՊԵՆԴԱԶԻ } Միջերկրական ծովուն վրայ՝ վա-  
ՏԵՌՆԵՀ } ճառաշահ նաւահանգիստներ են։

ՄՈՒՋՈՒՔ. Ֆէզզանի գլխաւոր քաղաքն է, ուր կուգան կարաւանները դահիրէէն կամ Ափրիկէի ներսէն։

## Ս Ա Հ Ր Ա.

---

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱՅ Երկիրն ընդարձակ անապատ մըն է, որ  
Պերսկիստանի հարաւային կողմը կ'իյնայ, և կը  
բովանդակէ Սիսի հէշամ ու բազմաթիւ ոա-  
սիսներ :

Երեքհարիւր հազար մղոն տարածութեան մէջ  
հաղիւ թէ մէկ միլիոն բնակիչ ունի, բոլորն ալ  
գրեթէ վայրենի մարդիկ :

Կրօնիքնին մահմետական ու կռապաշտ :

Գլխաւոր քաղաքներն են Դալէնդ, Հոտէն,  
Դասու, Առնա, Ակապլի և Պիլմա . բայց վանին  
Խիստ քիչ տեղեկութիւն կայ :

---

### ՄԵՆԵԿԱՄՊԻԱ.

---

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱԵՆԵԿԱՄՊԻԱ Սահրային հարաւային կողմը  
կ'իյնայ . անունը ՍԵՆԵԿԱԼ ու կամպիա գետերէն  
առած է :

Երկիրն ընդհանրապէս աւազուտ է :

Օդը խիստ տաք . յուլիսէն ինչուան հօկտեմբեր միակերպ անձրև կուգայ զարհուրելի փոթորիկներով :

Բերքն է առատ ոսկի , խնկեղէն , պղպեղ , ջայլամի փետուր , փղոսկը , և պաօպատ ծառը՝ որ ինչուան 90 ոտնաչափ հաստութիւն կ'ունենայ : Կենդանիներէն ալ տաք երկրի գաղաններուն ամեն տեսակէն ալ ունի :

Բնակիչն է գրեթէ 12,000,000 կռապաշտ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊԱՄՊՈՒՔ . մեծ ոսկիի հանք ունի :

ԴԻՄՊՈՒ . բոլոր երկրին աւելի կրթուած մարդիկն ասոր բնակիչն են :

ՔԱՇԵՅ . Բորդուգէջներուն ձեռքն է :

ՍՈՒՐԲ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ . Գաղղիացւոց ձեռքն է պղտի կղզւոյ մը վրայ Սենեկալի բերանը :

ՍԵՆԴ ՃԵՑՄՍ . աս երկրին մէջ Անդղիացւոց գլխուոր քաղաքն է :

Գաղղիացւոց ձեռքն է նաև Կորէա կղզին ալ Դալարի գլխոյն մօտ :

ՏԵՇԻՄՈՒՐ ԴԵՐԱՎԱՐՈՒՄ

Անդամ միջաւառուն միշտուն առարկաթաթ [ ]  
Նեղանելի անդամուն ու յափառի յանձնուածութաթ [ ]  
Հայուածութաթ [ ]

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԵԱ.

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԿՈՒԻՆԵԱՆ ՍԵՆԵԿԱՄՊԻՈՅ Հարաւային կողմի  
ծովեղերքն է :

Աս երկրիս մեծ մասին Եւրոպացիք տիրած են :

Օդը տաք, թաց ու վնասակար է :

Գլխաւոր բերքերն են բամբակ, շաքար, լե-  
ղակ, և ոսկիի աւազ. կենդանիներէն ալ փիղ,  
վագր, առիւծ, ոնդեղջիւր ու մեծամեծ օձեր :

Բնակիչն է 10,000,000 կռապաշտ, որ մարդա-  
զոհ ալ կ'ընեն :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԳՈՒՄԱՍԻ. Աշանդիի թագաւորութեան մայ-  
րաքաղաքն է :


ԱՊՈՄԵՅ. Տահոմէի թագաւորութեան մայրա-  
քաղաքն է :

ՊԵՆԻՆ. Լակոս. ՈՒՐԷՅ. այլ և այլ տէրու-  
թեանց մայրաքաղաքներ են :

ՖՐԻԴՈԾՎՆ. ԳԼՈՒԽ գորս. ՔՐԻՍՏԻԱՆՊՈՐԿ .  
Անգլիացւոց ձեռքն են :

ԱՍՏԽԱՆՏԱ } Գաղղիացւոց ձեռքն են:  
ԿԱՊՈՒՆ } Հոլանտացւոց ձեռքն է :

Մուրովան. Լիպերիոյ հասարակապետութեամյրաքաղաքը, զոր հաստատեցին ամերիկացի գաղթականք. գերութենէ ազատած սեերուն համար :



## ՆԻԿՐԻՏԻԱ.

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՆԻԿՐԻՏԻԱ Սահրային հարաւային կողմն է :  
Երկրին մեծ մասը աւազուտ անապատ է :  
Բերքն է ոսկի, արծաթ, արմաւ, բրինձ, բամբակ ու վայրի գաղաններ :

Բնակիչն է 20,000,000, բոլորն ալ սև ու բարբարոս մարդիկ են :

Կրօնքնին կռապաշտ ու մահմետական :

### ԳԼԽԱՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՍԱԲԲԱԴՈՒ (80,000) մոյրաքաղաքն է Ֆէլլագա ըստած կայսերութեան :

ԷՆԿՈՌՈՒ (50,000) Երկրին գլխաւոր վաճառաշահ քաղաքն է :

ՍԵԿՈՅ (30,000) Պամպարրա ըստած թագաւորութեան գլխաւոր քաղաքն է . հոս քիչ մըժամանակ կեցաւ Մոնկոյ-Բարբ :

Դուժութեան (16,000) համանուն թագաւորութեան մայրաքաղաքն է։ ոսկիի, փղոսկրի ու խէմի մեծ առուտուր ունի։

Քուրքս Չատ լշին մօտ Պոռնուի մայրաքաղաքն է։

Անուանի են նաև Հին Պոռնու, Կոր Պոռնու՝ Նոյն տէրութեան մէջ։

Դասէւդու. Տարֆուրի տէրութեան մայրաքաղաքն է։

Գողգի. Նոյն տէրութեան հին մայրաքաղաքն է։

Օպէտ. Քորաովանի գլխաւոր քաղաքն է։



## Ն Ո Ւ Պ Ի Ա



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԵԼԻՔ

Կուղան Եգիպտոսի հարաւային կողմը կ'ինայ ու հիմա Եգիպտոսի կուսակալն ձեռքն է։

Երկիրն աւագուտ, քարոտ ու անբեր է։

Բերքն է ոսկի, փղոսկր, երենոս ու արմաւ։ կենդանիներէն ալ ամեն տեսակ վայրի գաղաններ։

Բնակիչն 2,000,000 մահմէտական, կուսապաշտ ու քրիստոնեայ։

## ԳԼԽԱՏՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Սասսար (9,000) Շենտի . Նեղոսին վրայ վա-  
ճառաշահ քաղաքներ են :

‘Սոր Տունկուս կամ Մարտիս՝ Կեղոսի ձախա-  
կողմը , և ՀԻՆ ՏՈՒՆԿՈՒՏ՝ որ գրեթէ աւերակ է :

ՍՈՒՄԲԵՄ . Կարմիր ծովուն վրայ բանուկ նա-  
ւահանդիստ է Մէքքէ գնացող կարաւանաց :

ՔԱՐԴՈՒՄ . Կեղոսի երկու բազկաց խառնուր-  
դին մօտ՝ նշանաւոր քաղաք մըն է . Հոս կը նստի  
Նուպիոյ կուսակալը :

## ԵԹՈՎԱՊԻԱ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Եթովապաթիք որ Հապէշ կամ Խափշիկ ալ կ'ը-  
սուին՝ հին ատենը Ափրիկէի ծաղկած ազգերէն  
մէկն եղած են , ու չորրորդ դարուն մէջ քրիստո-  
նէութիւնը մտեր է մէջերնին . բայց հիմա տէրու-  
թիւննին շատ տկարացած է , ու գիտութիւն ամե-  
նեին չունին :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Եթովզիան Կուպիոյ հարաւային կողմը՝ ընդարձակ երկիր է՝ այլ և այլ ինքնագլուխ տէրութիւններ բաժնուած :

Երկիրը լեռնոտ ու բարեբեր է :

Բերքն է ցորեն, բրինձ, շաքար, խահուէ, բամբակ, եղները խիստ խոշոր են, ու Ափրիկէին հասարակ գաղանները հոն ալ կը գտուին :

Բնակիչը 4,000,000 քրիստոնեայ եւտիքական :

Գլխաւոր քաղաքն է Կօնտար (50,000) որ Ամհարայի թագաւորութեան մայրաքաղաքն է :

Մէկալ տէրութիւններուն գլխաւոր քաղաքներն են Անգոպէր, Աքսում, Տուպարվա, Աքելքո :

---

Ա. Տ Ե Լ

---

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ա. Տ Ե Լ Եթովզիայ արևելեան կողմը՝ պղտի տէրութիւն մըն է :

Երկիրը թաց է և օդը վնասակար :

Բերքն է ոսկի, կնդրուկ, խէժ, մոմ ու փղոսկը :

Բնակիչն է 200,000 մահմետական :

Գլխաւոր քաղաքներն են .

ԶԵՅԼ. որ Պապիւլմանտէպի նեղուցին մէջ  
կղզի է :

ՊԱՐՊՈՐԱ. նաւահանդիստ է, և Արաբիոյ հետ  
առուտուր ունի :

ԱԽՍԱԿՈՒՐԻ Է. ատենով Ատէլի մայրաքաղաքն  
էր :

ՀՈՒՐՐՈՒՐ. պղտի տէրութեան մը մայրաքա-  
ղաքն է :

---

### Ա. Յ Ա. Ն

---

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱՅԱԽ ԱՓրիկէի արևելեան ծովեղերքն է. աս  
երկրիս ներսի կողմը անքնակ անապատ է :

Երկերն աւազուտ, բայց պաղաքեր է :

Բերքն է ոսկի, դեղին սալթ, փղոսկր, խունկ,  
խէժ :

Բնակիչն է. 150,000 մահմետական ու կոս-  
տուած :

## ՀԱՐԱԽԱՑԻՆ ԿՈՒԻՆԵԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՀԱՐԱԽԱՑԻՆ ԿՈւինեան, որ Գոնկոյ ալ կ'ըսուի,  
լեռնոտ ու բարեբեր երկիր է՝ Ափրիկէի հարա-  
ւային կողմը :

Ասոր վայրի գաղաններուն մէջ երևելի է պօա  
ըսուած ահագին օձը, և ուրիշ շատ ինասակար  
Ճճիներ. տեսակ մը մժեխ կայ որ խայթելուն պէս  
կը մեռցընէ կ'ըսեն. տեսակ մը խոշոր մըջիւն՝ ին-  
սոնդի ըսուած, որ փղին պատիճը մտնելով՝ կը  
կատղեցընէ ու կը սպաննէ զանիկակ. տեսակ մըն  
ալ որդ, որ ինչ վաճառք կամ կարասիք ըլլայ՝  
կը կրծէ, փոշի կը դարձընէ :

Բնակիչն է 5,000,000 կռապաշտ ու վայրենի:

Գլխաւոր տեղուանիքն են Լոանկոյ, Գոնկոյ,  
Գաապենտա, Լոանտայ, Պէնկուէլա՝ վերջի երկու-  
քը Բորդուգէներուն ձեռքն է:

Հայուայակ կամ կամ կամ կամ կամ կամ կամ  
: ուզոմն ըսուած կամ կամ կամ կամ կամ կամ  
: ուզոմն ուզոմն առ Յ հասմանայ շրՈ  
առայ շր յա մմմա քնիկը մասմասու վերիշիլ  
: մմ ճացիկ անիկ ուրմանայ վրայ իսկ ճաց  
յա մնայ մյուծ, միմա փակը դրան զդմանակ  
: չը մի ամենա նայ անի առայ

## ՕԴԴԵՆԴԱՑԻՈՑ ԵՐԿԻՐ

---

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՕԴԴԵՆԴԱՑԻՈՑ բնակութեան քաղաք չունին, հապա գեղերու պէս տեղուանք խումբ խումբ բաժնուած կը բնակին :

Բնութեամբ վայրենի են, աւազակաբարոյ, ազէկ վազող, և թունաւոր նետ կը բանեցընեն :

Ամենքը մէկէն 400,000ի չափ են :

---

### ԳԼՈՒԽ ԲԱՐԵՑՈՒՍՈՅ

---

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԲԱՐԵՑՈՒՍՈՅ գլուխը՝ Ափրիկէի հարաւային ծայրն է՝ Անգլիացւոց ձեռքը :

Օդը բարեխառն է ու երկիրը բարեբեր :

Ափրիկէի բոյսերուն գրեթէ ամենն ալ կը բուցընէ. իսկ վայրի գազանները հիմա քիցած են, ոչիսարները խոշոր դմակ ունին, ծովեղերքէն ալ շատ կէտ կամ պալէնա կ'ելլէ :

Բնակիչն է 260,000, կեսը ճերմակ՝ կեսը սև։

Գլխաւոր քաղաքն է Գ. Ա. Խ. Բ. Տ. Ե. Ս. Ո. Օ. Կ. ամ գ. ս. բ., և կամ Գ. Ա. Բ. Օ. Մ. պ. օ. ն. ա. - ս. բ. է. ո. ա. ն. ձ. ա. (20,000) Եւրոպայէն Հնդկաստան գացող եկող նաւերը հոս կը հանգչին, ուստի աշխարհիս խիստ երևելի քաղաքներէն մէկն է։

Գ. Ա. Բ. Օ. Մ. պ. օ. ն. ա. - ս. բ. է. կը բ. ե. ր. էն կոստանդեան ըսուած հոչակեալ գինին։

---

## ՔԱՅՐԱՍՏԱՆ

---

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Քաֆրաստանս մեծ մասը լեռնոտ է, մնացածը աւազուտ, բայց բարեթեր։

Բնակիչն է 2,000,000 սև, կտրիճ, աղէկ վազող ու վարպետ որսորդ։

Գլխաւոր տեղուանիքն են Լիդդաքու, Քուր-րիչան, Մէլիդա, Մաշով, Բորդ Նադաւալ։

## ՄՈՆՈՄՈԴԱԲԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Մոնոմոդաբան ատենով մեծ թագաւորութիւն  
էր, հիմա մանր տէրութիւններ բաժնուած, ու  
ծովեղերքը բորդուգէշներու ձեռքն է:

Օդը բարեխառն է, հողը բարեբեր, ոսկին ու  
արծաթը շատ:

Բնակիչն է 1,400,000:

Գլխաւոր տեղն է Զիմսպառէ:

## ՄՈԶԱՄՊԻՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Մոզամպիքը բորդուգէշներուն ձեռքն է, բայց  
բնակիչները ինքնագլուխ են:

Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, բրինձ, փը-  
ղոսկը:

Բնակիչը 2,600,000:

Գլխաւոր քաղաքն է Մոզամպիք:

## ԶԱՆԿԵՊԱՐ



### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Զանկեպարը լուբաղա լեռներուն արևելքան կողմը ծովեղերեայ ցած երկիր մըն է, օդն աւ վատառողջ :

Բելքն է խէժ, փղոսկը, ծարիր ու կապոյտ արջասպ :

Բնակիչը 1,000,000, կէսը արաբացի, կէսը տեղացի կռապաշտ :

Գլխաւոր տեղուանիքն են Մակատոքսոյ, Պըալա, Քիլօա, Մոնկալոյ, Մոմակազա, Մէլինտա :

## ԱՆԾԱՆՈԹ ԵՐԿԻՐ



### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Երկրատուն և Օդենդացւոց երկրին մէջտեղը ընդարձակ երկիր մը կայ, որ դեռ անծանօթ է : Մէջը շատ վայրենի ու բարբարոս ժողովուրդ կայ, որ ատեն ատեն արշաւանիքներ ըրեր են իրենց քովին երկիրներուն վըայ :

## Ա.ՓՐԻԿԵՒ ԿԴԶԻՆԵՐԸ



### ԱՆԳՂԻԱՑԻՈՅ ՁԵՌԻՔԸ

Ֆեռնանտոս ԲՈՅ (30,000) Կուբինէայի մէջ :

Վերսֆունուսն (7,000) ապառաժ ու անբեր կղզի մըն է :

ՍՈՒՐԲ ՀԵՂԻՆԵ (7,000) հոս մեռաւ Կաթոլիկոն Ա. 1824ին :

ՄԱՏՐԻՏՈՍ Լամ ԳԱՂԱԿՈՅ ԿԴԶԻ (168,000) ասիկայ առաջ Գաղղիացւոց ձեռքն էր . 1814ին Անգղիոյ անցաւ : Դլսաւոր քաղաքն է Բոր-Լուի : Ուստրակէջ, այս կղզին Գաղղիացիք ձգեցին Անգղիացւոց :

ԱԵՑՈՒՆԱՆ ԿՂՂԵՆԵՐԸ (6,000) որ շատ վաճառաշահ են :

### ԳԱՂՂԻԱՑԻՈՅ ՁԵՌԻՔԸ

ՊՈՒՐՊՈՆԻ ԿԴԶԻ (110,000) ՀՆԳԼաց ծովուն մէջ, հոս տեղի խահուէն ու շաքարն աղնիւ է :

ՄԱՑՈՒԴԱ՝ ԳՈՄՈՐԵԱՆց մէջ, և ԿՈՍՍԻ-ՊԻ ու Ա. ՄԱՐԻԱՄ՝ Մատակասգարի մօտ :

## ԲՈՐԴՈՒԹԵԱՆԵՐՈՒՆ ԶԵՌԻՔԸ

ԱՍՈՐԵԱՆ ԿՂՋԲՆԵՐԸ (235,000) ասոնց մէջ գըլ-  
խաւորներն են Դէրչէյրա, Սուրբ Միքայէլ, Սուրբ  
Մարիամ, Բիգոյ ու Ֆլորէս կղջին:

ՄԱՏԷՐՆ կամ ՄԱՏԹԵՐՆ (120,000) ասոր գի-  
նին շատ անուանի է. առենովլբոլը կղջին անտառ  
է եղեր. Բորդուգէշները 1431ին կրակ տուին այ-  
րեցին, անկէտքը երկիրը բարեբեր եղաւ: Գլխա-  
ւոր քաղաքն է Ֆունկալ:

ԴԱԼԱՐԻ ԳԼԽՈՑ կղջիները (80,000) ասոնց  
գլխաւորներն են Սուրբ Յակոբ, Սուրբ Անտոն  
ու Ազի կղջին. շատին մէջն ալ հրաբուխ կայ:

ԱՌԻՐԲ ՄԱՏԹԵՈՍ. Առանտեան ովկիանոսին  
մէջ անբնակ կղջի է:

ԱՌԻՐԲ ԹՈՎՄԱՍ (20,000) և ԻՇԽԱՆԻ ԿԴԶԻ  
(4,000) կուինէայի ծոցին մէջ. շատ շաքար կու-  
տան:

## ՍՊԱՆԻԱՅԻՈՑ ԶԵՌԻՔԸ

ԳԱՆԱՐԵԱՆ կղջիները (200,000) ասոնց գլխա-  
ւորներն են Գանարիա, Դէնէրիֆֆա, Բալմա,  
Երկաթի կղջին, և Ֆորդավենդուրա, որոնց գըլ-  
խաւոր բերքն է աղնիւ գինի:

ԱՆԱՍ ՊՈՆԱ (1,200) կուինէայի ծոցին մէջ:

ԱՉԱՏ ԿՐՁԻՆԵՐ ԸՆԴ

Մատսկասդար (3,000,000) Ավիրիկէի կղզիներուն մէծն է . ասոր ծովեղեցքը միայն ծանօթ է , ուր օդը թաց ու մասակար է : Կ'ըսեն թէներսէրը աղէկ մշակած է : Ծանօթ գլխաւոր քաղաքներն են Դանանարիվոյ , Մուշանկայէ , Պոմպէդոք , Ֆուլբուէն , Դամադաւէ և Անտեվուրանդ :

Սոգոդորս (100,000) ասոր բնակիչներն արաբացի են :

Զանջաղար . Զանկէպարին ծովեղեցքն է . պըլիստոր վաճառքն է խէժ ու փլոսկը : Առաջին քաղաքն է Զանզիպար՝ որ 10,000 բնակիչ ունի :

ՔոՄՈՐԵՏՆ կղզիները (20,000) Արաբացւոց ձեռքն են :

ՅԱՌՈՋ ՅԻՒՅՈՎՄԱՐԻ

ՅՈՒՄԱՐԻ ՅՈՒՅՈՎՄԱՐԻ

ամեր քառոս (600,000) ՅԱՅՄԻՐԻ ՀՈՅԱՅՅՈՒՄԱՐԻ , անդամ՝ առջընդհանուր անկառանք (մատական) ընդհանուր , այսուհետեւ առողջական , այսքան պահանջական է առաջիկ քառոս (600,000) առողջական մատական գործարք է , այս միան առաջիկաց (600,000) առաջիկ մատական :

# ԱՄԵՐԻԿԱ

—♦♦—

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ատենով անձանոթ Երկիր էր .  
1492ին Վրիստափոր Գոլոմագոս Ճենովացի նաւոր-  
դը ան կողմերը գնաց Սպանիոյ թագաւորին կող-  
մանէ , ու նախ կուանհահանի ըսուած կղզին գտաւ ,  
որ Լուգայեան կղզիներուն մէկն է : Եաբը Ամերի-  
կոս Վեսուչչի խալացին ան Երկրին մէկ մասը  
պտըտեցաւ , ու ստորագրութիւնն ընելուն համար  
Երկիրն ալ իրեն անունովը Ամերիկա ըսուեցաւ :

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

Ամերիկան Եւրոպայի արևմտեան դին կ'իյնայ .  
Հիւսիսային կողմէն պատած է Սառուցեալ ծովը ,  
արևելքէն Ատլանտեան ովկիանոսը , արևմուտքէն  
Հարաւային ովկիանոսը :

Տարածութիւնն է 11,146,000 քառակուսի մղոն :

## ԲԱԺԱՆՈՒՄՆ

Ամերիկան երկու մեծ կտոր կը բաժնուի, չիւսային ու Հարաւային. ասոնք իրարու կպած են բանամայի պարանոցովը:

Ամերիկայի մէջ 16 աշխարհք կայ. ասոնցմէ վեցը հիւսիսային կողմը կ'իյնան, տասը հարաւային:

Հիւսիսայիններն ասոնք են, Ռուսի Ամերիկա, Կրէնլանտիա, Նոր Բրիտանիա, Միացեալնահանդներ, Մեքսիկոյ, Կուադէմալա կամ միջին Ամերիկա:

Հարաւայինները ասոնք են, Գոլումբիա, Բէրու, Պոլիվիա, Քիլի, Կույանա, Պրազիլ, Բարակուայի, Ռւբակուայի, Բլագա, Բագակոնիա:

## ԾԱՎ

Ամերիկայի սահմանակից ծովերն են.

Սառուցեալ ովկիանոս և Պաֆֆինի ծովն՝ հիւսիսային կողմը.

Ատլանտեան ովկիանոսն ու Անդիլեան ծովն՝ արեելեան դին.

Մեծ Ռվիանոսն ու Պէհրինկայ ծովը՝ արևմտեան կողմը:

## ԾԱՅ

Ամերիկայի գլխաւոր ծոցերն ասոնք են.

Հուտասընի ծոցը, Սուրբ Լաւրենտիոսի ծոցը, Մեքսիկոյի ծոցը, Հոնտուրաս ծոցը, Գալիֆունիայի ծոցը:

ՆԵՐՈՒՅ

Ամերիկայի գլխաւոր նեղուցներն ասոնք են .  
Պէհրինկայ նեղուցը՝ Ամերիկայի և Ասիոյ մէջ  
տեղը .

Աչնիքէսդը , Տէւիս , Գըմալըրէնտ , Հուտսուլն՝ Նոր  
Բրիտանիոյ հիւսիսային կողմը ,  
Պէլ-Խլի նեղուցը՝ Նոր Բրիտանիոյ արևելեան  
կողմը .

Պահամայի ջրանցքը՝ Միացեալ նահանգներուն  
հարաւային կողմը .

Մակեյլանի նեղուցը , և Լըմեր՝ Բադակոնիոյ հա-  
րաւային դին :

Կ Դ Զ Ի

Ամերիկայի գլխաւոր կղզիներն են .

Սառուցեալ ծովուն մէջ՝ Կրէնլանտիա .

Պաֆֆինի ծովուն կղզիները .

Առլանտեան ովկիանոսին մէջ՝ Ս . Լաւրենտիոսի  
ծոցի կղզիները , Լոնկայլէնտ , Պերմուտեան  
կղզիները , Լուգայեան կղզիները , Մեծ ու  
Փոքր Անդիլեան կղզիները .

Մեծ ովկիանոսին մէջ դէպ 'ի հարաւ՝ Նոր Գէոր-  
գիա , Մալուինեան կղզիները , Մակեյլանեան  
կղզիները կամ Երկիր հրոյ , Աստուածամօր  
կղզիները , Քիլոէ կամ Չիլոէ կղզին , Խուան ,  
Ֆէրնանտէզ և Կալվաբակոս :

Պէհրինկի ծովուն կղզիները :

ԹԵՐԱԿՈՉԻ

Ամերիկայի գլխաւոր թերակղզիներն են .  
Լապրատոր և 'Նոր Սկովտիա կամ' Ագատիա՝ 'Նոր  
Բրիտանիոյ մէջ .  
Ֆլորիտա՝ Միացեալ նահանգաց հարաւային կող-  
մը .  
Հարաւային Գալիֆոռնիա և Եռկադան՝ Մէքսի-  
կոյի մէջ .  
Ալասկա՝ Ռուսի Ամերիկային մէջ :

ՀՐՈՒԱՆԴԱՆ

Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են .  
Ֆէրուէլ՝ Կրէնլանտի հարաւային կողմը .  
Ուսուդէնհոլմ և Զէրլս՝ Լապրատորի մէջ .  
Սապլ՝ 'Նոր Սկովտիոյ հարաւային կողմը .  
Դանդա՝ Ֆլորիտայի հարաւային կողմը .  
Գադոջ՝ Եռկադանի հիւսիսային արևելեան դին .  
Ա . Ռոքոս՝ Պրազիլի արևելեան կողմը .  
Ֆրովարտ՝ Ամերիկայի հարաւային վերջի ծայրը .  
Հոռն՝ Մակեյլանի արշիպեղագոսի հարաւային  
դին .  
Պլանդոյ՝ Բերուէի հիւսիսային կողմը .  
Ա . Ղուկաս՝ Գալիֆոռնիոյ հարաւային ծայրը .  
Արևմտեան գլուխ՝ Ռուսի Ամերիկային արևմտեան  
կողմը :

ԼԵՒ

Ամերիկայի մէջ լեռներու գլխաւոր գօտիներն  
ասոնք են .

Ազլէկենի՝ Միացեալ նահանգներուն մէջ .

Ասլառաժուտ լերինք՝ որ հիւսիսէն դէպ'ի հարաւ  
կը ձգուին .

Գորտիլեան լեռներն , որոնց ամենէն բարձրը Զիմ-  
պորասհոյ կ'ըսուի , ու Պրազիլի լեռները :

ՀՐԱԲՈՒԽ

Ամերիկայի անուանի հրաբուխներն ասոնք են .

Սուրբ Եղիա՝ Ռուսաց Ամերիկային մէջ .

Բոբոգադէբէդլ Մեքսիկոյին մէջ .

Գոդոբախի , և Բիչնգա՝ Գոլումապիոյ մէջ .

Արէբիբա՝ Բէրուին մէջ :

ԼԻՇ

Ամերիկայի գլխաւոր լճերն են .

Ստրկաց և Ռւբինեբեկ լճերը՝ նոր Բրիտանիոյ  
մէջ .

Վերին Լիճ , Միջիկան , Հուրոն , Էրիէ , Օնտա-  
րիոյ , Միացեալ նահանգաց հիւսիսային դին .

Կիդարակուտ Լիճ՝ միջին Ամերիկայի մէջ .

Մարագախսոյ՝ Գոլումապիայի մէջ .

Դիդիգագագա՝ Բէրուի մէջ .

Բագոս՝ Պրազիլի հարաւային կողմը :

ԳԵՏ

Ամերիկայի գլխաւոր գետերն ասոնք են .  
Մաքենզի՝ դէպ 'ի հիւսիս կը թափի .  
Նելսոն, որ Հուտսընի ծոցը կը թափի .  
Ս. Լուբենտիոս՝ Ատլանտեան ովկիանոսը .  
Միսիսիբի, և Ռիոյ Նորդէ՝ Մեքսիկոյի ծոցը .  
Գոլումապիա կամ Օրեկոն՝ Մեծ ովկիանոսը .  
Գոլորատոյ՝ Գալիֆոռնիոյ ծոցը .  
Մակտալէնա՝ Ըստիւեանց ծովը .  
Օրենոք, Ամազոնաց գետը, Դոգանդին, Ս. Փրան-  
չիսկոս, ու Բլադա՝ Ատլանտեան ովկիանոսը  
կը վազէն :

ՕՒ, ՀՈՂ, ԲԵՐՔ

Ամերիկան հիւսիսային բևեռէն ինչուան հա-  
րաւայինը տարածուած ըլլալուն՝ աշխարհիս մէ-  
կալ մասերուն ամեն կլիմաներն ունի : Միայն թէ  
Ամերիկայի մէջ աւելի քիչ է մի և նոյն կլիմային  
տաքութիւնը՝ քան թէ Ափրիկէի և Ասիոյ մէջ .  
պատճառն է Ամերիկայի լեռներուն շատութիւնը ,  
որոնց վրայէն ամառ ձմեռ՝ ձիւնը պակաս չէ :

Հողը տեղ տեղ աւազուտ է, բայց ընդհանրա-  
պէս շատ բարեբեր, ու Եւրոպայէն հօն տարրուած-  
բոյսերուն ամենն ալ աղէկ առաջ եկած են :

Բերքերուն մէջ Ամերիկայի հանքը շատ առատ  
է. ուկիի և արծաթի մէծ հանքերը՝ Մեքսիկոյի ,  
Գալիֆոռնիոյ ու Բէրուի մէջ անսպառ են . յա-  
կինթը՝ Գոլումապիոյ մէջ, աղամանդը՝ Պրազիլի

մէջ։ Առատ են նաև ուրիշ մէտաղներն ու հանքերը, ինչպէս են երկաթ, մագնիս, պղինձ, անագ, կապար, մնդիկ, բլադին, ծծումբ, աղ և հանքածուիս։

Բոյսերուն մէջ՝ բուն Ամերիկայի բերքն է գետնախնձոր, մսրացորեն ու ծխախոտ։ այրեցած գօտիին տակն ալ տաք երկրի ամեն բերքերը կը դժուուին։

Ամերիկան գտնուած ատենը մեր կողմերուն ընտանի կենդանիները հոն չեն չեն տեսնուեր, բայց հիմա խիստ շատցած են։ Վայրի կենդանիներէն հիւսիսային կողմը կը դժուուի եղջերու, դայլ, արջ, ջրշուն։ հարաւային կողմերն ալ վայրի խոզ, կապիկ, լամա, և այլն։

## ԲՆԱԿԻՉ, ԿՐՈՆՔ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՒՆՆ. ԿԱՌԱՎԱՄՈՒԹՒՆՆ

Ամերիկայի բնակիչն է 60,000,000։ ասոնց մէկ մասը բուն եւրոպացի է, նոյնչափ մըն ալ բուն ամերիկացի, մնացածը ափրիկեցի գերիներ։

Կրօնքը՝ հարաւային կողմը գրեթէ ամեն տեղ կաթողիկէ է, Միացեալ նահանգներուն ու Անդղիացւոց երկիրներուն մէջ նորաղանդ։ իսկ տեղացի վայրենիները կուապաշտ են։

Կառավարութիւնը շատ տեղ հասարակապետութիւն է, Պրազել ու Մեքսիկոյ ալ սահմանող բական կայսերութիւն են։

## ՌՈՒՍԻ ԱՄԵՐԻԿԱ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՌՈՒՍԱց կայսրը վաճառականներու ընկերութեան մը յանձնած է, բայց քնակչաց մեծ մասը դեռ ինքնագլուխ են, ասոնց մէկ ցեղին պոկունքը երկու ճեղքուած՝ անասնաբարոյ մարդիկ են :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՌՈՒՍԻ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ միայն ծովեզելքը յայտնի է, ան ալգրեթէ միշտ ձիւնով ծածկած։ իսկ ներսէրն անծանօթ :

Գլխաւոր վաճառքն է տեսակ տեսակ մորթուապալքնա ձուկը :

Տարածութիւնն է 864,000 քառակուսի մղոն։  
Բնակիչը գրեթէ 50,000 կռապաշտ :

Գլխաւոր քաղաքն է Նոր Արքանկէլ Սիդգակղզոյն մէջ։

## ԿՐԵՆԼԱՆՏԻԱ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԿՐԵՆԼԱՆՏԻԱՆ Ամերիկայի հիւսիսային ծայրն է, բոլորովին սառնապատ, ու միայն ծովեղերքը ծանօթ :

Օդը ցուրտ, տարուան մէջ ատեն կ'ըլլայ որ ի-  
րեք ամիս միակերպ գիշեր, իրեք ամիս ալ ցորեկ  
կ'ունենան :

Բերքն է ամիսնդ, հանքային ածուխ, կրանիդ,  
և ուրիշ քարեր :

Բնակիչները Եսքիմացիք կ'ըսուին՝ որ հասա-  
կով սլզակ մարդիկ են, ու որսորդութեամբ կ'ապ-  
րին. ձմեռը գետնափոր տեղուանք կը բնակին,  
իսկ ամառը ծովու շան կաշիէ շինած վրանի տակ :

Աս երկիրը Տանիմարդացիք գտան 983ին. բայց  
հիմա կէսը Անդղիացւոց ձեռքն է :

Բնակիչն է 22.000, դրեթէ բոլորն ալ քրիստո-  
նեայ :

## ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Առաջ աս երկրին մեծ մասը Գաղղիացւոց  
ձեռքն էր . 1760ին Անգլիացիք առին , անունն ալ  
դրին Նոր Բրիտանիա :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Նոր Բրիտանիոյ մեծ մասը անծանօթ է , հողը  
թաց , օդը ցուրտ , միայն հարաւային կողմը բա-  
րեբեր է :

Բնակչութեալ 3,300,000 , շատը գաղղիացի և կաթո-  
ղիկեայք են , մնացածը տեղացի կուապաշտ :

Գլխաւոր քաղաքներն են .

Քերիք (40,000) Գանատային մէջ ամուր ու  
վաճառաշահ քաղաք է :

Մուրեա (44,000) մորթի վաճառք ունի :

Հելտիքս (15,000) աղուոր նաւահանգիստ  
ունի Ատլանտեան ովկիանոսին վրայ :

Ուրիշ քաղաքներն են . Փրեաերիքդըն , Ա . Յով-  
հաննէս , Սիտնէյ , Լուիզպուրկ , Քինկուդըն և  
Եօռք :

## ՄԻԱՅԵՍԼ ՆԱՀԱՆԳՔ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԻԱՅԵՍԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՆ ատենով մեծ մասամբ  
Անգղեացւոց ձեռքն էին. Ետքը կամաց կամաց ա-  
նոնցմէ և ուրիշներէն զատուեցան ու առանձին  
տէրութիւն եղան իրարու դաշնակից, որոնք հիմա  
36 նահանգ են և վեց գաւառ, և մէկ գլխաւոր իշ-  
խան մը ունին՝ որ չորս տարին մէյսը կը փոխուի:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Առ ընդարձակ Երկիրն Ատլանտեան ովկիանո-  
սէն ինչուան Մեծ ովկիանոսը, Մեքսիկոյի նեղու-  
ցէն ալ ինչուան Սուրբ Հաւրենտիոս գետը կ'եր-  
թայ:

Օդը տեղ տեղ ցուրտ է, տեղ տեղ ալ տաք. իսկ  
հարաւային կողմի օդը թաց ու մնասակար է:

Գլխաւոր բերքն է բամբակ, շաքար, ծխախոտ,  
քաքաղ, լեղակ:

Տարածութիւնն է 2,422,000 քառակուսի մղոն:

Բնակիչը 31,445,000, շատը եւրոպացի նորա-  
ղանդ, մնացածը տեղացի:

Զօրքը 40,000, և նաւատորմիզը 671 կտոր նաւ:

Առ Երկրիս մէջ քաղաքականութիւնը, արուեստ-  
ներն ու գիտութիւնները քիչ ատենի մէջ շատ ա-  
ռաջ գնացած են, ինչպէս նաև Երկաթուղիները:

## ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՎՈՒՈՉԻՆԿԴԱՆ (62,000) գլխաւոր քաղաքն է :  
ՆՈՐ ԵՕՐՔ (806,000) վաճառականութիւնը  
շատ բանուեկ է :

ՓԻԼԱԴԵՎԻՔԻԱ (566,000) աս քաղաքիս մէջ գի-  
տութիւնները շատ ծաղկած են :

ՊԱԼԴԻՄՈՐ (213,000) ասոր նաւահանգիստը  
2,000 նաւ կրնայ առնել :

ՆՈՐ ՕՐԻԷԱՆ (170,000) բնակիչներուն մեծ  
մասը դաղղիացի են :

ՊՈՍԴԱՆ (178,000) հոս ծնած է Ֆռանգլին բնա-  
խօսը :

ՍԱՆ-ՖՐԱՆՉՈՍԻՑ (103,000) գեղեցիկ ծոցի մը  
վրայ նոր շինուած քաղաք է, որուն բնակիչներն  
օրէ օր կ'աճին :

---

## ՄԵԹՍԻԿՈՅ

---

## ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԹՍԻԿՈՅԻ ԵՐԿԻՐԸ 1521ին Սպանիացւոց  
ժեռքն անցաւ. բայց 1820ին բոլոր բնակիչները  
դըռիս քաշեցին ու զատ զատ հասարակապետու-  
թիւններ եղան՝ իրարու դաշնակից : Յամին 1863  
սահմանադրական կայսերութիւն կազմեցին :

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Մեքսիկոյի Էրկիրը ընդհանրապէս լեռնոտ է, ու շատ հրաբուխներ ունի :

Գլխաւոր բերքն է արծաթ, ոսկի բամբակ, շաքար, ծխախոտ, ցորեն, լեզակ, որդնուկ որ ծիրանի ներկ կ'ըլլայ :

Օղը ներսերը բարեխառն է, իսկ ծովներքը տաք, թաց ու վնասակար :

Տարածութիւնն է 775,000 քառակուսի մղոն :

Բնակիչն է 8,218,000 կաթողիկեայք :

Զօրքը 22,000 :

## ԳԼԽԱՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՄԵՐԾԻԿՈՑ (200,000) Ամերիկայի ամենէն մեծ ու ամենէն աղուոր քաղաքն է, մայր եկեղեցին մեծագործ ու հարուստ, փողերանոցը շատ երկելի : Մեքսիկոյին մօտ եղած լճերուն վրայ եղէգներով շինած շարժական սպարտէզներ կան :

ԲՈՒԷՊԱՏ 8հ լոս Անձեւէս (75,000) վաճառաշահ քաղաք է :

ԿՈՒՏԱՆԱ ԽՈՒՏԱԴՈՑ (63,000) Մեքսիկոյին հարուստ արծաթահանքը հոս է :

ԲԻՐԵԴԱՐՈՑ (48,000) շատ գործարաններ ունի չուփայի, կաշիի ու ծխախոտի :

ՈՒՏԻՆԳՈՑ (25,000) կը բերէ բամբակ, շաքար, մետաքս, որդնուկ :

Ա. ԼՈՒԽ ԲՈՂՈՍԻ (34,000) շատ հարուստ հանք ունի :

ԳՐԱՄԲԵՐԻ (20,000) ԵՎՌԵՎԱԴԱՆ ԾԵՐԱԿՈՂՋԵՐՈՅՆ  
արևեմանեան ափանցը վրայ՝ մեծ վաճառականութիւն  
ունի մոմի և գունաւոր փայտի մը որ իր անուամբը  
կը կոչուի :

ՉՈԼՈՒԾ (16,000) ատենով Մէքսիկացւոց  
կրօնքին գլխաւոր քաղաքն էր . հոն մեծ քառա-  
կուսի բուրդ մը կայ աւերակ :

ՎԵՐԱ ԳՐՈՒԾ (15,000) ԵՎՐՈՍԻԱՑՎՈց վաճա-  
ռականութեան բանուկ տեղն է :

—————

## ԿՈՒՍ.ԴԵՄՍԱԼՈ.

Կ Պ. Մ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԻ ՄԻԶԻՆ

ԱՄԵՐԻԿՈՅ

—————

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԿՈՒՏԵՄՏԱԿԱՆ ԵՐԿԱՐ ատեն Սպանիացւոց  
ձեռքն էր . 1821ին զատ հասարակալեատութիւն  
եղաւ , հինգ անկախ աէրութիւններէ ձևացած :  
Կուադրամալա , Սան Սալվատոր , Հոնառաս , Նի-  
դարակուա և Գոսդասիգա :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Կուագեմալային հասարակապետութիւնը Մեքսիկային ինչուան բանամայի պարանոցը կ'երթայ:

Երկիրը լեռնոտ է, հողը բարեբեր, օդը բարեխառն՝ բայց վիշասակար:

Հատ հրաբուխներ ունենալուն համար՝ դետնաշարժն անպակաս է:

Բերքն է մօրացորեն, բամբակ, շաքար, լեզակ ու ազնիւ փայտեր:

Տարածութիւնն է 131,600 քառակուսի մղոն: Բնակիչն է 2,485,000 կաթողիկեայք:

### ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԿՈՒՆԴԵՄԱՆ-ՆՈՐ (60,000) համանուն հասարակապետութեան մայրաքաղաքը կանգնեցաւ բարեյարդար յամին 1774 Մեծ ովկիանոսէն քիչ հեռու:

ՍԱՆ-ՍԱՎԱՏՈՐ (25,000) համանուն հասարակապետութեան մայրաքաղաքը, որուն մօտ հրաբուղիս կայ:

ԳՈՄԱՑԱԿՈՒՆ (18,000) հունատուրասի հասարակապետութեան մայրաքաղաքն է:

ԴՐՈՒԽԻՑԱԼՈՅ. Նոյն հասարակապետութեան վաճառաշահ նաև հանդիսան է:

Լէն (35,000) Նիգարակուայի հասարակապետութեան մայրաքաղաքն է՝ գեղեցիկ և բարեշլէն:

ԱՅՆ ԵԶՋԻ ՏԷ ԳՈՄԴԱ ՌԻԴԱ (30,000) Գոսդապիգայի հասարակապետութեան մայրաքաղաքն է:

ԳԱՐԴԱԿՈՑ (20,000) ՆՈՅՆ ՀԱՍՏԱՐԱԿԱՎԵՏՈՎ  
ԹԵԱՆ ՄԷՋ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏ Է . ասոր ՃՈՎԵՂԵՐՔԵՆ  
ՄԵՍԱԿ ՄԸ ՌԱՄԲՐԷ Կ'ԵՋԷ որ ՓՈՐՈՒՆ ՄԷՋ ԿԱՐՄԻՐ  
ՆԵՐԿ ՌԱՆԻ :

---

## ԳՈԼՈՒՄՊԻԱ

---

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՅ ԵՐԿՐԻՄ ԲՆԱԿԻԽՆԵՐԸ 1811ին Սպանիացւոցմէ  
Քլուխ քաշեցին , և իրեք ՀԱՍՏԱՐԱԿԱՎԵՏՈՎԹԻւն  
Եղան իրարու դաշնակից . Նոր Կրանագա , ՎԵՆԵց-  
ՀՈՒԵԼՍ և Քիդոյ կամ Էգուագոր :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Գոլումպիան ԲԱԹՆԱՄԱՅԻ ԱԼԱՐԱՆՈՋԷՆ ԲԻՆՇՈՒԱՆ  
ԿՈՎՅԱՆՍ Ու ԲԷՐՈՒ Կ'ԵՐԹՈՅ :

ԵՐԿԻՐԸ ԼԵԱՆՆՈՒ Է Ու ՇՈՄ ՀՐԱԲՈՒԽՆԵՐ ՈւՆԻ :  
ՕԴԸ ՔԱՐԵԽԱՊՆ , ՄԵՂ ՄԵՂ ԱԼ ՁՈՒՐՄ , ՃՈՎԵ-  
ՂԵՐՔԻ օղը ՎԱՍՏԱԿԱՐ Է :

ԲԵՐՔՆ Է ՌԱԿԻ , ԱՐԺԱՂԾ , ՎԼԱԴԻՆ , ԱՂՅԻՆԾ , ԱՂ-  
ՆԻՒ ՔԱՐԵՐ , ՔԱՔԱՐՅ , ՃԽԱԽՈՒ Ու ՔԲԻՆՍ ,

ՏԱՐԱՃՈՒԹԻՒՆՆ Է 924,000 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԸՆ :  
ԲՆԱԿԻԾ 5,400,000 ԿԱՌՈՂԻԿԵԱՅՔ :

## ԴԼԻԱՏԱՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ.

### ՆՈՐ ԿՐԱՆԱԴԱ

ՊոԿՈԴԱ կամ ՍԱՆԴԱ-ՖԷ ՏԵ ՊՈԿՈԴԱ (40,000) մայրաքաղաքն է, ասոր դիրքը խիստ բարձր է, օդը բարեխառն ։ Խօսերը մեծ ջրվէժ մը կայ որ Ֆ50 ոտք բարձրութենէն վար կ'իյնկնայ :

ԲԱՆԱՄ (10,000) հարաւային և հիւսիսային Ամերիկայի մէջտեղը շատ աղուոր դիրք ունի :

ԳԱՐԴԱՇԵՆԱ. ԲՈՐԴՈՅ-ՊԻՑԼՈՅ. Անդիլեանց ծովուն վրայ բանուկ նաւահանգիստներ են :

ԲՈՐԱՑԱ. Սոդորայ հրաբղխին ոտքը զուարձալի դիրք ունի :

### ՎԵՆԵՑԻՈՒԵԼԱ

ԳԱՐԱԳԱՍ (50,000) մայրաքաղաքն է Անդիլեանց ծովուն մօտ՝ զուարձալի ու բարեբեր դաշտի մը մէջ ։ Վաճառաշահ նաւահանգիստ ունի Կուայրա անունով :

ՎԱՐԻՆԱՍ. ծխախոտն աղնիւ է :

ՄԱՐԱԳԱՑԻՊՈՅ (20,000) համանուն ծոցին վըրայ նաւահանգիստ է :

ՎԱԼԵՆՍԴԻԱ. հին մայրաքաղաքն է :

ԲՈՒԵՐԴՈՅ ԳԱՊԵՑԼՈՅ. ամուր քաղաք է և վաճառաշահ նաւահանգիստ ունի :

ԳՈՒՄԱՆԱ. ասոր հիւսիսային կողմը կը բարձրանայ Մարգարիտ կղզին :

### ՔԻԴՈՅ

ՔԻԴՈՅ (76,000) մայրաքաղաքն է Բիշբնչայ հրաբուխն ոտքը. աշխարհիս մէջ ամենէն բարձր դիրք ունեցող քաղաքն է, ծովուն երեսէն 2885 մէտր բարձր գեղեցիկ ձորի մը մէջ շինած, անոր համար օդը տաք չէ, թէպէտ և գրեթէ հասարակածին տակը կ'իյնինայ:

ԳՈՒԽՆԴԱ. Ճարտարութեանց կողմանէ յառաջացած է:

ԿՈՒԽԱՑԱԳԻԼ. Մէծ ովկիանոսին վրայ նաւահանգիստ է:

### ԿՈՒՑԱՆԱ

ԿՈՒՑԱՆԱ (000,08) սուսակը

Հայ ուղղման ան կամաց ազ անուն մայուս ըմանց ծիստ ուսկը բարեկանութեան հայութանունը. Յա ին կա

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԿՈՒՑԱՆԱՆ Օրենոք գետին ու Ամազոնաց գետին մէջտեղը կ'իյնայ:

Ասոր ծովեղերքը շատ լճեր կան:

Օդը բարեխառն է. տարին ութը ամիս միակ երակ անձրև գալէն եաքը, չորս ամիս անանկ չորս ու տաք կ'ըլլայ որ կենդանիներուն շատը անօթի, ծարաւ կը ջարդուին:

Բերքն է խահուէ, շաքար, խէժ, քոքոյ, բամբակ ու պղպեղ:

Բնակիչն է 280,000 կաթողիկեայք :

Երկրին մեծ մասը Գոլումպիոյ ու Պրաղվլի կը-  
տորը կը սեալուի . մնացածին մէկ կտորը Հոլան-  
տացւոց ձեռքն է , մէկը Անգղիացւոց , մէկն ալ  
Գաղղիացւոց . ներսի կողմերը դեռ անծանօթ են :

### ԳԼԽԱԿՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԲարստարակոՅ (20,000) Հոլանտացւոց գլխա-  
ւոր քաղաքն է , շատ վաճառաշահ :

ՃՌՃԴՈԾՎՆ կամ ՍԴԱՊՐՈՒՔ (20,000) Անգ-  
ղիացւոց ձեռքը վաճառաշահ քաղաք է :

ԳԱՅԻՆ (5,200) Գաղղիացւոց ձեռքը՝ համա-  
նուն կղզիին մէջ առուտուրի քաղաք է : Հոս աք-  
սորուեցան Գաղղիոյ վերջին խռովութեան ոճրա-  
դործ մարդիկը :

### ՊՐԱԶԻԼ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊՐԱԶԻԼԻ Երկիրն ինչուան 1822 Բորգուգէշ-  
ներուն ձեռքն էր . անկէց ետքը Բորգուգալի թա-  
գաւորին տղան ինքնագլուխ կայսր եղաւ հոն .  
բայց 1835էն 'ի վեր միապետական կառավարու-  
թիւնը սահմանադրական եղաւ :

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Պրաղելը հարաւային Ամերիկայի արևմտեան կողմը կ'իյնայ :

Այրեցած գօտիին տակն ըլլալուն համար խիստ տաք է, բայց ամիսներով ալ անձրև կուգայ :

Հողը շատ պտղաբեր է :

Գլխաւոր բերքն է ոսկի, պղինձ, աղամանդ, և ուրիշ ազնիւ քարեր ու փայտեր, մանաւանդ Պրաղելի փայտ ըսուածը՝ որ աղէկ կարմիր ներկ կ'ըլլայ. անկէց զատ բրինձ, բամբակ, ծխախոտ, շաքար: Կենդանիներէն ալ կապիկ, կոկորդիլոս, ջայլամ, օձ ու աղուոր թիթեռնիկներ:

Տարածութիւնն է 2,362,000 քառակուսի մղոն:

Բնակիչը 10,000,000 բոլորն ալ կաթողիկեայք:

## ԳԼԽԱԿՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՌԻՕ ԵԱՆԿԵՐՈ կամ ՌԻՈՑ ԺԱՆԿԵՐՈՑ կամ ՍՈՒՐԲ ՍԵԲԱՍՏԻԱՆՈՍ (300,000) աշխարհիս ամենէն ապահով ու մեծ նաւահանդիստներէն մէկը:

ՊԱՏՏԱ կամ ՍԱՆ-ՍԱՎԱՏՈՐ (120,000) ինչուան 1763 Պրաղելի մայրաքաղաքն էր. հիմա ալ բոլոր երկրին արքեպիսկոպոսը հոս կը նստի:

ԲԵՌԱՍՄՊՈՒԳՈՑ կամ ՖԵՌԱՆՑՊՊՈՒԳՈ կամ ՌԵՍՏՖԷ (60,000) խիստ վաճառաշահ քաղաք է. հոս աեսակ մը փայտ կայ որ եփելով կարմիր ներկ կը շինեն՝ ու քաղքին անունովը ՖԷՌԱՆՑՊՊՈՒԳ կ'ըսուի:

ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ (22,000) մեծ ոսկեհանք ունի:

ԲԱՐԵ կամ ՊԵԼԵՄ (25,000) վաճառաշահ քա-  
ղաք է:

ԴԻՑՈՒԳՈՅ • մօտերն ադամանդի հանք ունի:  
Նշանաւոր են նաև Վիլլա Պօնա, Սան Լուիս  
տէ Մարանեառն, Որից Կրանտէ կամ Սան Բետ-  
րոյ :

## ԲԷՐՈՒ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՎԱԽՏ որ Ամերիկան գտնուած չէր, Բէրուի  
թագաւորութիւնը շատ զօրաւոր ու հարուստ ե-  
ղած է. 1821ին Բէրուի բնակիչները դլուխ քա-  
շեցին Սպանիացւոցմէ ու զատ հասարակապե-  
տութիւն եղան :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Բէրուն Գոլումիզիոյ հարաւային կողմը՝ Մեծ  
ովկիանոսին ծովեզերքն է:

Երկիրը շատ տեղ աւազուտ է:

Մեծ ովկիանոսին ծովեզերքը ոչ անձրև կու-  
գայ, ոչ որոտմունք կ'ըլլայ:

Բէրքն է ոսկի, արծաթ, սնդիկ, զմբուխտ,  
ունի նաև գինի, օղի, շաքար, քինա, բուրդ, Վայ-

ըի կենդանիներուն մէջ անուանի է լամա ըսուած ոչխարի նման կենդանին : Թաց տեղուանքը ահա գին օձեր ու անթիւ ճշիներ կը գտնուին . տեսակ մը ճշի ալ կայ սուստիւց ըսուած՝ որ թղթի նման բոյն կը շինէ :

Տարածութիւնն է 383,000 քառակուսի մղոն :

Բնակիչն է 2,500,000 կաթողիկեայք , բայց կռապաշտ լեռնցիներ ալ կան :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼՄՄ (80,000) մայրաքաղաքն է , զոր Սպանիացիք շինեցին 1524ին՝ երեք փարսախ ծովէն հեռու՝ նաւահանդիստ ունենալով գալեաոյ քաղաքը :

ԳՈՒՍԳՈՑ (46,000) Բէրուի հին թագաւորութեան մայրաքաղաքն է :

ԱՐԵԳԻՎԻ (36,000) Գիլքը գեղեցիկ , բայց մեծ հրաբուխի մը մօտ ըլլալուն համար՝ շատ գետնաշարժ կ'ունենայ :

ԴՐՈՒԽԵՑԼՈՑ (14,000) Սպանիացիք շինեցին աս քաղաքը . մօտերը կան Բէրուացի հին շինուածոց մնացորդներ :

ԿՈՒՑԱԳԱՎԵԼԻԳՎ (12,000) ունի առատ սնդկի հանք :

ԵՐԱԿԵԼԻ Են նաև հուանուգոյ և բինոյ :

## ՊՈԼԻՎԻԱՆԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՊՈԼԻՎԻԱՆԱ 1825Էն 'ի վեր ինքնագլուխ հասարակապետութիւն մըն է :

Երկրին մէջտեղուանքը լեռնոտ, արևելեան կողմը բարեբեր, արևմուաքը անքնակ անապատ :

Բերքն է գինի, ձէթ ու ազնիւ փայտեր :

Տարածութիւնն է 634,200 քառակուսի մղոն :

Բնակիչն է 2,000,000 կաթողիկեայք :

## ԳԼԽԱԿՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼՍ ԲԱՐԴԱ կամ ՉՈՒՔԻՍԱԳԱ (25,000) մայրաքաղաքն է . ասոր քովերը հարուստ արծաթահանք կայ :

ԼՍ ՓԱՍՀ (40,000) ոսկեհանքն անուանի է :

ԲՈԴՈՍԻ (11,000) ասոր արծաթահանքը աշխարհիս ամենէն մեծ հանքերէն մէկն է :

## ԲԱՐԱԿՈՒԱ

---

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԲԱՐԱԿՈՒԱՆ ատենով Սպանիացւոց ձեռքն էր :  
Բնակիչներուն մէկ մասը Յիսուսնեան կրօնաւոր-  
ներուն ձեռքովը շատ կրթուեցաւ 1767ին . Երբոր  
անոնք հեռացան , ժողովուրդն ալ շատ պակ-  
սեցաւ : Հիմա ինքնագլուխ հասարակապետու-  
թիւն է :

Երկիրը դաշտային ու խիստ բարեբեր է :

Գլխաւոր բերքն է չայ , ծխախոտ , բամբակ ,  
շաքար :

Տարածութիւնն է 265,230 քառակուսի մղոն :

Բնակիչն է 1,340,000 կաթովիկեայք :

Գլխաւոր քաղաքն է Ասունչառու կամ Վերս-  
ֆունուտն (48,000) :

## Լ. Ա. Բ. Լ. Ա. Դ. Ա.

---

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Լա ԲԼՅԴԱՆ 1515ին Սպանիացիք գտան . 1810ին  
Բնակիչները գլուխ քաշեցին անոնցմէ , և ինքնա-  
զլուխ հասարակապետութիւն մը եղան Դաշնակ-  
ցութիւն Արհենդինայ անուամբ :

Երկրին մեծ մասը թաց է , օդը տաք :

Բերքն է գինի , ձեթ , բամբակ , շաքար ու լո-  
մայի աղնիւ բուրդ :

Տարածութիւնն է 270,000 քառակուսի մղոն :

Բնակիչն է 2,000,000 կաթողիկեայք :

Գլխաւոր քաղաքն է Պուէնոս Ազու (90,000)  
Բլադա գետին վրայ , օդը շատ աղեկ . վաճառաշահ  
քաղաք է :

ՄԵՆՏՈՉԱ (20,000) աղնիւ գինի ունի :

ԳՈՐՏՈՎԱ (16,000) մեծ վաճառականութիւն  
ունի :

Նշանաւոր են նաև Սանդա-ֆէ և Սալդա :

## ՔԻԼԻ ԿԱՄ ԶԻԼԵ



### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՎԻԼԻԽ բնակիչները 1818ին զատուեցան Սպանիացւոցմէ ու ազատ հասարակապետութիւն եղան :

Քիլին Բէրուի հարաւային կողմը՝ Գորտիլեան լեռներուն ու Խաղաղական ովկիանոսին մէջտեղը կ'լիյնայ :

Երկիրը լեռնոտ ու ջրոտ է, օդը բարեխառն :

Բէրքն է պղինձ, ոսկի, արծաթ ու աղնիւքարեր :

Տարածութիւնն է 87,332 քառակուսի մղոն :

Բնակիչը 1,700,000 կաթողիկեայք :

Գլխաւոր քաղաքն է Սանտ-Իսակ (80,000) որուն նաւահանգիստն է Վալեարտիկա :

Վալեարտիկ (37,000) գեղեցիկ նաւահանգիստ ունի, և Ամերիկայի արևմտեան ափանցը ամենէն վաճառաշահ քաղաքն է :

Վալետա (5,000) Ամերիկոյ գեղեցիկ նաւահանգիստներէն մէկն է :

Նշանաւոր են նաև Գոնսէբսիոն, Գոքիմազոյ կամ Սերենա, Բեգորգա, Արաւգոյ և Գասդրոյ՝ Զիլոէ կղզւոյն մէջ :

## ԲԱԴԱԿՈՆԻԱ.

---

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԲԱԴԱԿՈՆԻԱՆ Ամերիկայի հարաւային ծայրն է ,  
գրեթէ բոլորն ալ անծանօթ :

Արևելեան ծովեղերքը տաք ու աւազուտ է , և  
անուշ ջուր չունի :

Բնակիչն է 200,000 բարձրահասակ ու հիւրա-  
սէր մարդիկ . ասոնք բնակութեան քաղաք չու-  
նին , հապա խումբ խումբ դաշտերու մէջ կը բնա-  
կին :

---

### ԱՆԴԻԼԵԱՆ ԿՂԶԻՔ

---

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Անդիլեան կղզիներն որ Աբեմբէան հնդիա-  
տն ալ կ'ըսուին , գտաւ Քրիստափոր Գողոմապոս  
1492ին : Ետքը Սպանիացիք կամաց կամաց տիրե-  
ցին բոլոր աս կղզիներուն , ու տասը տարուան  
մէջ ՄԵծ Անդիլեաններուն բնակիչները ջնջեցին ,  
որ վախկոտ մարդիկ էին :

Փոքը Անդիլեան կղղիներուն բնակիչներն որ  
Գտարայիպ կ'ըսուեէին, կտրիճ՝ ըլլալով՝ Սպանիացւոց  
շատ դէմ դրին, ինչուան որ 1600ին ատենները  
Եւրոպայի ուրիշ ազգերը կամաց կամաց զանոնք  
ալ ջնջեցին :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Անդիլեան կ'ըսուին ան կղղիներն որ հիւսիսային  
ու հարաւային Ամերիկայի մէջտեղուանիքը կ'իյնան :

Աս կղղիներն իրեք գլխաւոր խումբ կը բաժ-  
նուին. Մեծ Անդիլեանք, Փոքը Անդիլեանք, և  
Լուգայեան կամ Պահամա կղղիները :

Մեծ Անդիլեան կ'ըսուին աս չորս կղղիները.  
Գուպա, Ճամայիդա, Հայիդի կամ Սուրբ Դոմի-  
նիկոս ու Բոռդոյ Ռիդոյ :

Փոքը Անդիլեան կղղիներուն գլխաւորներն ա-  
սոնք են. Սուրբ Խաչ, Սուրբ Բարթուղիմէոս,  
Սուրբ Լուչիա, Սուրբ Վինչենցիոս, Կրանատա,  
Կուտատալուբա, Մարդինիկէ, Սուրբ Եւստա-  
քէոս, և Գուրասասաոյ :

Լուգայեան կղղիները մանր կղղիներ են Անդ-  
դիացւոց ձեռքը. ասոնց մէջ անուանի է Կուանա-  
հանի կամ Սան Սալվատոր կղղին, որ Գոլոմիպոսի  
աս կողմերն առջի գտած տեղն է :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, ու շատ հըա-  
բուխներ ունի :

Օդը տաք ու թաց է. Հոկտեմբերէն ինչուան  
ապրիլ չոր կ'ըլլայ, իսկ մնացած ամիսները միա-  
կերպ անձրև կուգայ :

Սաստիկ մըրիկներ ալշատ կ'ըլլան աս կղղինե-

ըլ, անանկ որ ինչուան շէնքերն ու աները կը փըլ-  
ցընեն :

Հողը շատ ալտղաբեր է . գլխաւոր բերքն է լե-  
զակ, բամբակ, շաքար, ծխախոտ, խնկեղէն, և  
Ափրիկէի ու Ասիոյ ամեն բերքերը . միայն թէ Եւ-  
րոպայի բոյսերն ու կենդանիները հօն երթան նէ՝  
քիչ ատենի մէջ ցեղերնին կը փոխուի :

Բնակիչն է 3,360,000 :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՀԱՏԱՍ (112,000) Գուպա կղզին գլխաւոր  
քաղաքն է, ամուր ու շատ վաճառաշահ :

ՔԻԿԱՍԻԾ (33,000) Ճամայիգային մէջ երես-  
լի վաճառաշահ քաղաք է :

ԲՈՐԴ-Օ-ԲԻԿԱՍ (28,000) Հայիդիի կայսերու-  
թեան մայրաքաղաքն էր, աղէկ նուահանգիստ  
ունի և բանուկ վաճառականութիւն :

ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ (20,000) Մարդինիկէ կղզւոյն  
մէջ՝ վաճառաշահ քաղաք է :


ՍՈՒՐԲ ԴՈՄԻՆԻԿՈՍ (12,000) ատենով Հայիդիի  
Սպանիական մասին գլխաւոր քաղաքն էր, հիմա  
ալ Դոմինիկեան հասարակապետութեան մայրա-  
քաղաքն է . աս քաղաքը Գոլոմպոսի եղբայրը շի-  
նեց :

ԲՈՒԷՆՈ-Ը-ԲԻԴՐԸ (12,000) գեղեցկաշէն քա-  
ղաք է կուատալուբայի մէջ, և նուահանգիստ ու-  
րանուկ վաճառականութիւն ունի : 1842ին սասա-  
նութենէն՝ այս քաղաքին մեծ մասը կործանեցաւ :

ՖՈՐ-ՌՈՒԱՅԵԱԼ (10,000) Մարդինիկէի մայրա-  
քաղաքն է :



# ՈՎԿԻԱՆԻԱ



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ՈՎԿԻԱՆԻԱՆ Եւրոպացիք գրեթէ Ամերիկան գտած ասեննին գտան . անոնցմէ առաջ Արաբացիք ասոր Հարաւային Ասիա ըսուած կողմը գնացեր ու իրենց հաւատքը տարածեր Էին 1100ին կամ 1200ին ատեննուրը , բայց Բորդուգեները զիրենիք հալածեցին : Անկէ ետև Հոլանտացիք , Սպանիացիք և Անգլիացիք այլ և այլ գաղթականութիւններ հաստատեցին հոն :

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ովկիանիա կ'ըսուին հարաւային Ովկիանոսի մէջ ցրուած կղզիները , որ բոլորը մէկէն Եւրոպա-յէն շատ մեծ են :

Տարածութիւնը կը սեպուի 3,100,000 քառակուսի մղոն :

Օդի ընդհանրապէս տաք է , բայց ծովեղերքը բարեխառն :

Երկրին մեծ մասը լեռնոտ է, ծովեղերքն ալ շատ տեղ ժայռերով լեցուն:

Գլխաւոր բերքն է հացի ծառ, քոքոյ, գետնա- խնձոր՝ ու ամեն տեսակ խնկեղէն:

Բնակիչը 30,000,000 շատը սկ, վայրենի, ան- կիրթ ու պակասամիտ. ինչուան գետին բանիլն ալ չեն գիտեր, հիւղերու մէջ կը բնակին, որսոր- դութեամբ կ'ապրին, ոմանք ալ մարդակեր են:

Բոլոր Ովկիանիան չորս գլխաւոր մաս կը բաժ- նուի. Կողազիա կամ Մալեզիա, Աւստրալիա կամ Մելանեզիա, Միդրոնեզիա, Բոլինեզիա կամ Ա- րևելեան Ովկիանիա:

## ԳԼԽԱՒՈՐ ԿՂՋԻՆԵՐԸ

### ԿԱԼՈՒՅՆԴՎ ՀՈԼԱՆՏԱՑԻՈՑ

Ճառս (8,000,000) Ովկիանիոյ ամենէն բազմա- մարդ ու ամենէն ծաղկած կղզին է, և գրեթէ բո- լոր հոլանտացւոց իշխանութեան տակն է: Մայ- քազազաք ունի Պարտական (53,000), որ Մալեզիայի մէջ հոլանտացւոց ամեն կալուածոցը գլխաւոր տեղին է, և անոնց Զինու, Հնդկաց և Ճաբոնի հետ ըրած վաճառականութեան կեդրոնը. բայց օդը ինասակար: Ուրիշ նշանաւոր քաղաքներն են, Զերայ՝ ճաւայի արևմտեան դին, Զերիպու (10,000), Սամարան (35,000), և Սուբրապայտ (50,000) հիւսիսային ծովեղերաց վրայ, Զուտլու- գորդա (55,000) և Սուբրատարդա (70,000) կղզւոյն ներսերը: Այս երկու քաղաքները բնիկ սուլդան- ներու ձեռքն են, բայց հարկատու հոլանտացւոց և Մադարամայ հին կայսերացմէ կ'իշնան, որ ա-

տենով ճաւա կղզւոյն մեծ մասին կը տիրէին :  
Կրօնքնին՝ ոմանցը մահմետական է, ոմանցն ալ  
կուտաշ :

ՍուՄԱԴՐԸ (5,000,000) Սունտեան նեղուցով  
կը բաժնուի ճաւայէն և երկու մաս ունի . մէջ-  
մը անկախ՝ որ հիւսիսային կողմը կ'իյնայ և գլխա-  
ւոր քաղաքն է Ալմա (20,000), և Սիսդ (3,000).  
մէջմն ալ հոլանտացւոց ձեռքը՝ որ հարաւային  
կողմը կ'իյնայ, և գլխաւոր քաղաքն է Բաբանի  
(10,000), ուր կը նստի հոլանտացի կուսակալը,  
և Բալամպանի (20,000) մայրաքաղաքն համանուն  
պետութեան մը՝ զոր գրաւեցին հոլանտացիք  
1821ին :

Ճաւայի և Սումադրայի կղզիներուն շատը հո-  
լանտացւոց ձեռքն են . որոնց մէջ նշանաւոր են .  
Պանդա՝ որ անագի հարուստ հանք ունի, Պիլլե-  
թոն, Սումադրա, Ֆլորէս, և Դիմոր :

ԳՈՐՆԻՈՑ (4,000,000) կղզին՝ Գաղղիոյ կրկին  
մեծութիւնն ունի, և մէկ մասին հոլանտացիք  
կը տիրէն, մեծագոյն մասը դեռ անկախ է . նշանա-  
ւոր է Պառանէոյ (10,000) ուր սուլդան մը կը նստի,  
և ատենով կղզւոյն մեծագոյն մասին կը տիրէր :

ՉԻՒԿՊԻՍ (3,000,000) մեծ կղզին, որ գրեթէ  
բոլորովին հոլանտացւոց իշխանութեան տակն է :  
Այլ և այլ ցեղ բնակչաց մէջ՝ նշանաւոր է Պառանէոյ  
սուած ժողովուրդը՝ որ ճարտար վաճառականք են  
և նաւարկուք : Հարաւային կողմն է Մաֆասսարէն  
տէրութիւնը, այս անուամբ կը կոչուէր երբեմն  
բոլոր Չէլէսլէս կղզին, ինչպէս նաև այն նեղուցը  
որ կը բաժնէ լՊոռնէոն :

ԴԻՌՈՒՍԴՐ. Փոքրիկ կղզի յարեւմուտս Ճիլլուի,

ուր կը նստի Սուլդան մը հարկատու Հոլանտացւոց, որուն իշխանութիւնը կը տարածուի Ճիլու և Չէլէպէս կղզիներուն մէկ մասին վրայ :

Պահանջանք պղտի կղզի մը, ուր Հոլանտացիք հընդկաստանի ընկոյզ կը մշակեն :

Առաջանք (50,000) հոս կը նստի Մոլուգեան կղզեաց հոլանտացի կուսակալը . մեխակի ծառունի :

### ԿԱԼՈՒԾԸՔ ՍՊԱՆՏԱՑԻՈՑ

ՓԻԼԻՊԵԱՆ կղզիք (4,500,000) ըստ մեծի մասին Սպանիացւոց իշխանութեան տակն են, և կը բաղկանան հազարաւոր մանր կղզիներէ, որոնցմէ գլխաւորներն են .

Լուսաց (2,300,000) որուն մեծադոյն մասը Սպանիացւոց ձեռքն է . նշանաւոր է Մանիլա (100,000) մայրաքաղաքը բազմահարուստ և վաճառաշահ :

ՄԻՒՏԱՆՍՈՅ (4,200,000) որուն գլխաւոր քաղաքներն են . Սամպուանիամ (1,000) և Սալանիամ (10,000) :

ԲԱԼԱՏԱՆ . քիչ ծանոթ մեծ կղզի մըն է . Սպանիացիք միայն հիւսիսային արևելեան կողմը կը տիրեն :

Ասոնք ամենն ալ աղէկ բարեբեր են, բայց շատ գետնաշարժ ու փոթորիկ ունին :

ՄԱՐԻԱՆԵԱՆ կամ ԱԽԱԿԱԿԱՑ կղզիք (6,000) Միգրոնեղիոյ մէջ՝ Սպանիացւոց իշխանութեան տակն են : Նշանաւորներն են . Կուահան (5,000) հոս կը նստի սյս արշիպեղագոսին կուսակալը, և Դինիան :

Այս կղզիներուն հիւսիսային կողմը ահագին ժայռ մը կայ բրդաձև, որ Ղուպա, ին կըսուի:

### ԿԱԼՈՒԱԾՈՔ ԳԱՂՎԱՑԻՈՑ

ԴԱՀԻԴԻ կղզիք (135,000) որոնց մէջ գլխաւորն է Դահիդի:

ՄԱՐԳԻԶԵԱՆ կղզիք (40,000) որոնց մէջ գլխաւորն է Կառտահիվա:

ՆՈՐ-ԳԱԼԵՏՈՆԻԱ (40,000) Գաղղիացիք գրաւեցին զայն 1853ին:

### ԿԱԼՈՒԱԾՈՔ ԲՈՐԴՈՒԳԱՎԱՅ

Բորդուգեներն որ ամեն Եւրոպացի աղքերէն առաջ Ովկիանիոյ մէջ հաստատուեցան, հիմա միայն ԴԻՄՈՐ կղզւոյն մէկ մասն ունին, որուն գլխաւոր տեղն է Տիւլի (2,000), և Ֆեր կղզւոյն ալ մէկ մասը:

### ԿԱԼՈՒԱԾՈՔ ԱՆԳՎԱՑԻՈՑ

ՆՈՐ-ՀՈԼԱՏԱ (կամ ԱԽՍՏՐԱԼԻԱ (800,000) այնչափ ընդարձակ է այս կղզին որ շատ աշխարհագիրք երրորդ ցամաք մը կը համարին. ներսերն ըստ մեծի մասին դեռ անծանօթ են, ու ծովեղերաց վրայ այլ և այլ գաղթականութիւններ հաստատած են Անգղիացիք, ինչպէս են.

Հարաւային Նոր Ուկաչ գլխաւոր քաղաքն է Սիւնէ, (20,000):

ԱԼԻՄՈՒՅԻՆ. գլխաւոր քաղաքն է Մէլաւուն (25,000):

Հարաւային Աւագըւլիս . գլխաւոր քաղաքն է Արեւադրե (15,000) :

Արևմատան Աւագըւլիս . գլխաւոր քաղաքն է Բերդ :

Ակեկտորիա գաւառը քան զամենն աւելի ոսկեբեր է , բայց Նոր-Ռուէյլզի ու հարաւային Աւստրալիոյ մէջ ալ Ճոխ ոսկեհանքեր կան . վերջերս արևմտեան Աւստրալիոյ մէջ ալ առատ ոսկի գըտնուեցաւ :

Վան-ՏԻԵՄԻՆ կղզի (45,000) առատ երկաթի հանք ունի . գլխաւոր քաղաքն է Հոպարդ-Դուչն (16,000) :

ԿՈՐՖՈՔ (1,300) ուր յանցաւորները կ'աքսորուին :

ԿՈՐ-ԶԵԼԱՆՏԱ (250,000) զոր ումանք Դասմանիս կը կոչեն , երեք կղզի են՝ երկուքը շատ մեծ , որ Գուստի նեղուցով մէկմէկէ կը բաժնուին . Դաշնամանցի , Դավայի-Բառնամյան :

ԼաՊՈՒՏԱ . Պոռնէոյի հիւսիսային արևմտեան ափանցը մօտ պղտի կղզի մըն է , զոր վերջերս գրաւեցին Անգղեացիք :

## ԱՆԿԱԽ ԿՂՋԻՔ.

## ՆՈՐԱՉԻԱ

ՍՈՒԼՈՒ կղզեք . ասոնց սուլդանը կ'իշենէ նաև Պոռնէոյ և Բալըւան կղզեաց մէկ մասին , ու մօտաւոր քանի մը մանր կղզիներու .

## ԱԽՍՏՐԱԼԻԱ

ՆՈՐ-ԿՈՒԽԵՆԻԱ կամ ԲԵՐՈՒԹՅՈՒՆ (500,000) խումբ կղզեաց, ուր կը գտնուեին բազմաթիւ գտնատք, քնարահաւ, սև կարապ և դրախտահաւ:

ՆՈՐ-ԲՐԵՏԱՆԻԱ և ՆՈՐ-ԴՐԱՎԱՆ (65,000) որոնց միայն քանի մը ծովեղերեայ տեղերը ծանօթ են:

ՍՈՐ-ՌՈՒՆԵԱՆ կղզեք (100,000) որոնք կ'ըսուեին նաև իշլիւ Արշիանեաց և Նոր-Գեղրդիա:

ՉԱՐԼՈԴ կամ ԼԱԲԵՐՈՒԶ կղզեք (50,000) որոնցմէ մէկուն մօտերը նաւաբեկեցաւ Լաբերուզ գաղղիացի նաւապեան 1788ին:

ՆՈՐ-ՀԵԲՐԻՏԻ կղզեք (150,000) ուր մարդակերներ ալ կան + ասոնցմէ ամենէն մեծը կ'ըսուի իշլիւ Հագոյն սբոյ:

## ՄԻԳՐՈՆԵԶԻԱ

ԱՐՃԱՊԵՂԱՌՈՍ ՄԱԿԻՑԵԱՆԻ (1,000) բազմաթիւ կղզեաց խումբերէ կը բաղկանայ:

ԲԵԼԻՎ կամ ԲԱԼԵՈՍ կղզեք (10,000) թաւանտառներով ծածկուած են:

ԳԱՐՈՒՐՆԵԱՆ կղզեք (50,000) բազմաթիւ կը զեաց խումբեր են:

ՄԻՒԼԿԻՐԱՎ կղզեք (2,000) որ երկու խումբ կը բաժնուին Ռապատ և Ռալիւ:

ՔԻՆԿՍՄԻԼ + մանր կղզիներ են:

### ԲՈԼԻՆԵԶԻԱ

Սաւտուրա կամ Հավաք կղզիք (69,800) ուր քաղաքականութիւնն ու քրիստոնէութիւնը ծաղկած են, և կանոնաւոր կառավարութիւն, դպրոցներ ու ընդարձակ վաճառականութիւն ունին:

Այս կղզիներէն մէկուն մէջ սպաննուեցաւ Գուբնաւապետը:

ԵԱՏՈՐԴԱՑ կղզիք (160,000) որ կ'ըսուին նաև Հայուա կամ Պուլէնցլ:

ՎԻԳԻ կամ ՖԻՃԻ կղզիք (85,000) Երկու մեծամեծ կղզիներ ունին:

ԴՈՒԿԱ կղզիք (200,000) քրիստոնէութիւնն հոս ծաղկելու վրայ է: Գուբ՝ զասոնք իշխան Բարէիամաշ կը կոչէ, բնակիչներէն գտած մարդասիրութեանն համար:

ՑԱԾՈՒՆ կղզիք կ'ըսուին հարաւային և վասնագաւառ կոչուած արշխապեղագոսները, որոնց կղզիները մանր են ու ցած, և ըստ մեծի մասին անբնակ:









